# Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության մեթոդաբանության վերաբերյալ HELP ուղեցույց

Եվրոպայի խորհուրդ

*Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպայի խորհրդի կամ Եվրոպական միության պաշտոնական քաղաքականությունը:*

Սույն փաստաթղթի կամ դրա որևէ հատվածի վերարտադրության կամ թարգմանության հետ կապված բոլոր հարցերով դիմել Հաղորդակցությունների գծով տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):
Խմբագիր՝ Արտաշես Խուրշուդյան, Արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման վարչության պետ:

Սույն ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի համատեղ «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» ծրագրի միջոցներով:

© Council of Europe, Երևան, 2017թ. հունիս

# Բովանդակություն


ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ 5

ՆԱԽԱԲԱՆ 9

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 13

ՄԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 15

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ 15

ա. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը և մարդու իրավունքների պաշտպանության վրա դրա հնարավոր ազդեցությունը 15

բ. Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության տարբեր մակարդակները 15

գ. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման հատուկ թիրախային խմբեր 18

դ. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստմանը բնորոշ մարտահրավերները 21

ե. ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին մուտք ունենալու դժվարությունները 28

HELP-Ը՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ 34

ա. Ի՞նչ է HELP-ը 34

բ. Ինչպե՞ս է աշխատում HELP-ը 36

ՄԱՍ 2. HELP-Ի ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՆԱԽԱԳԾՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 45

ՔԱՅԼ 1՝ Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ 45

ա. Կարիքների գնահատում 45

բ. Ընդհանուր խնդիրների սահմանում 52

ՔԱՅԼ 2՝ Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՆԵԼ՝ HELP-Ի ՄՈՏԵՑՈՒՄԸ 52

ա. Դասընթացի մշակում 52

բ. Դասընթացի համապատասխանեցում (բովանդակություն և ձևաչափ) 104

ՔԱՅԼ 3՝ ԻՆՉՊԵՍ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԴԱՍԸՆԹԱՑԸ 115

ա. Վերապատրաստման առավել համապատասխան մեթոդ(ներ)ի ընտրություն 115

բ. Վերապատրաստման մեթոդի ընտրությունն ուսումնական խնդիրներին համապատասխանեցնելը 117

գ. Դասընթացի մեկնարկը 119

դ. Վերապատրաստման տրամադրում՝ ինչպե՞ս և ո՞ւմ կողմից 124

ՔԱՅԼ 4՝ ԻՆՉՊԵՍ ԳՆԱՀԱՏԵԼ ԴԱՍԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԵՏԵՎԵԼ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ 138

ա. Խնդրել սովորողներին հետադարձ կապի մեջ մտնել վերապատրաստողների հետ 139

բ. Գնահատում՝ արդյունքներ 142

գ. HELP-ի մոտեցումը մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գնահատմանը 144

դ. HELP-ի դասընթացների գնահատման մակարդակները 145
ե. Հավաստագրում և դեբրիֆինգ 146
զ. Դասընթացի վերանայում 147
է. Ուսումնական ծրագրի օգտագործումը՝ որպես ինքնուսուցման նյութ՝ հեռաուսուցումից մինչև ինքնուսուցում 148
**ՄԱՍ 3՝ ԱՄՓՈՓՈՒՄ. ԻՆՉՊԵՍ ԱԿՏԻՎ ԴԵՐ ՈՒՆԵՆԱԼ HELP ՑԱՆՑՈՒՄ 151**
HELP ՑԱՆՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆՑ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԸ ԼԻՆԵԼՆ Է 151
HELP-Ի ՀԱՐԹԱԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ 154
HELP-Ի ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ 154
ա. HELP-ի հավաստագրված վերապատրաստողներ 154
բ. HELP-ի դասընթացների վկայականները 154
գ. HELP «պիտակի» տրամադրում 155
HELP-Ի 5 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ 156
**ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 157**

# Ինչո՞ւ է կարևոր այս ուղեցույցը

Եվրոպայի խորհրդի նպատակներից մեկը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրառման ապահովումն է ներպետական մակարդակում: Կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների երաշխավորման լավագույն ուղին դրանք եվրոպական պետությունների ներպետական հաստատություններում և ազգային մտածելակերպում սերմանելն է:

Արդարադատական համակարգն առաջնային դեր է խաղում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Ահա թե ինչու առհասարակ վերապատրաստումը և, մասնավորապես, Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթությունը (HELP) այդքան կարևոր է:

Սույն ուղեցույցը նախատեսված է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում HELP ծրագրի մեթոդաբանության և ռեսուրսների կիրառման միջոցով իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման պատասխանատուների համար: Այստեղ քննարկվում են այն նկատառումները, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել մարդու իրավունքներին և, մասնավորապես, մարդու իրավունքների եվրոպական չափորոշիչներին ուղղված վերապատրաստման ծրագիր մշակելիս:

Ենթադրվում է, որ լսարանն ընդգրկելու է դատավորների, դատախազների և փաստաբանների, որոնք պատասխանատու են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (ՄԻԵԿ) և դրա Կամընտիր արձանագրություններում ներառված՝ մարդու իրավունքների երաշխիքների ապահովման համար: Այդուհանդերձ, նյութերը նաև կարևոր են այն բոլոր մասնագետների խմբերի վերապատրաստման համար, որոնց իրազեկությունը եվրոպական չափորոշիչների վերաբերյալ ակնկալվում է հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, ինչպես ոստիկանության և իրավապահ մարմինների աշխատակիցներ, քրեակատարողական հիմնարկների և պրոբացիայի ծառայության աշխատակիցներ, բժշկական և հոգեբուժական հաստատությունների անձնակազմեր և սոցիալական ոլորտի աշխատողներ: HELP-ի ուսումնական ծրագիրը կարող է անհրաժեշտ լինել որոշ չափով համապատասխանեցնել նշված թիրախային խմբերին, սակայն դրա մեթոդաբանությունը բավարար ճկուն է տարբեր լսարաններին համապատասխանեցնելու առումով: Ուղեցույցը կարող է նաև օգտակար լինել համալսարանների և իրավաբանական ֆակուլտետների համար մարդու իրավունքների մասին իրազեկությունը տարբեր դասընթացներում ներառելու առումով:

Վերապատրաստման նպատակն ուսումնական նյութի բարելավված մատուցումն է: Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման նպատակն է երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ փոխանցումն արդարադատության իրականացման ոլորտ: Այս առումով իրավական ոլորտի մասնագետներն առաջնագծում են, ուստի մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը կենսական նշանակություն ունի՝ երաշխավորելու անձանց արդյունավետ պաշտպանությունը:

Հանգամանալի պլանավորումը և նախապատրաստումն էական են ոչ միայն վերապատրաստումը կարևոր և իմաստալի դարձնելու լսարանի համար, որը սույն ուղեցույցում վկայակոչվում է որպես «սովորողներ», այլև երաշխավորելու, որ վերապատրաստման համար պատասխանատվություն կրողներն ունեն հստակ և միասնական ընկալում այն մասին, թե ինչ նպատակի են ձգտում հասնել: Բովանդակության մեծ մասը հիմնված է «վերապատրաստում վերապատրաստողների համար» ժամանակակից մոտեցումների վրա, այսինքն՝ տրամադրում է ուղենիշեր վերապատրաստման դասընթացի մշակման և մատուցման վերաբերյալ (և նշանակալի չափով անդրադառնում «ինչից պետք է խուսափել» հարցին՝ հաճախ հիմնվելով ցավալի փորձի վրա): Այն համախմբում է վերապատրաստման տեսությունը և գործնական ուղենիշերը:

Ի վերջո, ակնկալվում է, որ վերապատրաստումը կհանգեցնի ոչ միայն Ստրասբուրգի երաշխիքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը, այլև իրական ընկալմանը, թե սովորողների համար ինչ է նշանակում այդ չափորոշիչների ապահովումը ներպետական մակարդակում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) և ԵԽ մոնիթորինգի այլ մեխանիզմների միջոցով Եվրոպայում բնակվող 850 միլիոն մարդկանց տրամադրվող պաշտպանությունը մատչելի է միայն այն ժամանակ, երբ ներպետական պաշտպանությունը ձախողվում է կամ չի բավարարում ակնկալիքները: Մարդու իրա-

վունքների սկզբնական պաշտպանողը Ստրասբուրգի իրավապահության մեխանիզմը չէ, այլ ներպետական գործակալությունները (դատարաններ, դատախազներ, փաստաբաններ, ոստիկանության աշխատակիցներ և բանտային ծառայություն):

Այսպիսով, մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը չի կարող ներառել զուտ եվրոպական ակնկալիքների վերաբերյալ գիտելիքներ կամ իրազեկություն: Վերապատրաստումը նաև պետք է սևեռվի որոշակի հմտությունների վրա, ինչպիսիք են մարդու իրավունքների խնդիրների բացահայտումը և մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչների կիրառումը փաստացի իրավիճակներում: Քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը տեղի է ունենում ներպետական մակարդակում, ապա մարդու իրավունքների եվրոպական չափորոշիչների ոլորտում վերապատրաստումը պետք է ներառի ներպետական խնդիրների քննարկում, ուստիև գործնական կիրառությունը սույն ուղեցույցով առաջարկվող՝ վերապատրաստման նախագծման կարևոր հատկանիշ է:

Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը նաև պետք է ծառայի իր վերջնական նպատակին՝ օգնել հասնել վարքագծային փոփոխության: Իրավական ոլորտի մասնագետները հնարավոր է՝ գիտենան, թե ինչ է պահանջում ՄԻԵԿ-ը և Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքը, սակայն առանց այդ չափորոշիչները ներպետական դատարաններում կիրառելու անձնվեր ջանքերի՝ վերապատրաստումն արդյունավետ չի լինի: Կարճ ասած՝ գիտելիքները և հմտությունները բավարար չեն լինի, եթե քայլեր չեն ձեռնարկվում՝ սովորողներին օգնելու հասկանալ, որ որպես պետական պաշտոնյաներ իրենք ունեն մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ապահովման և կիրառման պատասխանատվություն: Եվ չափազանց հաճախ ներպետական պաշտպանությունը ձախողվում է ոչ թե մարդու իրավունքների չափորոշիչների շուրջ իրազեկության բացակայությունից (կամ դրանց կիրառման անկարողությունից), այլ որպես մարդու իրավունքների ակտիվ պաշտպան դառնալու դժկամությունից: Հաճախ այս խոչընդոտը վկայում է պարզ, բայց խոր թյուրըմբռնման մասին, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառման պատասխանատուն Ստրասբուրգի դատարանն է: Ներպետական իրավական համակարգերի բոլոր դատավորներն իրականում նաև եվրոպական դատավորներ են: Նրանք կազմում են պաշտպանության առաջնագիծը: Վերապատրաստման այս կողմը, անշուշտ, զերծ չէ հատուկ մարտահրավերներից: Նույնը վերաբերում է այն փաստաբաններին, որոնք վկայակոչում են ՄԻԵԿ-ը, ինչպես նաև այն դատախազներին, որոնք կիրառում են Եվրոպայի խորհրդի իրավական գործիքները: Ուղերձը, որ մարդու իրավունքների ապահովումը ներպետական պատասխանատվության խնդիր է, պետք է ամրապնդվի վերադաս ղեկավարության կողմից, այսինքն՝ խնդրո առարկա հանրային ծառայության ղեկավարությունը ստանձնած պատասխանատուների կողմից հստակ և միանշանակ ուղերձներով: Արդյունավետ, հարմարեցված և արդիական վերապատրաստման իրականացումը կարևոր քայլ է այդ ուղերձը փոխանցելու համար:

Վարքագծային փոփոխությունը սերտորեն կապված է անհամապատասխան արժեքների փոփոխության հասկացության հետ: Արժեքների փոփոխումը մարտահրավեր է, որը հաղթահարում են սովորողները՝ հասկացությունների հստակ ընկալում (գիտելիք) ձևավորելու և այդ գիտելիքը կիրառելու հմտությունների ձեռքբերման միջոցով: Սովորողներին համոզելը՝ կիրառելու ՄԻԵԿ-ը, կարող է նշանակել, որ անհրաժեշտ է վերանայել առկա արժեքները: Եթե իրավական ոլորտի մասնագետները համոզվում են, որ ՄԻԵԿ-ի կիրառությունն անհրաժեշտ է, ուրեմն՝ տեղի է ունեցել մոտեցման փոփոխություն:

Սույն ուղեցույցում հստակեցվում է, թե ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել HELP-ի մեթոդաբանության միջոցով մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ծրագիր մշակելու համար: Այն ուղղված է վերապատրաստում իրականացնող այն հաստատություններին, որոնք ցանկանում են մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը ներառել կամ ամրապնդել իրենց ուսումնական ծրագրերում՝ լինի այն նախնական, թե շարունակական վերապատրաստում: Այն նաև ուղղված է աջակցելու բոլոր նրանց, ովքեր ներգրավված են իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման մշակման հարցերում, երբ այն կարող է օգտագործվել որպես վերապատրաստման գործիք տարբեր իրավիճակներում և, ընդհանրապես, տեղեկացնելու իրավական ոլորտի մասնագետներին HELP ծրագրի վերաբերյալ, և թե ինչպես այն կարող է օգտակար լինել իրենց մասնագիտական ոլորտում:

Մարդու իրավունքների ոլորտում արդյունավետ վերապատրաստումը խիստ կարևոր է:

Սույն ուղեցույցն անդրադառնում է, թե ինչպես մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը տարբեր փուլերում կարող է արդյունավետ կերպով նպաստել ներպետական մակարդակում ՄԻԵԿ-ի ավելի արդյունավետ կիրառությանը:

## Ինչո՞ւ է կարևոր արդյունավետ վերապատրաստումը

- Պատշաճ վճիռների կայացումը բխում է լավ և արդյունավետ վերապատրաստումից:
- Իրավական կրթության փորձառությունը գուցե ամենադրականը չի եղել: Դա կարող է անդրադառնալ վերապատրաստման նկատմամբ իրավական ոլորտի մասնագետների մոտեցման վրա:
- Հնարավոր է, որ դասընթացավարները դիդակտիկ ոճի ուսուցման և վերապատրաստման նախնական փորձառություն ունենան: Արդյունքում, նրանցից շատերին ավելի հարմար կլինի «վերապատրաստման» այն հասկացությունը, որը նշանակում է գիտելիքների տրամադրում դասախոսությունների ձևով: Միևնույն ժամանակ, թեմայի վերաբերյալ խոր գիտելիքների պակասը կարող է ընկալվել որպես խոչընդոտ:
- Մասնագիտական վերապատրաստման մեթոդները կարող են մեծապես հարստացվել բարձրագույն կրթության ոլորտում զարգացումներից և ընդհակառակը:
- Դատավորները, դատախազները և փաստաբանները, անկասկած, առաջին կուրսի ուսանողներ չեն, սակայն նրանց ուսումնառելու ոճը դժվար թե հիմնովին տարբերվի իրավական կրթությանը նոր ձեռնամուխ եղած անձանց ուսումնառության ոճից: Պարզապես նրանք (և այլ մասնագետներ) փորձառություն ունեն: Ի տարբերություն իրավաբանական ֆակուլտետի տիպիկ ուսանողի՝ (իրավական) աշխարհի նրանց ընկալումն առավել զարգացած է:

> «HELP-ը համաեվրոպական վերապատրաստման միակ հարթակն է, որն աջակցում է բոլոր անդամ պետություններին՝ արդյունավետ ինտեգրելու Կոնվենցիան ներպետական իրավական և դատական վերապատրաստման ոլորտ»:

Սույն ուղեցույցում օգտագործվում են հետևյալ պատկերակները

| | |
|---|---|
| | Հարց |
| | Ստուգացանկ/քայլ առ քայլ |
| | Հաջողված պատմություն |
| | Նշել |
| | Կարևոր գաղափար |
| | Նպատակ |
| | Օրինակ |
| | Այցելել ինտերնետային կայք |
| | Մեջբերում |

# ՆԱԽԱԲԱՆ

**Թորբյորն Յագլանդ**
*Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար*
*Secrétaire Général du Conseil de l'Europe*

Ինձ համար անչափ հաճելի է արժանին մատուցել HELP ցանցին՝ իրավական կրթության միակ համաեվրոպական ծրագրին, որը համախմբում է վերապատրաստման ազգային ինստիտուտները և փաստաբանների միությունները ամբողջ Եվրոպայից:

Ես ձեր աշխատանքի մեծ աջակիցն եմ:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված հիմնարար ազատությունները պաշտպանելու լավագույն ուղին դրանք անդամ պետությունների ներպետական օրենքներում, գործելակերպերում և մշակույթում սերմանելն է:

Ստրասբուրգը միշտ էլ կլինի ամբողջ մայրցամաքով մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության խթանմանը նվիրված ակտիվ գործընկեր:

Սակայն Կոնվենցիայի հիմնական երաշխավորը պետություններն են, նպատակը միշտ դա է եղել:

Եվ ես շատ գոհ էի, որ Եվրոպայի արտաքին գործերի նախարարները 2015թ. Բրյուսելում հանդիպման ժամանակ կոչ են արել հզորացնել HELP ծրագիրը:

Անշուշտ, HELP-ը նպատակ չի հետապնդում փոխարինել վերապատրաստման ազգային ինստիտուտները:

Դուք եք մարդու իրավունքների կրթության մատուցողները, ինչպեսև ազգային կառավարություններն են Կոնվենցիայի պատասխանատուները:

Սակայն կարևոր է, որ մենք հնարավոր ամեն ինչ անենք՝ Եվրոպայում իրավական ոլորտի մասնագետներին աջակցելու նպատակով, մինչ նրանք հարմարվում են սրընթաց զարգացող միջազգային իրավունքի մարմնին և արձագանքում մարդու իրավունքների փոփոխվող և հաճախ հրատապ մարտահրավերներին:

Ուստի, թույլ տվեք մեկ անգամ ևս շնորհավորել ցանցին: Մաղթում եմ ձեզ ամենայն բարիք ապագայում:

**HELP-ի քարտուղարությունը ցանկանում է շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր հեղինակել են այս ուղեցույցը: Մասնավորապես՝**

**Վինսենթ Բերգեր (Vincent Berger).** Փարիզում գործող և Եվրոպայի քոլեջում դասավանդող փաստաբան է, որտեղ նա մարդու իրավունքների եվրոպական պաշտպանություն է ուսուցանում: Նա յոթ տարի շարունակ եղել է իրավախորհրդատու Մարդու իրավունքների եվրոպական դատարանում:

**Դոկտոր Գրեգորժ Բորկովսկի (Dr. Gregorz Borkowski).** դատավոր է՝ Լեհաստանի Արդարադատության ազգային խորհրդի գրասենյակի ղեկավարը: Նա HELP-ի խորհրդակցական խորհրդի անդամ է և առաջին համակարգողը: Մինչև 2015թ. Լեհաստանի Արդարադատության և հանրային դատախազության ազգային դպրոցում (KSSiP) նշանակում ստանալը եղել է դպրոցի Միջազգային համագործակցության բաժնի ղեկավարը՝ ի թիվս այլնի պատասխանատու լինելով մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատավորների և դատախազների վերապատրաստման համար: 2011-ից ի վեր նա եղել է Դատական ուսուցողական եվրոպական ցանցի (ԴՈՒԵՑ) ենթաաշխատանքային խմբի ակտիվ անդամ՝ պատասխանատու լինելով անդամ պետությունների արդարադատական համակարգի անդամների համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման միջոցառումների կազմակերպման համար՝ աշխատելով որպես փորձագետ և նախագահ: Իրավաբանական գիտությունների դոկտոր է, 2010-ից դասախոսում է համալսարաններում, մասնակցել է արդարադատական վերապատրաստման բազմաթիվ միջոցառումների Արևելյան և Արևմտյան Եվրոպայում՝ որպես դասախոս և մարդու իրավունքների խնդիրներին վերաբերող սեմինարների նախագահ: 2013-2014 թթ. մասնակցել է Ստրասբուրգում Մարդու իրավունքների եվրոպական դատարանում իրականացվող դատական վերապատրաստման երկարաժամկետ ծրագրին:

**Իեն Քուլկին (Iain Culkin).** ուսուցման տեխնոլոգ և ինստրուկցիոն դիզայներ է ՄԹ-ից: ՄԹ-ի Քաղաքացիական ծառայության ոլորտում էլեկտրոնային ուսուցման 8 տարվա աշխատանքից հետո Իենը ստեղծել է էլեկտրոնային ուսուցման սեփական ընկերությունը: Էլեկտրոնային ուսուցման առավելություններն այնպիսին են, որ նա նպատակ ունի ոգեշնչել կազմակերպություններին օգտագործել ուսուցման այս ձևաչափերը՝ միաժամանակ նրանց քաջալերելով հիմնվել ներքին արտադրության վրա: 2014թ. փետրվարից Իենն աջակցել է HELP ծրագրին էլեկտրոնային ուսուցման մեթոդաբանության հարցերում և օգնել թիմին մշակել էլեկտրոնային ուսուցման տպավորիչ հարթակ:

**Աստրիդ Հոփմա (Astrid Hopma).** Նիդեռլանդների արդարադատական համակարգի վերապատրաստման և ուսուցման կենտրոնի (SSR) թվային ուսուցման ավագ խորհրդատուն է: Ուսումնական ծրագրերի և վերապատրաստման դասընթացների մշակող աշխատելուց հետո նա վերջին տարիներին առավել ակտիվ հետաքրքրվում է էլեկտրոնային ուսուցման ոլորտով: Ներկայումս նա զուգակցված ուսուցման գծով խորհրդատու և դասընթացավար է: Նրա աշխատանքային գործունեության ուշադրության կենտրոնում է թվային ուսուցման փորձառության ուսումնասիրությունն ու բարելավումը, ուսանողների սպասելիքների բավարարումը և իրավական ոլորտի մասնագետների համար առավել դրական կրթական արդյունքների ապահովումը:

**Դոկտոր Արտաշես Խուրշուդյան.** Արդարադատության ակադեմիայի հեռաուսուցման վարչության պետն է, Հայաստանի Հանրապետության Երևանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ֆակուլտետի հեռաուսուցման լաբորատորիայի վարիչը: Արտաշես Խուրշուդյանը հեռաուսուցման և էլեկտրոնային ուսուցման վերաբերյալ բազմաթիվ հոդվածների և հետազոտությունների հեղինակ է: Նրա մասնագիտական հետաքրքրությունները բաց և հեռաուսուցման տեսության ու գործնական կիրառության, շարունակական կրթության և ցկյանս կրթության, կրթական նորարար տեխնոլոգիաների, կրթության սոցիոլոգիայի և փիլիսոփայության ոլորտներում են:

**Պրոֆեսոր Մարթին Կուիյեր (Prof. Martin Kuijer)**. Նիդեռլանդների անվտանգության և արդարադատության նախարարության Մարդու իրավունքների բաժանմունքի ղեկավարն է և Մարդու իրավունքների օրենսդրության պրոֆեսոր Ամստերդամի ազատ (VU) համալսարանում: Նա ավելի քան 15 տարի եվրոպական տարբեր երկրներում պատասխանատու է եղել մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումների համար: Նիդեռլանդներում նա վերապատրաստում է Հոլանդիայի արդարադատական համակարգի ներկայացուցիչներին, իրավաբաններին, պետական պաշտոնյաներին (ներառյալ՝ ներգաղթի և նատուրալիզացիայի ծառայության պատասխանատուներին) և իրավաբան ու-

սանողներին՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի գծով:

**Ջիմ Մըրդոք (Jim Murdoch).** միացել է Իրավունքի դպրոցին որպես փաստաբան որակավորվելուց հետո: Նա իրավաբանություն է սովորել Գլազգոյում և ստացել իրավագիտության մագիստրոսի աստիճան Բերքլիի Կալիֆոռնիայի համալսարանից: 1996-2000 թթ. եղել է Իրավաբանության դպրոցի տնօրեն: Դասավանդել է Մայնցի, Ֆրայբուրգի, Համբուրգի և Արևմտյան Փարիզ համալսարաններում և եղել է Ֆրանսիայում Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների տնօրինությունում ուսուցիչ-ստաժոր: Նա Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում Եվրոպայի խորհրդի կողմից անցկացվող սեմինարների մշտական մասնակից է և հետաքրքրված է մարդու իրավունքների պաշտպանության ոչ դատական մեխանիզմների կիրառման խնդիրներով:

*Նրանց այս նախաձեռնության հետ կապված հեղինակային աշխատանքի ամբողջական տարբերակները հասանելի են ինտերնետային կայքում:*

Ինչպես նաև

**Դոկտոր Ջեյն Մըքքենզի (Dr Jane Mckenzie)**. Գլազգոյի համալսարանի Ուսուցման և դասավանդման ծառայության Ակադեմիական զարգացման բաժնի ղեկավարն է:

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| **ԲԱ/ՓՄ** | Փաստաբանների միություն |
| **CCBE** | Եվրոպայի փաստաբանական միությունների և իրավական համայնքների խորհուրդ |
| **CDDH/ՄԻՊԿ** | Մարդու իրավունքների հարցերով ղեկավար կոմիտե |
| **CEPEJ/ԱԱԵՀ** | Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով |
| **CM/ՆԿ** | Նախարարների կոմիտե |
| **CNUE/ԵՄՆԽ** | Եվրոպական միության նոտարիատների խորհուրդ |
| **CoE/ԵԽ** | Եվրոպայի խորհուրդ |
| **CPD/ՇՄԶ** | Շարունակական մասնագիտական զարգացում |
| **EC/ԵՀ** | Եվրոպական հանձնաժողով |
| **ECHR/ՄԻԵԿ** | Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա |
| **ECtHR/ՄԻԵԴ** | Մարդու իրավունքների եվրոպական դատարան |
| **EJTN/ԴՈՒԵՑ** | Դատավորների ուսուցման եվրոպական ցանց |
| **EU/ԵՄ** | Եվրոպական միություն |
| **HELP** | Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների ուսուցման ծրագիր |
| **HRE/ՄԻԿ** | Մարդու իրավունքների կրթություն |
| **HRTF/ՄԻՀՀ** | Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամ |
| **HUDOC** | Մարդու իրավունքների փաստաթղթադարան |
| **IT/ՏՏ** | Տեղեկատվական տեխնոլոգիաներ |
| **LGBT/ԼԳԲՏ** | Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր |
| **NGOs/ՈԿԿ-ներ** | Ոչ կառավարական կազմակերպություններ |
| **NTI/ՎԱԻ** | Վերապատրաստման ազգային ինստիտուտ |
| **OB/ՍԲ** | Սովորական բյուջե |
| **OHCHR/ՄԻԳՀԳ** | (ՄԱԿ-ի) Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ |
| **OSCE/ԵԱՀԿ** | Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| **PACE/ԵԽԽՎ** | Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով |
| **P&DR/ԿԶՎ** | Կատարողականի և զարգացման վերանայում |
| **SCORM** | Էլեկտրոնային ուսուցման ծրագրերի մշակման միջազգայնորեն ընդունված տեխնիկական ստանդարտ, որն ապահովում է ուսուցման կառավարման բոլոր համակարգերի համատեղելիությունը |
| **TOR/ԻՇ** | Իրավասությունների շրջանակ |
| **TOT/ՎՎՀ** | Վերապատրաստում վերապատրաստողների համար |
| **UNHCR/ՄԱՓԳՀ** | ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ |
| **UNICRI/ՄԱՄՔԱԳԻ** | ՄԱԿ-ի Միջտարածաշրջանային քրեական և արդարադատության գիտահետազոտական ինստիտուտ |
| **UNODC/ՄԱԹՀՊԳ** | ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակ |

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
LAWYERS
PROSECUTORS
JUDGES
LEGAL
HELP
PROFESSIONALS
EDUCATION
PROGRAMME
CAPACITY
PLATFORM
QUALITY
HUMAN RIGHTS

# ՄԱՍ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Վերապատրաստում մարդու իրավունքների վերաբերյալ իրավական ոլորտի մասնագետների համար

Իրավական ոլորտի մասնագետների մասին խոսելիս մենք կիրառում ենք «վերապատրաստում» բառը: Սակայն, ընդհանուր առմամբ, «մարդու իրավունքների կրթություն» (ՄԻԿ) բառերը, որպես կանոն, օգտագործվում են՝ ներառելու մարդու իրավունքների վերաբերյալ ինչպես մասնագիտական, այնպես էլ նախնական վերապատրաստումները: Երկուսն էլ կիրառվում են այս ուղեցույցում:

### ա. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը և մարդու իրավունքների պաշտպանության վրա դրա հնարավոր ազդեցությունը

Մարդու իրավունքների կրթությունը համալիր ուսուցում է, որն ավելացնում է մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքները, հմտությունները և արժեքները/վարքագիծը: Այն նաև ցկյանս ուղևորություն է, որը պետք է սկսվի դպրոցում և շարունակվի անձի մասնագիտական ամբողջ կյանքի ընթացքում: Այն սկսվում է անհատական մոտեցումից՝ այնուհետև ներառելով առավել լայն մասնագիտական համայնք:

Սույն ուղեցույցը հատկապես անդրադառնում է ՄԻԿ-ին և ուղղված է կոնկրետ թիրախային խմբին, այն է՝ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների իրավական ոլորտի մասնագետներին (հիմնականում՝ դատավորների, դատախազների և փաստաբանների):

Միանգամայն ակնհայտ է, որ դատական շղթայի բոլոր դերակատարները դեր և պատասխանատվություն ունեն՝ կապված, թե ինչպես են իրենց երկրներում պաշտպանվում մարդու իրավունքները: Անշուշտ, նրանք միակը չեն, որ ազդեցություն ունեն մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի վրա: Այդուհանդերձ, խիստ կարևոր է երաշխավորել, որ դատավորները, դատախազները և փաստաբանները իրազեկ են և գիտեն, թե ինչպես վկայակոչել մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական և միջազգային մեխանիզմներն իրենց մասնագիտական կյանքում:

Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումն այդ հավակնոտ նպատակի իրականացմանը նպաստող գործիքներից մեկն է: Լոկ վերապատրաստումը չի կարող երաշխավորել, որ մարդու իրավունքներն արդյունավետորեն կպաշտպանվեն ներպետական մակարդակում: Այդուհանդերձ, ՄԻԿ-ը նպաստում է մարդու իրավունքների ոտնահարումների և բռնի հակամարտությունների երկարաժամկետ կանխարգելմանը, հավասարության ու կայուն զարգացման խթանմանը և ժողովրդավարական համակարգում[1] որոշումների կայացման գործընթացին մասնակցության ամրապնդմանը:

Կրթության ազդեցությունը գնահատելն առհասարակ դժվար է: Սակայն մարդու իրավունքների ոլորտում կրթությունը շատ ավելի խրթին է գնահատել՝ նկատի առնելով դրա **անշոշափելի** բնույթը: Իսկապես, դա բարդ նախաձեռնություն է, քանի որ մարդու իրավունքների կրթության վերջնական նպատակը մարդու իրավունքների նկատմամբ առավել մեծ հարգանքն է, որը հանգեցնում է **սոցիալական փոփոխությունների**: Դժվար է չափել, թե արդյոք այն իր նպատակին հասել է՝ առանց հաշվի առնելու սոցիալական, քաղաքական և տնտեսական գործոնները:

### բ. Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության տարբեր մակարդակները

**Սոցիալական փոփոխության** նպատակը բավական ընդգրկուն է: Ահա թե ինչու վերապատրաստման ոլորտում այդ նպատակը պետք է հստակ սահմանվի: Այդ անելու արդյունավետ եղանակ է՝ սահմանել այն փոփոխությունները, որոնք ակնկալվում են տարբեր մակարդակներում՝

- **Անհատական՝** ինչ գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք և վարքագիծ կարող է ձեռք բերել, ամրապնդել կամ փոխել անհատը, օրինակ՝ սովորողները վստահաբար

1 Վերցված է A/HRC/15/28-ից, պարբերություններ 1, 3 և 4: Գործողությունների ծրագիրն ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի կողմից 2010թ. սեպտեմբերի 30-ին (բանաձև 15/11):

կիրառեն նոր տեխնոլոգիաները մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման դասընթացներում:

- **Կազմակերպական/խմբային**՝ ակնկալվող փոփոխությունները, երբ սովորողներն իրենց ուսումնական փորձը փոխանցում են այն խմբին, որի հետ աշխատում են (օրինակ՝ գիտելիքների տրամադրում այլ դատարանների դատավորներին և այլն):
- **Համայնքային/հասարակական**՝ ակնկալվող փոփոխությունները, երբ որևէ կազմակերպություն կամ հաստատություն իր սովորածը փոխանցում է ավելի լայն համայնքին: Այդպիսի մակարդակի հասնելը և մարդու իրավունքների ոլորտում արդյունավետ ու կայուն վերապատրաստումը հնարավոր է միայն Վերապատրաստման ազգային ինստիտուտների (ՎԱԻ) և Փաստաբանների միությունների (ՓՄ) աջակցության միջոցով: Ահա թե որտեղ կարող է կարևոր դեր խաղալ HELP ծրագիրը:

Արդյունավետ վերապատրաստումը նաև ենթադրում է, որ այն գնահատվել է: **Ինչո՞ւ է** այդքան կարևոր գնահատել վերապատրաստումը: Գնահատումը, ըստ էության, մարդու իրավունքների կրթության մասնագետների տրամադրության տակ եղած առավել հզոր գործիքներից մեկն է: Այն թույլ է տալիս չափել վերապատրաստման արդյունավետությունը, տրամադրել բացատրություններ, կատարել եզրակացություններ, մշակել առաջարկություններ և իրականացնել պատշաճ փոփոխություններ վերապատրաստման ծրագրում:

Գնահատումն ունի **2 հիմնական նպատակ՝ ուսուցման և զարգացման**, ինչպես արդեն նշվեց, ինչպես նաև **հաշվետողականության** համար: Նկատի ունենալով բյուջեի սղությունը, որին բախվում են թե՛ ներպետական և թե՛ միջազգային մակարդակներում, կարևոր է կարողանալ ապացուցել, որ մարդու իրավունքների կրթությունը հանգեցնում է հստակ արդյունքների և հավելյալ արժեք ունի իրավական ոլորտի մասնագետների և, որպես դատական ընթացակարգերի վերջնական շահառու, հասարակության համար:

Լավ գնահատումը պետք է լինի[2]՝

- **Նպատակասլաց**՝ մտապահելով հստակ նպատակ և չափելի արդյունք (SMART[3]):
- **Գործողություններին ուղղված**՝ վերապատրաստման գնահատումը պետք է տեղեկություններ տրամադրի, որոնք կարող են օգտագործվել համապատասխան որոշումներ կայացնելու համար: Այս գործընթացը կարևոր է, երբ մասնակիցներին վերջում հարցեր են ուղղվում՝ ի՞նչ կառաջարկեիք վերապատրաստման բարելավման նպատակով:
- **Գործնական**՝ այն պետք է հաշվի առնի նորարարական եղանակները՝ առավել լավ արդյունքների հասնելու համար, և սևեռվի մասնակիցների գործնական գիտելիքների և հմտությունների վրա:
- **Մասնակցային**՝ մասնակցային մոտեցումը խթանում է մասնագիտական փորձի փոխանակումը և խրախուսում անհատական համոզմունքներին և արժեքներին քննադատական անդրադարձը: Այն հիմնված է փոխադարձ հարգանքի և ուսուցման վրա: Դա կարևոր է՝ նկատի առնելով թիրախային լսարանները, որոնց հետ աշխատում ենք: Մասնակիցների փորձից սկսելը լավ նախապայման է: Դատավորները, դատա-

2 Մանրամասն տեղեկությունների համար տես՝ http://www.ohchr.org/Documents/Publications/EvaluationHandbookPT18.pdfp.20:

3 Այս հասկացությունը կբացատրվի ստորև՝ էջ 65-66:

ՆՇՈՒՄՆԵՐ

խազները և փաստաբանները, սովորաբար, հակված են կիսվելու առօրյա աշխատանքում մարդու իրավունքների կիրառման վերաբերյալ իրենց փորձով:

- **Ինքնաքննադատական**՝ որոշ դասընթացավարներ դժվար են ընդունում վերապատրաստման մատուցման եղանակի կամ վերապատրաստման որևէ ասպեկտի վերաբերյալ կոլեկտիվ կարծիքը: Կառուցողական քննադատություն ընդունելը խիստ կարևոր է:

Ճանապարհը, որով HELP-ն անդրադառնում է վերապատրաստման գնահատմանը, հիմնված է Կիրկպատրիկի մոդելի վրա[4], որը լայնորեն կիրառվում է մարդու իրավունքների կրթության ոլորտում գնահատում իրականացնելիս: Այն կազմված է ուսուցման գնահատման չորս մակարդակից, որոնք չափում են **արձագանքը**՝ ինչ են մասնակիցները **մտածել կամ զգացել իրենց ուսման փորձի հետ կապված**: Այս մակարդակում մենք չափում ենք մասնակիցների զգացումները և անհատական արձագանքն ուսման իրենց փորձի մասին, նրանց վերաբերմունքը ուսուցման բովանդակության և գործընթացի նկատմամբ, դրա օգտակարության անմիջական ընկալումը, ընկալումն այն մասին, թե իրականում իրենք ինչ են սովորել, այն զգացումը, թե արդյոք իրենք փոխել են իրենց գաղափարները կամ ընկալումը, դասավանդողից և վերապատրաստման նյութերից գոհունակությունը, ուսումնական նյութերի մատուցմանը վերաբերող տարբեր կողմերի հետ կապված գոհունակությունը:

Շատ կարևոր է իմանալ վերապատրաստումից մասնակիցների ընդհանուր գոհունակության մակարդակը, որի մասին կարելի է տեղեկացնել այլ մարդկանց, որոնք գուցե մտածում են ապագա դասընթացներին մասնակցելու մասին: Սա նաև կարևոր է ավելի ուշ փուլում գնահատմանն արձագանքելու համար նրանց նախապատրաստելու առումով:

**Ուսուցում**՝ որպես վերապատրաստման արդյունք՝ **գիտելիքների կամ կարողությունների ավելացում**: Այս մակարդակում մենք չափում ենք, թե արդյոք ծրագրի արդյունքում տեղի է ունեցել սովորողների գիտելիքների և հմտությունների աճ կամ փոփոխություն նրանց վերաբերմունքի կամ վարքագծի մեջ:

**Վարքագիծ**՝ այստեղ մենք չափում ենք, թե մասնակիցներն ինչպես են կիրառել իրենց սովորածը դասընթացից հետո: Դա մասամբ կարելի է գնահատել կատարողականի ցուցիչների սահմանման միջոցով: Իրավական ոլորտի մասնագետների դեպքում անհրաժեշտ է հիմնվել ՎԱԻ-ների/ՓՄ-ների վրա՝ մասնագիտական գործելակերպում վարքագծային փոփոխության և/կամ փոփոխության համակարգված և ինստիտուցիոնալացված որոշ գնահատումներ կազմակերպելու առումով: Դա կարելի է անել միայն ներպետական մակարդակում, և եթե մասնակիցները (օրինակ՝ դասընթացի մասնակիցների շրջանում նախապես տեղեկացված որևէ ֆոկուս խումբ) հանձն առնեն պատասխանել **գնահատման հարցաթերթիկին վերապատրաստման դասընթացից 6 ամիս, 1 տարի և 2 տարի անց**:

Վարքագծում փոփոխությունների և սովորածի փոխանցման չափումը (այսինքն՝ սովորածի կիրառությունն աշխատանքում և այլոց հետ սովորածը կիսելու գործնական եղանակով) շատ ավելի դժվար է հաշվարկել և ամենասկզբից պահանջվում է լավ մշակված գնահատման համակարգ: Չնայած դժվարությանը՝ գնահատումն այս մակարդակում խիստ կարևոր է, քանի որ այն ուսումնասիրում է վերապատրաստման արդյունքում սովորած նյութի կիրառումը և իրականացումը: Լավ արձագանքը (1-ին մակարդակ) և ավելի լավ կարողությունները (2-րդ մակարդակ) կորցնում են իրենց արժեքը, եթե ոչինչ չի փոխվում սովորողի աշխատանքում և/կամ համայնքի համատեքստում:

4 http://www.kirkpatrickpartners.com/OurPhLOsophy/TheKirkpatrickModel:

**Ազդեցություն**՝ մասնակիցների գործունեությունից բխող հետևանքները հասարակության համար: 4-րդ մակարդակում մենք չափում ենք ծրագրում սովորողների մասնակցության ազդեցությունը կազմակերպության կամ ավելի լայն համայնքի վրա: Սա նաև հայտնի է որպես ազդեցության վերլուծություն և հետագա դիտարկում և բևեռվում է երկարաժամկետ արդյունքների չափման վրա: Ուսուցման ազդեցության մակարդակի գնահատումը նման է ծրագրի գնահատմանը: Երկուսի դեպքում էլ նպատակն է գնահատել ուսուցման ամբողջ գործընթացը սկզբից մինչև վերջ:

Դա ավելի հեշտ է անհատ սովորողների մակարդակում և շատ ավելի դժվար՝ ավելի լայն համայնքում: Արտաքին գործոնները հասարակությունում և մարդու իրավունքների գլոբալ համատեքստը կարող են մեծապես ներգործել մարդու իրավունքների և վերապատրաստման ու կրթության աշխատանքի կատարման հետ կապված՝ կազմակերպությունների և համայնքների կարողությունների վրա թե՛ դրական, թե՛ բացասական առումով: Դրանով առավել դժվարանում է կազմակերպությունների գործողությունների և ավելի լայն համայնքում կամ հասարակությունում տեղի ունեցող փոփոխությունների միջև կապերի ստեղծումը:

ՄԻԵԿ-ի վերաբերյալ HELP-ի վերապատրաստման նյութերի դեպքում դրանց ինտեգրումը վերապատրաստման ներպետական ծրագրերում ՎԱԻ-ների և/կամ ՓՄ-ների կողմից լավագույն երաշխիքն է ուսուցման կայունության և ընդլայնման ապահովման համար:

## գ. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման հատուկ թիրախային խմբեր

Այս բաժինն անդրադառնում է հատուկ թիրախային խմբերի, ինչպես օրինակ՝ դատավորների, դատախազների, փաստաբանների, պետական պաշտոնյաների և մարդու իրավունքների ազգային ինստիտուտներում աշխատող մասնագետների, օմբուդսմենի գրասենյակների կամ ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունների հատուկ կարիքներին:

**Դատավորներ**

Դատական համակարգի աշխատակիցները կարող են հատկապես հետաքրքրված լինել կոնկրետ խնդիրներով: Նրանք կցանկանան իմանալ, թե ինչպես կարելի է մարդու իրավունքների եվրոպական կամ միջազգային չափորոշիչները վկայակոչել ներպետական դատարանում, ինչ իրավական ուժ պետք է տրվի Կոնվենցիայի որևէ իրավունքի մեկնաբանությանը՝ ըստ ՄԻԵԴ-ի (պոտենցիալ կերպով նաև մեկ այլ պետության դեմ ընդունած վճռում), արդյոք Կոնվենցիայի որոշ իրավունքներ պետք է կիրառվեն դատավորի կողմից ի պաշտոնե, և ինչ կարելի է անել, եթե պարզվել է, որ ներպետական օրենսդրության կիրառումը խախտել է Կոնվենցիայի չափորոշիչները (այսինքն՝ արդյոք չպետք է կիրառել ներպետական հակասող կանոնը, կիրառել ներպետական իրավունքի պայմանագրին համահունչ մեկնաբանություն կամ այլ արդյունք): Ո՛չ Կոնվենցիան և ո՛չ էլ Դատարանի նախադեպային իրավունքը պատասխան չեն տալիս այս հարցերին: Հետևաբար, մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման այս ասպեկտը մեծապես կախված կլինի ներպետական (այսինքն՝ սահմանադրական) առկա իրավակարգից:

ՆՇՈՒՄՆԵՐ

### Դատախազներ

Դատախազները երբեմն կարող են մարդու իրավունքները դիտարկել որպես խոչընդոտ իրենց աշխատանքի կատարման ժամանակ՝ «ակնհայտորեն» մեղավորների դատապարտումն ապահովելու առումով: Ուստի դատախազների համար նախատեսված՝ մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը պետք է շեշտի, որ քրեական հետապնդման վերջնական նպատակն արդար դատաքննության երաշխավորումն է՝ արդար ինչպես մեղադրյալի, այնպես էլ այն համայնքի համար, որին ներկայացնում է դատախազը: Դատախազներին անհրաժեշտ է հիշեցնել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց ունեցած առանձնակի հզոր դիրքի մասին, հատկապես, երբ որ նրանք որոշակի վերահսկողություն են իրականացնում իրավապահների նկատմամբ (օրինակ՝ այն մոտեցման առնչությամբ, որ նրանք որդեգրում են հնարավոր ապօրինի կամ ոչ պատշաճ ճանապարհով ձեռք բերված ապացույցների կիրառման հետ կապված)[5]:

Տես Կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցներ և Քրեական գործերով միջազգային համագործակցություն դասընթացը

### Փաստաբաններ

Վերոնշյալից բացի, մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը փաստաբանների համար պետք է բևեռվի ներպետական վարույթներում և ՄԻԵԴ-ին ուղղված հայցերում մարդու իրավունքների չափորոշիչների վկայակոչման ընթացակարգային ասպեկտների վրա: Ներպետական դատական վարույթներում մարդու իրավունքների հետ կապված հայցը պետք է ներկայացվի ըստ էության և պատճառաբանված: Այլապես, ներպետական դատարանը կարող է պարզապես հնարավորություն ստանալ անտեսելու բարձրացված փաստարկներն իր դատական վճռում: Փաստաբանները պետք է հավասարապես տեղեկացված լինեն ՄԻԵԴ բողոք ներկայացնելու ընթացակարգային պահանջներին: Դատարան ներկայացված դիմումների ավելի քան 90%-ը հայտարարվել է ակնհայտորեն անհիմն կամ այլ կերպ՝ անընդունելի: Ստրասբուրգի ընթացակարգային պահանջների առավել լավ ընկալումը կարող է հանգեցնել ներկայացվող դիմումների քանակի նվազմանը, ինչը ոչ միայն շահավետ կլինի այս դիմումներին անդրադառնալիս Դատարանի սուղ ռեսուրսների, այլև դիմումատուների մեծ մասի հիասթափությունից խուսափելու առումով[6]:

5 Դասընթացավարներին խորհուրդ է տրվում, ի թիվս այլնի, հղում կատարել Դատախազների համար նախատեսված՝ Մարդու իրավունքների ձեռնարկին, որը պատրաստվել է 2000թ. Քեյփթաունի Դատախազների միջազգային միության (ԴՄՄ/IAP) տարեկան համաժողովից հետո մարդու իրավունքների և դատախազների վերաբերյալ: 2008թ. հրատարակվել է երկրորդ խմբագրությամբ (E. Myjer, B. Hancock & N. Cowdery (eds), *Human Rights Manual for Prosecutors*, Wolf Legal Publishers, 2008), որը թարգմանվել է տարբեր լեզուներով, այդ թվում՝ ֆրանսերեն, իսպաներեն, թուրքերեն և ռուսերեն:

6 Այս առումով դասընթացավարներին խորհուրդ է տրվում վկայակոչել Ընդունելիության չափանիշների վերաբերյալ գործնական ուղեցույցը (հատկապես պետք է ընդգծել դատարանի ընթացակարգի նոր՝ Թիվ 47-րդ կանոնը), Պրակտիկ ցուցումները, ընդունելիության պայմանների վերաբերյալ տեսանյութը, «ինչպես ներկայացնել վավեր գանգատ» տեսանյութը և գործնական այլ տեղեկություններ, որոնք մատչելի են Դատարանի ինտերնետային կայքում («Դիմումատուներ» վերնագրի ներքո): HELP առցանց դասընթացը «ՄԻԵԴ ներկայացված դիմումների ընդունելիության չափանիշների» վերաբերյալ նույնպես մատչելի է մի քանի լեզուներով HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում (տես՝ անգլերեն տարբերակը):

Տես ՄԻԵԴ բերված հայցերի ընդունելիության չափանիշները դասընթացը

**Պետական պաշտոնյաներ**

Օրենսդրություն մշակողները կամ քաղծառայողները, որոնք աշխատում են նախարարություններում, պատասխանատու են՝ երաշխավորելու օրենսդրության նախագծի և քաղաքականության համապատասխանությունը մարդու իրավունքների չափորոշիչներին: Հաճախ օրենքների նախագծերը և նոր քաղաքականությունն անդրադառնում են մարդու իրավունքների խնդիրներին: Քաղծառայողները պետք է ունակ լինեն՝ հայտնաբերելու մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող մտահոգությունները և տեղյակ լինեն, որ անհրաժեշտ է հիմնավորել, որ մարդու ոչ բացարձակ իրավունքներին (ինչպես օրինակ՝ անձնական կյանքի և սեփականության իրավունքը) որոշակի միջամտությունները համարվում են անհրաժեշտ: Պետական իշխանությունները պետք է կարողանան ի ցույց դնել, որ վիճարկվող միջոցն իրապես արդյունավետ կարող է լինել սահմանված քաղաքականության նպատակին հետամուտ լինելու համար (որը կարող է համարվել օրինական), թե ինչու է վիճարկվող միջոցն անհրաժեշտ՝ ի հավելումն արդեն առկա մեխանիզմների, որն է խնդրո առարկա ազատության նկատմամբ իրավական բոլոր կանոնների գումարային ազդեցությունը և թե արդյոք խնդրո առարկա միջոցի և ներգործված ազատության միջև առկա է համաչափ հարաբերություն: Բացի այդ, կենտրոնական կառավարության համար աշխատող քաղծառայողները պետք է իրազեկվեն, որ անհրաժեշտ է իրավական պաշտպանություն երաշխավորել այն մարդկանց համար, որոնք տուժել են խտրական քաղաքականությանը (անուղղակի) առնչվող խնդիրների հետ կապված, և որ որոշ դեպքերում ցանկալի է նախատեսել անցումնային իրավունք՝ տուժած քաղաքացիներին իրենց վարքը համապատասխանեցնելու հնարավորություն ընձեռելու նպատակով (հատկապես կարևոր է սեփականության իրավունքի վրա ազդող քաղաքականության հետ կապված):

Որոշ պետական պաշտոնյաներ աշխատում են առանձնակի վտանգավոր պայմաններում՝ ոստիկանները, քրեակատարողական հիմնարկի անձնակազմը, ներգաղթի ծառայության աշխատակիցները և փակ հոգեբուժական կամ այլ հաստատություններում աշխատողները, որոնք խնամք են տրամադրում խոցելի անձանց: Այստեղ ի հայտ են գալիս վերապատրաստման միանգամայն այլ կարիքներ[7]:

Տես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ պետության պարտավորությունների մասին պետական պաշտոնյաներին տեղեկացնելու համար նախատեսված գործիքակազմը

7 Վերջերս մշակվել է *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված՝ պետության պարտավորությունների մասին պետական պաշտոնյաներին տեղեկացնելու համար նախատեսված գործիքակազմ:* Դրան կարելի է ծանոթանալ այստեղ՝ http://echr-toolkit.coe.int: Գործիքակազմը գործնական տեղեկություններ է տրամադրում, որոնք նախատեսված են՝ պետական պաշտոնյաներին ուղղորդելու առօրյա ամենատարբեր իրավիճակներում, որոնցում նրանք կարող են հայտնվել: Այն ենթադրում է նախնական իրավական գիտելիքներ:

ՆՇՈՒՄՆԵՐ

**Քաղաքացիական հասարակություն, մարդու իրավունքների ազգային ինստիտուտներ և օմբուդսմենի գրասենյակներ**

Մարդու իրավունքների ազգային ինստիտուտների, օմբուդսմենների և քաղաքացիական հասարակության համար աշխատող իրավական ոլորտի մասնագետները կստանան ոչ միայն գիտելիքների ձեռքբերմանը, այլև հմտությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ, ինչպես օրինակ՝ կառավարման և հաղորդակցության հմտությունները (և նույնիսկ առանձնահատուկ արժեք կարող է ունենալ լրատվամիջոցների հետ կապերի զարգացմանն ուղղված լոբբիստական գործունեությունը):

## դ. Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստմանը բնորոշ մարտահրավերները

### i. Չափորոշիչների և գործելակերպի միջև լարվածություն

Գոյություն ունի անհաղթահարելի լարվածություն մարդու իրավունքների չափորոշիչների լիարժեք ապահովման և այն դժվարությունների միջև, որոնց առերեսվում են իրավական ոլորտի մասնագետներն իրենց ամենօրյա աշխատանքում: Այս դժվարություններից որոշները գուցե պայմանավորված են այն իրավական համակարգով, որում իրավական ոլորտի մասնագետները ստիպված են աշխատել, բյուջետային սահմանափակումներով կամ սահմանափակ աշխատուժով, կամ էլ տվյալ կազմակերպության ներսում կառավարման ավագ օղակների սահմանած գերիշխող «մշակույթով»: Թերևս օգտակար կլինի մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ընթացքում բացահայտ կերպով անդրադառնալ այդ խնդիրներին: Վերապատրաստողը կարող է ուղղորդել և գործնական խորհուրդ տալ միայն այն դեպքում, եթե սովորողներն անկաշկանդ բարձրացնեն այն խնդիրները, որոնց գործնականում բախվում են (և, հավանաբար, ոչ այնքան կատարյալ ձևով, որով այս խնդիրները լուծվում են մարդու իրավունքների տեսանկյունից): Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստողները պետք է խուսափեն տալ դատապարտող որակումներ: Փոխարենը վերապատրաստողի խնդիրն է բարձրացնել իրազեկության մակարդակը կիրառելի չափորոշչի շուրջ, բացատրել այն պատճառները, թե ինչու է այդպիսի չափորոշիչ մշակվել մարդու իրավունքների պաշտպանության մարմինների կողմից և բացատրել, թե ինչպես կարելի է գործնականում (աստիճանաբար) երաշխավորել այդ չափորոշիչի կիրառումը:

Անդրադարձեք այս կետին՝ արդյունավետ վերապատրաստման երեք հնարավոր խոչընդոտների տեսանկյունից, որոնցից յուրաքանչյուրը ներառում է մի հարթություն, որն անհրաժեշտություն է առաջացնում բացահայտել և անդրադառնալ նրան, թե ինչպես են սովորողներն ընկալում իրենց դերերը և պարտականությունները:

Կազմակերպության ոգուն համահունչ չընկալվող վտանգներ

Հնարավոր է, որ վերապատրաստումը չհամապատասխանի կազմակերպության նպատակին, ինչպես այն ընկալում են սովորողները: Անհրաժեշտ է, որպեսզի կազմակերպության տնօրինությունը և ղեկավարությունն աջակցի վերապատրաստման դասընթացի բովանդակությանը: Օրինակ՝ ոստիկանության համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման համատեքստի շրջանակում հնարավոր է, որ արմատացած «մշակույթը» կամ միջավայրը համարի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը որպես կազմակերպված հանցավորության (մասնավորապես՝ ահաբեկչության) դեմ «պայքարի»

հետ անհամատեղելի: Այսինքն՝ հանցավորության դեմ «պայքար» մղելու համար ֆիզիկական ամբողջականության կամ արդար դատաքննության երաշխիքների որոշ խախտումներ կարող են անխուսափելի համարվել կազմակերպության ներսում: Այդուհանդերձ, եթե մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը շեշտադրում է, որ պատմական փորձի համաձայն՝ կազմակերպված հանցավորության կամ ահաբեկչության դեմ պայքարի կարճ ուղիներ չկան, կամ որ մարդու իրավունքները քրեական գործընթացում ճշմարտության հասնելուն նպաստող գործիքներ են (ոչ թե զուտ որպես «կասկածյալի» իրավունքներ), ապա մարդու իրավունքները՝ որպես պարտականությունների արդյունավետ կատարման խոչընդոտ դիտարկելու ցանկացած միտում, կարող են հավասարակշռվել մարդու իրավունքների հասկացության հետ՝ որպես պետական հատվածի պաշտոնյաների համար արդյունավետ գործիք: Մարդու իրավունքների չափորոշիչները հաճախ կիրառվում են քաղաքական առումով նրբանկատ ոլորտներում (օրինակ՝ ահաբեկչական գործունեության մեջ կասկածվող անձի վտարումը):

### Մարտահրավեր անհատական «պրոֆեսիոնալիզմին»

Վերապատրաստումը (հատկապես, երբ այն մատուցվում է «օտարների» կողմից) կարող է ընկալվել որպես մարտահրավեր պաշտոնյայի (ընկալվող) «պրոֆեսիոնալիզմի» (իսկ դատական համատեքստում «դատական անկախության» հասկացության) նկատմամբ: Այստեղ խնդիրը վերաբերում է «պրոֆեսիոնալիզմ» հասկացության սխալ ըմբռնմանը կամ թյուրըմբռնմանը: Վերապատրաստող դասընթացավարները պետք է շեշտեն, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը պրոֆեսիոնալիզմի կարևոր հատկանիշ է (ինչպիսին է նաև շարունակական մասնագիտական զարգացման անհրաժեշտության ընդունումը): Նրանք, ում վստահվում է իրավունքի գերակայության պահպանումը, պետք է իրենք էլ հարգեն իրավունքի գերակայությունը, և դա պետք է ակնհայտ լինի (ինչպես հստակ նշված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի նախաբաններում): Վերապատրաստող դասընթացավարները պետք է հիշեն, որ մարդու իրավունքների վերաբերյալ վերապատրաստումը հավելյալ հարթություն ունի այն առումով, որ փորձում է նաև ամրապնդել պատշաճ վերաբերմունք և արժեքներ, այլ ոչ թե տրամադրել զուտ գիտելիքներ կամ հմտություններ:

### Ընկալումը, որ մարդու իրավունքներն էական գործնական առնչություն չունեն սովորողների առօրյա աշխատանքի հետ

Վերապատրաստմանը մասնակցելու կամ դրանում ներգրավվելու դժկամությունը կարող է բխել այն ընկալումից, որ վերապատրաստման ընթացքում քննարկվող հարցերը որևէ կապ չունեն սովորողների կողմից իրենց պարտականությունների կատարման հետ: Օրինակ՝ հնարավոր է, որ դատավորները չհասկանան, որ մարդու իրավունքների ոլորտում իրավագիտությունը որևէ կերպ ուղղակի առնչություն ունի դատավորների գործունեության հետ (օրինակ՝ քանի որ խոշտանգումների հետ կապված արդյունավետ հետաքննության պատասխանատվությունն ընկալվում է ավելի շատ որպես դատախազի, քան դատավորի պարտականություն), կամ որ որևէ դատական խնդրի «լուծումը» հնարավոր է առանց Ստրասբուրգի դատարանի իրավաբանությունը հաշվի առնելով: Սակայն, եթե ընդունվում է, որ վերապատրաստումը համապատասխանեցված է լսարանի կարիքներին (փոխանակ ակնկալելու, որ լսարանը որևէ ձևով կկատարի իր սեփական եզրակացություններն այն մասին, թե վերապատրաստման որ ասպեկտներն են կարևոր իր սեփական ապագա կիրառության առումով), ապա վերապատրաստումը կհամարվի

ՆՇՈՒՄՆԵՐ

արդյունավետ: Վերապատրաստումը, որն ընդհանուր բնույթի է, այլ ոչ թե համապատասխանեցված է սովորողի կարիքներին, լսարանից օտարվելու ռիսկ է պարունակում, ինչպես այն վերապատրաստումը, որն անհարկի «շեղված» է սովորողների գիտելիքների և հմտությունների առկա մակարդակը հաշվի առնելուց:

### ii. Աղբյուրների խճողվածություն

Ինչպես իրավունքի այլ ոլորտների դեպքում, մարդու իրավունքների կիրառելի չափորոշիչներին անդրադառնալիս իրավական ոլորտի մասնագետները կբախվեն աղբյուրների լայն շրջանակի հետ աշխատելու խնդրին: Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը պետք է օգնի սովորողին իրավական աղբյուրների նման բազմազանության հետ աշխատելու գործում: Մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչներն ամրագրված են ներպետական մակարդակով (օրինակ՝ սահմանադրական դրույթներ, գաղտնիության օրենքներ, հավասար վերաբերմունքի վերաբերյալ օրենսդրություն և այլն), եվրոպական մակարդակով (օրինակ՝ Եվրոպայի խորհրդի տարբեր գործիքներով և ԵՄ համապատասխան գործիքներով) և միջազգային մակարդակով (ինչպես ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների բազմաթիվ պայմանագրերով): Հետևաբար, կարևոր է գործ ունենալ զանազան գործիքների կիրառման շրջանակի, մի գործիքի նկատմամբ մյուսի ունեցած հավելյալ արժեքի և ներպետական իրավակարգում միջազգային չափորոշիչների ընդգրկման հետ:

Մասնավորապես, կարող է օգտակար լինել մի կողմից՝ ՄԻԵԿ-ի և մյուս կողմից՝ Հիմնարար իրավունքների ԵՄ խարտիայի կիրառման շրջանակի ուսումնասիրումը: Իրավական ոլորտի մասնագետը Եվրոպայում այս երկու գործիքներին էլ կբախվի, և նա պետք է հասկանա այն հանգամանքները, թե տվյալ գործի առնչությամբ ո՛ր գործիքն է կիրարկելի:

ՄԻԵԿ-ի համաձայն՝ **պետության պատասխանատվություն** (Կոնվենցիայի 1-ին հոդված) հասկացությունը վճռորոշ է: Պետությունը կարող է պատասխանատու լինել օրենսդրության (կամ այլ կանոնակարգերի)՝ ուժի մեջ մտնելու միջոցով, գործադիր իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումներով, քաղծառայողների կամ այլ պաշտոնյաների, որոնց համար պետությունը պատասխանատվություն է կրում (օրինակ՝ ոստիկանություն, քրեակատարողական հիմնարկի անձնակազմ, ներգաղթի ծառայության աշխատակիցներ և այլն), գործողություններով կամ դատական կոնկրետ որոշմամբ:

Կոնվենցիայի ներքո պետության պատասխանատվությունը, սովորաբար, ծագում է պետության կողմից սխալ գործողության հետևանքով: Սակայն Դատարանի նախադեպային իրավունքում գնալով ավելի շատ են վկայակոչվում այսպես կոչված՝ «**դրական պարտավորությունները**»:

Այսինքն՝ պետությունը պետք է գործի՝ երաշխավորելու համար մարդու որոշակի իրավունքների արդյունավետ կիրառումը (օրինակ՝ օրենքը կամ վարչական գործելակերպը փոխելու կամ նոր օրենսդրություն մշակելու պարտավորություն, ֆինանսական օգնություն տրամադրելու պարտավորություն, տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն կամ մարդու իրավունքների ենթադրյալ խախտման արդյունավետ, անհապաղ և անկախ հետաքննություն իրականացնելու պարտավորություն):

Մասնավորապես, մեկ դրական պարտավորություն վերաբերում է անհատների միջև հարաբերություններին միջամտելուն՝ **մարդու իրավունքների «մասնավոր» ոտնահարու-**

**մը** կանխելու նպատակով, այսինքն՝ մարդու իրավունքների չափորոշիչների անուղղակի հորիզոնական ազդեցությունը: Ներպետական իշխանությունների պարտականությունն է երաշխավորել, որ պետությունը սահմանում է օրենքներ, որոնք կանխարգելում են անհատ անձանց կամ կորպորացիաների կողմից մարդու իրավունքների ոտնահարումը: Եվ եթե անհատ անձիք և կորպորացիաները խախտում են մարդու իրավունքները, ապա հնարավորինս արագ պետք է իրավական միջոցներ ձեռնարկվեն՝ անդրադառնալու խախտմանը:

---

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածը պետության պատասխանատվությունը կապում է «արդյունավետ արդարադատություն» իրականացնելու հետ: **«Յուրիսդիկցիա» հասկացությունը հիմնականում կապված է տարածքի հետ**: Պատասխանատվությունը, սովորաբար, ծագում է անհատի նկատմամբ, որը գտնվում է Պայմանագրի Կողմ հանդիսացող Պետության «յուրիսդիկցիայի» ներքո՝ ֆիզիկապես դրա տարածքում ներկա գտնվելու իմաստով: Այդուհանդերձ, պետության տարածքից դուրս իրականացվող կամ ազդեցություն ունեցող գործողությունները կարող են բերել յուրիսդիկցիայի կիրառմանը բացառիկ հանգամանքներում: Դատարանի նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ նման հանգամանքներ կարող են գոյություն ունենալ, **երբ պետության գործակալներն իշխանություն հաստատել և վերահսկողություն են իրականացրել անհատի նկատմամբ տարածքի սահմաններից դուրս**: Այս կատեգորիային են դասվում դիվանագիտական և հյուպատոսական գործակալների գործողությունները, արտատարածքային պետական լիազորությունների կիրառումն օտարերկրյա կառավարության համաձայնությամբ, հրավերով կամ լռելյայն համաձայնությամբ, կամ ի վերջո պետության գործակալների կողմից արտատարածքային ուժի կիրառումը՝ անհատին իրենց վերահսկողության ներքո բերելու նպատակով: Բացառիկ հանգամանքներ կարող են ի հայտ գալ նաև, երբ ռազմական օրինական կամ ապօրինի գործողության հետևանքով Պայմանագրի Կողմ հանդիսացող Պետությունն իրականացրել է **պետական տարածքից դուրս գտնվող տարածքի վերահսկողություն**՝ ուղղակիորեն իր սեփական զինված ուժերի կամ ենթակա տեղական վարչակազմի միջոցով:

Պետությունը կարող է պատասխանատու լինել Կոնվենցիայի ներքո՝ անկախ տուժողի ազգությունից: Այն կիրառվում է Պայմանագրի Կողմ հանդիսացող Պետության յուրիսդիկցիայում գտնվող «յուրաքանչյուրի» նկատմամբ:

Կոնվենցիայի համաձայն՝ պետության պատասխանատվությունը կարող է ներառել Կոնվենցիայի ներքո հաշվետու լինելն այն քայլերի համար, որոնք ձեռնարկվել են որևէ միջազգային կազմակերպության անդամակցության արդյունքում, ինչպիսին, օրինակ, Եվրոպական միությունն է: Քանի դեռ ԵՄ-ն չի միացել ՄԻԵԿ-ին, հնարավոր չէ բողոք ներկայացնել ՄԻԵԴ-ին ԵՄ հաստատությունների կողմից մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման առնչությամբ: Բողոքը կհայտարարվի անընդունելի *ratione personae*՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԵՄ-ն Կոնվենցիայի կողմ չէ: Կապված մարդու իրավունքների խախտումների հետ, որոնք բխում են ԵՄ իրավունքի իրականացման ընթացքում կառավարության գործողությունից, Ստրասբուրգի դատարանը Բոսֆորի գործով վճռել է, որ անդամ պետությունը կարող է սկզբունքորեն ենթադրել, որ այն չի

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

խախտում ՄԻԵԿ-ը՝ իր միջազգային պարտավորությունները կատարելով, եթե տվյալ միջազգային կազմակերպությունն ինքնուրույն երաշխավորում է մարդու իրավունքների բավարար պաշտպանություն (ինչպես ընդունվել էր ԵՄ-ի հետ կապված): Միայն բացառիկ դեպքերում, երբ պաշտպանությունն ակնհայտորեն անբավարար է, այդ ենթադրությունը կարող է հերքվել:

### Հիմնարար իրավունքների ԵՄ խարտիա

Ինչ վերաբերում է Հիմնարար իրավունքների ԵՄ խարտիային, ապա ընդհանուր թյուրըմբռնումն այն է, որ Խարտիան եվրոպական «Իրավունքների օրինագիծ» է, որը կիրառելի է բոլոր իրավիճակներում Եվրոպական միությունում (ԵՄ) և դրա անդամ պետություններում: Այդուհանդերձ, Խարտիայի 51-րդ հոդվածում նշված է, որ Խարտիայի դրույթները վերաբերում են ԵՄ հաստատություններին և մարմիններին ու անդամ պետություններին, երբ վերջինները **կիրառում են ԵՄ իրավունքը**: Խարտիային կցված պաշտոնական բացատրությունները փոքր-ինչ շփոթեցնող պատկերացում են ձևավորում՝ «ԵՄ համատեքստում սահմանված հիմնարար իրավունքները հարգելու պահանջը պարտադիր է անդամ պետությունների համար, երբ դրանք **գործում են Միության իրավունքի շրջանակում**»: Այս վերջին հասկացությունն ակնհայտորեն շատ ավելի լայն է, քան թվացյալ առաջարկվում է դրույթի հիմքում ընկած տեքստով: 2013թ. մայիսին Եվրոպական միության արդարադատության դատարանը (ԵՄԱԴ) ավելի մեծ հստակություն մտցրեց **Ակերբերգի (Åkerberg) գործով**: Դատարանը նշեց, որ «Միության համատեքստում սահմանված հիմնարար իրավունքները հարգելու պահանջը պարտադիր է միայն այն անդամ պետությունների համար, երբ դրանք գործում են Միության իրավունքի շրջանակում» (21-րդ պարբերություն): Ըստ Դատարանի՝ այդպիսով խիստ անհրաժեշտ չէր, որպեսզի ներպետական օրենսդրություն ընդունվեր ԵՄ իրավունքի կիրառման նպատակով: Բավարար էր, որ իրավիճակը տեղավորվեր ԵՄ իրավունքի շրջանակում: Սա էապես մեծացնում է ԵՄԱԴ-ի վերահսկողությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցերում:

Եթե Խարտիան կիրառելի է, ապա դրա՝ մարդու իրավունքների չափորոշիչը գերակայում է համեմատելի սահմանադրական դրույթի նկատմամբ (նույնիսկ եթե վերջինն առաջարկում է մարդու իրավունքների առավել բարձր աստիճանի պաշտպանություն): Խարտիան կարող է կիրառվել՝ վիճարկելու ԵՄ գործիքի վավերականությունը որպես այդպիսին (և ոչ զուտ դրա կիրառությունը տվյալ գործով): Եվ վերջապես, Խարտիայի անուղղակի հորիզոնական ազդեցությունը, կարծես, ճանաչվել է ԵՄԱԴ-ի կողմից՝ դրա նախադեպային իրավունքում:

«HELP-ը 28-ում» ծրագրի շրջանակում[8] մշակված դասընթացները (որոնք ֆինանսավորել է ԵՄ-ն) հաշվի են առնում ԵՄ-ի և ՄԻԵԿ-ի պաշտպանության համակարգերի մարտահրավերները: Դրանք ուղղված են ՄԻԵԿ-ի, Եվրոպական սոցիալական խարտիայի (ԵՍԽ), Հիմնարար իրավունքների ԵՄ խարտիայի և ԵՄ այլ փաստաթղթերի ձևակերպումներին:

8 «HELP-ը28-ում» ծրագիրն ուղղված է մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումների խթանմանը ԵՄ 28 պետություններում: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ՝ այցելելով www.coe.int/en/web/help/help-in-the-28:

### iii. Քաղաքական հարթություն

Վերապատրաստումը հաճախ ունի «քաղաքական» հարթություն, և վերապատրաստողները պետք է տեղյակ լինեն դրա մասին: Առաջինը, մարդու իրավունքների չափորոշիչները հաճախ կիրառվում են քաղաքական առումով զգայուն ոլորտներում (օրինակ՝ ահաբեկչական գործունեության մեջ կասկածվող անձի վտարումը): Վերապատրաստողը չպետք է զարմանա, եթե սովորողներից ոմանք մարդու իրավունքների որոշակի գերիշխումն ընկալեն որպես «քաղաքական»: Հետևաբար, գուցե անհրաժեշտ լինի տարբերակել (ա) փաստը, որ մարդու իրավունքները գործառնում են քաղաքական համատեքստում և կարող են ունենալ հասարակական մեծ ազդեցություն, և (բ) ընկալումը, որ մարդու իրավունքների չափորոշիչները «ձախական» քաղաքական օրակարգի իրավական մեկնաբանությունն է:

Երկրորդը, չպետք է մոռանալ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գործառնում է միջազգային քաղաքական միջավայրում, այսինքն՝ մի միջավայրում, որտեղ միջազգային մարմինը (այսինքն՝ ՄԻԵԴ-ը) սկզբունքորեն կհարգի ներպետական մակարդակում կատարված քաղաքական ընտրությունը և դրան կվերաբերի որոշակի հայեցողականությամբ, եթե խախտված չեն Կոնվենցիայով ամրագրված նվազագույն չափորոշիչները: Այդ իմաստով ՄԻԵԴ-ը հիմնովին տարբերվում է Եվրոպական միության որդեգրած վերազգային մոտեցումից: Կոնվենցիայի մեխանիզմի նպատակը ոչ թե ներդաշնակեցումն է, այլ նվազագույն չափորոշիչների պահպանումը (թեև պետք է ընդունել, որ գործնականում Ստրասբուրգի որոշակի վճիռների ազդեցությունը կարող է ներդաշնակեցումը լինել):

Եվ վերջապես, **հայեցողականության թույլատրելի սահմանի հայեցակարգը** մշակվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ որպես միջոց, որով Եվրոպական դատարանի և ներպետական իշխանությունների միջև հարաբերություններում կիրառվում է սուբսիդիարության սկզբունքը: Գործնականում որոշ տեղական դատավորներ պատճենել են հայեցողականության թույլատրելի սահմանի հայեցակարգը ներպետական նախադեպային իրավունքում: Թեև ներպետական հայեցակարգերը կարող են, ըստ էության, ունենալ միանման ազդեցություն (օրինակ՝ վարչական որոշումների դատական վերանայման «թեթև հպում»), հայեցողականության թույլատրելի սահմանի ստրասբուրգյան հայեցակարգը պատշաճ չէ կիրառել զուտ ներքին միջավայրում:

### iv. Սովորողի մոտիվացիան

Ընդհանրապես, սովորողները սովորում են տարբեր եղանակներով: Մեկ այլ հարց է սովորողների *մոտիվացիան*: Գոյություն ունեն մի շարք տեսություններ: Գոյություն չունի սովորելու մոտիվացիայի մեկ համընդհանուր ընդգրկուն տեսություն, և ուսուցման տարբեր իրավիճակներում կարող են կիրառվել տարբեր տեսություններ: Հեռաուսուցման վերապատրաստման փաթեթներ մշակելիս այդ տեսություններից մի քանիսն առանձնահատուկ կարևորություն են ստանում:

#### Ինքնորոշման տեսություն

Այս տեսության հիմքում ընկած է «ինքնուրույն սովորելու մոտիվացիա» հասկացությունը: Կարճ ասած՝ **սովորողը պետք է ունենա ուսման տեմպն ընտրելու ազատություն**: Դա հակասում է ուսման այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են վերջնաժամկետները, վերահսկողությունը և այլն: (Հետաքրքիր է ՄԹ-ի Բաց համալսարանի փորձը, որը ցույց

ՆՇՈՒՄՆԵՐ

է տալիս, որ առաջադրանքների ներկայացման հարցում ազատ ժամկետացանկ ունեցող դասընթացներն ունեն ուսանողների ուսումնական գործընթացից դուրս չմնալու առավելագույն միտում): Առցանց վերապատրաստումը ինքնորոշման հնարավորություն է ընձեռում ինքնուսուցման ռեսուրսների, ինչպես նաև որոշ չափով՝ հեռաուսուցման դասընթացների ընտրության մասով:

### Իմացաբանական ինքնության տեսություն

Այստեղ նպատակն այն է, որ ուսուցման ամբողջ ընթացքում սովորողը պետք է կարողանա հաստատել՝ «ուսուցման այս տեսակը հենց ինձ համար է»: Այլ կերպ ասած՝ **սովորողների** սովորելու **մոտիվացիան հասնում է առավելագույնի, երբ նրանք տեսնում են, որ ճիշտ դասընթացի են մասնակցում բովանդակության, մակարդակի և արդյունքների առումով**: Ահա թե ինչու է HELP ծրագրի դասընթացների ներպետական և թիրախային լսարանին համապատասխանեցումն այդքան կարևոր:

### Ինքնընկալվող կարողությունների տեսություն

Հնարավոր է, որ սովորողները հաճախ չունենան իրենց կարողությունների իրատեսական ընկալում, ինչը կարող է խոչընդոտել նրանց հաջող ուսումը, ուստի այս տեսությունը մատնանշում է, որ կարևոր է օգնել ուսանողներին մշակել սեփական **կարողությունների ռացիոնալ ընկալում**՝ նրանց մոտիվացիան խրախուսելու նպատակով:

### Դրական հոգեբանություն՝ «Ուժեղ կողմերի» մոտեցում

Այստեղ կարևոր է հասկանալ, թե ինչն է մարդկանց գոհացնում: Սովորողին աջակցելու տեսանկյունից «Ուժեղ կողմերի» մոտեցումը ձևավորվել է դրական հոգեբանության արդյունքներից և մասամբ հիմնված է Միացյալ Նահանգներում Անդերսոնի և Քլիֆթոնի հետազոտությունների վրա: Այն սևեռվում է սովորողի մոտիվացիայի խթանման վրա՝ շեշտելով ինքնագնահատման կարևորությունը՝ որպես ուսումնական առաջադիմության կենսական գործոն: Պրոակտիվ մոտիվացիոն աջակցությունը պետք է ներառի՝ դրականի շեշտադրում, առկա միջոցների և կարողությունների վրա կենտրոնացում, նախորդ հաջողությունների և բարձր գնահատականների ներկայացում, «դրական ազդեցության» խրախուսում (հույս և վեհ մտքեր), հիմքում ընկած արժեքների, նպատակների ու մոտիվացիայի սահմանում և ավելի շատ ջանքերի, ոչ թե ձեռքբերումների գնահատում (և միայն այս ամենից հետո՝ անորոշությունների, վախերի և հմտությունների պակասի մասին խոսելը):

---

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ[9]

- Ստեղծեք **փոքրիկ հաջողություններ**: Սովորողին հնարավորություն ընձեռեք սկզբում հաջողության հասնել ավելի հեշտ առաջադրանքների կատարմամբ՝ նախքան ավելի հավակնոտ առաջադրանքներին անցնելը, այսինքն՝ աստիճանաբար ավելացրեք դժվարությունը:

9 Մոտիվացիան կրթական հետազոտական լաբորատորիայում (MERL)՝ տեսության փոխադրումը գործնական ոլորտ: Ընկալվող կարողությունների և ներքին մոտիվացիայի կարևորությունը՝ http://merl.nie.edu.sg:

- Սովորողներին **գովաբանեք** այն **ջանքերի** համար, որ նրանք գործադրում են, այլ ոչ թե պարզապես նրանց հաջողակ փորձերի համար: Սա կարելի է անել առցանց վերապատրաստման ժամանակ ավտոմատ արձագանքման միջոցով:
- Մշակեք «խաղեր», որոնք **միավորներ են շնորհում փորձերի համար**, նույնիսկ եթե արդյունքը գոհացնող չէ:
- Ստեղծեք **վարպետության հասնելու ուսումնական մթնոլորտ**: Խրախուսեք սովորողներին կամ միջոցառումներ մշակեք սովորողների համար հմտությունների վարպետացման և իրենց նախորդ կատարողականի բարելավման, այլ ոչ թե մշտապես մյուսների հետ համեմատվելու և մրցակցելու ուղղությամբ:
- Տրամադրեք **տեղեկատվական և կառուցողական հետադարձ կապ**: Օրինակ՝ փոխանակ սովորողներին ասելու՝ «ավելի քրտնաջան աշխատիր», գտեք նրանց վատ աշխատանքի հիմքում ընկած պատճառները և շտկեք նրանց փորձը՝ ասելով օրինակ՝ «փորձիր մտածել այդ մասին ՄԻԵԿ-ի x-րդ հոդվածի լույսի ներքո»:

---

> «Փորձեք ունակ և կարող լինել առաջադրանքի իրականացման ժամանակ: Կարողությունների զարգացման կարիքը (Deci & Ryan, 1985; Elliot & Thrash, 2002; Koestner & McClelland, 1990) սեփական հնարավորությունների իրականացումից և ընդլայնումից բավարարվածություն զգալու անհրաժեշտությունն է: Բնական է, որ մարդիկ փորձում են իրենց զարգացման մակարդակին լավագույնս համապատասխանող մարտահրավերներ փնտրել» (Harter, 1978; White, 1959):

## Ե. ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին մուտք ունենալու դժվարությունները

Ստրասբուրգի դատարանի իրավագիտության մասին կենսունակ գիտելիքներ ձեռք բերելը և դրա տիրապետումը զերծ չէ մարտահրավերներից:

### i. Տեխնիկական խոչընդոտներ

Իրավական ոլորտի մասնագետների համար առկա են երկու էական խոչընդոտներ՝ լեզուն և նախադեպային իրավունքի մեծ ծավալը:

#### Վճիռների և որոշումների լեզուն

Վերապատրաստման դասընթացի նախապատրաստման ընթացքում պատշաճ ուշադրություն պետք է դարձնել այն փաստին, որ մարդու իրավունքների վերաբերյալ նյութերի բնօրինակների հիմնական մասը (ինչպես օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները) սովորողների մեծ մասի համար լինելու են օտար լեզվով (այսինքն՝ անգլերեն կամ ֆրանսերեն): Փորձը ցույց է տալիս, որ իրավական ոլորտի շատ մասնագետներ այս նյութերը (ավելի մեծ կամ փոքր չափով) լիարժեք հասկանալու դժվարություններ են ունենում: Գործնականում սա կարող է էական ազդեցություն ունենալ ներպետական իրավակարգում մարդու իրավունքների միջազգային չափորոշիչների ընդունման համար: HELP ծրագրի մեթոդաբանությունն ընդունում է այս մարտահրավերը և նախատեսում է ոչ միայն վերապատրաստման նյութերի և դասընթացների թարգ-

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

մանություն, այլև դրանց համապատասխանեցում շահագրգիռ երկրների ներպետական իրավակարգերին (համապատասխանեցման գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տես՝ մաս 2): Նմանապես, ՄԻԵԴ-ի տարբեր առաջատար վճիռներ թարգմանվել են, և այս թարգմանություններից որոշները հասանելի են Դատարանի ինտերնետային կայքում՝ HUDOC որոնման համակարգի միջոցով: Կառավարությունները հավասարապես արժեքավոր դեր են խաղում Դատարանի վճիռների թարգմանության ոլորտում: Վերապատրաստման նոր ծրագրեր մշակելիս խորհուրդ է տրվում բյուջետային միջոցներ նախատեսել թարգմանության ենթակա ցանկացած լրացուցիչ նյութի համար:

### Նախադեպային իրավունքի մեծ ծավալը

Իրավագիտությունը ներկայացնում է նախադեպային իրավունքի զգալի ծավալներ՝ կազմված տասնյակ հազարավոր վճիռներից և որոշումներից: Անշուշտ, նախքան Թիվ 14 արձանագրության ուժի մեջ մտնելը, գոյություն ունեցող Կոմիտեի վճիռները պետք է չներառվեն այստեղ, այդ թվում՝ առանձին դատավորների որոշումները: Անհրաժեշտ է նաև, որպեսզի այն համապատասխանի HUDOC-ի տվյալների շտեմարանում ի հայտ եկող կարևոր չափանիշներին: Այդուհանդերձ, իրավագիտությունը հանդիսանում է առանձնակի տպավորիչ մի ամբողջություն, որը հազիվ թե կառավարելի է: Մասնավորապես, դեռևս դժվար է համոզված լինել, թե ինչպես կարելի է տվյալ թեմայի շուրջ առավել համապատասխան նախադեպ գտնել:

## ii. Ներպետական առանձնահատկություններ

Այս առանձնահատկությունները բաժանվում են երկու հիմնական տեսակի: Դա պայմանավորված է իրավական համակարգերի բազմազանությամբ և ընթացակարգերի ու ներպետական հաստատությունների առանձնահատկություններով:

### Իրավական համակարգերի բազմազանություն

Մայրցամաքային կամ Ռոմանագերմանական իրավունքի և Սովորութային իրավունքի միջև ավանդական և լավ հայտնի տարբերակումից բացի, Եվրոպան ներկայացնում է իրավական համակարգերի հսկայական բազմություն, որն ունի համապատասխանեցման և զուգորդումների մեծ կարողություն: Դատարանի իրավագիտությունն արտացոլում է այս փաստը որոշակի ձևով, ինչը ստիպում է իրավական ոլորտի մասնագետներին մեծացնել վերլուծության և ընկալման իրենց ջանքերը:

Բացի այդ, իրավագիտության տեղը և կարևորությունը, մասնավորապես՝ գերագույն դատական ատյաններում, ներքին իրավակարգում, յուրաքանչյուր երկրում տարբեր են: Դատավորների կարծիքով՝ առյուծի բաժինը հասնում է խորհրդարանի ընդունած օրենքին: Եվրոպայում զուտ ներպետական շրջանակում աշխատող իրավական ոլորտի մասնագետների համար միջազգային իրավագիտությանը հատուկ ուշադրություն դարձնելն ինքնըստինքյան տեղի չի ունենում: Նրանք դա անում են Կոնվենցիայի դրույթներին համապատասխանություն ապահովելու համար:

### Ընթացակարգերի և հաստատությունների առանձնահատկությունները

Նմանապես, Եվրոպան առաջարկում է ընթացակարգերի և հաստատությունների զարմանալի բազմազանություն: Դրանք հաճախ հնուց եկող ավանդույթների, երբեմն և սուր

հակամարտությունների արդյունք են: Հաճախ լինելով համալիր հաստատությունների ինչ-որ մաս՝ դրանց հավասարակշռությունը և կապակցվածությունը կարող է խարխլվել փոփոխությունների արդյունքում, կամ նույնիսկ, *a fortiori*, վտանգվել դրանց գոյությունը: Այստեղ կրկին իրավագիտությունը պետք է որոշակի չափով համապատասխանեցվի՝ առանց Կոնվենցիայի ներդաշնակեցված մեկնաբանությունը վտանգելու: Երբեմն իրավական ոլորտի մասնագետների համար կարող է դժվար լինել մեկ ներպետական համակարգին բնորոշ հասկացությունը տեղափոխել մեկ այլ համակարգ, որքան էլ որ այն նմանատիպ լինի:

## iii. Որոշումների մոտիվացիա

Սա գուցե ամենակարևոր դժվարությունն է՝ ինչպես լավագույնս օգտվել իրավագիտությունից անորոշությունների և տարաձայնությունների պայմաններում:

### Անորոշություններ

Կամա թե ակամա, Դատարանը երբեմն օգտագործում է նախադասություններ, արտահայտություններ կամ բառեր, որոնք կարող են հանգեցնել տարբեր մեկնաբանությունների: Դա պատահում է, երբ ի հայտ է գալիս որևէ նոր կամ բարդ խնդիր, որը կարող է առանցքային կետեր ներկայացնել ապագա լուծման համար՝ անմիջապես բացարձակ պատասխան տալու փոխարեն: Նման մոտեցումը պահանջում է հանգամանալի և առաջադիմական մոտեցում, ընդ որում՝ արագությունը և արդյունքը հայտնի չեն: Երբեմն լինում են փոփոխություններ և զղջումներ, որոնք շփոթեցնում են իրավական ոլորտի մասնագետներին:

Բացի այդ, քիչ չեն այն դեպքերը, երբ Մեծ Պալատը նկատողություն է անում Պալատին, որը որդեգրել է ոչ բավարար պատճառաբանված կամ չափից ավելի նորարարական համարվող տեսակետ: Ընդհակառակը, Պալատների որոշ վճիռներ հետևում են Մեծ Պալատի գործելակերպին և հարցականի տակ չեն դրվում:

Բացի այդ, անհրաժեշտ է մտապահել, որ Դատարանը միշտ պատրաստակամ է անկախ, այսինքն՝ եվրոպական իմաստ հաղորդել Կոնվենցիայի որոշ եզրերի: Սա կարող է հանգեցնել շփոթության կամ թյուրըմբռնման և նույնիսկ ընդդիմության իրավական ոլորտի մասնագետների շրջանում, որոնք սովոր են իրենց ներպետական իրավունքի դասակարգումներին և հայեցակարգին:

### Տարաձայնություններ

Դատարանը ձգտում է երաշխավորել իր իրավագիտության կապակցվածությունը, ապացուցել դրա իրավական անվտանգությունը և հավասարություն ապահովել պետությունների ու անհատների միջև: Սակայն երբեմն տարաձայնություններ են լինում շատ պարզ պատճառներով՝ տարբեր պալատներ զբաղվում են նմանատիպ հարցերով, և Մեծ Պալատի կազմը տարբեր է լինում յուրաքանչյուր գործի դեպքում, չնայած որ հիմնական կազմը մնում է նույնը: Պատահում է նաև, որ լինում են հակասություններ, առնվազն ժամանակավոր, այսինքն՝ քանի դեռ Պալատները և Մեծ Պալատը դրանք ամբողջապես չեն հարթել:

Նման բացառիկ գործերն իրավական ոլորտի մասնագետներից պահանջում են արձագանքել հետևյալ ձևով՝ հաշվի առնել Մեծ Պալատի առավել նոր և հստակ վճիռը կամ

ՆՇՈՒՄՆԵՐ

որոշումը, եթե այդպիսին առկա է, իսկ եթե առկա չէ, ապա պալատների ամենանոր և հստակ վճիռը կամ որոշումը: Սա չի բացառում հնարավորությունը՝ պարզապես նշելու և ազդանշելու իրավագիտության անորոշությունը տվյալ հարցի առնչությամբ:

### iv. Ինչպես դիմակայել այս մարտահրավերներին

Գործնական երեք խորհուրդ վերապատրաստողներին, որոնք միաժամանակ հարցերի պատասխաններ են:

---

## ԻՆՉՊԵՍ **ԿԱՐԴԱԼ** ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Խիստ հազվադեպ է, երբ Դատարանը տալիս է Կոնվենցիայի որևէ դրույթի ընդհանուր մեկնաբանություն: Ավելին, սկզբունքային վճիռները և որոշումները բազմաթիվ չեն: Վճիռներում և որոշումներում, որոնք կարող են արտաքինից միանման թվալ, շատ հաճախ միայն մեկ պարբերություն կամ ենթաբաժին, նույնիսկ մեկ նախադասություն է արժանի ուշադրության, քանի որ այն հանդիսանում է ընդհանուր, այսինքն՝ եվրոպական շրջանակի հավելյալ արժեք: Հենց այդ տարրն է, որը հետագայում, երբեմն շատ հաճախ, կիրառվում է Դատարանի կողմից:

---

## ԻՆՉՊԵՍ **ԸՆՏՐԵԼ** ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրությունը պետք է նախևառաջ հիմնվի հրատարակման համար ընտրված վճիռների վրա, և այնուհետև՝ իրավագիտության տարեկան զեկույցի բաժնի և վերջապես՝ Տեղեկատվական ծանուցումների վրա: Վերջինն ունի վերլուծական ցուցիչի առավելություն: Բացի այդ, մենք պետք է հատուկ ուշադրություն դարձնենք Մեծ Պալատի վճիռներին, քանի որ դրանք պարունակում են ընդհանուր կիրառելի սկզբունքների վերաբերյալ հիշեցում:

---

## ԻՆՉՊԵՍ **ՄՇԱԿԵԼ** ՆԱԽԱԴԵՊԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ամենապարզ ճանապարհը տվյալ երկրի իրավական ոլորտի մասնագետներին ծանոթ ներպետական իրավիճակներից սկսելն է՝ խուսափելով դրանց բացառիկ կողմերից: Դրան հետևելով՝ իրավագիտության շրջանակը կիրառեք իրավիճակների նկատմամբ՝ հաշվի առնելով առավել ընդհանուր կամ առավել հաճախակի տրվող լուծումները: Ի վերջո, այս վերապատրաստման մեջ շեշտադրվում են այն հարցերը, որոնց վրա դատավորները և փաստաբանները պետք է հիմնականում կենտրոնանան իրենց ամենօրյա աշխատանքում:

---

### v. Թիրախավորված մոտեցում և երկարաժամկետ հանձնառություն

Մարդու իրավունքների չափորոշիչների վերաբերյալ իրազեկության կառուցվածքային բարելավումը հաճախ պահանջում է թիրախավորված մոտեցում և երկարաժամկետ հանձնառություն: Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը հաճախ պահանջում է մասնագիտության մեջ մտածողության փոփոխություն, մինչդեռ ընդգրկուն մասնագիտության բոլոր ներկայացուցիչներին հասնելը կարող է հավասարապես պահանջել երկարաժամկետ հանձնառություն (մի կողմ թողնելով շարունակական վերապատրաստման անհրաժեշտությունը): Սա կոչ է անում համակարգել վերապատրաստման տարբեր միջոցառումները և խուսափել աշխատանքի կրկնօրինակումից: Այդ իմաստով HELP-ը կարող է օգտակար լինել ներպետական դերակատարների համար, որոնք ակտիվ մասնակցում են վերապատրաստման գործընթացին:

Հետևաբար, խիստ կարևոր է երաշխավորել, որ դատավորների և դատախազների վերապատրաստման ազգային ինստիտուտները, ինչպես նաև փաստաբանների միությունները լիարժեքորեն ինտեգրեն HELP-ի համապատասխանեցված դասընթացներն իրավական ոլորտի մասնագետների համար նախատեսված իրենց ներպետական կրթական ծրագրերում:

### vi. Բազմառարկայական և բազմամասնագիտական մոտեցում

Իրավական ոլորտի մասնագետները գործառնում են բազմառարկայական աշխատանքային միջավայրում: Իրավական չափորոշիչներ (այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչներ) կիրառելիս իրավական ոլորտի մասնագետները գործում են հասարակական, տնտեսական, քաղաքական, գիտական, կրոնական և բարոյագիտական ասպեկտների ֆոնին: Հետևաբար, գուցե օգտակար կլինի մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ընթացքում ուշադրություն դարձնել այս բազմառարկայական բնույթի հարցերին: Կրոնի ազատության վերաբերյալ գործի քննությունը կարող է պահանջել այդ կրոնի սովորույթների և դավանման առավել լավ ընկալում: Մարդու իրավունքների՝ կենսաէթիկայի ասպեկտներին առնչվելիս կարող է պահանջվել ունենալ ընդհանուր գիտելիքներ գիտության այս ոլորտի մասին: Սոցիալական իրավունքների դեպքում անհրաժեշտ է ունենալ ընդհանուր տնտեսագիտական գիտելիքներ: Բազմամասնագիտական մոտեցումը (որը ներառում է դատավորների և դատախազների վերապատրաստումը) չպետք է ինքնանպատակ լինի, քանի որ մարդու իրավունքներին առնչվող որոշ խնդիրներ կարող են բազմամասնագիտական մոտեցում պահանջել (ինչպես օրինակ՝ անպատժելիության դեմ պայքարը, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կամ բանտի պայմաններին առնչվող մարդու իրավունքներ): Այդ դեպքում վերապատրաստողը պետք է նկատի ունենա, որ տարբեր մասնագիտություններ (ինչպես օրինակ՝ սոցիալական աշխատողները կամ բժիշկները) տարբեր եզրաբանություն են կիրառում:

2015թ. HELP-ի տարեկան համաժողովի մասնակիցների 93%-ը հետաքրքրություն էր հայտնել բազմառարկայական վերապատրաստման մասնակցելու վերաբերյալ:

ՆՇՈՒՄՆԵՐ

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ցանկացած կազմակերպություն պետք է սահմանի իր վերապատրաստման գերակայությունները՝ նկատի ունենալով ռեսուրսների սղությունը: Մարդու իրավունքների ոլորտում արդիական մարտահրավերները դեռևս շատ են և բազմազան: Պարզապես հնարավոր չէ ուշադրություն դարձնել բոլոր հարցերին միաժամանակ և նույն ինտենսիվությամբ: Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման շրջանակում մի շարք հարցերի լուսաբանումն օգտակար կլինի:

- Մարդու իրավունքներին վերաբերող հարցերի խոր վերլուծություն
  - Մարդու իրավունքների բազմաթիվ միջազգային մարմինների հետազոտությունների արդյունքում ներկայացված առաջարկությունները՝ ինչ խնդիրներ են բարձրացված ՄԻԵԴ-ի վճիռներում, Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի մարմինները, պարբերական համընդհանուր վերանայման UPR-գործընթացը, ՄԱԿ-ի պայմանագրային մարմինների եզրափակիչ դիտարկումները, մարդու իրավունքների ոլորտում ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը, միջազգային ՈՀԿ-ների, ինչպես «Ամնեսթի»-ի և «Հյուման Ռայթս Ուոթչ»-ի զեկույցները, ՄԱՓԳՀ-ի զեկույցները և այլն:
  - Ներքին աղբյուրների հետազոտություն, այսինքն՝ թե ինչ հարցեր են բարձրացվում ներքին իրավագիտական պրակտիկայում, գիտական գրականությունում, քաղաքական քննարկումներում և մարդու իրավունքների ներպետական կազմակերպության կողմից:
  - Հարցազրույցներ շահագրգիռ կողմերի հետ, ինչպիսիք են կառավարության պաշտոնյաները, արդարադատական համակարգի, իրավապահ մարմինների ներկայացուցիչները, սոցիալական գործընկերները, գիտնականները, ՈՀԿ-ների ներկայացուցիչները, քաղաքական գործիչները և այլն:
  - Լրատվական վերջին հաղորդումների վերլուծություն:
- Նման խոր վերլուծության արդյունքում ի հայտ կգան մի շարք հարցեր: Այնուհետ անհրաժեշտ կլինի ընտրել, թե որ հարցերին եք անդրադառնալու: Ստորև ներկայացված են մի շարք հնարավոր չափանիշներ՝
  - Խնդիրն արդյոք մարդու իրավունքների մե՞կ, թե՞ ավելի չափորոշիչների շրջանակում է:
  - Ո՞րն է այլ շահագրգիռ կողմերի հետ միասին ներգրավվելու հավելյալ արժեքը:
  - Խնդրի ծանրությունը:
  - Հասարակությունն արդյոք սատարո՞ւմ է այդ խնդրին ձեռնամուխ լինելուն:
  - Հնարավո՞ր է արդյոք բացահայտել խնդրի շուրջ առկա բոլոր փաստերը:
  - Հնարավո՞ր է արդյոք հասնել արդյունքի (որը կարող է լինել հարցը քաղաքական օրակարգ մտցնելը կամ ռազմավարական դատավարություն մեկնարկելը):

## HELP-ը՝ որպես մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գործիք

### ա. Ի՞նչ է HELP-ը

Իրավական ոլորտի մասնագետների համար Մարդու իրավունքների կրթության (HELP) եվրոպական ծրագիրն աջակցություն է ցուցաբերում Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին **ՄԻԵԿ-ը ներպետական մակարդակում կիրառելու** գործում՝ համաձայն համալսարանական կրթության և մասնագիտական վերապատրաստման ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներառման վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ (2004) 4 հանձնարարականի:

HELP-ը ձգտում է դառնալ Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող իրավական ոլորտի բոլոր վերապատատրաստումների համար հիմնական միջոց: Դրա քաղաքական նշանակությունն առաջին անգամ ճանաչվել է 2012թ. Բրայթոնի հռչակագրով և առավել շեշտադրվել 2015թ. Բրյուսելի հռչակագրով, որը, մասնավորապես, նշել է պետությունների և վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների ընդհանուր պարտականությունն ամենօրյա կտրվածքով ՄԻԵԿ-ի ներպետական կիրառությունն ապահովելու վերաբերյալ:

HELP-ի նպատակն է խթանել դատավորների, փաստաբանների և դատախազների կարողությունները բոլոր 47 անդամ պետություններում՝ նրանց ամենօրյա աշխատանքում ՄԻԵԿ-ը կիրառելու համար: Եվ իսկապես, **իրավական ոլորտի մասնագետները, որոնք գտնվում են մարդու իրավունքների պաշտպանության առաջնագծում, պետք է օգտվեն բարձրորակ վերապատրաստումից**: Դրա նպատակն է երաշխավորել, որ նրանք քաջատեղյակ լինեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մշտապես զարգացող չափորոշիչներին և նախադեպային իրավունքին:

**Կարճ ասած, HELP-ը՝**

1. 47 անդամ պետություններում դատավորների, դատախազների և փաստաբանների վերապատրաստման ազգային ինստիտուտների **միակ համաեվրոպական ցանցն է:**
2. **Մարդու իրավունքների վերաբերյալ էլեկտրոնային ուսուցման հարթակ** է:
3. Իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման **մեթոդաբանություն է:**

### i. Նպատակը

Հետևաբար, HELP-ի նպատակն է աջակցել վերապատրաստման ազգային ինստիտուտներին՝ իրավական ոլորտի բոլոր մասնագետների վերապատրաստման գործում, լինեն նրանք փաստաբաններ, դատավորներ, թե դատախազներ: «Աջակցել» բառը լավ է ընտրված: Իսկապես նպատակն է **աջակցել, այլ ոչ թե փոխարինել** ՄԻԵԿ-ը կիրառելու՝ վերապատրաստման ազգային ինստիտուտների կողմից գործադրվող ջանքերը: HELP-ը

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

մեկնարկել է 2012թ.՝ որպես Եվրոպայի խորհրդի 12 պիլոտային անդամ պետությունների դատավորներին ուղղված Ծրագիր: Ծրագիրը սկզբում՝ մինչև 2015թ. դեկտեմբերը, ֆինանսավորվում էր Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամի (ՄԻՀՀ) կողմից: 2013թ. դրանում ներառվեցին նաև դատախազները և փաստաբանները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունները:

### ii. Զարգացում

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններում ՄԻԵԿ-ին առնչվող տարբեր թեմաների շուրջ վերապատրաստման կարիքները՝ Ծրագիրն արագորեն ընդլայնվել է՝ ներառելով իրավական ոլորտի մասնագետների այլ խմբեր և այլ թեմաներ: Ներկայումս հասանելի են հետևյալ թեմաները՝

- Ընդունելիության չափանիշներ,
- Ապացույցների ընդունելիություն,
- Հակախտրական հարցեր,
- Ապաստան և ՄԻԵԿ,
- Բիզնես և մարդու իրավունքներ,
- Քիմիական բաղադրությունները և միջազգային համագործակցությունը թմրամիջոցների ապօրինի արտադրության և շրջանառության դեմ պայքարում,
- Երեխաների համար պատշաճ արդարադատություն,
- Համայնքային պատժամիջոցներ և կալանավորման այլընտրանքային խափանման միջոցներ,
- Կեղծ դեղամիջոցների շրջանառություն և հանրային առողջության դեմ ուղղված հանցագործություններ,
- Միտումնավոր խոշտանգումները՝ ՄԻԵԿ-ի լույսի ներքո,
- Ընտանեկան իրավունք և երեխաների իրավունքներ,
- Արտահայտվելու ազատություն,
- Ատելության հիմքով կատարված հանցագործություններ և ատելություն սերմանող խոսք,
- Միջազգային համագործակցություն քրեական գործերում,
- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացում,
- Վճիռների հիմնավորում,
- Մինչդատական քննություն՝ ՄԻԵԿ-ի լույսի ներքո,
- Գույքային իրավունք,
- Անցումնային արդարադատություն և մարդու իրավունքներ:

Ցայսօր HELP-ն օգնել է վերապատրաստել իրավական ոլորտի 2100 մասնագետների և հասանելի է մասնագետների այլ խմբերի, ինչպես օրինակ՝ քրեակատարողական հիմնարկների անձնակազմերին: Առկա դասընթացները մեկնարկել են մասնակիցների 30 խմբերի համար՝ հանգեցնելով մարդու իրավունքներին վերաբերող տարբեր թեմաների շուրջ մոտ 400 դատավորների և 1650 փաստաբանների վերապատրաստման: 2014-

2015 թթ. մոտավորապես 500 վկայականներ են շնորհվել հաջողակ մասնակիցներին:

Ներկայումս HELP-ը Եվրոպայի խորհրդի առանցքային աշխատանքի մի մասն է և իրականացվում է Եվրոպայի խորհրդի շրջանակում կարողությունների զարգացմանն ուղղված բոլոր գործողություններում:

Դրա աճող կարևորությունն օգնել է ֆինանսական միջոցներ ստանալ տարբեր աղբյուրներից տարբեր ծրագրերի համար: Այսօր HELP-ը մասամբ ֆինանսավորվում է Եվրոպայի խորհրդի ընթացիկ բյուջեից, սակայն նաև օգտվում է Եվրոպական միության կարևոր ռեսուրսներից՝ ԵՄ 28 պետություններում HELP-ի ամրապնդման նպատակով, հետևյալ չորս հիմնական թեմաների ոլորտում՝

- Տվյալների պաշտպանություն,
- Աշխատանքային իրավունք,
- Անձի ամբողջականություն (կենսաէթիկա),
- Պայքար ռասսայական խտրականության, այլատյացության, հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի դեմ:

Ռուսաստանում HELP-ն օգտվում է ՄԻՀՀ-ի միջոցներից՝ քրեական վարույթներում ապացույցների գնահատման և թույլատրելիության վերաբերյալ առանձին մոդուլներ մշակելու նպատակով: Այս խնդիրները հաճախ են ծագում Ռուսաստանի դատավորների, դատախազների և քննիչների ամենօրյա աշխատանքում, ներառյալ՝ «սադրիչ գործակալները» (ոստիկանական սադրանք), ապօրինի միջոցներով ձեռք բերված ապացույցները, փաստաբանի հասանելիության հարցը, դատավարության ընթացքում վկաների բացակայությունը, մինչդատական կալանքի վերաբերյալ տարբեր խնդիրներ և այլն:

2016թ. ապրիլ ամսվա դրությամբ մեկնարկել է «HELP-ը Բալկաններում» ծրագիրը, որը ֆինանսավորում է ՄԻՀՀ-ը՝ տարածաշրջանում HELP-ի կիրառման նպատակով HELP-ի առկա դասընթացների միջոցով:

## բ. Ինչպես է աշխատում HELP-ը

HELP-ը վերապատրաստման ազգային ինստիտուտների և փաստաբանների միությունների ցանց է, որին աջակցում են տարբեր հաստատություններ՝ ծրագրի միջոցառումներն իրականացնելու նպատակով:

### i. Ցանց

HELP ցանցը, **Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գործընկեր առ գործընկեր սկզբունքով գործող միակ համաեվրոպական ցանցն է**, որը կազմված է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններում դատավորների և դատախազների վերապատրաստման ազգային ինստիտուտների (ՎԱԻ-ներ) և փաստաբանների միությունների (ՓՄ-ներ) ներկայացուցիչներից:

HELP ցանցին վստահված է 2012թ. Բրայթոնի հռչակագրի 9.vi պարբերության իրականացումը, որով նախատեսված է, որ HELP-ը պետք է՝

- Խթանի ՄԻԵԿ-ի չափորոշիչների վերաբերյալ իրավական ոլորտի մասնագետների նախնական և շարունակական վերապատրաստումների մշակումը և իրականացումը,

ՆՇՈՒՄՆԵՐ

ինչպես մեկնաբանված է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում:

- Կիսի իր լավագույն փորձը և խորհրդատվություն տրամադրի իրավական ոլորտի մասնագետների համար ուսումնական ծրագրի, վերապատրաստման նյութերի և մեթոդաբանության վերաբերյալ՝ գերակա թեմաներ սահմանելով վերապատրաստման ապագա միջոցառումների համար:
- Խորհրդատվություն տրամադրի, թե ինչպես կարելի է աջակցել անդամ պետություններին դատավորների, դատախազների և փաստաբանների կարողությունների զարգացման գործում, որպեսզի նրանք ներպետական մակարդակում և իրենց ամենօրյա աշխատանքում կիրառեն ՄԻԵԿ-ը՝ ՄԻԵԿ-ի և դրան առնչվող թեմաների վերաբերյալ համապատասխան վերապատրաստումների միջոցով:
- Խորհրդատվություն տրամադրի, թե ինչպես զարգացնել փաստաբանների կարողությունները՝ ՄԻԵԴ ներկայացվող գանգատներում ընդունելիության չափանիշների ապահովման նպատակով՝ բարելավելով ՄԻԵԴ բերված լավ հիմնավորված գանգատների որակը:
- Տրամադրել ծավալուն գիտելիքներ և ապահովել HELP ծրագրի վերապատրաստման նյութերի կիրառումը իրավական ոլորտի մասնագետների շրջանում:
- Բարելավել միջազգային և ազգային ինստիտուտների միջև իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների հարցերով վերապատրաստման ջանքերի համակարգումը:

2015թ. մարտին «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի կիրառումը, մեր ընդհանուր պատասխանատվությունը» թեմայով բարձր մակարդակի համաժողովի ընթացքում Կոնվենցիան ստորագրած պետությունները համաձայնության են եկել Գործողությունների ծրագրի շուրջ, որով սահմանված նպատակներից մեկն էր «մեծացնել ջանքերը ներպետական մակարդակում՝ խորհրդարանի անդամների շրջանում իրազեկության մակարդակը բարձրացնելու և դատավորների, դատախազների, փաստաբանների և պետական պաշտոնյաների համար Կոնվենցիայի և դրա իրականացման, ինչպես նաև Դատարանի վճիռների կատարման վերաբերյալ վերապատրաստման ծրագրերը բարելավելու նպատակով՝ երաշխավորելով, որ այն կազմում է նրանց մասնագիտական և աշխատանքային վերապատրաստման բաղկացուցիչ մասը և անհրաժեշտության դեպքում դիմելով Եվրոպայի խորհրդի HELP ծրագրի, ինչպես նաև Դատարանի վերապատրաստման այլ ծրագրերի և հրատարակությունների օգնությանը»:

Ցանցի անդամները հանդիպում են տարեկան մեկ անգամ Ստրասբուրգում HELP-ի ամենամյա համաժողովին՝ ՄԻԵԿ-ի հետ կապված կարիքները քննարկելու և ապագա աշխատանքի ճանապարհային քարտեզը մշակելու նպատակով: HELP-ի դասընթացները մշակվում են և նախաձեռնությունները մեկնարկում են այս քննարկումների և ճանապարհային քարտեզի հիման վրա:

### Աշխատանքային մեթոդներ

HELP ցանցի գործունեությունը համակարգում է HELP-ի քարտուղարությունը:

Հանդիպումները, որպես կանոն, տեղի են ունենում տարեկան մեկ անգամ Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի շենքում: Ցանցի հանդիպումները կազմակերպվում են հետևյալ ձևով՝

Լիակազմ նիստ՝ 94 անդամ (150 գործընկերների և դիտորդների հետ միասին), 1 երկօրյա ամենամյա հանդիպում: HELP ցանցի ամենամյա այս համաժողովը հնարավորություն է ընձեռում՝

- Իրականացնել լավագույն փորձի փոխանակում 47 անդամ պետություններում իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների կրթության ասպարեզում, ինչպես նաև վերապատրաստման մեթոդաբանության վերաբերյալ (ներառյալ՝ վերապատրաստման ազդեցությունը և հետևանքները գնահատելու նոր գործիքների մշակում):
- Իրականացնել իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման կարիքների լայնամասշտաբ գնահատում 47 անդամ պետություններում:
- Սահմանել հաջորդ տարվա ճանապարհային քարտեզը և գերակայությունները (գերակա թեմաների սահմանում, բազմազգային և բազմառարկայական վերապատրաստման նախաձեռնությունների սահմանում և այլն):

HELP-ի գործընկերներն են՝

- Եվրոպական միություն (Արդարադատության և սպառողների հարցերով գլխավոր տնօրինություն),
- Մարդու իրավունքների հավատարմագրային հիմնադրամ (ՄԻՀՀ),
- Դատավորների վերապատրաստման եվրոպական ցանց (ԴՈՒԵՑ),
- Դատավորների միջազգային միություններ,
- Եվրոպայի փաստաբանական միությունների և իրավական համայնքների խորհուրդ (CCBE),
- Եվրոպական փաստաբանների դաշնություն (ԵՓԴ),
- Մարդու իրավունքների եվրոպական դատարան,
- Դատավորների և դատախազների ազգային միություններ,
- Փաստաբանների մասնագիտական միություններ,
- Մարդու իրավունքների հարցերով մասնագիտացած իրավական օգնության ցանցեր և իրավական խորհրդատվություն,
- «Ալբերտ Կոհենի հիշատակ»-ի հիմնադրամ:

HELP-ի քարտուղարությունը կապ է ապահովում Ցանցի հետ իր ազգային համակարգողների և տեղեկատվական պատասխանատուների միջոցով: Այս պատասխանատուները կապ են ստեղծում HELP-ի քարտուղարության և վերապատրաստման ազգային ինստիտուտների միջև: Նրանք հանդես են գալիս որպես շփման կետ դատավորների և դատախազների (ազգային համակարգողներ) կամ փաստաբանների (տեղեկատվական պատասխանատուներ) հետ՝ մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման հարցերով:

Որպես այդպիսին, ազգային համակարգողները և տեղեկատվական պատասխանատուները կանոնավոր հանդիպումներ են ունենում վերապատրաստման ազգային համապատասխան ինստիտուտի հետ՝ օգնելու գնահատել դատավորների և դատախազների՝ մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման կարիքները: Նրանք ներկայացնում են HELP ծրագիրն իրենց գործընկերներին, ներբեռնում են իրենց պետական լեզվով HELP-ին առնչվող համապատասխան տեղեկատվությունն ու վերապատրաստման նյութերը և մասնակցում HELP-ի ամենամյա համաժողովին:

ՆՇՈՒՄՆԵՐ

HELP-ի ազգային համակարգողները և տեղեկատվական պատասխանատուները մշտական կապի մեջ են HELP-ի քարտուղարության հետ և ներկայացնում են տարեկան զեկույցներ:

Ազգային համակարգողների և տեղեկատվական պատասխանատուների ցանկին կարող եք ծանոթանալ՝ այցելելով մեր ինտերնետային կայք:

## Խորհրդակցական խորհուրդ

HELP-ի խորհրդակցական խորհուրդը մարմին է, որին նշանակում է HELP ցանցը՝ HELP-ի քարտուղարությանը կանոնավոր կերպով խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Այն կազմված է վեց անդամից, որոնք նշանակվում են HELP ցանցի ներկայացուցիչների կողմից՝ իրավական ոլորտի մասնագետների յուրաքանչյուր կատեգորիայի վերապատրաստման հաստատությունից առնվազն մեկ ներկայացուցիչ (դատավորներ, դատախազներ, փաստաբաններ), որոնք մասնակցում են HELP ծրագրի նիստին՝ որպես Խորհրդակցական խորհրդի անդամ:

Խորհրդակցական խորհրդի կազմը որոշվում է HELP ցանցի ամենամյա համաժողովում՝ գաղտնի քվեարկությամբ: Առաջին վեց թեկնածուները, որոնք ստանում են առավելագույն ձայներ, ընտրվում են:

Խորհրդակցական խորհրդի անդամները կարող են նշանակել որոշակի թեմաներով Զեկուցողներ: Խորհրդակցական խորհուրդն իր գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում HELP ցանցի ամենամյա համաժողովին: Այն ունի երկամյա հանձնագիր, որը մեկ անգամ ենթակա է թարմացման: Խորհուրդը ներկայացնում է մեկ տարվա կտրվածքով իր իրականացրած միջոցառումների հաշվետվությունը HELP ցանցի տարեկան համաժողովում:

HELP-ի խորհրդակցական խորհրդի փաստացի անդամների մասին ավելի շատ տեղեկություններ ստանալու համար այցելեք մեր ինտերնետային կայք:

Խորհրդակցական խորհուրդը՝

- Գնահատում է HELP ծրագրի մշակած տիպական ուսումնական ծրագիրը և վերապատրաստման նյութերը:
- HELP ցանցին առաջարկում է գերակա թեմաներ վերապատրաստման ապագա միջոցառումների համար:
- Սահմանում է ընդհանուր ռազմավարություն՝ համապատասխան միջազգային և ներպետական դերակատարների շրջանում մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը համակարգելու և տարածաշրջանային նախաձեռնություններ մշակելու նպատակով:

- Տրամադրում է խորհրդատվություն իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման մեթոդաբանության վերաբերյալ:
- Համագործակցում է HELP-ի խմբագրական կազմի հետ (HELP-ի խմբագրական կազմում ներգրավված են ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստման փորձագետներ ու SS և ցանցային հաղորդակցության ոլորտի փորձագետ: Խմբագրական կազմը նշանակվում է HELP-ի քարտուղարության կողմից, և այն պատասխանատու է HELP ծրագրի հաղորդակցության ռազմավարության պլանավորման և իրականացման, ինչպես նաև HELP-ի ինտերնետային կայքերում լուրերի և վերապատրաստման նյութերի հրապարակման և վերանայման համար):
- Խորհրդատվություն է տրամադրում HELP ցանցի և դրա քարտուղարության կողմից բացահայտած լրացուցիչ այլ կոնկրետ խնդիրների վերաբերյալ:
- Պատրաստում է տարեկան հաշվետվություն HELP ցանցի համար:

### Խմբագրական խորհուրդ

HELP-ի խմբագրական խորհուրդը կազմված է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի, ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստման, SS և ցանցային հաղորդակցության ոլորտի փորձագետներից: Այն նշանակվում է HELP-ի քարտուղարության կողմից և պատասխանատու է HELP ծրագրի հաղորդակցության ռազմավարության պլանավորման և իրականացման, ինչպես նաև HELP-ի ինտերնետային կայքերում լուրերի և վերապատրաստման նյութերի հրապարակման և վերանայման համար: Այն խորհրդատվություն է տրամադրում HELP-ի միջոցառումների և նախաձեռնությունների մշակման վերաբերյալ:

### HELP-ի քարտուղարություն

Քարտուղարությունը պատասխանատու է մեթոդաբանության ներդաշնակեցման համար բոլոր այն գործողություններում, որոնց ընթացքում կիրառվում են HELP ծրագրի վերապատրաստման մեթոդաբանությունը և ռեսուրսները: Այն նաև պատասխանատու է HELP ծրագրի դասընթացների մշակման նպատակով տարբեր Աշխատանքային խմբերի ձևավորման համար: HELP-ի տարեկան համաժողովը և HELP-ի վերապատրաստումը վերապատրաստողների համար նույնպես կազմակերպվում են քարտուղարության կողմից, որը վերահսկում է վերապատրաստողների գնահատումը և հավաստագրումը: Բոլոր վկայականները տպագրվում և բաշխվում են HELP-ի քարտուղարության կողմից: HELP-ի քարտուղարության այլ կարևոր պարտականություններից են HELP-ի ռեսուրսների որակական թարմացումը, ինչպես նաև աշխատանքների համակարգումն այլ միջազգային կազմակերպությունների կամ HELP-ի գործընկերների հետ, ինչպիսիք են ԴՈՒԵՑ-ը կամ Եվրոպայի փաստաբանական միությունների և իրավական համայնքների խորհուրդը և այլ միջազգային վերապատրաստում իրականացնողները, Եվրոպայի խորհրդի մոնիթորինգի և չափորոշիչներ սահմանող մարմինները:

HELP-ի քարտուղարությունը նաև երաշխավորում է HELP ցանցի գործառնումը գործընկեր հաստատություններում ազգային համակարգողների և տեղեկատվական պատասխանատուների հետ (տես վերևում) կանոնավոր հաղորդակցման միջոցով՝ աջակցելով հեռաուսուցման դասընթացների մշակմանը և մեկնարկին, էլեկտրոնային ուսուցման հարթակից օգտվելուն և HELP ծրագրի էլեկտրոնային հարթակում հասանելի նյութերի կանոնավոր թարմացումներին:

ՆՇՈՒՄՆԵՐ

### ii. Էլեկտրոնային ուսուցման հարթակը

Աշխարհում, որտեղ տեխնոլոգիան սրընթաց զարգացում է ապրում, և մարդիկ անընդհատ փնտրում են արագ և դյուրամատչելի տեղեկատվություն, էլեկտրոնային ուսուցումը, կարծես, վերապատրաստում իրականացնելու լավագույն լուծումն է: Անշուշտ, այն չի կարող փոխարինել ավանդական առերես վերապատրաստման դասընթացներին բոլոր իրավիճակներում, սակայն կարող է փոխլրացնող նշանակություն ունենալ: Էլեկտրոնային ուսուցումը կարող է որոշ դեպքերում հանդես գալ որպես առանձին, սակայն կարող է նաև կիրառվել որպես վերապատրաստման զուգակցված ուսուցման մոտեցման գործիք:

---

## ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- Մեծացնում է վերապատրաստման հասանելիությունը:
- Խթանում է սովորողների մասնակցությունը:
- Օգնում է ցկյանս ուսուցման, ինքնաուսուցման զարգացմանը:
- Կիրառում է մի շարք միջոցներ՝ ընդլայնելու համար ուսանողների ուսուցման հնարավորությունները:
- Հասկանում է, թե որտեղ տեխնոլոգիան կարող է ուժեղացնել ուսուցումը և դասավանդումը:

---

Էլեկտրոնային ուսուցում՝ ինչո՞ւ

HELP ծրագրի մեթոդաբանությունը և էլեկտրոնային ուսուցման օգտագործումը հաշվի են առնում **ժամանակի սղության մեծ ճնշումը**, որին բախվում են իրավական ոլորտի մասնագետներն իրենց առօրյա աշխատանքում: Դրա հավելյալ արժեքն այն է, որ ուսումնական ծրագրերը մշակվում են սովորողների վերապատրաստման հատուկ կարիքներին և անհատական ուսուցման տեմպին համապատասխան: Այսինքն՝ այն ճկունություն է ապահովում:

Էլեկտրոնային ուսուցման կիրառումը նաև **ծախսարդյունավետ** միջոց է՝ ներգրավելու **իրավական ոլորտի հնարավորինս մեծ թվով մասնագետների** հնարավորինս մեծ թվով անդամ պետություններում:

HELP-ը կազմակերպում է «վերապատրաստում վերապատրաստողների համար» աշխատանքային հանդիպումներ՝ խթանելու սեփականի ընկալումը վերապատրաստման ազգային ինստիտուտներում (տես՝ մաս 2, քայլ 2, բաժին բ): HELP-ի քարտուղարության կողմից կազմակերպված՝ «Վերապատրաստում վերապատրաստողների համար» աշխատանքային հանդիպումները զուգակցված ուսուցման մոտեցման լավ օրինակ են: Այստեղ կիրառվում է էլեկտրոնային ուսուցումը մեթոդաբանության և բովանդակության հետ կապված նախապատրաստական աշխատանքի համար, որին հետևում է 2-3 օր տևողությամբ առերես վերապատրաստումը, որից հետո էլեկտրոնային ուսուցման հարթակի կիրառման միջոցով տեղի է ունենում արդյունքների գնահատումը և հետադարձ կապի ապահովումը: Այսպիսով, վերապատրաստումը օպտիմալացվում է էլեկտրոնային ուսուցման միջոցով:

HELP ծրագրի շրջանակում մշակված և հավաքագրված՝ **ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստման ռեսուրսների** մեծ ծավալը հասանելի է առցանց և թարգմանված է շահառու երկրների պետական լեզուներով: Այն սրընթաց զարգանում է թե՛ բովանդակության և թե՛ ծավալների առումով, ինչը հիրավի մարտահրավեր է իրավական ոլորտի մասնագետների համար՝ հետևելու Ստրասբուրգի դատարանի արագ զարգացող նախադեպային իրավունքին: HELP ծրագիրը նաև հարթակ է, որտեղ մատչելի նորությունների միջոցով նրանք կկարողանան համընթաց հետևել Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքի զարգացումներին:

Գոյություն ունի **HELP ծրագրի վերապատրաստման նյութերի երկու հիմնական տեսակ՝**

- **Հեռաուսուցման դասընթացներ,** որոնք մատչելի են իրավական ոլորտի մասնագետների ընտրված խմբերի համար, որոնք մասնակցում են հավաստագրված ազգային դասընթացավարների պիլոտային դասընթացներին (ցանկը հասանելի է մեր ինտերնետային կայքում): Առկա դասընթացների ցանկը (նաև նկարագրությունը) հասանելի է **դասընթացների ցուցակում**:
- **Ինքնուսուցման դասընթացներ,** որոնք հասանելի են հարթակում մուտք ունեցող ցանկացած օգտատիրոջ համար: Դրանք ներառում են վերապատրաստման ձեռնարկներ ՄԻԵԿ-ի մեթոդաբանության և հիմնական հասկացությունների վերաբերյալ, ինչպես նաև ձեռնարկներ, ստանդարտ ուսումնական ծրագրեր, դասընթացների ծրագրեր, ներկայացումներ, նախադեպերի ուսումնասիրություն և հեռաուսուցման դասընթացներ ՄԻԵԿ-ի տարբեր հոդվածների և թեմաների շուրջ:

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ապաստանի վերաբերյալ HELP ծրագրի դասընթացը մեկնարկել էր Իսպանիայի ՓՄ-ի կազմակերպած խոշոր միջոցառման շրջանակում: Ի պատասխան «փախստականների ճգնաժամին»՝ Իսպանիայի ՓՄ-ն սեմինար էր կազմակերպել Մադրիդում 100 փաստաբանների համար: 800 լրացուցիչ փաստաբաններ առցանց հետևում էին միջոցառմանը: Թեև վերապատրաստողի կողմից իրականացվող՝ HELP-ի դասընթացը նախատեսված էր միայն 25 փաստաբանների համար, մտադրություն կար դասընթացի նյութերը հասանելի դարձնել Իսպանիայի բոլոր փաստաբանների համար՝ ինքնուսուցման նյութերի միջոցով:

### iii. HELP-ի մեթոդաբանությունը

HELP-ը 47 անդամ պետությունների՝ արդարադատության ոլորտում վերապատրաստում իրականացնող ազգային ինստիտուտների և փաստաբանների միությունների միակ համաեվրոպական ցանցն է: HELP ցանցի անդամներն աշխատում են միասին՝ վերապատրաստման կարիքների գնահատման և պատշաճ վերապատրաստման նյութերի մշակման ուղղությամբ:

ՆՇՈՒՄՆԵՐ

HELP-ն օգտագործում է à la carte հարմարեցված մոտեցումը՝ վերապատրաստման դասընթացները վերապատրաստման ներպետական համակարգերին համապատասխանեցնելու նպատակով: Դասընթացները սկզբում ընդհանուր են մշակվում անգլերեն լեզվով («մոդելային դասընթաց»): Ելնելով HELP-ի տարեկան համաժողովին վերապատրաստման կարիքների գնահատումից թե՛ ներպետական և թե՛ եվրոպական մակարդակում՝ դասընթացը համապատասխանեցվում է ներպետական իրավակարգին ու թիրախային լսարանի կարիքներին:

Այս համապատասխանեցումը հնարավոր դարձնելու համար HELP-ն ազգային դասընթացավարներ է վերապատրաստում՝ իր «վերապատրաստում վերապատրաստողների համար» ծրագրի միջոցով խթանելու համար վերջիններիս մոտ սեփականի ընկալումը: Սա ամրապնդում է այն փաստը, որ HELP-ը կոչված է աջակցելու, այլ ոչ թե փոխարինելու վերապատրաստման ազգային ինստիտուտների ջանքերը:

HELP-ի վերապատրաստման մոդուլների նոր որակը ՄԻԵԿ-ը միավորում է ներպետական իրավունքին: Յուրաքանչյուր ազգային դասընթաց տարբեր է և կարիքներին համապատասխանեցված, ներառում է հղումներ համապատասխան նախադեպային իրավունքին կամ ազգային վերապատրաստման այլ ռեսուրսներին:

HELP-ն օգտագործում է ժամանակակից այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպես ինտերակտիվ հեռաուսուցումն է: Սա հնարավորություն է ընձեռում սահմանափակ ռեսուրսների պայմաններում ներգրավել ավելի լայն լսարան, վերապատրաստել ավելի մեծ թվով իրավական ոլորտի մասնագետների:

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի ՓՄ-ն Փարիզում օգտագործում է HELP-ի ներածական դասընթացի զուգակցված ուսուցման տարբերակը՝ որպես փաստաբանների համար նախատեսված հիմնական ուսուցման ծրագրի մաս: Մինչ այժմ շուրջ 2000 փաստաբան է ուսումնառել այդ դասընթացի շրջանակում: Պլանավորվում է, որ յուրաքանչյուր կիսամյակ շուրջ 200 լրացուցիչ փաստաբան կմասնակցի այդ դասընթացին:

## ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԵՏ

Լրացուցիչ տեղեկությունների համար դիտեք HELP-ի տեսանյութը, որը հասանելի է HELP-ի ինտերնետային կայքում՝ http://www.coe.int/en/web/help/ :

ALTERNATIVE MEASURES TO DETENTION
ASYLUM
HATE CRIME/SPEECH
BUSINESS & HUMAN RIGHTS
MEDICRIME
DATA PROTECTION
FAMILY LAW
LABOUR RIGHTS
ILL TREATMENT
INTRODUCTION TO ECHR
HELP
CHEMICAL PRECURSORS
ANTI-DISCRIMINATION
INTERNATIONAL COOPERATION
ADMISSIBILITY
CHALLENGES

# ՄԱՍ 2. HELP-Ի ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՆԱԽԱԳԾՈՒՄԻՑ ՄԻՆՉԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## Քայլ 1՝ Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ

Վերապատրաստման ծրագիր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հարցեր՝ դրա արդյունավետությունը երաշխավորելու համար: Առաջին քայլն է պարզել, թե արդյոք վերապատրաստումն արդիական է: Դա արվում է վերապատրաստման կարիքների գնահատման միջոցով, ինչն իր հերթին օգնում է սահմանել վերապատրաստման ուսումնական խնդիրները (ընդհանուր և կոնկրետ):

### ա. Կարիքների գնահատում

Պետք է հաշվի առնվեն կազմակերպության, ինչպես նաև «սովորողների» կարիքները: Սույն ձեռնարկում մենք անդրադառնում ենք «Ընդհանուր խնդիրներին» կամ «ԸԽ»-ներին (երբեմն հայտնի՝ որպես «նպատակներ») և «Ուսումնական խնդիրներին» կամ «ՈՒԽ»-ներին, երբեմն հայտնի՝ որպես «նախատեսված ուսումնական արդյունքներ» կամ «կոնկրետ ուսումնական խնդիրներ»:

#### i. Կազմակերպության և դրա անդամների վերապատրաստման կարիքների բացահայտում

Ընդհանուր խնդիրների կամ նպատակների սահմանումը վերապատրաստման նախագծման առաջին կարևոր քայլն է: Այն պատկերացում է տալիս ընդհանուր նպատակի մասին պլանավորման փուլի համար:

Հաճախ վերապատրաստման ԸԽ-ն ներառում է այն, ինչ բխում է ինստիտուցիոնալ որոշումից (օրինակ՝ նոր օրենսդրություն կամ անբարենպաստ վճիռ կամ հմտությունների հայտնաբերված բաց): Այստեղ կազմակերպությունն ունակ է բացահայտել վերապատրաստման ընդհանուր կամ կոնկրետ կարիքները ապագա իրավական փոփոխությունների կամ թերությունների արտաքին հայտնաբերման հիման վրա:

Այնուամենայնիվ, ԸԽ-ները սահմանելիս կարող է նաև օգտակար լինել փորձել վերապատրաստման կարիքների մասին որոշակի պատկերացում ստանալ հենց «սովորողներից»՝ հարցնելով թիրախային լսարանի անդամներին, թե որ մասով է իրենց վերապատրաստում անհրաժեշտ:

Թեև սա օգտակար մոտեցում է (քանի որ ուժեղացնում է այն ընկալումը, որ վերապատրաստման իմաստը արդիական լինելն է), այդուհանդերձ, զերծ չէ ռիսկից: Հնարավոր է, որ վերապատրաստողների և սովորողների ցանկությունները տարբեր լինեն: Այդ ցանկությունները կարող են համընկնել կամ չհամընկնել կազմակերպության կարիքների հետ: Անցյալում, երբ ավելի շատ ուշադրություն էր դարձվում սովորողների վերապատրաստման կարիքների բացահայտմանն ուղղված փորձերի վրա, միշտ չէ, որ հստակ էր, թե արդյոք դրանք համապատասխանում են կազմակերպության փաստացի կարիքներին: Երբ կազմակերպությունները սկսեցին ուշադրություն դարձնել նրան, որ կազմակերպության կարիքներն առավել սերտորեն առնչվեն առանձին անհատների վերապատրաստման կարիքներին, առավել խորն սկսեց գիտակցվել կազմակերպությունների և անհատ սովորողների կարիքների միջև «համապատասխանության» ապահովման անհրաժեշտությունը:

Առաջին քայլն է պարզել, թե որն է նախատեսված վերապատրաստման նպատակը: Ընդհանուր խնդիրները սահմանելիս պետք է նաև ավելի մեծ համապատասխանություն լինի կազմակերպության կարիքների և ցանկությունների ու հնարավոր յուրաքանչյուր վերապատրաստվողի կարիքների կամ ցանկությունների միջև՝ օգնելու երաշխավորել, որ մատուցվող վերապատրաստումը լինի վերաբերելի և տեղին գնահատվի վերապատրաստողների ու սովորողների կողմից:

Այլ կերպ ասած՝ արժեքավոր է *թե՛* նախատեսված լսարանի և *թե՛* կազմակերպության վերապատրաստման կարիքները հաշվի առնելը: «Այն միջավայրի տեսածրումը», որտեղ իրեն տեսնում է տվյալ կազմակերպությունը, թույլ կտա տեսնել վերապատրաստման պոտենցիալ կարիքները, և դա ավելի մեծ հաջողությամբ կարող են անել վերապատրաստում մատուցողները: Սա ենթադրում է, որ կազմակերպությունը պետք է սկսի մեթոդներ մշակել նման կարիքների հայտնաբերման նպատակով և այդ կարիքների մասին տեղեկացնի վերապատրաստման պատասխանատուներին:

### Կազմակերպության կարիքների բացահայտում՝ վերապատրաստման կարիքների առաջին մակարդակի գնահատում

Վերապատրաստման կարիքների բացահայտման առավել ակնհայտ եղանակը կազմակերպության և (հավանաբար) սովորողների կարիքների գնահատման ընթացքում վերապատրաստողների կողմից առաջնորդող դերի ստանձնումն է: Սա ներառում է երկու տարր.

- Բացահայտել իր գործառույթներն առավել արդյունավետ կատարելու՝ կազմակերպության կարողությանը խոչընդոտող խնդիրները (ներկա համատեքստում հետևողականորեն կիրառելու մարդու իրավունքների չափորոշիչները):

---

- Եղե՞լ են արդյոք վերապատրաստման անհրաժեշտություն ի հայտ բերող վարչական փոփոխություններ, օրինակ՝ քրեակատարողական հիմնարկների համար առկա մոնիթորինգի պարտականությունների վերակազմակերպում:
- Կա՞մ արդյոք նոր կամ փոփոխության ենթակա օրենսդրական փոփոխություն, որի համար անհրաժեշտ է վերապատրաստում:
- Կա՞մ արդյոք ներպետական վերադաս դատարանի կամ Ստրասբուրգի դատարանի որևէ անբարենպաստ վճիռ, որը մատնանշում է մարդու իրավունքների ոլորտում իրավագիտության հասկացման հետ կապված թյուրըմբռնում:
- Ունի՞ արդյոք կազմակերպությունը համակարգային խնդիրներ իր ընթացակարգերում, օրինակ՝ «ողջամիտ ժամկետում» վճիռ կայացնելու խնդիրը:

---

- Այս գործընթացում պարզե՛ք այն հիմնական շահառուներին, որոնց հետ պետք է խորհրդակցեք կամ որոնց պետք է ներգրավեք պլանավորման գործընթացում: Ձեր առաջարկած կամ ձեր կողմից փոփոխությունների ենթարկված դասընթացները և ծրագրերն իրականացնող կազմակերպության բոլոր անդամների ներգրավումը և նրանց հետ խորհրդակցելը խիստ կարևոր է՝ խթանելու վերապատրաստման՝ որպես սեփականի ընկալումը:

---

HELP-ի քարտուղարությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է վերապատրաստման կարիքների լայնամասշտաբ գնահատում HELP ցանցի տարեկան համաժողովի համատեքստում, որը տեղի է ունենում հունիս ամսին

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Ստրասբուրգում: Սա հնարավորություն է ընձեռում առցանց հարցաթերթիկի միջոցով բացահայտել Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների դատավորների և դատախազների վերապատրաստման բոլոր ազգային ինստիտուտների և փաստաբանների միությունների գերակայությունները՝ HELP հարթակի հետ կապված:

HELP-ի քարտուղարությունը նաև ներկայացնում է նոր թեմաներ՝ հիմնվելով ՄԻԵԴ-ի զարգացող նախադեպային իրավունքի և ՄԻԵԴ-ի վճիռների կատարման համար պատասխանատու վարչության ներկայացրած առաջարկությունների վրա:

---

### Թիրախային լսարանին ճանաչելը՝ վերապատրաստման կարիքների գնահատման երկրորդ մակարդակ

Վերապատրաստման կարիքների գնահատման երկրորդ մակարդակը տեղի է ունենում վերապատրաստման ազգային ինստիտուտի կամ փաստաբանների միության կողմից HELP-ի դասընթացի պլանավորման նախնական հանդիպման ընթացքում: Այստեղ հնարավորություն է ընձեռվում բացահայտել սովորողների կոնկրետ խմբի վերապատրաստման կարիքները: Ազգային դասընթացավարի խնդիրն է HELP-ի ուսումնական ծրագիրը համապատասխանեցնել ներպետական իրավական համակարգին:

Բացահայտե՛ք, թե ովքեր կարող են լինել ձեր ապագա սովորողները և ինչ առանձնահատկություններ նրանք կարող են ունենալ: Սա նույնպես կօգնի վերապատրաստման պատասխանատուներին բացահայտել վերապատրաստման կոնկրետ կարիքները:

---

- Ինչ մասնագիտություն կունենան և որտեղ կաշխատեն:
- Ինչ որակավորումներ կարող են ունենալ:
- Ինչ տեսակի կամ տևողության փորձ կունենան:
- Ինչ նախնական գիտելիքներ կամ հմտություններ անհրաժեշտ կլինեն նրանց՝ վերապատրաստմանը մասնակցելու և դրանից օգուտ քաղելու համար:

---

Ինչպես նշվեց ներածության մեջ, կարևոր է բացահայտել հատուկ թիրախային լսարանների, այսինքն՝ դատավորների, դատախազների, փաստաբանների, պետական պաշտոնյաների և մարդու իրավունքների ազգային ինստիտուտներում աշխատող մասնագետների, օմբուդսմենի գրասենյակների կամ ոչ կառավարական իրավապաշտպան կազմակերպությունների հատուկ կարիքները:

### ii. Վերապատրաստման կարիքների բացահայտումը կատարողականի գնահատման միջոցով

ԸԽ-ների ձևակերպման նպատակն է երաշխավորել, որ կազմակերպության կարիքները և ցանկություններն արտացոլվեն անհատների կողմից վերապատրաստման կարիքների

.....

.....

.....

.....

բացահայտման ընթացքում: Սրա արդյունքում վերապատրաստումն ընկալվում է որպես արդիական, ուստի՝ ավելի արդյունավետ լինելու հավանականություն ունի:

Սա անելու ամենապարզ եղանակը վերապատրաստման ամենավաղ փուլում պոտենցիալ թիրախային լսարանի ներգրավումն է: Ներգրավեք նրանց, ովքեր վստահելիորեն կարող են որևէ ձևով մասնակից լինել վերապատրաստման նախաձեռնությանը՝ լինի դա վերապատրաստման նախկին մասնակիցներից գործող ծրագրի վերաբերյալ արձագանքներ հավաքելու, պոտենցիալ սովորողների հետ առաջարկությունների շուրջ խորհրդակցելու, թե նրանց ավելի համագործակցային ուղիներով սեփական ծրագրերի և դասընթացների մշակման գործում ներգրավելու միջոցով: Այս մոտեցումն անդրադառնում է այն ձևի վրա, որով կազմակերպությունը կարող է օգնել բարձրացնել իրազեկության մակարդակն առ այն, որ կարևոր է սովորողներին օգնել բացահայտել նաև իրենց կազմակերպության խնդիրներին համապատասխանող՝ վերապատրաստման կարիքները: Այստեղ վերապատրաստումն իրենց ծառայությունների մատուցումը բարելավելու միջոց է դատավորների, դատախազների կամ փաստաբանների համար: Այն պետք է ընկալվի որպես վերապատրաստման կարիքների «տեսածրմանը» փոխլրացնող (այսինքն՝ ի հավելումն):

Ահա թե ինչու է HELP-ի քարտուղարությունը HELP-ի տիպային ուսումնական ծրագրերի մշակման համար պատասխանատու աշխատանքային խմբերում ներգրավում ներկայացուցիչներ՝ իրավական ոլորտի տարբեր մասնագիտական խմբերից:

Կատարողականը կարող է նաև գնահատվել հրապարակված չափանիշների լույսի ներքո (ինչպես օրինակ ակնկալվող կարողությունների սահմանումն է), ինչը երկու կողմերին էլ կօգնի բացահայտել աջակցության կարիք ունեցող հետագա ոլորտները, այդ թվում՝ վերապատրաստման միջոցով: Այս ամենը դյուրին է դարձնում կազմակերպության և անհատական կարիքների համապատասխանեցումը: Ակնկալվող կարողությունների սահմանումը հնարավորություն է ընձեռում շարունակաբար անդրադառնալ կարիքների գնահատմանը կատարողականի ինքնուրույն և գործընկերային մշտադիտարկման միջոցով:

Սահմանված կարողությունների նկատմամբ ընթացիկ գիտելիքները, հմտությունները և վերաբերմունքը չափելու այս գործընթացը, սովորաբար, անվանում են «գնահատում» կամ «կատարողականի և զարգացման վերանայում» (ԿԶՎ): Այն նպատակ ունի առավելագույնի հասցնել կատարողականը, ապահովել աշխատանքից բավարարվածությունը և տրամադրել ուսուցման և զարգացման պատշաճ հնարավորություններ և ներուժ աշխատանքում առաջխաղացման համար: Սա իր հերթին պետք է նպաստի նաև կազմակերպությունում կարողությունների զարգացմանը՝ կազմակերպության ռազմավարական նպատակներին շաղկապված և դրանց խթանմանն ուղղված անձնական զարգացման պլանավորման միջոցով: Սա երաշխավորում է կազմակերպության ղեկավարության կողմից վերապատրաստումը «գնելու» ավելի մեծ հավանականությունը: Ուստի արդարադատության ոլորտում վերապատրաստման ինստիտուտներն ընկալվում են որպես արդյունավետ արդարադատության ապահովման միավորներ, այլ ոչ թե օգտակար, բայց ոչ էական «հավելումներ»:

ՆՇՈՒՄՆԵՐ

«Կարողությունները» սևեռվում են այն գործոնների վրա, որոնք նպաստում են անհատների և կազմակերպությունների հաջողությանը: Դրանք հրահանգների խումբ են, որոնք կարող են օգտագործվել ձեռքբերումները ներկայացնելիս և ուսուցումը սահմանելիս՝ օգնելով կազմակերպություններին և անհատներին բացահայտել իրենց ուսուցման և զարգացման կարիքների ոլորտները և դասակարգել դրանք ըստ գերակայության: Դրանք նաև կարևոր են անհատների համար աշխատանքային առաջխաղացման առումով՝ հստակ պատկերացումներ տալով, թե ինչ հմտություններ, գիտելիքներ կամ վարքագիծ է անհրաժեշտ յուրաքանչյուր մակարդակում, և անհատներին ցույց տալով, թե ինչպես նրանք կարող են աշխատանքում առաջխաղացում ունենալ իրենց առկա հմտությունների հիման վրա: Անհատներն այդպիսով հասկանում են, թե ինչ է ակնկալվում իրենցից աշխատանքում և կարող են քննարկել, թե ինչպես բարելավել իրենց ընթացիկ աշխատանքը կամ ինչպես բարելավել այլ աշխատանքի անցնելու իրենց հնարավորությունները: Անհատներին կառավարելու պատասխանատուները պարզ, արդարացի և անկողմնակալ հստակ ձևակերպումներ են կիրառում նրանց կատարողականը քննարկելիս, ինչը նաև օգնում է սահմանել իրենց աշխատակազմի աշխատանքային խնդիրները, ընդհանուր լեզու են կիրառում աշխատողներին իրենց կատարողականի մասին կարծիք հայտնելիս և կարող են բացահայտել անհատական ուսուցման կամ զարգացման կարիքները, ինչպես նաև ռեսուրսները, ինչը նշանակում է, որ նրանք կարող են ավելի լավ կազմակերպել աշխատակիցների զարգացումը և վերապատրաստումը[10]:

HELP-ն իր կատարողականը գնահատում է՝ ելնելով մի շարք գործոններից, ներառյալ՝ HELP-ի հավաստագրված վերապատրաստողի կողմից սովորողների կատարողականի և մասնակցության գնահատումից: Վերապատրաստման դասընթացներ մշակելիս դրանցում ներառվում են նախնական և եզրափակիչ գնահատումները՝ սովորողի գիտելիքների և հմտությունների մասով առաջընթացը գնահատելու նպատակով:

Վերապատրաստման ազգային ինստիտուտների կողմից նման միջոցներ ներմուծելու ցանկության դեպքում անհրաժեշտ է երեք քայլ՝

1. Առաջին խնդիրն է ստեղծել սխեմա, որն անհատներին թույլ կտա հասկանալ ակնկալվող կատարողականի մակարդակը կազմակերպության կարիքների լույսի ներքո: Ստեղծել կազմակերպության «առաքելության» զգացում ակնկալվող կատարողականի (կամ «կարողությունների») սահմանման և հրապարակման միջոցով: Կան մի շարք օրինակներ:
2. Երկրորդը, անհրաժեշտ է ներդնել միջոցներ, որոնք թույլ կտան չափել փաստացի անհատական կատարողականի մակարդակն ակնկալվող կատարողականի համեմատ: Սա կարող է տեղի ունենալ ինքնավերլուծության միջոցով կամ կատարողականը չափող և թերությունները բացահայտող գործիքների միջոցով՝ կանոնավոր գնահատման կամ «կատարողականի և զարգացման վերանայման» միջոցով: Սա, սովորաբար, նախատեսված է տարբեր նպատակների հասնելու համար՝ պաշտոն զբաղեցնողներին հնարավորություն ընձեռելով՝

10 Վերցված է *Հիմնական կարողությունների շրջանակ* ձեռնարկից (արդարադատության նախարարություն) https://www.justice.gov.uk/ downloads/jobs/competency-framework/core-competence-guidance-booklet.pdf վերջին մուտքը՝ 2016թ. մայիսի 25-ին:

- Անդրադառնալ կատարողականին և զարգացմանը ու ճանաչել նախորդ տարում արձանագրած հաջողությունը:
- Սահմանել առանձին նպատակները/կատարողականի չափանիշները՝ ըստ կազմակերպության սահմանած ծրագրի, և համաձայնության գալ դրանց շուրջ: Սա կարող է ներառել այն մարտահրավերների վերհանումը, որոնք գուցե անհրաժեշտ լինի հաղթահարել նշված նպատակներին հասնելու համար:
- Բացահայտել այն ոլորտները, որոնցում ուսուցումը և/կամ զարգացումը կարող են պահանջվել և պլանավորվել գալիք տարվա համար:
- Ըստ անհրաժեշտության՝ վերանայել ընթացիկ աշխատանքային դերը և պարտականությունները կազմակերպության ռազմավարական նպատակների և խնդիրների համատեքստում:

3. Եզրափակիչ քայլն անհատների կողմից վերապատրաստման կարիքների այս բացահայտման հիման վրա համակարգի ստեղծումն է, որը հնարավորություն կտա կազմակերպությանը շարունակաբար վեր հանել վերապատրաստման կարիքները: Դրանք կարող են ներառել անհատականացված կամ հավաքական վերապատրաստման կարիքներ: Օրինակ՝ դատավորները կարող են որևէ խնդիր բացահայտել՝ Ստրասբուրգի դատարանի նախադեպային իրավունքի ընկալման հետ կապված, ինչը ենթադրում է բոլոր դատավորների համար հմտություններին ուղղված վերապատրաստման անհրաժեշտություն: Կամ ընտանեկան իրավունքում մասնագիտացած դատավորը կարող է ամուսնական վեճերին երիտասարդների ներգրավմանը և դրա խթանման մեթոդներին առնչվող եվրոպական չափորոշիչները հասկանալու նպատակով վերապատրաստում անցնելու ցանկություն հայտնել:

Այսպիսով, ԿԶՎ-ի տարեկան գործընթացի հիմնական արդյունքը կլինի ծրագրի մշակումը, որը համահունչ է անհատի և կազմակերպության նպատակներին ու խնդիրներին: Այն հաշվի կառնի առկա գիտելիքները և հմտությունները, դերը և զարգացման ապագա կարիքները: Ծրագիրը կարող է ներառել զարգացման ոլորտները և դրանց հասնելու ուղիները (օրինակ՝ աջակցություն, աշխատաժողովներ, վերապատրաստում աշխատանքի վայրում, քոուչինգ, ուղղորդում և այլն):

---

## ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարողություն՝ հասկանալ իրենց դատարանի իրավասության շրջանակները և ընթացակարգերը:

Կատարողականի համապատասխանեցման ցուցանիշը կարող է ճշգրտորեն նկարագրել և բացատրել (ընդհանուր գծերով) դատարանի իրավասության շրջանակները և ընթացակարգերը: Կարող է նկարագրել անդամների և աշխատակազմի կոլեկտիվ և առանձնահատուկ դերերն իրենց դատարանի մշակույթում:

---

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Դա կարող է ներկայացվել հետևյալ կերպ՝




## ԱՆՀԱՏԱԿԵՆՏՐՈՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Վերապատրաստումը սկսվում է պարզ քայլով՝ Ընդհանուր խնդրի սահմանում: Այդ խնդրին պետք է հասնել վերապատրաստման արդյունքում: Ուսումնական խնդիրների սահմանումը «ուշադիր հետազոտում» պահանջող խնդիր է՝ կազմակերպության և դրա պարտականությունները կատարողների կարիքները գնահատելու, ապա և դրանք ըստ գերակայության դասակարգելու միջոցով:

HELP ցանցի շրջանակում վերապատրաստման հաստատությունները հետևյալ տեղեկություններն են տրամադրել կարիքների գնահատման իրենց մեթոդաբանության վերաբերյալ՝

**Ձեր հաստատության սահմանած ուսումնական խնդիրները հետևյալ ո՞ր ասպեկտներին են անդրադառնում:**
(հնարավոր է մեկից ավելի պատասխան)




(Աղբյուր՝ 2015թ. HELP համաժողովի զեկույց)

## բ. Ընդհանուր խնդիրների սահմանում

Առաջին հարցն ակնհայտ է՝ *ինչո՞ւ է* վերապատրաստումը համարվում անհրաժեշտ: Այս հարցը կարելի է ձևակերպել այլ կերպ՝ *ի՞նչ եք* ընդհանուր առմամբ նախատեսում ստանալ վերապատրաստումից: Կարիքների բացահայտումը հնարավորություն է տալիս սահմանել վերապատրաստման ընդհանուր խնդիրները: Դա իր հերթին թույլ է տալիս առաջադրել ուսումնական առավել կոնկրետ խնդիրներ:

Ընդհանուր խնդիրը (ԸԽ) դասընթացի/ծրագրի լայն նպատակն է: Ընդհանուր խնդիրները, սովորաբար, ձևակերպվում են այն հնարավորությունների տեսանկյունից, որ դասընթացը/ծրագիրն ընձեռելու է սովորողներին: Վերապատրաստման ընդհանուր խնդրի սահմանումն առաջին քայլն է՝ պարզաբանելու վերապատրաստողներին և թիրախային լսարանին, թե ինչ է ներառելու վերապատրաստման ընդհանուր նպատակը:

### ՕՐԻՆԱԿ Ա

Այս ծրագրի ընդհանուր խնդիրն է սովորողներին հնարավորություն ընձեռել ձևավորել վստահություն և հմտություններ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրության գործում:

### ՕՐԻՆԱԿ Բ

Այս դասընթացի ընդհանուր խնդիրն է երաշխավորել, որ դատավորները հասկանում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջները՝ մինչդատական փուլում գտնվող քրեական հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անհատի պաշտպանության հետ կապված:

Վերապատրաստման ընդհանուր խնդիրը սահմանելուց հետո կարելի է սկսել նախագծման փուլը, որի շրջանակում սահմանվում են ուսումնական խնդիրները (կամ «նախատեսվող ուսումնական արդյունքները) (տե՛ս ստորև՝ քայլ 2, ա, iii, էջ 61):

## Քայլ 2՝ Ի՞նչ է անհրաժեշտ անել՝ HELP-ի մոտեցումը

## ա. Դասընթացի մշակում

HELP-ի մոդելային դասընթացը վերապատրաստման ուսումնական մոդելային ծրագիր է, որը մշակվել է միջազգային փորձագետների կողմից: Մշակման գործընթացի ավարտից հետո սկսվում է համապատասխանեցման փուլը՝ նախքան փաստացի դասընթացի (զուգակցված կամ հեռաուսուցման ձևով) մեկնարկը:

Նկատի ունենալով, որ դասընթացը կարող է իրականացվել Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետությունում և իրավական ոլորտի մասնագետների ցանկացած խմբի

ՆՇՈՒՄՆԵՐ

համար, բովանդակության մշակման ընթացքում պետք է հաշվի առնվի ներպետական տարբեր իրավակարգերին և թիրախային տարբեր խմբերի կարիքներին դրա համապատասխանեցումը:

Ուղեցույցի այս բաժնի նպատակն է ուղղորդել, թե ինչպես կարելի է մշակել մոդելային դասընթաց սկզբից մինչև վերջ: Այն առնչվում է ազգային դասընթացավարի ընտրությանը և պետական լեզուներով թարգմանությանը, դասընթացի մեկնարկի նախապատրաստմանը և մեկնարկի կազմակերպմանը: Դրանից հետո անհրաժեշտ է իրականացնել գնահատման, հավաստագրման և վերանայման փուլերը, ինչը հնարավորություն է տալիս վերապատրաստման նյութերը տեղափոխել HELP-ի Moodle էլեկտրոնային հարթակի ինքնուսուցման հատված, որտեղ դրանք հասանելի կդառնան համակարգված դասընթացից դուրս բոլոր օգտատերերի համար:

Առաջարկվող ժամանակացույցը հետևյալն է՝

| ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | ԺԱՄԱՆԱԿԱ-ՀԱՏՎԱԾ |
|---|---|---|
| **Վերապատրաստման կարիքների գնահատում (ՎԿԳ)**՝ գերակա թեմաների սահմանում Ցանցի կողմից (Մարդու իրավունքների ոլորտում Ստրասբուրգի (և Լյուքսեմբուրգի) դատարան(ներ)ի նոր նախադեպային իրավունքի հիման վրա) և ազգային ինստիտուտների ՎԿԳ: | | |
| **Խորհրդատուների և Եվրոպայի խորհրդի/գործընկեր փորձագետների ընտրություն** | | |
| **Ուսումնական ծրագրի մշակում** (ուսուցման կոնկրետ խնդիրների, մանրամասն դասապլանի, դեպքերի ուսումնասիրության, գործնական առաջադրանքների, գնահատման գործիքների, լրացուցիչ նյութերի և հղումների նախագծում): | I ԱԽ հանդիպում | 1-ին և 2-րդ ամսում |
| | II ԱԽ հանդիպում | 3-րդ և 4-րդ ամսում |
| | III ԱԽ հանդիպում | 5-րդ ամսում |
| **Ինտերակտիվ արտադրանքի մշակում** | Պատմատախտակի քննարկում[11] | 6-րդ ամսում |
| **Թարգմանություն պետական լեզվով** | | 7-րդ և 8-րդ ամսում |
| **Ներպետական իրավակարգին համապատասխանեցում** *(ՎՎՀ՝ հավաստագրված վերապատրաստողների ռեեստր, որն օգտագործվում է ներպետական և միջազգային վերապատրաստումների իրականացման համար)* | | 8-րդ և 9-րդ ամսում |
| **Դասընթացի իրականացումը և վավերացումը ներպետական մակարդակում** | Սովորողների ընտրություն | 9-րդ ամսում |
| | Առերես հանդիպում՝ որպես դասընթացի մեկնարկի միջոցառում | 10-րդ ամսում |
| | Իրականացում | 10-14-րդ ամսում |
| | Հավաստագրում/գնահատում | 15-րդ ամսում |

11 Պատմատախտակը դասընթացի ձևանմուշն է, որը ներմուծված է ինտերակտիվ համակարգչային ծրագրում: Պատմատախտակը ներկայացվում է PowerPoint ձևաչափով՝ անհրաժեշտ բովանդակությամբ և կառուցվածքով, ու ճշգրիտ ձևով ներկայացնում է վերջնական արտադրանքը:

## i. Թեմայի ընտրությունը կարիքների գնահատման հիման վրա

HELP-ի ճանապարհային քարտեզը

HELP-ի ամենամյա համաժողովի ընթացքում Ցանցը քննարկում է իր հաստատությունների և դրանցում աշխատող իրավական ոլորտի մասնագետների կարիքները մարդու իրավունքների առնչությամբ: Նախապես մշակվում են հարցաշարեր՝ ցանցի անդամներից տեղեկություններ հավաքագրելու նպատակով, և այս տեղեկություններն օգտագործվում են որպես հիմք համաժողովի ընթացքում քննարկումներ ծավալելիս: Լրացուցիչ տեղեկություններին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ Ցանցի անդամների կարիքների գնահատման նպատակով կիրառվող մեթոդաբանությունների վերլուծությանը[12]:

Բացի այդ, Ցանցի անդամները հնարավորություն ունեն ներկայացնել իրենց գերակայությունները և նշել, թե ինչ դասընթացներ կցանկանային ունենալ, և դրանք իրականացվեն որպես ներպետական, թե միջազգային բնույթի նախաձեռնություններ:

Ելնելով այս տեղեկություններից՝ HELP-ի քարտուղարությունը մշակում է առաջիկա տարվա ճանապարհային քարտեզը մինչև հաջորդ տարեկան համաժողովը՝ նշելով առկա դասընթացների իրականացման կամ առկա դասընթացների մշակման գերակայությունները:

Ցանցի անդամները նաև քննարկում են իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման մեթոդաբանությունը, երբ այն վերաբերում է մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստմանը և անդրադառնում են այն մարտահրավերներին, որոնք առկա են ինստիտուցիոնալ, տեխնիկական կամ արժեքային մակարդակներում:

Կարիքների գնահատումը նաև հիմնված է ներպետական մակարդակում Ցանցի անդամ հաստատությունների իրականացրած գնահատման վրա (տե՛ս վերևի բաժնում): Լավագույն գործելակերպի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար ընթերցե՛ք 2014թ. HELP-ի տարեկան զեկույցը[13]:

Համագործակցություն նույն դաշտում ներգրավված միջազգային այլ կազմակերպությունների հետ

HELP-ը կանոնավոր կապ է պահպանում Ցանցի անդամների, բայցև միջազգային այլ կազմակերպությունների, HELP-ի գործընկերների և Եվրոպայի խորհրդի այլ մարմինների հետ: Վերապատրաստման կարիքները բացահայտելիս և նախքան որևէ թեմայով վերապատրաստում մշակելու շուրջ որոշում կայացնելը կատարվում է գնահատում՝ երաշխավորելու ներգրավված բոլոր կողմերի միջև ջանքերի համակարգումը, որպեսզի չկրկնօրինակվեն կամ չվերարտադրվեն արդեն իսկ առկա վերապատրաստման ծրագրերը կամ նյութերը: Մշակվող վերապատրաստումը պետք է ունենա հավելյալ արժեք՝ «սովորողի» համար արդյունավետ և արդիական լինելու նպատակով:

## ii. HELP-ի աշխատանքային խմբերը (ԱԽ)

Խորհրդատուների ընտրություն

Խորհրդատուները նշանակվում են որպես ԱԽ-ի անդամներ, որոնք պատասխանատու են անգլերեն լեզվով մոդելային դասընթացի նախապատրաստման համար: ԱԽ-ն կազ-

12 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806544fe:
13 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016805c460d:

ՆՇՈՒՄՆԵՐ

մված է դրսից հրավիրված առնվազն 4 խորհրդատուներից, որոնցից մեկին առաջարկվում է ստանձնել համակարգողի դերը: Խորհրդատուների թիվը կարող է լինել տարբեր՝ կախված թեմայից, ինչպես նաև HELP-ի քարտուղարության և Եվրոպայի խորհրդի մեկ այլ մարմնի և/կամ միջազգային այլ կազմակերպության միջև ստեղծված համագործակցությունից:

Այդուհանդերձ, կարևոր է նշել, որ նախընտրելի է ունենալ **իրավական ոլորտի մասնագետների յուրաքանչյուր կատեգորիայից** մեկ ներկայացուցիչ: Լավագույն դեպքում ԱԽ-ն կարող է ներառել մեկ դատավոր, մեկ դատախազ, մեկ փաստաբան և քաղաքացիական հասարակության կամ ակադեմիական հանրության մեկ ներկայացուցիչ:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր ԱԽ ունի իր առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնվեն Ծրագրի ղեկավարի կողմից, որը պետք է համապատասխանություն ապահովվի այդ առանձնահատկություններին HELP-ի մեթոդաբանության կիրառմամբ:

Ինչպես ավելի վաղ նշվեց, նախքան բովանդակության մշակման փուլի սկսվելը HELP-ի քարտուղարության կողմից նշանակվում են խորհրդատուներ: Կախված գնումների կիրառվող ընթացակարգից՝ խորհրդատուներն ընտրվում են միջազգային բաց մրցույթով, սահմանափակ խորհրդակցությամբ կամ ուղղակի բանակցային գործընթացի միջոցով:

Եվրոպայի խորհրդի գնումների ընթացակարգերն ամփոփված են իրավաբանորեն պարտադիր մեկ փաստաթղթում՝ 2011թ. հունիսի 29-ի Թիվ 1333 կանոնը Եվրոպայի խորհրդի գնումների ընթացակարգի վերաբերյալ (այսուհետ՝ «Կանոնը»): Այս Կանոնի 2-րդ հոդվածի համաձայն՝ ընտրությունը պետք է հիմնված լինի **օբյեկտիվության, թափանցիկության, բացառիկության բացառման, հավասար վերաբերմունքի և խտրականության բացառման** սկզբունքների վրա:

Կազմակերպությանն ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների մատակարարման պայմանագրերը, շրջանակային համաձայնագրերը և գործընկերային համաձայնությունները կարգավորվում են հետևյալ ընթացակարգերից որևէ մեկով (Կանոնի 4-րդ հոդված):

Միջազգային բաց մրցույթի հայտարարումը կամ սահմանափակ խորհրդակցական ընթացակարգը հնարավորինս մեծ թվով հայտատուների հասնելու նպատակ ունի: Սա ծառայություն ստացող վարչական մարմնին հնարավորություն է ընձեռում դիմումատուների ողջամիտ թվից ընտրելու լավագույն թեկնածուներին: Այդ պատճառով ծանուցումները պետք է հրապարակվեն Եվրոպայի խորհրդի ինտերնետային կայքում (օրինակ՝ մրցույթների հայտարարությունների համար նախատեսված մասում) և այնպիսի ինտերնետային կայքերում, որոնք ծառայություն են մատուցում աշխատանք փնտրողներին՝ ԵՄ հաստատություններում (օրինակ՝ EuroBrussels) գտնելու աշխատատեղերի ցանկեր: Բացի այդ, մրցույթի մասին հայտարարությունը պետք է տարածվի HELP ցանցի միջոցով և HELP-ի գործընկերների կոնտակտների շրջանում, ինչպես օրինակ՝ Դատավորների ուսուցման եվրոպական ցանցը (ԴՈՒԵՑ):

Անկախ նրանից, թե գնումների ինչ ընթացակարգ է կիրառվում, խորհրդատուների առաջադրանքները պետք է ձևակերպվեն որպես **անկնկալվող արդյունքներ** և պետք է ներառվեն մրցույթի ծանուցման մեջ (մրցույթի հրավերի դեպքում) կամ պայմանագրում (սահմանափակ խորհրդակցության և ուղղակի բանակցությունների ընթացակարգերի դեպքում):

## Խորհրդատուների դերը

Ակնկալվում է, որ խորհրդատուներից յուրաքանչյուրը պետք է մասնակցի անգլերեն լեզվով **մոդելային դասընթացի** մշակմանը սահմանված ժամկետներում՝ ԱԽ-ի անդամների միջև առաջադրանքների բաշխման համատեքստում: Բացի դասընթացի բովանդակությունից, ակնկալվում է, որ յուրաքանչյուր խորհրդատու պետք է ներկայացնի ընտրված լրացուցիչ աղբյուրների ցանկ, հարցերի ցանկ (օրինակ՝ ճիշտ կամ սխալ, բազմակի ընտրության և այլն), յուրաքանչյուր մոդուլի համար ուսումնական խնդիրները և թեմային համապատասխանող ինտերնետային կայքերի և մուլտիմեդիա գործիքների ցանկ: Վերջում կարող է առաջարկվել քննարկման որևէ թեմա և այնուհետև օգտագործվել ազգային դասընթացավարի կողմից իրականացման փուլում:

ԱԽ-ի այն անդամը, որին հանձնարարված է գործել որպես **ԱԽ-ի համակարգող**, բացի վերոնշյալ ծառայությունների մատուցումից, պատասխանատու է բովանդակության մշակման փուլի վերահսկման համար: Այլ կերպ ասած՝ նա ստանում է խմբի մյուս անդամների մշակումները, ընթերցում և մեկնաբանում դրանք՝ բովանդակության, ինչպես նաև ոճի և ձևաչափի տեսանկյունից դրանք առավել համակարգված դարձնելու համար: Բացի այդ, նա համագործակցում է էլեկտրոնային ուսուցման դիզայների հետ բովանդակության մշակման փուլի վերջում՝ դասընթացի *Articulate* տարբերակը մշակելու համար: HELP-ի քարտուղարությունը պետք է կանոնավոր տեղեկություններ ստանա մշակման գործընթացի վերաբերյալ:

Բացի այդ, ակնկալվում է, որ յուրաքանչյուր խորհրդատու պետք է աշխատանքային սերտ հարաբերություններ ստեղծի և պահպանի ԱԽ-ի մյուս անդամների հետ՝ միմյանց հետ հաղորդակցվելու և վերապատրաստման նյութեր փոխանակելու նպատակով:

## ԱԽ-ի հանդիպումներ

Խորհրդատուները պետք է մասնակցեն առնվազն **ԱԽ-ի երեք հանդիպումների**, որոնք տեղի են ունենում առնվազն երկու ամիս ընդմիջումով: Թեև հանդիպումների թիվը կարող է ավելի ուշ ճշգրտվել, եթե պարզվի, որ լրացուցիչ հանդիպումների կարիք կա, դրանց միջև տևողությունը նախապես պլանավորվում է դասընթացի ծավալին համապատասխան: Չնայած ԱԽ-ի հանդիպումներն առանցքային նշանակություն ունեն բովանդակության մշակման փուլում, ակնկալվում է, որ խորհրդատուները դասընթացը մշակելու իրենց պարտականությունը կավարտեն հիմնականում հանդիպումների միջև եղած ժամանակահատվածներում: HELP-ի մոդելային մեկ դասընթացի մշակումը միջինը տևում է 9 ամիս:

Խորհրդատուների ընտրությունից և մրցույթում հաղթելու վերաբերյալ մրցույթի մասնակիցներին տեղեկացնելուց հետո կարելի է նախատեսել ԱԽ-ի առաջին հանդիպումը: Հաջորդող հանդիպումների ժամանակացույցը, ինչպես նաև աշխատանքների վերջնաժամկետները սահմանվում են այդ հանդիպման ընթացքում: Լավագույն դեպքում ժամկետները սահմանվում են այնպես, որ ԱԽ-ի անդամները մասնակցեն բոլոր հանդիպումներին: Եթե դա հնարավոր չէ, և գործընթացը կարող է հետաձգվել որևէ խորհրդատուի հասանելի չլինելու պատճառով, փոխարենը կարող է կազմակերպվել վեբ կոնֆերանս:

Բացի առաջին ԱԽ-ի հանդիպումից, համակարգողին խնդրում են էլեկտրոնային ուսուցման մշակողի հետ մասնակցել պատմատախտակի քննարկմանը, որը տեղի է ունենում բովանդակության մշակման փուլի ավարտից հետո:

ՆՇՈՒՄՆԵՐ

Երբ թեման վերաբերում է Եվրոպայի խորհրդի այլ մարմինների հանձնագրին, կարող են հրավիրվել տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներ՝ մասնակցելու բովանդակության մշակման փուլին: Նրանց ներգրավումը կախված է հասանելիությունից՝ ԱԽ հանդիպումներին մասնակցությունից մինչև մեկ մոդուլի նախագծումը կամ վերապատրաստման նյութի վերանայումը:

### Նախքան ԱԽ-ի առաջին հանդիպումը

Բացի այդ, նրանց պետք է տեղեկություններ տրամադրվեն այն առաջադրանքների վերաբերյալ, որ իրենք պետք է իրականացնեն, ինչպես նաև HELP ծրագրի վերաբերյալ: Թեև HELP ծրագիրն ընդհանուր գծերով ներկայացվում է առաջին հանդիպման ընթացքում, լավ գործելակերպը ենթադրում է խորհրդատուներին նախապես ուղարկել HELP-ի ինտերնետային կայքի[14] հղումը և խրախուսել նրանց բացել էլեկտրոնային ուսուցման հարթակում իրենց համար համապատասխան հաշիվ: Դա նրանց հնարավորություն կընձեռի ծանոթանալ ծրագրին և դրա գործիքներին:

Խորհրդատուներին պետք է տրամադրել դասընթացի, դրա խնդիրների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Այդ նպատակով կարող են հավաքագրվել և/կամ մշակվել որոշ հենքային նյութեր և տրամադրել դրանք հանդիպումից առաջ: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նյութերի ընտրությանը, քանի որ հանդիպման նպատակը մտքերի գրոհ խրախուսելն է:

Լավ փորձառություն է փաստաթղթերն էլեկտրոնային ուսուցման հարթակում՝ ԱԽ-ի համար նախատեսված բաժնում վերբեռնելը: Խորհրդատուներին կարող է տրամադրվել քայլ առ քայլ ուղեցույց, որպեսզի նրանք օգտագործեն հարթակը փաստաթղթեր վերբեռնելու և գաղափարներ ու փաստաթղթեր փոխանակելու համար: Այս էջը նաև օգտագործվում է դասընթացի մշակման առաջընթացին հետևելու նպատակով: Էջը հասանելի է միայն ԱԽ-ի անդամների, HELP-ի քարտուղարության և բոլոր նրանց համար, ովքեր կարող են ներգրավված լինել բովանդակության մշակման փուլում:

### ԱԽ-ի առաջին հանդիպումը

ԱԽ-ի առաջին հանդիպման նպատակն է խորհրդատուներին ծանոթացնել միմյանց հետ և նրանց ներկայացնել HELP ծրագիրը և դրա վերապատրաստման մեթոդաբանությունը: Հանդիպման ավարտին խորհրդատուները պետք է համաձայնության գան **ուսումնական ծրագրի նկարագրի առաջին նախագծի, դասընթացի ձևաչափի շուրջ, միմյանց միջև բաշխեն առաջադրանքները և սահմանեն աշխատանքների իրականացման ժամանակացույց**: Օրակարգում ներառվող թեմաներից են՝

- HELP-ի ներկայացում,
- Կարծիքների հավաքագրում,
- Առկա նախաձեռնություններ և վերապատրաստման նյութեր,
- Վերապատրաստման կարիքների գնահատում,
- Ուսումնական խնդիրներ,
- Ուսումնական ծրագրի նկարագիր,
- Ձևաչափ,

14 http://www.coe.int/help:

- Առաջադրանքների բաշխում:

Սովորաբար, օրակարգում նախատեսվում է կարծիքների հավաքագրում՝ խորհրդատուների մասին տվյալների և նրանց ակնկալիքների մասին տեղեկություններ փոխանակելու նպատակով: Այս տեղեկությունները պետք է հաշվի առնվեն առաջադրանքների բաշխման ժամանակ, քանի որ յուրաքանչյուր խորհրդատու պետք է պատասխանատու լինի իր վրա դրված մոդուլ(ներ)ի մշակման համար՝ երաշխավորելու բարձրորակ արդյունքներ:

Առկա նախաձեռնությունների և վերապատրաստման նյութերի կրկնօրինակումից խուսափելու նպատակով խորհրդատուներին **ընդհանուր պատկերացում** է տրվում այն մասին, թե Եվրոպայի խորհրդի կամ միջազգային այլ կազմակերպությունների կողմից վերապատրաստման ինչ մշակված նյութեր կան տվյալ թեմայի շուրջ: Թեև դա պահանջում է HELP-ի քարտուղարության կողմից նախնական հետազոտության իրականացում, այն կարող է շատ օգտակար լինել՝ նկատի ունենալով, որ առկա նյութերը կարող են ինտեգրվել դասընթացում՝ դրանց սեփականատիրոջ համաձայնությամբ:

Հաշվի առնելով, որ թիրախային լսարանն իրավական ոլորտի մասնագետներն են և ՎԱԻ-ի կամ ՓՄ-ի կողմից առավել մանրամասն գնահատում է իրականացվում նախքան դասընթացի մեկնարկը, **վերապատրաստման կարիքները** գնահատվում են ԱԽ-ի առաջին հանդիպման ընթացքում: Քննարկումից հետո ԱԽ-ն որոշում է՝ արդյոք մոդելային դասընթացի բովանդակությունը նույնը պետք է լինի նշված բոլոր կատեգորիաների համար, թե անհրաժեշտ են որոշ փոփոխություններ՝ թիրախային լսարանին համապատասխան:

Ընդհանուր խնդիրները կարող են մշակվել ԱԽ-ի առաջին հանդիպման ընթացքում: Ուսումնական խնդիրները, գիտելիքները, հմտությունները և արժեքները, որոնք սովորողները պետք է ձեռք բերեն դասընթացի ավարտին, վերանայվում են եզրափակիչ հանդիպման ընթացքում: Յուրաքանչյուր մոդուլի ուսումնական խնդիրները կարող են թվարկվել հանդիպման ընթացքում կամ առանձին՝ յուրաքանչյուր խորհրդատուի կողմից՝ իր պատասխանատվությամբ մոդուլ մշակելու ընթացքում:

**Ուսումնական ծրագրի նկարագիրը** հանդիպման ընթացքում իրականացվող առավել խստապահանջ աշխատանքն է: Նախևառաջ, մշակվում է հիմնական կառուցվածքը: Խորհուրդ է տրվում օգտագործել էկրան, որը խորհրդատուներին թույլ կտա հետևել քննարկմանը: Դասընթացի կմախքի շուրջ խորհրդատուների համաձայնության գալուց հետո այն կարող է քննարկվել ավելի մանրամասն: Դրա արդյունքում դասընթացի ծրագիրը կարող է ներկայացվել կետերի միջոցով: Խորհրդատուները պետք է մտապահեն, որ նախքան վերջնական տարբերակի հանձնումը ցանկացած պահի կարելի է փոփոխություններ անել, ինչը նշանակում է, որ դասընթացի ծրագիրը կարող է փոփոխվել, եթե խումբը համարի, որ դա նպատակահարմար է մանկավարժական տեսանկյունից:

Դասընթացի **ձևաչափի** վերաբերյալ քննարկումը խիստ կարևոր է, քանի որ այն սահմանում է խորհրդատուների մոտեցումը բովանդակության մշակման փուլի նկատմամբ: ԱԽ-ի առաջին հանդիպման ընթացքում խորհրդատուները որոշում են՝ արդյոք դասընթացը լինելու է լիովին ինտերակտիվ, թե ներկայացված է լինելու *Articulate* (էլեկտրոնային ուսուցման նյութերի մշակման համակարգչային ծրագիր) և տեքստային ներկայացումների (Word և Power Point տարբերակներ) համադրություն: Որոշումը կայացվում է անկախ այն փաստից՝ դասընթացը մեկնարկելու է որպես զուգակցված, թե հեռավար ուսուցում:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Բովանդակային նյութերի նախագծերի ներկայացման **վերջնաժամկետները** սահմանվում են խմբի կողմից: Ճիշտ գործելակերպն է՝ խնդրել խորհրդատուներին ներկայացնել իրենց աշխատանքը համակարգողին ԱԽ-ի երկրորդ հանդիպումից առնվազն երկու շաբաթ, և ԱԽ-ի երրորդ հանդիպումից առնվազն երեք շաբաթ առաջ:

Առաջադրանքների բաշխումը նաև ներառում է **դերերի հստակ սահմանում**: Կարևոր է աշխատանքային խմբի անդամներին հստակ պատկերացում տալ ծրագրի համակարգողի դերի վերաբերյալ, որը համակարգում է աշխատանքային խմբի աշխատանքը վարչական մակարդակում, մինչդեռ որպես համակարգող հանդես եկող խորհրդատուն պատասխանատու է նյութերի բովանդակության համակարգման համար: Յուրաքանչյուր անդամ պետք է հստակ պատկերացում ունենա, թե ինչ է ակնկալվում իրենից և ինչ կարող է նա ակնկալել ներգրավված այլ անձանցից:

Հանդիպումից հետո HELP-ի քարտուղարության տրամադրած **ձևանմուշների** միջոցով մշակվում են վերապատրաստման նյութերը: Դրանք տրամադրվում են ԱԽ-ի անդամներին՝ խթանելով արձագանքների և մեկնաբանությունների փոխանակում: Ըստ ԱԽ-ի հետ համաձայնեցված ժամանակացույցի՝ ակնկալվում է, որ յուրաքանչյուր խորհրդատու պետք է մեկնաբանություն թողնի բոլոր բովանդակային նյութերի վերաբերյալ track change գործիքի միջոցով և հաշվետվություն ներկայացնի համակարգողին: Բացի այդ, խորհրդատուները կարող են փոփոխել իրենց մշակած նյութը այլ խորհրդատուի մեկնաբանություններին համապատասխան, եթե վերջիններս համարում են, որ դրանք ավելի համահունչ են ընդհանուր նյութի բովանդակությանը:

### ԱԽ-ի երկրորդ հանդիպումը

ԱԽ-ի երկրորդ հանդիպման նպատակն է քննարկել յուրաքանչյուր խորհրդատուի աշխատանքը և, համապատասխանաբար, խմբագրել: Խորհրդատուներին առաջարկվում է հանդես գալ **կարճ ներկայացմամբ** իրենց համապատասխան աշխատանքի վերաբերյալ, քանի որ հնարավոր է, որ ԱԽ-ի մյուս անդամները նյութերին ծանոթանալու հնարավորություն չեն ունեցել:

Հանդիպմանը կարող են հրավիրվել էլեկտրոնային ուսուցման դիզայները և հաղորդակցությունների փորձագետը, որպեսզի ներկայացնեն էլեկտրոնային ուսուցման և արդյունավետ գրելու տեխնիկաները: Մշակման վաղ փուլում այս ներկայացումները հստակ հավելյալ արժեք ունեն, քանի որ խորհրդատուները ծանոթանում են *Articulate* ծրագրին և վերապատրաստման նյութերի մշակմանը՝ դրանք ինտերակտիվ դարձնելու նպատակով:

**Ինտերակտիվ ձևաչափի** վերաբերյալ քննարկումը, սովորաբար, տեղի է ունենում ԱԽ-ի երկրորդ հանդիպման ընթացքում, երբ մշակվում է դասընթացի նկարագիրը: Ինտերակտիվության ապահովումը ներկայացվում է դասընթացում մուլտիմեդիա գործիքների կիրառման միջոցով: Խորհրդատուներն ուսումնասիրում են ներածական տեսանյութեր տեղադրելու կամ որոշ տեքստային ներկայացումներ տեսադասախոսություններով փոխարինելու հնարավորությունը: Տվյալ ոլորտի փորձագետ խորհրդատուներին կարող են խնդրել աջակցել HELP-ի քարտուղարությանը որևէ տեսանյութի սցենարի մշակման գործում, որոնք, սովորաբար, նկարահանվում են Եվրոպայի խորհրդի տարածքում: Կարևոր է ընտրել ինտերակտիվության ճիշտ մակարդակ՝ ելնելով ընտրված թեմայից և թիրախային լսարանից:

Ներածական տեսանյութեր ավելացնելու դեպքում՝ դրանք ներկայացվում են Եվրոպայի խորհրդի իրավասու մարմնի և միջազգային գործընկեր կազմակերպության կողմից, եթե դասընթացի մշակման նպատակով համագործակցություն է ստեղծվել: Ներածական տեսանյութի հիմնական նպատակն է մոտիվացնել սովորողներին մինչև վերջ մասնակցել հեռավար կամ զուգակցված ուսուցման դասընթացին: Այս նպատակով ներածական խոսք ասողների ընտրությունը կարևոր է և հաշվի է առնում թիրախային լսարանի մոտ նրանց ունեցած հեղինակությունը:

Ինչ վերաբերում է բովանդակությանը, խորհրդատուներն էլ ավելի են ներգրավված տեսանյութերում, որոնք կարող են նկարահանված լինել տեքստային բովանդակությունը փոխարինելու նպատակով, քանի որ նրանց կարող են խնդրել մշակել տեսանյութի սցենարը և դասախոսություն կարդալ, եթե նրանք պատրաստակամ են: Ամեն դեպքում տեսանյութի տեքստը պետք է մշակվի, քանի որ այն օգտագործվելու է ենթագրերի համար, որոնք այնուհետ թարգմանվում են տարբեր պետական լեզուներով:

## ԱԽ-ի երրորդ հանդիպումը և որակի ստուգումը

Աշխատանքային խմբի երրորդ և վերջին հանդիպման նպատակն է քննարկել և հաստատել վերապատրաստման նյութերի **վերջնական տարբերակը**: Խորհրդատուները համոզվում են, որ առաջարկված բոլոր փոփոխությունները կատարված են, վերանայում են ուսումնական խնդիրները՝ ստուգելու, թե արդյոք դրանք համահունչ են դասընթացին, և քննարկում են դրա ձևաչափը: Ակնկալվում է, որ խորհրդատուները, քննարկման հիման վրա, պետք է ներկայացնեն իրենց նյութերի վերջնական տարբերակը հանդիպումից մի քանի շաբաթ անց:

HELP-ի քարտուղարությանը վերջնական տարբերակը հանձնելուց հետո հնարավոր է, որ անհրաժեշտ լինի **լեզվական որակի ստուգում**՝ երաշխավորելու վերապատրաստման նյութերի բարձր որակը, հատկապես՝ տարբեր պետական լեզուներով թարգմանվելու առումով:

Դասընթացի մշակումը և աշխատանքային խմբի յուրաքանչյուր հանդիպման ընթացքում կամ դրանց միջև տեղի ունեցող գործողությունները կարելի է ներկայացնել հետևյալ ձևով՝

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....




### iii. Ուսումնական խնդիրների սահմանում

Ընդհանուր խնդիրների սահմանումը հնարավորություն է ընձեռում վերապատրաստման ծրագրի համար նաև ձևակերպել ուսման կոնկրետ խնդիրները (ՈւԽ-ներ): Իր հերթին դա թույլ կտա մշակել գնահատման և հետադարձ կապի ռազմավարությունը, որը համահունչ է դասընթացի ԸԽ-ին և կոնկրետ ՈւԽ-ներին (տե՛ս վերապատրաստման կարիքների գնահատման և ԸԽ-ի վերաբերյալ հատվածը վերևում), ինչպես նաև հնարավոր կդարձնի վեր հանել վերապատրաստման այն մեթոդները և ուսումնական միջոցառումները, որոնք առավել նպատակահարմար են՝ սովորողներին օգնելու հասնել նշված ԸԽ-ն և ՈւԽ-ները:

Կոնկրետ ՈւԽ-ներ սահմանելը և արձանագրելը հաջողված վերապատրաստման կարևոր նախադրյալ է: Կարճ ասած՝ ՈւԽ-ների սահմանումը վերապատրաստող դասընթացավարին թույլ կտա մշակել վերապատրաստման նախագծի տարբեր տարրերի

ինտեգրման ձև՝ կազմելու վերապատրաստման ամբողջական միջոցառում կամ դասընթաց, որը կնպաստի նպատակների և ՈւԽ-ների իրականացմանը:

Գոյություն ունեն մի շարք պատճառներ, թե ինչու է հստակ ՈւԽ-ների ձևակերպումը կարևոր պլանավորման փուլում:

- ՈւԽ-ները նկարագրում են, թե սովորողը ինչ պետք է կարողանա անել դասընթացի կամ ծրագրի ավարտին: ՈւԽ-ները հստակեցնում են թե՛ վերապատրաստողի, թե՛ սովորողի մտադրությունները: Յուրաքանչյուրը հասկանում է, թե ինչն է գտնվում դասընթացի կենտրոնում, ուստի հնարավոր է խուսափել հնարավոր թյուրըմբռնումներից:
- ՈւԽ-ների ձևակերպումն օգնում է երաշխավորել, որ վերապատրաստումը համապատասխանում է սովորողի կարիքներին և այն հնարավոր է ժամանակին իրականացնել: Առանց ՈւԽ-ների՝ վերապատրաստումը կարող է լինել պարզապես աննպատակ կամ չափազանց հավակնոտ:
- Քանի որ ՈւԽ-ները գնահատվելու են, վերապատրաստողը և սովորողը հնարավորություն ունեն գնահատելու, թե որքանով է հաջողվել վերապատրաստումը: Բացի այդ, սովորողները ձեռք են բերում «ես կարող եմ» մոտեցումը վերապատրաստման նկատմամբ, ինչն ամրապնդում է *իրավունակությունների վրա հիմնված* վերապատրաստման հասկացությունը կազմակերպության կամ պետական ծառայության շրջանակում:

ՈւԽ-ները կարող են բնորոշել սովորողների գիտելիքների և հմտությունների աճող խորությունը և հանձնառությունը գործնականում մարդու իրավունքների կիրառման նկատմամբ: Հնարավոր է տարանջատել ներածական վերապատրաստումը (օրինակ՝ քրեական դատավարության և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջներ) առավել խորացված վերապատրաստումից (օրինակ՝ իրավական ներկայացուցչի մատչելիություն և գրավի իրավունք): ՈւԽ-ները պետք է միշտ լինեն հասանելի, բայց և պահանջեն գիտելիքների և հմտությունների մակարդակի բարձրացում սովորողների իրազեկության մակարդակի և վերապատրաստման փորձառության աճին զուգահեռ:

ՈւԽ-ների սահմանումն օգնում է վերապատրաստողներին ընտրել վերապատրաստման մեթոդը:

Այս ամենը ենթադրում է հստակ լեզվի կիրառում: Հասկանալի ձևակերպումները հստակություն կապահովեն հետագա փուլերի ընթացքում: Այդուհանդերձ, սա այնքան էլ բարդ խնդիր չէ: Ահա երկու օգտակար խորհուրդ: Առաջին՝ ՈւԽ-ները պետք է լինեն SMART, և երկրորդ՝ դրանք պետք է գրվեն այնպիսի լեզվով, որը ենթադրում է չափելիություն:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Առաջին, ՈՒԽ-ներ գրելու համար պետք է օգտագործել *հստակ* լեզու: Այժմ համընդհանուր կարծիք է արտահայտվում (առնվազն անգլերեն լեզվով), որ ՈՒԽ-ները պետք է լինեն **SMART**, այսինքն՝

**Specific/կոնկրետ**՝ ցանկացած խնդիր պետք է ձևակերպվի որոշակի, հստակ և ոչ երկիմաստ: Այն պետք է ուղղված լինի որևէ կոնկրետ բանի, օրինակ՝ թեմայի հստակ ընկալմանը:

**Measurable/չափելի**՝ խնդիրը պետք է ներառի որոշակի ցուցումներ, թե ինչպես կարելի է չափել սովորողի առաջընթացը:

**Attainable/հասանելի**՝ խնդիրը պետք է իրագործելի լինի վերապատրաստվողների համար:

**Relevant/վերաբերելի**՝ խնդիրը պետք է վերաբերելի լինի տվյալ դասընթացի մասնակիցներին:

**Time-specific/կոնկրետ ժամկետով**՝ խնդիրը պետք է սահմանի այն ժամկետները, որոնց շրջանակում պետք է իրականացվի առաջադրանքը:

Երկրորդ, պետք է հնարավոր լինի չափել յուրաքանչյուր ՈՒԽ-ին հասնելու ընթացքում արձանագրված հաջողության մակարդակը: Սա շատ ավելի դյուրին է, քան թվում է:

ՈՒԽ-ներն արտահայտվում են ցողունի կառուցվածքի միջոցով (ինչը տալիս է ժամանակային սահմանափակում), որին հետևում է սահմանումը, որը սկսվում է **ակտիվ բայով** (ընդգծում է, թե ինչ պետք է կարողանան կատարել սովորողները) + **խնդիր** (ինչ պետք է սովորել) + **որակավորող արտահայտություն** (ապահովում է համատեքստը և ակնկալվող գիտելիքի/հմտության տիրապետելու աստիճանը): Օրինակ՝ (կապված բակալավրի մակարդակում *գիտելիք*ահեն ՈՒԽ-ների հետ, որոնք *չեն* ներառում մարդու իրավունքներ):

Փորձեք ՈՒԽ-ներում խուսափել այնպիսի բառերի օգտագործումից, ինչպիսիք են՝ *հասկանալ*, *գնահատել*, *ծանոթանալ* և *իմանալ*, քանի որ այս բայերը հստակ ցույց չեն տալիս, թե գնահատման ժամանակ սովորողն ընկալման կամ գիտելիքների ինչ մակարդակ պետք է դրսևորի:

Նաև կարևոր է գիտակցել, որ կարող են լինել խնդիրների արտահայտման շատ տարբեր եղանակներ: Սակայն բոլորի դեպքում օգտագործվում է պարզ բանաձև՝

**ակտիվ բայ** (ուրվագծում է, թե ինչ կկարողանան կատարել սովորողները) + **խնդիր** (ինչ պետք է սովորել) + **որակավորող արտահայտություն**:

Ինչ է պետք հաշվի առնել ՈՒԽ-ներ սահմանելիս:

Ինչ գիտելիքներ, հմտություններ և մոտեցումներ ունեն ձեր մասնակիցները դասընթացին ներգրավվելու պահին:

Ինչ գիտելիքներ, հմտություններ, մոտեցումներ և արժեքներ նրանք պետք է զարգացնեն:

Ինչ է անհրաժեշտ սովորողներին՝ ցույց տալու, որ իրենք հասել են ՈՒԽ-ների կատարմանը:

ՈՒԽ-ներում միևնույն ակտիվ բայը կարելի է օգտագործել մեկից ավելի անգամ, եթե այն արտահայտում է, թե սովորողները ինչի պետք է կարողանան հասնել:

Նպատակները և ՈՒԽ-ները կիրառվելու են թե՛ դասընթացավարների, թե՛ սովորողների կողմից, և պետք է օգնեն երաշխավորել դասընթացների կամ ծրագրերի նպատակների և ուսումնական խնդիրների վերաբերյալ հստակություն:

Փորձեք սահմանափակել ձեր ՈՒԽ-ները՝ մեկօրյա սեմինարի համար 2-3 ՈՒԽ-ներն ավելի քան բավարար են:

Օրինակ՝ որոշ բայեր կլինեն ավելի խրթին, քան մյուսները: «Վերաձևակերպելը» ենթադրում է փոքր-ինչ ավելին, քան հիշելը և կրկնելը, մինչդեռ «բացատրելը» մտավոր աշխատանքի և հասկացման ավելի մեծ տարր է պահանջում:

Դիտարկենք մի շարք օրինակներ: Դրանք օգնում են բացատրել ՈւԽ-ներ սահմանելու հիմունքները: ՈւԽ-ների մեծ մասը նաև ենթադրում է գիտելիքների (և հմտությունների) առկա մակարդակ, որը պետք է կազմի հետագա ուսումնառության հիմքը: Որոշ ՈւԽ-ներ ավելի դժվար առաջադրանքներ են ենթադրում սովորողների համար («ներկայացնել կայուն փաստարկներ գրավոր և բանավոր»), քան մյուսները, որոնք կարող են ավելի լայն, քան՝ խոր գիտելիքներ ենթադրել («տալ օրգանիզմի բոլոր հիմնական համակարգերի ֆունկցիոնալ բացատրությունը»):

## ՕՐԻՆԱԿՆԵՐ

Այս գլխի ավարտին դուք կհասկանաք՝

- ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո պաշտպանության, 1951թ. Կոնվենցիայի և ԵՄ իրավունքի ներքո միջազգային պաշտպանության միջև կապը և տարբերությունը:
- Հանգամանքները, որոնց դեպքում ապաստան փնտրողները պաշտպանության իրավունք ունեն ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո:
- Վարչական և դատական մարմինների պարտավորությունը՝ երաշխավորելու ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի ներքո բերված բողոքների հանգամանալից և խիստ քննությունը:

Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան դրսևորել իրենց գիտելիքները հետևյալի շուրջ՝

- Ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի հասկացությունները, դրանց միջև տարբերությունը և կապը, ինչպես նաև դրանց պատմական համատեքստը:
- Ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի ազդեցությունը:
- Ատելության հիմքով կատարվող հանցագործություններին և ատելություն սերմանող խոսքին արձագանքները:

Այս դասընթացի ավարտին սովորողները կկարողանան՝

- Կիրառել ընդունելիության սկզբունքները ներպետական գործով:
- Կիրառել դրանք պատշաճ՝ ՄԻԵԴ հաջողությամբ հայցադիմում ներկայացնելու համար:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Ինչ վերաբերում է մեկօրյա տևողությամբ վերապատրաստման սեմինարին/հեռաուսուցման մոդուլին, որով առաջին անգամ է թեմա ներկայացվում «սովորողներին», ՈւԽ-ները, ամենայն հավանականությամբ, կգրվեն այլ ոճով (բայց հաշվի առեք 4-րդ ՈւԽ-ն, որը ենթադրում է նոր տեղեկություններ մշակել՝ իրավիճակային խնդրի մեջ դրա կիրառման միջոցով):

---

Այս սեմինարի/մոդուլի ավարտին դուք կկարողանաք՝

- Բացատրել կյանքի պաշտպանության և խոշտանգումների կանխարգելման պարտավորության հիմքերը և շրջանակը:
- Ուրվագծել 2-րդ և 3-րդ հոդվածների «ընթացակարգային ասպեկտի» բովանդակությունը:
- Բացահայտել քրեական արդարադատության մարմինների (դատարաններ, դատախազներ, ոստիկանություն և դատաբժշկական անձնակազմի ներկայացուցիչներ) թերություններն իրավիճակային խնդրի լուծման ընթացքում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավագիտության հիման վրա:

---

Գիտելիքի և հասկացման բարդության մակարդակների տարբերակման գաղափարը կարելի է ներկայացնել Բլումի կարգաբանության միջոցով:

Նկատի՛ ունեցեք, որ ավելի «բարձր» մակարդակում ՈւԽ-ների իրականացումը կախված է «ավելի ցածր» մակարդակում խնդիրների նախապես իրականացումից: Այսպիսով, գիտելիքի առումով ՈւԽ-ների տարբերակման հստակ բուրգն ակնհայտ է՝




(Bloom et al, 1956)

Կարելի է մշակել «ավելի ցածր» (կամ ավելի պարզ) և «ավելի բարձր» (կամ ավելի բարդ) ՈւԽ-ները տարանջատող «ակտիվ բայերի» աղյուսակ: Ուստի գիտելիքի ձեռքբերման առումով հետևյալ աղյուսակն օգտակար է՝

| ԳԻՏԵԼԻՔ | ՀԱՍԿԱՑՈՒՄ | ԿԻՐԱՌՈՒՄ | ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | ՀԱՄԱԴՐՈՒՄ | ԳՆԱՀԱՏՈՒՄ |
|---|---|---|---|---|---|
| սահմանել<br>կրկնել<br>արձանագրել<br>թվարկել<br>մտաբերել<br>անվանել<br>կապակցել<br>ընդգծել | թարգմանել<br>ձևակերպել<br>քննարկել<br>նկարագրել<br>ճանաչել<br>բացատրել<br>արտահայտել<br>բացահայտել<br>տեղակայել<br>հաղորդել<br>ուսումնասիրել<br>պատմել | մեկնաբանել<br>կիրառել<br>գործածել<br>օգտագործել<br>ցուցադրել<br>չափազանցնել<br>գործադրել<br>պարզաբանել<br>գործարկել<br>հերթադրել<br>ուրվագծել | տարանջատել<br>վերլուծել<br>տարբերակել<br>որակել<br>հաշվարկել<br>փորձարկել<br>ստուգել<br>համեմատել<br>հակադրել<br>քննադատել<br>գծապատկերել<br>հետազոտել<br>բանավիճել<br>հարցադրել<br>կապակցել<br>լուծել<br>քննել<br>դասակարգել | կազմել<br>պլանավորել<br>առաջարկել<br>նախագծել<br>ձևակերպել<br>դասավորել<br>հավաքել<br>հավաքագրել<br>կառուցել<br>ստեղծել<br>հիմնել<br>կազմակերպել<br>կառավարել<br>նախապատրաս-տել | որակել<br>եզրահանգել<br>գնահատել<br>վարկանշել<br>համեմատել<br>վերանայել<br>արժեքնշել<br>արժորոշել |

Բլումի կարգաբանությունն այժմ լայնորեն կիրառվում է[15]: Մեկ այլ մեկնաբանություն ներկայացված է ստորև՝

## Բլումի կարգաբանություն




15 Բլումի կարգաբանություն, Փըթրիշա Արմսթրոնգ, Ուսուցման կենտրոնի փոխտնօրեն https://cft.vanderbilt.edu/guides-sub-pages/blooms-taxonomy/:

ՆՇՈՒՄՆԵՐ

### Ինչ պետք է ներառեն ՈՒԽ-ները

Մարդու իրավունքների վերապատրաստման ոլորտում ՈՒԽ-ներն անխուսափելիորեն ուղղված են լինելու գիտելիքին և հասկացմանը: Սակայն ներկայացվող մասնագիտական կարողությունները (մասնավորապես՝ կապված դատավորների հետ) այժմ ավելի շատ են արտացոլում հմտությունների կարևորությունը (օրինակ՝ իրավական հետազոտություններ, խնդիրների լուծում և վճիռների ձևակերպում, որոնք արտացոլում են ՄԻԵԿ-ի ակնկալիքները):

Կարճ ասած՝ վերապատրաստման դասընթացը սովորողներին տրամադրում է գիտելիքներ և հմտություններ: Այսինքն՝ վերապատրաստողները փորձում են տրամադրել գիտելիքների մի ամբողջություն և այդ գիտելիքների օգտագործման կոնկրետ քայլեր: Օրինակ, մինչ ՄԻԵԿ-ի վերաբերյալ ակադեմիական դասընթացն ուսանողներին ներկայացնում է ՄԻԵԿ-ի մասին նյութը, ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստումը ներառում է ինչպես բուն նյութը, ԱՅՆՊԵՍԵՎ ռազմավարական դատավարության հմտությունները (կամ ինչպես խորհրդատվություն տրամադրել անհատներին ՄԻԵԿ-ով նախատեսված իրենց իրավունքների վերաբերյալ և ինչպես վերապատրաստել ու ղեկավարել իրավաբան ուսանողներին, որոնք առնչվում են ՄԻԵԿ-ի գործերի հետ):

> Այս մոտեցման հիմքում ամերիկացի Բենջամին Բլումի աշխատանքն է (1956թ.): Վերապատրաստողներին և դասախոսներին պլանավորման և դասավանդման հարցում օգնելու նպատակով նա բաժանել է կրթական և վերապատրաստման խնդիրները երեք հատուկ ոլորտների՝ ճանաչողական, աֆեկտիվ և հոգեշարժական (այսինքն՝ իմանալ, զգալ, կատարել):

Սա կարող է ակնհայտ լինել մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գործընթացում: Դատավորներին կարող է անհրաժեշտ լինել ծանոթանալ առցանց տվյալների բազաներին (իսկ մարդու իրավունքների հարթությանն առնչվող գործերի հետ կապված՝ HUDOC-ին): Նրանք պետք է կարողանան կիրառել եվրոպական չափորոշիչները ներպետական գործերում: Նրանք նաև պետք է կարողանան գրել այնպիսի վճիռ, որը ցույց կտա, որ Կոնվենցիայով վկայակոչված իրավական պրակտիկաները կիրառվել են տվյալ դեպքում:

Սակայն գոյություն ունի մեկ այլ գործոն, որն արժե ներառել ՈՒԽ-ներում: Մարդու իրավունքների առկա չափորոշիչների վերաբերյալ գիտելիքների ձևավորման համար պահանջվում է մարդու իրավունքների տվյալ չափորոշիչի հիմքում ընկած տրամաբանության բացատրություն: Հմտություններ ձևավորելու համար անհրաժեշտ է գիտելիքների բազային մակարդակ: Իսկ մարդու իրավունքների չափորոշիչներն ամենօրյա իրավիճակներում գործնականում կիրառելու համար պահանջվում են որոշակի հմտություններ: Եթե այս երեք գործոններից որևէ մեկը բացակայում է, ապա, ամենայն հավանականությամբ, վերապատրաստումը կլինի պակաս արդյունավետ:

Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը մեծամասամբ փորձում է ոչ միայն գիտելիքներ և հմտություններ տրամադրել, այլև ի հայտ բերել *արժեքային* փոփոխություն: Օրինակ՝ դատավորները ոչ միայն պետք է իմանան, թե որ սկզբունքներն են որոշիչ կասկածյալին գրավի դիմաց ազատ արձակելու համար, այլև պետք է կարողանան տալ ճիշտ հարցեր՝ պատշաճ եզրակացության հանգելու համար: Սակայն այս ամենից

բացի, նրանք պետք է *ցանկություն ունենան* իրենց աշխատանքում մարդու իրավունքներին ուղղված մոտեցում որդեգրելու: Վերապատրաստման «ներպետական համապատասխանեցումը» ներառում է արժեքային փոփոխություն:

Այս ամենը ենթադրում է, որ հաջողության հասնելու համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը պետք է ներառի ավելին, քան «զուտ» գիտելիքները կամ նույնիսկ հմտությունները: Մարդու իրավունքների չափորոշիչների կիրառումը ենթադրում է հավատ մարդու իրավունքների նորմատիվ արժեքի նկատմամբ: Գուցե սա փոքր-ինչ բարդ է, սակայն «կրթողները» (այս համատեքստում վերապատրաստողները, որոնք աշխատում են իրավական ոլորտի մասնագետների հետ) վաղուց արդեն ընդունել են, որ վերապատրաստումը պետք է նաև ներառի փոխակերպող տարր:

**«Արժեքային փոփոխություն» ներառող ՈՒԽ-ների ապահովման պահանջները ներկայացված են հաջորդ գլուխներում:**

Այսպիսով, բացի գիտելիքներ և հմտություններ տրամադրելուց, մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումն ունի այլ հարթություն: Այսինքն՝ գիտելիքների ամբողջություն և կիրառական հմտություններ տրամադրելով՝ մենք խթանում ենք նաև այդ գիտելիքների *որոշակի կիրառումը* կամ այդ հմտության կիրառումը *որոշակի ձևով*: Օրինակ՝ ՄԻԵԿ-ի վերապատրաստման ժամանակ փորձում ենք վերապատրաստել փաստաբանների, որոնք կնպաստեն մարդու իրավունքների կիրառմանը՝ ի տարբերություն մարդու իրավունքները ոտնահարողներին պաշտպանողների: Կամ իրավական հզորացման համատեքստում փորձում ենք վերապատրաստել փաստաբանների օգնականներին՝ կրթելու հանրությանը նրանց իրավունքների վերաբերյալ այնպես, որպեսզի նրանք կարողանան օգտվել այդ իրավունքներից, այլ ոչ թե պարզապես նրանց տեղեկացնելու իրավական խնդրի մասին և ուղղորդելու այդ խնդրի լուծման նպատակով փաստաբան վարձել: Այս լույսի ներքո կարելի է ասել, որ իրավական ոլորտի մասնագետների համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումն ունի երեք բաղադրիչ՝ գիտելիքներ, հմտություններ և մարդու իրավունքների կիրառման հանձնառություն՝ մարդու իրավունքների «աֆեկտիվ» մասը:

Մարդու իրավունքների կրթության ոլորտում «աֆեկտիվը» (կամ զգացմունքայինը) բերում է արժեքային փոփոխության՝ անձնական համոզմունքների կամ արժեքների փոփոխության: (Ըստ Բլումի[16], նշված վերևում, «արժեքներին» անձնական նվիրումը ձևավորվում է վերաբերմունքի փոփոխությունից: Մարդու իրավունքների համատեքստում նպատակահարմար է վերաբերմունքի և արժեքների միջև տարբերակում կատարել, այնքանով, որքանով դա վերապատրաստողների ուշադրությունն ուղղում է սովորողի անձնական համոզմունքների փոփոխությունների վրա ջանք թափելու կարևորությանը, ինչին գուցե անդրադառնալու հարկ լինի՝ հանրային կազմակերպության դավանած արժեքներին համապատասխանություն ապահովելու նպատակով): Սա նաև պատճառներից մեկն է, թե ինչու են HELP-ի դասընթացներում ներառված իրավախախտումների զոհերի վկայությունները, օրինակ՝ տեսահարցազրույցների միջոցով (տես ՄԻԵԿ-ի և ապաստանի վերաբերյալ դասընթացում պարոն Գեբրեմեդինի (Gebremedhin) պատմությունը):

Այժմ կարող ենք բացահայտել մի շարք հարցեր, որոնք պետք է ներառվեն պատշաճ կերպով ձևակերպված ՈՒԽ-ներում՝

16 http://teaching.uncc.edu/sites/teaching.uncc.edu/files/media/files/file/GoalsAndObjectives/Bloom.pdf:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

| ԳԻՏԵԼԻՔՆԵՐ | ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐ |
|---|---|---|
| Մարդու իրավունքների գործիքակազմի վերաբերյալ / Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ներպետական դատարանների համապատասխան նախադեպային իրավունք: | Մարդու իրավունքներին առնչվող խնդրի հայտնաբերում և համապատասխան իրավական կանոնների հետազոտում՝ տվյալ իրավիճակում իրավունքի կիրառման նպատակով: | Ամրապնդել պատշաճ վերաբերմունք, որը կարևորում է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և դրանց բարձրաձայնման մասնագիտական պարտականությունը:<br>Նվիրվել այնպիսի արժեքներին, ինչպիսիք են՝ հավասարությունը, հարգանքն արժանապատվության նկատմամբ, բազմակարծությունը, հանդուրժողականությունը և այլն: |

ԸԽ-ի և ՈՒԽ-ների միջև կապը

ՈՒԽ-ների ձևակերպումը բնականոն կերպով բխում է վերապատրաստման ԸԽ-ից: ԸԽ-ն ձևավորվում է ինստիտուցիոնալ և անհատական կարիքների գնահատման արդյունքում:

Այժմ քննարկե՛ք իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման ՈՒԽ-ների օրինակներ: Այս օրինակներն ՈՒԽ-ների ձևակերպման կատարյալ օրինակներ չեն, սակայն օգնում են բացատրել՝ ա) ինչին է սևեռվելու վերապատրաստումը՝ գիտելիքներ, հմտություններ, վերաբերմունք կամ արժեքներ, բ) որը պետք է լինի փորձառության անհրաժեշտ մակարդակը նախքան վերապատրաստումը, գ) որքան «ավելի բարձր» մարտահրավերներ են նախատեսված [առանձնահատուկ խնդիրներն ավելացվել են փակագծերում և ընդգծվել թավատառ]:

Վերապատրաստողը նաև պետք է գնահատի, թե արդյոք այս ՈՒԽ-ները սահմանվել են որևէ կազմակերպության կամ դրա անդամների վերապատրաստման բացահայտված կարիքների բավարարմանն օժանդակելու նպատակով:

---

## ՕՐԻՆԱԿ 1

### «ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԴԱՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ (2 ՕՐ) ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս սեսիայի *ԸԽ-ներն* են՝ ուսումնասիրել դատավորների համար մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման մեթոդները և սովորողներին ներկայացնել մի շարք հարցեր ՄԻԵԿ-ում՝ արդար դատաքննության երաշխիքների հետ կապված (վկայակոչելով

6-րդ հոդվածը):

Այսպիսով, *ՈՒԽ-ները* կարելի է սահմանել.

Սեսիայի ավարտին սովորողները կկարողանան՝

- Ձևակերպել ուսումնական համապատասխան խնդիրները **[գիտելիք],**
- Բացահայտել սովորողների կարիքները՝ գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների առումով **[կարիքների վերլուծություն],**
- Ուրվագծել ա) դասախոսության ձևով ներկայացումների և բ) փոքր խմբերով աշխատանքի առավելությունները և թերությունները **[հասկացում],**
- Մշակել լավ գործելակերպի ուղենիշեր՝ հարմար կրթական միջավայր ստեղծելու նպատակով **[կիրառություն],**
- Մշակել «դասապլանի» ամփոփ նկարագիր՝ ՄԻԵԿ-ի՝ արդար դատաքննության պահանջների հիման վրա **[կիրառություն]:**

---

## ՕՐԻՆԱԿ 2

### ՍԵՄԻՆԱՐ (2 ԺԱՄ) ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱԶԱՏ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Այս սեսիայի *ԸԽ*-ն լրագրողներին և գործող փաստաբաններին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 10-րդ հոդվածին առնչվող նախադեպային իրավունքի ներկայացումն է:

Այսպիսով, *ուսումնական խնդիրները* կարելի է սահմանել՝

Սեսիայի ավարտին սովորողները կկարողանան՝

- Ինքնուրույն ձևակերպել ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի մեկնաբանության հիմնական սկզբունքները լրատվամիջոցների ազատության առնչությամբ **[գիտելիք],**
- Քննադատորեն գնահատել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որդեգրած մոտեցումն այն գործերի հետ կապված, որոնք ներառում են լրատվամիջոցների պարտականությունները ժողովրդավարությունում **[վերլուծություն, համադրում],**
- Գնահատել, թե ինչ չափով է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ապահովում տեղեկատվություն ստանալու իրավունքը **[գնահատում]:**

---

### ԸԽ-ների և ՈՒԽ-ների հաղորդակցումը

Վերապատրաստման նախագծի և նախապատրաստման այս ասպեկտը, թերևս, ամենահստակն է:

Արդեն նշվել է, որ նրանք, ովքեր պատասխանատու են վերապատրաստման դասընթացի մշակման և մատուցման համար, պետք է երաշխավորեն, որ կազմակերպության և նախատեսված թիրախային լսարանի կարիքները հատուկ քննարկման են արժանացել: Այդ քննարկումը կարող է նաև ներառել խորհրդակցություններ վերապատրաստման թիրախային լսարանի հետ:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Ուստի ԸԽ-ների և ՈՒԽ-ների սահմանումը կարող է նաև նախնական շփում ներառել «սովորողների» հետ: Քանի որ վերապատրաստումը նախատեսված է տարբեր մակարդակի գիտելիքների, հմտությունների և փորձի տեր մարդկանց համար, կարևոր է վերապատրաստման ծրագրի մշակման ժամանակ հաշվի առնել նրանց կրթությունը և հետաքրքրությունները: Դրանք բացահայտելու ուղիներից մեկը նախքան վերապատրաստումը հարցաթերթիկների կամ հարցազրույցի կիրառումն է, որոնցում նշված են վերապատրաստման դասընթացի համար առաջարկվող ԸԽ-ները և ՈՒԽ-ները, բայց որոնք նաև փորձում են գնահատել, թե արդյոք դրանք համապատասխան կլինեն սովորողների կարիքներին և հետաքրքրություններին:

ՈՒԽ-ների ընտրությունը և ամրագրումը պլանավորման նախնական փուլի ամենակարևոր ասպեկտներն են: ԸԽ-ները նպատակի ընդհանրացված ձևակերպումներն են, իսկ ՈՒԽ-ները որոշակի են և չափելի:

## ԸԽ-ների և ՈՒԽ-ների տարբերությունը

Վերապատրաստման մեջ որպես դասընթացավարներ ներգրավված անձանց, ինչպես նաև նախատեսված լսարանին ԸԽ-ի և ՈՒԽ-ների վերջնական տարբերակների ներկայացումն ունի որոշակի առավելություններ՝

- Երկու կողմերն էլ հստակ հասկանում են ակնկալիքները՝ վերապատրաստողները և սովորողները հասկանում են, թե որն է մշակված վերապատրաստման նպատակը (ուստի և այն, թե ինչ չի ներառում վերապատրաստումը):
- Հստակ ձևակերպված ՈՒԽ-ներն օգնում են պարզաբանել, թե ինչ բնույթի է նախատեսված վերապատրաստումը՝ բազայի՞ն, թե՞ խորացված:
- Եթե թիրախային լսարանը մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություն ունի, «սովորողները» կարող են չմասնակցել առաջարկվող վերապատրաստմանը, որը կարող է անհամապատասխան, չափազանց խորացված կամ չափազանց բազային լինել:
- Ամենակարևորն այն է, որ վերապատրաստման ավարտին «սովորողները» կարող են իրենք հասկանալ, թե արդյոք իրենք իրագործել են դասընթացի ՈՒԽ-ները: Եթե ոչ, ապա կարող են սահմանել, թե ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել (օրինակ՝ ներկայացված նյութի հետագա անհատական ուսումնասիրություն, դասընթացի գնահատման թերթիկի միջոցով շարունակական վերապատրաստման կարիքների բացահայտում և այլն):

Ընդհանուր և ուսումնական խնդիրների որոշումը, ձևակերպումը և ներկայացումը կարևոր առաջին քայլն է վերապատրաստման նախագծման փուլում: Հստակ պատկերացում ունենալը բավարար չէ: Վերապատրաստողներին և սովորողներին անհրաժեշտ է հստակ և միանշանակ ձևակերպում, թե որն է վերապատրաստման դասընթացի նպատակը:

### ԸԽ-ների և ՈՒԽ-ների սահմանումը

Առկա և ակնկալվող վարքագծի դիտարկումը կարևոր է ուսումնական խնդիրների մշակման համար: Լսարանի վարքագծի և դրա փոփոխության կարիք ունեցող կողմերի իմացությունը կբերի այն հարցադրումների վերհանմանը, որոնք անհրաժեշտ են այդ վարքագծի համապատասխան կողմերը փոխելու համար:

## iv. Էլեկտրոնային ուսուցման համար վերապատրաստման նյութերի և գործնական վարժությունների մշակում

### Մոդուլի տևողությունը

Մեկ ընդհանուր հարց վերաբերում է վերապատրաստման տևողությանը: HELP-ը համարում է, որ սովորողները միջինը **յուրաքանչյուր մոդուլին կտրամադրեն երեքական ժամ**, և երկու շաբաթ ժամանակահատված է տրամադրվում մեկ մոդուլ անցնելու համար: Սա չի ներառում լրացուցիչ գրականությունը, սակայն ներառում է բոլոր պարտադիր նյութերը և հանձնարարությունները:

HELP-ի դասընթացի ընդհանուր միջին տևողությունը կախված է դասընթացում ներառված մոդուլների քանակից, բայց, ընդհանուր առմամբ, խորհուրդ է տրվում դասընթացի առավելագույն տևողությունը սահմանել **երեք ամիս**՝ նկատի առնելով իրավական ոլորտի մասնագետների ժամանակի սղությունը, ինչպես նաև այն փաստը, որ սովորողները հաճախ կորցնում են սովորելու մոտիվացիան ավելի երկար տևողությամբ դասընթացի պարագայում:

Ինչ վերաբերում է էլեկտրոնային ուսուցմանը, ապա հարց է ծագում՝ էլեկտրոնային ուսուցման մեկ ժամը դասընթացի նյութի քանի էջ է ներառում: Երբ ուսուցումն «արտադրվում է» ընկերության կողմից, ապա բովանդակության համար, սովորաբար, վճարումն իրականացվում է ուսուցման մեկ ժամին կամ մեկ էջին համապատասխան, ուստի այս հարցն արժանի է ուշադրության: Սակայն ակադեմիական լեզվով խոսելիս այս խնդրին լուծում տալը բարդ կլինի:

Ամենապարզ պատասխանը կլինի այն, որ չկա էջի իրական ծավալի հաշվարկման սահմանված չափ և երբևէ չի կարող լինել: Գոյություն ունեն դրա մի շարք պատճառներ՝

- Տարբեր անհատների համար մեկ էջ կարդալու համար անհրաժեշտ ժամանակը տարբեր է,
- Որոշ էջեր ներառում են ավելի շատ տեղեկություններ կամ գործողություններ, քան մյուսները,
- Որոշ էջեր ներառում են տեսանյութեր կամ ներկայացումներ, որոնք ավելի երկար տևողություն ունեն,
- Որոշ մարդիկ գուցե էջը վերընթերցելու կարիք ունենան:

Սակայն կարևոր է ի վիճակի լինել սովորողին դասընթացը սկսելուց առաջ պատկերացում տալ, թե որքան է տևելու իր ուսումը: Այս դեպքում կա ոչ պաշտոնական չափանիշ՝ էլեկտրոնային ուսուցման մեկ ժամում 50 սլայդ: Այս չափանիշի կիրառումը ձեր դասընթացների համար լավագույն ցուցումը կլինի:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

## Տեղեկատվության խտացում

SCORM[17] էլեկտրոնային ուսուցման դասընթացը հակիրճ է և պետք է ներառի միայն այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է դասընթացին մուտք ունենալու համար: Դա մի շարք դժվարություններ է ստեղծում ինստրուկցիոն դիզայների (դասընթացի էլեկտրոնային տարբերակի մշակող) համար: Այս դժվարություններից որոշներին և տեղեկատվության վերաբերյալ հարցերին անդրադարձ է կատարվում պատմատախտակի քննարկման ընթացքում, սակայն ինստրուկցիոն դիզայների համար կարևոր է մտապահել հետևյալը՝

Պետք է ունենա՝ մոդուլը ՊԵՏՔ Է պարունակի այս տեղեկատվությունը: Այն ՈՒԽ-ի կամ դասընթացի առանցքային տարր է: Տեղեկատվությունը պետք է բառացի ներկայացված լինի կամ վերաշարադրվի այնպես, որպեսզի չտուժի դրա իմաստը և որակը: Սա ԿԵՆՍԱԿԱՆ նշանակություն ունեցող տեղեկատվություն է:

Հաճելի է իմանալ՝ այս տեղեկատվությունը հաճելի է իմանալ: Այն էական չէ ՈՒԽ-ին հասնելու տեսանկյունից, սակայն կարող է հետագա տեղեկություններ կամ համատեքստ տրամադրել օգտատիրոջ ցանկությամբ: Եթե չեք կարող այդ տեղեկատվությունը ներառել մոդուլի հիմնական մասում, գուցե օգտակար կլինի հղում տրամադրել դրան կամ այդ տեղեկատվությունը ներկայացնել որպես տպագիր ռեսուրս դասընթացի շրջանակում, որպեսզի սովորողը ցանկության դեպքում կարողանա դրանից օգտվել:

Ոչ լիովին համապատասխան՝ թեմայի բովանդակության մշակողի համար դժվար է որևէ տեղեկատվություն դուրս թողնել դասընթացից, սակայն ինստրուկցիոն դիզայները պետք է ուշադրություն դարձնի և համոզվի, որ ներկայացվող ամբողջ տեղեկատվությունը նպաստում է ՈՒԽ-ի իրագործմանը: Եթե ներկայացվող տեղեկատվության ինչ-որ մի մաս չի նպաստում ՈՒԽ-ին, ապա այն պետք է չներառել դասընթացում:

## Հարցերի կիրառումն ինտերակտիվ ուսուցման ընթացքում

Տեղեկատվության սահմանումը կարևոր հմտություն է, և օգտակար, արդյունավետ ու կիրառական դասընթացի մշակումը նախևառաջ ժամանակ ու աշխատանք է պահանջում: SCORM ստանդարտով ձեր առաջին դասընթացները մշակելիս գուցե օգտակար կլինի նախևառաջ ապավինել ինստրուկցիոն դիզայներին:

Այդ իսկ պատճառով նաև խորհուրդ է տրվում, որ տվյալ թեմայի բովանդակության մշակողը չլինի դասընթացի հեղինակը: Տեղեկատվությունն օբյեկտիվորեն տեսնելու կարողությունն առանցքային է: Երբ գիտելիքների ստացման համար ժամանակ և ջանքեր են ծախսվում, գուցե օբյեկտիվ լինելն այդքան էլ դյուրին չէ: Այս դեպքում թեմայի փորձագետը պետք է ուղղորդի դասընթացի հեղինակին, այլ ոչ թե ինքնուրույն գրի նյութը:

HELP ծրագիրը պարունակում է Ինստրուկցիոն դիզայնի ռեսուրսներ և ունի Դասընթացի մշակողներ (ինստրուկցիոն դիզայներներ), որոնք կարող են օգնել սկզբնական աշխատանքներում:

Կրթական միջավայրում հարցերը, սովորաբար, օգտագործվում են գիտելիքների ստուգման նպատակով: Սակայն դրա հետ մեկտեղ կան հարցերի օգտագործման մի շարք ձևեր, որոնք Դուք կարող եք համապատասխանեցնել ձեր ուսուցմանը՝

17 SCORM-ն էլեկտրոնային ուսուցման միջազգայնորեն ճանաչված ստանդարտ է, որն ապահովում է կրթության կառավարման բոլոր համակարգերի հետ համատեղելիություն:

1. Գիտելիքների ստուգում՝ ուսուցման այս ձևը կարելի է օգտագործել մոդուլի սկզբում՝ որոշելու այն մակարդակը, որն ունի օգտատերը դասընթացին ներգրավվելու պահին: Ուսուցման նույն ձևը կարելի է կիրառել դասընթացի ավարտին՝ երաշխավորելու, որ օգտատերերը հասել են պահանջվող չափանիշին:
2. Գիտելիքները կարող են նաև ստուգվել դասընթացի ընթացքում՝ վերջինիս հիմնական դրույթներն ամրապնդելու և դրանց հասկացումը երաշխավորելու նպատակով:
3. Հարցերը կարող են օգտագործվել իրական իրավիճակների մոդելավորման նպատակով: Օրինակ՝ որևէ սցենարում կամ իրավիճակային խնդրում հարցը կարող է կիրառվել՝ խթանելու որևէ որոշում, որը, գուցե, անհրաժեշտ լինի կայացնել իրական կյանքում: SCORM ստանդարտով ուսուցման դեպքում այդ որոշման հետևանքները նույնպես հնարավոր է ցույց տալ: Հիշեք՝ դասընթացն ապահով միջավայր է, որտեղ կարելի է սխալվել:
4. Ստեղծեք ենթադրյալ իրավիճակ՝ օգտատիրոջն իր հարմարավետության գոտուց դուրս բերելու համար: Խնդրեք օգտատիրոջը մտածել որևէ հարցի շուրջ հակառակ տեսանկյունից: Խնդրեք նրան իրեն պատկերացնել որևէ մեկի փոխարեն, որը դժվար կացության մեջ է:
5. Հարցերը կարող են օգտագործվել տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Հարցը սխալ հասկանալը կարող է ուսուցման գործիք լինել: Հարցերը միտումնավոր կերպով ոչ միանշանակ ձևակերպելը, որպեսզի օգտվողը դրանց սխալ պատասխանի, կարող է իմաստալից լինի ուսուցման տեսանկյունից:

### v. Ավարտական առաջադրանքի մշակում ուսումնական խնդիրների գնահատման համար

Գիտելիքների ձեռքբերման ստուգման եղանակներից մեկը գնահատումն է: Գիտելիքները կարող են գնահատվել նախքան դասընթացի մեկնարկը և դասընթացի ավարտին՝ արդյունքները համեմատելու և գնահատելու, թե սովորողները որքան գիտելիք են ձեռք բերել դասընթացի արդյունքում:

Գնահատումը սովորողների համար ունի երկու գործառույթ՝ աջակցում է ուսմանը, ինչպես նաև հավատարմագրում է այդ ուսումը: Այն ունի նաև երրորդ գործառույթ վերապատրաստողների համար՝ օգնելու նրանց գնահատել վերապատրաստման հաջողվածությունը:

Այս նպատակով գնահատվող առաջադրանքների պլանավորումը վերապատրաստման նախագծման կենսական տարր է: Այն պետք է տեղի ունենա վերապատրաստման ծրագրի նախագծման վաղ փուլում: ՈւԽ-ները սահմանելուց հետո մտածեք, թե ինչպես կարելի է դրանք չափել ըստ արդյունքների: Դա նաև վերապատրաստողներին հնարավորություն կտա հասկանալ, թե ինչպես կարելի է ՈւԽ-ների ապահովումը գնահատող մեթոդները ներառել վերապատրաստման ծրագրի նախագծում:

Միմիայն սրանից հետո կարելի է ուշադրությունը սևեռել վերապատրաստման մեթոդների ընտրությանը:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Վերապատրաստողները պետք է վերապատրաստման նախագիծը կառուցեն այնպես, որ այն իրենց հետադարձ կապ ապահովի կատարողականի վերաբերյալ, ինչպես նաև օգնի սովորողներին հասկանալ, թե արդյոք իրենք հասել են իրենց ՈՒԽ-ներին:

## Գնահատման համակարգի մշակումը՝ որպես վերապատրաստման մաս

Սա հասկանալի է դառնում հետևյալ օրինակի միջոցով:

Դիցուք, ՈՒԽ-ն ենթադրում է թեստերի կիրառություն, որը դատավորները պետք է հաշվի առնեն այն գործերում, երբ կասկածյալը ձգտում է ազատ արձակվել գրավի դիմաց դատական քննության ընթացքում: (ՈՒԽ-ն ինքնին կարող է ձևակերպվել այսպես՝ «Դասընթացի ավարտին դատավորը կկարողանա մշակել հակիրճ գրավոր վճիռ՝ բացատրելու դատական քննության ընթացքում կասկածյալի՝ կալանքից ազատման մերժումը՝ հաշվի առնելով ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի պահանջները»):

Այս ՈՒԽ-ն ենթադրում է որոշակի «ավելի բարդ» (այսինքն՝ ավելին, քան փաստացի իրավիճակի մտաբերումը) առաջադրանք, որը կապված է Ստրասբուրգի իրավագիտության հասկացման հետ: Այդպիսի հասկացումը հիմնված կլինի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված՝ գրավի դիմաց ազատ արձակման մասին հիմնական գործերի վերաբերյալ գիտելիքներին:

Այստեղ գնահատման համակարգի մշակումը, կարծես, համեմատաբար հստակ է: Այն պետք է ներառի խնդրի լուծում՝ հիմնված մտացածին իրավիճակի համար հիմնական թեստերի կիրառման վրա: Իր հերթին, դա ենթադրում է վերապատրաստման մատուցման մի շարք հնարավոր եղանակներ *այն մեթոդի ընտրությամբ, որն այս ՈՒԽ-ի կատարման առավել մեծ հավանականություն կապահովի* (օրինակ՝ 15-րոպեանոց կարճ ելույթ, որին կհաջորդի գործի անհատական նախապատրաստումը, այնուհետ՝ խմբային քննարկում, որին կհաջորդի լիակազմ զեկույց՝ անդրադառնալու խմբային քննարկման ընթացքում ի հայտ եկած անհասկանալի հարցերին):

Այս մոտեցման համաձայն՝ գնահատումն ուսումնական գործընթացի բաղադրիչ մասն է:

## Ո՞րն է գնահատման նպատակը

Գնահատումը կարող է ծառայել 3 նպատակի՝

- Ուսուցման գնահատումը տեղի է ունենում գնահատվող առաջադրանքների կիրառությամբ՝ որպես սովորողների համար **ընթացիկ հետադարձ կապ** ապահովելու և նրանց այնպիսի միջոցառումներում ներգրավելու միջոց, որոնք ինքնին ուսումնական վարժություններ են:
- Ուսուցման գնահատումը տեղի է ունենում գնահատվող առաջադրանքների միջոցով՝ կատարողականի գնահատման և **հավաստագրի կամ այլ համապատասխան փաստաթղթի շնորհման** նպատակով ձեռքբերումների այն մակարդակի համար, որ սովորողն արձանագրել է դասընթացի ընթացքում:
- Այն նաև վերապատրաստողներին հնարավորություն է ընձեռում՝ **գնահատելու իրենց վերապատրաստման արդյունավետությունը**:

Վերապատրաստողները պետք է հաշվի առնեն, թե գնահատվող որ առաջադրանքները լավագույնս հնարավորություն կընձեռեն վերապատրաստվողներին հասնել ՈՒԽ-ների իրականացման, ինչպես նաև թե ինչ հաջորդականությամբ պետք է տրվեն այդ առաջադրանքները:

## Գնահատման համակարգի մշակում և ներդրում վերապատրաստման մատուցման ընթացքում

Այսպիսով, գնահատումը ծառայում է մի շարք հստակ նպատակների: Այդ պատճառով գնահատման *մշակումը* կարող է տարբեր ձևեր ստանալ՝ պահպանելով հիմնական սկզբունքը, այսինքն՝ գնահատման գործընթացները պետք է չափեն վերապատրաստման արդյունքները, ինչպես վերը նշվեց, ստացված գիտելիքների, հասկացման, հմտությունների ձեռքբերման և (եթե կիրառելի է) տեղի ունեցած արժեքային փոփոխության առումով: Մասնագիտական կրթության համատեքստում գնահատումը սովորողներին հնարավորություն է ընձեռում արձագանք ստանալ իրենց ուսման և կատարողականի վերաբերյալ: Իրավական ոլորտի մասնագիտական վերապատրաստման համատեքստում գնահատումը ներառում է սովորողի հետ հետադարձ կապ ապահովելու մեթոդներ, որոնք օգնում են անհատին գնահատել, թե որքանով է նա հասել ՈՒԽ-ին:

Երկարաժամկետ հեռանկարում այն նաև «ուսուցման ցիկլի» (տես ստորև) կարևոր տարր է, դեր է խաղում գնահատման գործընթացում և օգնում է կազմակերպություններին երաշխավորել, որ հանրությանը տրամադրվող ծառայությունը պրոֆեսիոնալության առումով համապատասխանում է նրա ակնկալիքներին:

Հետևյալ առանցքային չափանիշները[18] կարող են օգնել՝ մշակելու մասնագիտական վերապատրաստման գնահատման արդյունավետ ռազմավարություն՝

- Գնահատումն իրականացրեք դասընթացի ընթացքում, այլ ոչ թե այն դիտարկեք որպես լրացուցիչ փուլ, որը պետք է ձեռնարկել դասընթացի ավարտին:
- Նախատեսեք այնպիսի առաջադրանքներ, որոնք խթանում են ուսումը:
- Գնահատեք նյութի հասկացումը և ավելի խորքային ուսումը (ինչպիսիք են վերլուծությունը, համադրումը և գնահատումը), քան պարզապես մտաբերումը:
- Օգտագործեք գնահատման տարբեր մեթոդներ՝ յուրաքանչյուրի թերությունները նվազագույնի հասցնելու և առանձին սովորողներին (որոնք կունենան տարբեր ուժեղ կողմեր և ուսման մոտեցումներ) իրենց ձեռքբերումները դրսևորելու տարբեր հնարավորություններ ընձեռելու նպատակով:
- Աստիճանաբար ավելացրեք դասընթացի բարդությունը և պահանջները:
- Սկսեք «ոչ բարդ» փոքրածավալ առաջադրանքներից, որոնք ապահովում են ժամանակին և համապատասխան արձագանք:
- Մոտիվացրեք՝ շեշտադրելով առաջընթացը և ձեռքբերումները, այլ ոչ թե անհաջողությունները:

18 Վերցված է Բարձրագույն կրթության ուսումնասիրման հարցերով կենտրոնի «Արդյունավետ գնահատման հիմնական սկզբունքներ»-ից, www.cshe.unimelb. edu.au/assessinglearning, Ավստրալական համալսարանների դասավանդման կոմիտե և գնահատման բարեփոխումների խումբ (2002) Ուսուցման գնահատում՝ 10 սկզբունքներ, Նոֆիլդ հիմնադրամ, http://arrts.gtcni.org.uk/gtcni/bitstream/2428/4623/1/Assessment%20for%20Learning%20-%2010%20principles.pdf :

ՆՇՈՒՄՆԵՐ

- Նախատեսեք ինքնագնահատման և գործընկերների կողմից գնահատման հնարավորություններ:
- Ներառեք հետադարձ կապի հաճախակի ապահովման հնարավորություններ: Համոզվեք, որ հետադարձ կապը լինի իմաստալից ու կառուցողական և մատնանշի, թե ինչն էր լավ և ինչու, ինչն էր սխալ կամ ոչ տեղին և ինչու և թե ինչպես կարելի է բարելավել աշխատանքը:

## Գնահատվող առաջադրանքները մշակեք ՈՒԽ-ների հիման վրա

Գնահատվող առաջադրանքներն ՈՒԽ-ներին համապատասխանեցումը վերապատրաստման մոդուլի մշակման երրորդ քայլն է:

ՈՒԽ-ների գնահատման հետ կապված՝ այս արդյունքահեն մոտեցումն օգնում է սովորողներին՝

- Պարզել, թե իրենք ինչի են մտադիր հասնել,
- Իրենց նպատակներին հասնելու ճանապարհին հետևել սեփական առաջընթացին,
- Ավելի մեծ վերահսկողություն հաստատել սեփական ուսման գործընթացի վերաբերյալ,
- Ավելի ինքնուրույն լինել ուսման ընթացքում:

Ստորև բերված է գնահատման և դասավանդման/ուսուցման միջոցառումներին՝ ՈՒԽ-ների նման համապատասխանեցում ապահովելու օրինակ՝

| ՈՒԽ | ԳՆԱՀԱՏՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ |
|---|---|---|
| Այս դասընթացի ավարտին դուք պետք է կարողանաք՝ | | |
| Գնահատել մեծահասակների կրթության պրակտիկայում առկա խնդիրների գործնական լուծումները | **Դեպքի ուսումնասիրություն** պրակտիկ խնդրի վերաբերյալ, որի համար սովորողը պետք է լուծումներ առաջարկի<br>**Պորտֆոլիո**, որում սովորողը հաշվետվություն է ներկայացնում սեփական պրակտիկայի վերաբերյալ՝ սևեռվելով խնդիրների և առաջարկվող լուծումների վրա | Իրավիճակային խնդիրների քննարկում<br>Աշխատանքի բաշխման վերահսկում |
| Կատարել հավաստի համեմատական վերլուծություններ Եվրոպայի տարբեր հատվածների և պատմական տարբեր փուլերի միջև՝ պատմական հիմնավոր վկայությունների հիման վրա | **Բանավիճային փաստաթուղթ,** որում երկու սովորողներ որդեգրում են որոշակի դիրքորոշում և հիմնավորում են այն սեմինարի այլ մասնակիցների մոտ, քննարկում այն, իրենց հիմնավորումները ներկայացնում գրավոր՝ նշելով քննարկման արդյունքները և թե ինչ հավելյալ օգուտ են ունեցել այդ բանավեճից | Թեման/ժամանակահատվածը լուսաբանող դասախոսությունների շարք<br>Սեմինար քննարկում՝ հիմնական աղբյուրների և երկրորդային նյութերի օգտագործմամբ՝ ընդհանուր պատկերացում կազմելու համար<br>Առաջարկվող գրականություն |

Ուստի կարևոր է, որպեսզի ծրագրի և դասընթացի ՈՒԽ-ները ներկայացվեն հստակ և գնահատման ենթակա: Սա նաև նշանակում է, որ գնահատման ռազմավարությունները և խնդիրները պետք է հստակ թույլ տան *բոլոր* սովորողներին լավագույնս ի ցույց դնել իրենց կարողությունները՝ ՈՒԽ-ների իրականացման միջոցով:

- *Ռեֆլեքսիան*՝ որպես արդյունավետ վերապատրաստման հիմնական բաղադրիչ՝ «ուսուցման ցիկլ»

Հետագա քննարկումն անհրաժեշտ է՝ սովորողներին օգնելու սովորել վերոնշյալ գնահատման առաջին գործառույթը:

> Ուսուցման գնահատումն օգտագործում է գնահատվող առաջադրանքները՝ որպես սովորողների համար կառուցողական հետադարձ կապ ապահովելու և նրանց այնպիսի գործողություններում ընդգրկելու միջոց, որոնք ինքնին ուսումնական վարժություններ են[19]:

Այսինքն, որպես ռեֆլեքսիայի և ավելի որակյալ ուսուցման միջև կապի ներկայացման պարզ միջոցներ: Մասնագիտական վերապատրաստման ժամանակ վերապատրաստողներն իրական հնարավորություն ունեն հիմնվելու այս նախնական գիտելիքների վրա՝ օգնելով սովորողներին մտորել իրենց աշխատանքի վրա մարդու իրավունքների ազդեցության մասին: Ուսուցման ցիկլն ընդգծում է, որ ռեֆլեքսիան այժմ դիտարկվում է որպես ուսուցման գործընթացի առանցքային ասպեկտ՝ անկախ նրանից, թե «սովորողն» իրավաբանական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող է, թե Գերագույն դատարանի դատավոր: Դա պարզապես ավելի դյուրին է օգտագործել իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման մեջ, քան դպրոցի շրջանավարտների համար ներածական դասընթացի ընթացքում:




19 Kolb D A (1984) *Experiential Learning: experience as the source of learning and development* (New Jersey: Prentice-Hall):

ՆՇՈՒՄՆԵՐ

Ուսուցման ցիկլը կարող է օգտագործվել՝ բացատրելու կրթական գործընթացի աստիճանական բնույթը: Մասնագիտական և աշխատանքային բնույթով պայմանավորված կրթության մեջ ռեֆլեքսիան կարող է կիրառվել որպես մեթոդ՝ օգնելու [վերապատրաստվողներին] պատասխանատվություն ստանձնել իրենց ուսուցման համար և բացահայտել ուղիներ, որոնցով իրենք կարող են խթանել իրենց աշխատանքը և մասնագիտական վարքագիծը: Մարդիկ մտորում են տարբեր նկատառումներով և տարբեր համատեքստերում, սակայն նպատակը նույնն է՝ ավելի լավ հասկանալ և հասկանալի դարձնել այն, ինչ զգում են կամ ականատես դառնում:

Վեբը պնդում է՝ *Ուսման գործընթացը սկիզբ է առնում պրակտիկ փորձառությունից: Այդ փորձառությունից դասեր քաղելու համար անհրաժեշտ է այդ փորձառության շուրջ մտորելու հնարավորություն և այդ փորձառությունն ամփոփելու, յուրացնելու ու տեսության ձևով արտահայտելու կարողություն, ինչն այնուհետև կարող է սպրդվել նոր իրավիճակներում*:

Վկայակոչվող «փորձառությունը» կարող է ունենալ տարբեր ձևեր: ...[Ե]րբ ռեֆլեքսիան կիրառվում է ակադեմիական կամ աշխատանքային միջավայրում ուսմանն աջակցելու նպատակով, ապա այն, սովորաբար, ունենում է պլանավորված բնույթ կամ ներառում է մի շարք ուսումնական փորձառություններ:

Թերևս *բոլոր* ուսանողները պետք է կարողանան հարցադրումներ կատարել իրենց սեփական ուսման վերաբերյալ և գնահատել իրենց աշխատանքի որակը: Սակայն, ինչպես պնդում է Բունը, այդ հմտությունները հատկապես արդիական են իրավաբան ուսանողների համար՝

*Սովորողները ոչ միայն պետք է «կատարեն», այլև մշակեն մոտեցում, որը հնարավորություն կընձեռի նրանց հարցնել, թե ինչու որոշակի հանգամանքներում իրավաբանները պետք է «գործեն» որոշակի ձևով: Սա պետք է ներառի գործողության, մոտիվացիայի և էթիկայի գիտական ուսումնասիրություն՝ հիմք հարթելով ոչ միայն գործողության իրականացման, այլև գործողության հիմնավորման մասին ռեֆլեքսիայի կարողության ձևավորման համար*[2]:

1 Webb J (1995) 'Where the action is in legal education' *International Journal of the Legal Profession* 2 (2/3) 187-216:
2 Boon A (1996) 'Skills in the initial stage of legal education: theory and practice for transformation' in J Webb and C Maughan *Teaching lawyers' skills* (London: Butterworths):

ՄԵՋԲԵՐՎԱԾ Է՝ Hinett, K, Developing Reflective Practice in Legal Education (UK Centre for Legal Education, 2002):

## Սովորողների համար հետադարձ կապի ապահովում

Գնահատման երկրորդ գործառույթն ավելի ավանդական է «վերապատրաստողի» համար՝ որևէ առաջադրանքի միջոցով սովորողին գնահատելը: Դա սովորողի համար ակնհայտորեն կապված է «հավաստագրման» կամ «հավատարմագրման» հետ: Սակայն վերապատրաստման դեպքում դա այդպես չպետք է լինի (և կարող են լինել համոզիչ պատճառներ՝ չներկայացնելու, որ վերապատրաստումը քննության որևէ ձև է ենթադրում):

Արդյունավետ հետադարձ կապ ապահովելը վերապատրաստողի համար կարևոր խնդիր է: Հետադարձ կապի ապահովումը կարող է նպատակահարմար լինել մի շարք իրավիճակներում՝

- *Գիտելիք*՝ նրանից հետո, երբ լիակազմ սեսիայից հետո խումբը հաղորդում է իր եզրակացությունների մասին, օրինակ՝ իրավիճակային խնդրի կամ որևէ դեպքի քննարկման կամ «դատախաղի» ընթացքում ներկայացված պնդումների հետ կապված, երբ վերապատրաստողը պետք է անդրադառնա այն հարցին, թե որքանով են սովորողները հասկացել թեման և կարողացել կիրառել իրենց գիտելիքները:
- *Հմտություններ*՝ նոր հմտությունների կիրառման գնահատման նպատակով մշակված վարժության կատարումից հետո (օրինակ՝ ոստիկանների կողմից հարցաքննության այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք հարգում են մարդու իրավունքները): Այստեղ վերապատրաստողը, ըստ էության, պետք է մտածի կատարողականի վրա վերապատրաստման ազդեցության վերաբերյալ հետադարձ կապ ապահովելու մասին:

Այս բոլոր դեպքերում **հիմնական նպատակն է սովորողին հնարավորություն ընձեռել բարելավելու իր կատարողականը**:

- Սովորողին, առաջին հերթին, պետք է սեփական կատարողականը գնահատելու հնարավորություն ընձեռվի:
- Հետադարձ կապը պետք է լինի կոնկրետ, այլ ոչ՝ ընդհանուր: Փորձեք ներկայացնել սովորողի կատարողականի վերաբերյալ կոնկրետ օրինակներ:
- Հետադարձ կապը պետք է վերաբերի կատարողականին, այլ ոչ թե սովորողի անձին, ուստի այն պետք է ներկայացվի չեզոք և օբյեկտիվ ձևով:
- Հետադարձ կապի ծավալը չպետք է մեծ լինի, առավելագույնը՝ երեք կամ չորս կետ:
- Պետք է հավասարակշռություն լինի դրական մեկնաբանությունների և կառուցողական քննադատության միջև:

Հետադարձ կապի ապահովումը պետք է լինի շարունակական գործընթաց: Վերապատրաստողները մեկնաբանություններ տալու լայն հնարավորություններ ունեն վերապատրաստման տարբեր փուլերում (օրինակ՝ խմբի կողմից սովորածի ներկայացման ժամանակ, դատախաղի ավարտին կամ որպես լիակազմ սեսիայի ունկնդիր): Հնարավորության դեպքում փորձեք հետադարձ կապը շաղկապել ուսումնական կոնկրետ խնդիրների հետ:

## vi. Էլեկտրոնային ուսուցման փաթեթի մշակում

Անկախ նրանից, թե արդյոք էլեկտրոնային ուսուցման փաթեթն օգտագործվելու է առանձին կամ որպես զուգակցված դասընթացի մաս, անհրաժեշտ է ապահովել հետևյալ քայլերը՝

### Պատմատախտակի քննարկում

Դասընթացի նախագիծն ավարտելուց և բովանդակության մշակման փուլն ամփոփելուց հետո կազմակերպվում է «պատմատախտակի» քննարկում: Բովանդակությունը մշակած փորձագետների աշխատանքային խմբի (ԱԽ) համակարգողը և ինստրուկցիոն դիզայները հանդիպում են՝ պատրաստելու ոչ ինտերակտիվ սցենար, որն այնուհետև օգտագործվում է էլեկտրոնային ուսուցման մասնագետի կողմից՝ դասընթացի Articulate տարբերակը մշակելու նպատակով: Articulate-ն ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման մոդուլի մշակման համակարգչային ծրագիր է:

Աշխատանքային խմբի համակարգողի ներկայացումը, որպես մշակման գործընթացի ղեկավար և ոլորտի փորձագետ, անհրաժեշտ է երկու պատճառով: Առաջինը՝ ցույց տալու հիմնական ուսումնական կետերը և հնարավոր ՈւԽ-ները, և երկրորդը՝ թիրախային լսարանը և վերապատրաստման բնութագրիչները որոշելու նպատակով:

ԱԽ-ի մյուս անդամների հետ ձևաչափի վերաբերյալ քննարկումների արդյունքների հիման վրա պատմատախտակում ներառվում են տեսանյութեր՝ վերջնական ինտերակտիվ արտադրանքում ընդգրկվելու համար:

Հանդիպումից հետո պատմատախտակի նախագիծը վերջնական հաստատման համար ներկայացվում է համակարգողին և HELP-ի քարտուղարությանը: Դրա հիման վրա էլեկտրոնային ուսուցման մասնագետը դասընթացի ինտերակտիվ (Articulate) տարբերակը ներկայացնում է HELP-ի քարտուղարությանը:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Քանի որ պատմատախտակի քննարկումով սկիզբ է դրվում ուսուցման մշակման գործընթացին, այն ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման մշակման առավել կենսական պահերից է: Սա հենց այն պահն է, երբ էլեկտրոնային ուսուցման մասնագետը սկսում է տեղեկություններ հավաքել լսարանի և թեմայի վերաբերյալ, ինչը նրան կօգնի ավարտին հասցնել ուսուցման ծրագիրը: Այս հանդիպման ընթացքում տեղեկություններ են ստացվում որոշ խոշոր հարցերի վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է պատասխանել գործընթացի շրջանակում: Այս բաժնում մենք ամփոփում ենք վերոնշյալ հարցերից մի քանիսը: Սակայն ռեսուրսների վերաբերյալ բաժնում կգտնեք ձևանմուշային փաստաթուղթ, որտեղ թվարկված է, թե ինչ տեղեկություններ է անհրաժեշտ պարզել պատմատախտակի քննարկման արդյունքում:

Ինչպես մոդուլի բովանդակության սահմանումը, այնպես էլ պատմատախտակի քննարկումն ազդում են այլ ասպեկտների վրա՝ ինչպիսին կլինի մոդուլը, ինչ տևողություն այն կունենա, ինչ տեղեկատվություն կարող է օգտագործվել ուսուցման գործընթացի շրջանակում:

«Պատմատախտակի» քննարկման հիմնական հարցերը հետևյալն են՝

| ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ | |
|---|---|
| ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ | ՆՊԱՏԱԿ |
| Նախագծի կառավարման հետ կապված խնդիրներ | Մոդուլի սկզբից ևեթ օգտակար է քննարկել նախագծի կառավարման կառուցվածքը: Պատմատախտակի քննարկումը սկսեք՝ ճշգրտելով նախագծի թիմի անդամների դերերը, ակնկալվող ժամկետները, մասնակիցների հասանելիությունը և կոնտակտային տվյալները: |
| **ԾՐԱԳՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ** | |
| Դասընթացի տևողություն | Ուսուցման տևողության ճշգրտումը կհստակեցնի դասընթացի բովանդակության էջերի ծավալը, որը ինստրուկցիոն դիզայները պետք է մշակի: Թեև սա կարևոր է էլեկտրոնային ուսուցման ծրագրերի մշակմամբ զբաղվող ընկերության հետ աշխատելիս, որը կարող է գումար գանձել ըստ մշակվող էջերի քանակի, սեփական բովանդակություն մշակելիս առկա է ճկունության որոշակի մակարդակ: Այդուհանդերձ, որոշակի ժամանակացույցի հետևելը սեփական բովանդակությունը մշակելիս՝ արժեքավոր փորձառություն է: |
| **ԾՐԱԳՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ** | |
| Փոխգործակցության նպատակ | Ո՞րն է մշակվող ուսումնական փոխգործակցության նպատակը՝ այն ավելի երկարատև ուսումնական դասընթացի ներածությունն է, լիարժեք վերապատրաստումն որևէ կոնկրետ թեմայով, ինքնուսուցումն է, թե՞ պետք է իրականացվի լսարանային միջավայրում: Կարևոր է իմանալ, թե ինչ դեր է խաղալու ուսուցումը՝ որոշելիս, թե ինչ տեղեկատվություն է հարկավոր ներառել, և ինչը՝ ոչ: Եթե, օրինակ, դասընթացը մեկ այլ ավելի ընդգրկուն ուսուցման գործընթացի մաս է կազմում, ապա կարելի է տեղեկատվության մի մասը դուրս թողնել՝ հետագայում որևէ այլ տեղ ընդգրկելու հնարավորությամբ: |

.....

.....

.....

.....

| | |
|---|---|
| Առկա բովանդակությունը պահպանվում է, թե փոփոխվում | Եթե դասընթացը հանդիսանում է որպես գոյություն ունեցող մեկ այլ դասընթացի բովանդակությունը լրացնող տեղեկատվություն, ապա կարող եք ներառել այլ ուսումնական նյութերը դասընթացի շրջանակում հատուկ ցուցանշաններով՝ առանց օգտագործելու ուսումնական նյութի համար նախատեսված տարածքը, որը հետագայում գուցե ավելի շատ անհրաժեշտ կլինի ձեզ համար: |
| Դասընթացի թեմաների ներկայացման հերթականության պահպանումը պարտադիր է | Վերապատրաստման պարտադիր հատված ներկայացնելու դեպքում հավանական է, որ դուք սովորողներից կպահանջեք ծանոթանալ բոլոր էջերին, և այդ դեպքում անհրաժեշտ կլինի այն իրականացնել հերթականությամբ: Սակայն հնարավոր է, որ էլեկտրոնային ուսուցման որոշ հատվածներ ծառայեն որպես հղումների համար նախատեսված ուղեցույց, ինչը պետք է օգտատիրոջը հնարավորություն տա ծանոթանալ այդ տեղեկատվությանն անհրաժեշտության կամ ցանկության դեպքում: Այդ դեպքում դասընթացի հերթականության պարտադրումը կարող է ապամոտիվացնող լինել: |
| Դասընթացը պարտադիր ծրագրի մաս է | Ցանկացած պարտադիր էլեկտրոնային դասընթաց կարող է ներառել այն ավարտելու որևէ ապացույց կամ ուսումնական խնդրի կատարմանը հասնելու ապացույց՝ մասնակցության վկայական կամ պաշտոնական քննություն: |
| Դասընթացը լրացուցիչ միջոցներ պահանջելու է | Երբեմն էլեկտրոնային ուսուցման դասընթացը կարող է լրացվել տպագիր ուսումնական ռեսուրսներով: Դրանք կարող են ներառել ուղեցույցներ կամ հուշագրեր: Կարևոր է իմանալ, որ դրանք պետք է սկզբում մշակվեն: |
| Գիտելիքների գնահատում | Ինչպես պետք է գիտելիքները գնահատվեն դասընթացի շրջանակում: Վերապատրաստման մոդուլին մասնակցությունը պե՞տք է արդյոք ենթադրի որոշակի գիտելիքների պաշար: Եթե այո, ապա ձեզ անհրաժե՞շտ է մշակել առաջադրանք մինչև դասընթացի մեկնարկը, որի կատարումը կարող է հուշել օգտատերերին, թե հատկապես ինչին նրանք պետք է ուշադրություն դարձնեն: Տեղի ունենալու է արդյոք գիտելիքների ստուգում դասընթացի ընթացքում, թե՞ միայն դասընթացի ավարտին: |
| Հետադարձ կապ | Գիտելիքների ստուգման դեպքում հետադարձ կապը տրամադրվելու է անմիջապե՞ս, թե՞ դասընթացն ավարտելուց հետո: |
| Ձայնագրություն | Պարունակելու՞ է դասընթացը աուդիո նյութեր: Եթե այո, ապա ինստրուկցիոն դիզայներին անհրաժեշտ կլինի մշակել սցենարներ աուդիո նյութերի համար: |
| Ինտերակտիվություն | Դասընթացի ո՞ր տոկոսը պետք է պարունակի ինտերակտիվ տարրեր: Թեմայի բովանդակության մասնագետը պետք է որոշակի պատկերացում ունենա այս մասին, եթե հայտնի է, թե ինչ լսարանի է ներկայացվելու դասընթացը: Ինտերակտիվության ծավալն իմանալը կօգնի ինստրուկցիոն դիզայներին դասընթացի նախագծման ժամանակ: |
| Սմարթֆոն ուսուցում | Դասընթացն արդյոք կօգտագործվի՞ սմարթֆոն ուսուցման համար: Եթե այո, ապա դասընթացի որոշակի տարրեր կարող են չտեղավորվել սմարթֆոն ուսուցման հարթակներում: |

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

| ԼՍԱՐԱՆ | |
|---|---|
| Ո՞ւմ համար է նախատեսված ուսուցումը | Կարևոր է իմանալ, թե ով է օգտվելու կամ ով կարող է օգտվել այս ուսուցումից: Նրանց հասկանալն առանցքային նշանակություն ունի ուսուցմանն առնչվող որոշումներից մի քանիսի համար, որ կայացնելու եք: Համոզվեք, որ հաստատել եք թիրախային լսարանը, որից հետո կարող եք անդրադառնալ լսարանի ժողովրդագրական հատկանիշներին: Թիրախային լսարանի համար կարող է նաև կարևոր լինել մատուցվող նյութերի տոնայնությունը և ձևը: Օրինակ՝ որոշ անհատների համար ուսումնական նյութերի տեքստերի մատուցումը խոսակցական լեզվով կարող է անհարմար կամ անընդունելի լինել: Մյուսները գուցե նախընտրեն ավելի ոչ ֆորմալ լեզուն: |
| Ուսման փորձ | Ունի՞ արդյոք լսարանը սովորելու փորձ: Վերջին անգամ ե՞րբ են նրանք որևէ կրթական ծրագրի կամ վերապատրաստման մասնակցել: Սա կարևոր է պարզել ուսուցման հետ կապված ձեր մոտեցման համար: Գուցե ավելի հեշտ լինի աշխատել այն անհատների հետ, որոնք ուսման ավելի թարմ փորձ ունեն: Գուցե ձեզ անհրաժեշտ լինի այլընտրանքային մոտեցում ցուցաբերել այն անհատների նկատմամբ, որոնք ավելի քիչ են սովոր ուսման լսարանային միջավայրին: |
| Ուսման հանդեպ վերաբերմունք | Ինչպե՞ս է թիրախային լսարանն արձագանքում ուսուցմանը: Այն, ընդհանուր առմամբ, ընդունելի՞ է, թե՞ ոչ: |
| Ուսուցման մատչելիություն | Որքա՞ն ժամանակ ունի լսարանն ուսումնական նյութը սովորելու համար: Ունի՞ այն արդյոք ուսման համար հատուկ հատկացված ժամանակ: Դասընթացի մասնակիցները սովորո՞ւմ են աշխատանքին զուգահեռ: Ունե՞ն նրանք արդյոք բավարար ժամանակ նյութը սովորելու համար, թե՞ ոչ: |
| Տեխնիկական կարողություններ | Թիրախային լսարանը տեխնոլոգիաներից օգտվելու նախկին ի՞նչ փորձառություն ունի: Ծանո՞թ է արդյոք այն էլեկտրոնային ուսուցմանը, սովորե՞լ է այդ ձևաչափով: Որքանո՞վ կարող եք կատարելագործել լսարանի տեխնիկական կարողությունները: Այս հարցի պատասխանը կարող է ներառել փոխգործակցության այն տեսակները, որոնք դուք կարող եք նախատեսել: |
| Ժողովրդագրական նկատառումներ | Հաշվի՞ առեք ձեր լսարանի տարիքը, սեռը և էթնիկական կազմությունը: Դրան համապատասխան՝ կառուցեք դասընթացի պատկերումները կամ օրինակները: Հակառակ դեպքում՝ ուսումնական խմբերն ավելի քիչ կներգրավվեն թեմայի մեջ: Օրինակ՝ սեռերի 50/50 մասնաբաժնով ներկայացվածության լսարանում մասնագետներին տրամադրվող դասընթացի ժամանակ բոլոր մասնագետներին որպես տղամարդ պատկերելը կարող է հակառակ ազդեցություն ունենալ այդ դասընթացին միացող կանանց վրա: |
| Թեմայի նկատմամբ զգայունություն | Դիտարկեք այն թեման, որը դուք վերանայում եք: Կա՞ն այնտեղ հարցեր, որոնք կարող են ունենալ թեմատիկ զգայունություն: Օրինակ՝ դուք մշակո՞ւմ եք դասընթաց Հռոմի մասին, որտեղ օգտագործվում են Հռոմի ժողովրդի մասին հին կամ կարծրատիպային այնպիսի պատկերումներ, որոնք կարող են վիրավորական համարվել: |

| ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ | |
|---|---|
| Առկա գիտելիքներ | Թիրախային լսարանը գիտելիքների ինչ նախնական պաշար կարող է ունենալ: Առնչվել են արդյոք նրանք նախկինում մատուցվող թեմային, և եթե այո, ապա կարիք կա՞ կրկին անդրադառնալ նախկինում ներկայացված նյութին: |
| Ընթացիկ վարք | Լծվելով դասընթաց ստեղծելու գործին՝ հաշվի՛ առեք լսարանի ներկա վարքագիծը: Թեմայի առնչությամբ ինչ մոտեցում ունեն նրանք տվյալ պահին, որին պետք է անդրադառնա ուսուցումը: |
| Ակնկալվող վարքագիծ | Վերապատրաստումից հետո ինչ վարքագիծ են դրսևորելու ձեր սովորողները: Ինչպե՞ս եք պարզելու՝ ուսուցումն արդյունավե՞տ էր, թե՞ ոչ: |

## Բովանդակության փոխարկումը պատմատախտակ

Էլեկտրոնային ուսուցման պատմատախտակը սցենար է, որը գրում է ինստրուկցիոն դիզայները: Այնուհետև տեխնիկական փորձագետն այդ սցենարը փոխարկում է SCORM կամ Flash աշխատանքային ֆայլի: Յուրաքանչյուր սցենար ներառում է այն բոլոր բառերը, պատկերները և նշումները, որոնք պահանջվում են դասընթացի մշակման համար:

Էլեկտրոնային ուսուցման պատմատախտակը դասընթացի չգործառնող տարբերակն է: Այն չի պարունակում որևէ աշխատանքային կոճակ: Դուք չեք կարող պատասխաններ ներմուծել: Դուք չեք կարող քաշել կամ գցել էկրանին առկա որևէ տեղեկատվություն: Դուք կարող եք տեսնել, թե ինչպիսին է էկրանի դասավորությունը: Էկրանին հայտնվող ճշգրիտ տեքստը գրվում է պատմատախտակին: Ձեր ցանկությամբ էջի մշակողը կարող է գրաֆիկական պատկերի որևէ օրինակ տեղադրել: Այնտեղ կլինեն մի շարք նշումներ, որոնք նկարագրում են, թե ինչ տեսք կունենա տեղեկատվությունը փոխարկումից հետո: Քանի որ այնտեղ տեղաշարժում կամ ինտերակտիվ որևէ գործողություն չի նախատեսվում, շատ էկրանների վրա գործողությունը կարող է նկարագրվել պարզապես մեկ սլայդի վրա: Ստորև բերված օրինակում ներկայացված է պատմատախտակ՝ պարզ չորսկոճականի գործողության համար:

Ստորև ներկայացված պատկերը ցույց է տալիս էկրանը, որն առաջին անգամ հայտնվում է օգտատիրոջ առջև: Էկրանի վերին մասում կա տարածք էկրանի վրա հղումներ կատարելու համար: Այն բաղկացած է երեք փոփոխականից:

**Մոդուլի համար_գլխի համար_էջի համար (օրինակ՝ 01_01_04-ը պետք է ընթերցել 1-ին մոդուլ, 1-ին գլուխ, 4-րդ էջ)**

Էջի հիմնական մասը պարունակում է մոդուլի ավարտուն տեսքի մոտավոր պատկերը: Այն ներառում է ամբողջ տեքստը, որ պետք է հայտնվի էջին, ինչպես նաև որևէ պատկեր, որն ինստրուկցիոն դիզայների ցանկությամբ կարող է ներմուծվել էջում՝ տեխնիկական մասնագետի կողմից:

Աջ կողմում կատարված են նշումներ ԹԲՄ-ի (թեմայի բովանդակության մասնագետի) համար: Դրանք ներկայացնում են էջի գործարկումը: Բերված օրինակի դեպքում մոտավորապես այսպիսի գրառում կլինի այնտեղ՝

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

«Կա չորս կոճակ: Երբ օգտատերը սեղմում է կոճակը, կոճակից աջ հայտնվում է նոր պատուհան՝ որոշ լրացուցիչ տեղեկություններով»:

Պատմատախտակի հաջորդ էջն օգտատիրոջը ներկայացնում է, թե ինչ տեսք կունենա էջը՝ առաջին կոճակը (1. Lorem Ipsum Dolor Sit Amet) սեղմելուց հետո՝ ինչպես է փոփոխվում էջը, ինչ է հայտնվում էջին, ինչ է գրված տեքստում, կան արդյոք հետագա պատկերներ և այլն:

Էկրանի հղումները փոխվում են՝ այս օրինակում ավելանում է չորրորդ փոփոխականը՝ էջի երկրորդ տեսքն արտացոլելու համար:

**Մոդուլի համար_գլխի համար_էջի համար_ էջի տեսք (օրինակ՝ 01_01_04_a պետք է ընթերցել 1-ին մոդուլ, 1-ին գլուխ, 4-րդ էջ, էջի տեսք՝ ա)**




Ինչպես ցույց է տրված վերևում՝ առաջին կոճակը սեղմվել է, իսկ կոճակի գույնը փոխվել է՝ կապույտից դառնալով վարդագույն: Սկզբնական էջի պատկերն անհետացել է, որի փոխարեն հայտնվել է կապույտ եզրերով սպիտակ տեքստային վանդակ:

## Ինչ պետք է ցուցադրի պատմատախտակը

Ձեզ անհրաժեշտ կլինի ներառել պատմատախտակի 1 էջ՝ մոդուլի յուրաքանչյուր փոփոխված տարբերակի համար: Պատմատախտակը պետք է ներառի՝

1. Տեքստ, որը կհայտնվի կոճակը սեղմելիս:
2. Հարցեր մշակելիս դուք պետք է պատկերեք էջի տեսքը՝ նախքան այդ հարցին պատասխան ստանալը: Այնուհետ պետք է ներառեք երկու լրացուցիչ էջ, որոնք ցույց են տալիս հարցին պատասխանելուց հետո հայտնվող արձագանքը, որը պետք է ներկայացված լինի «ճիշտ է» կամ «սխալ է» ձևով:
3. Ինչպես կփոխվի ինտերակտիվ տարրը դրա վրա սեղմելիս, օրինակ՝ կփոխվի կոճակի գույնը:
4. Եթե նոր պատկեր է հայտնվել, ապա այն պետք է ի ցույց դրվի: Build Notes-ում լավ կլինի հղում տալ, թե որտեղից է պատկերը վերցվել՝ լուսանկարների շտեմարանից օգտվելու դեպքում հղման համարը և կայքը, կամ ինտերնետային կայքի հասցեն, եթե դուք պատկերը վերցրել եք որևէ ինտերնետային էջից: Եթե պատկերն առկա է համակարգչային ներքին ցանցում, ապա դուք պետք է ներառեք ֆայլի ուղին, որով կարելի է գտնել այդ պատկերը:
5. Լավ կլինի նաև ներառել այլընտրանքային պատկերների կամ տեղակայումների

ՆՇՈՒՄՆԵՐ

ցանկ, եթե պահանջվող պատկերը հնարավոր չէ գտնել:

### Պատկերների օգտագործում

Պատկերների օգտագործումը գայթակղիչ է թվում՝ դասընթացն առավել ինտերակտիվ և հետաքրքիր դարձնելու համար: Պատկերներ օգտագործելու դեպքում դուք պետք է հանգամանորեն մտածեք՝ արդյոք դրանք բարելավո՞ւմ են դասընթացը, խիստ անհրաժե՞շտ են, թե՞ կարող են շեղել:

1. Պատկերները պետք է ներկայացնեն ուսուցման հիմնակետերը կամ համատեքստ հաղորդեն տվյալ թեմային:
2. Չափից շատ պատկերներ չպետք է օգտագործվեն:
3. Պատկերները չպետք է գերակշռեն տեքստային մասին:
4. Հատուկ ուշադրություն պետք է դարձվի խմբերին փոքրամասնությունների վիզուալ ներկայացումներին, պետք է չամրապնդել անօգուտ կարծրատիպեր:

### Ինտերակտիվության օգտագործում

Ինչպես պատկերների դեպքում, ինտերակտիվությունը ևս պետք է օգտագործվի ուսուցման հիմնակետերն ամրապնդելու համար: Ինտերակտիվությունը չպետք է օգտագործվի դասընթացն ավելի ազդեցիկ դարձնելու կամ սովորողներին «արթնացնելու» նպատակով: Տարածված սխալ է դասընթացներ մշակելիս ներառել ինտերակտիվ նյութ զուտ այն պատճառով, որ մի քանի էջ անընդմեջ օգտատիրոջ համար սեղմելու կոճակ դրված չի եղել: Ինտերակտիվ նյութերը պետք է՝

1. Օգտատիրոջը ներկայացնեն գործընթաց:
2. Պատկերեն կամ մատնանշեն գործընթաց:
3. Ներկայացնեն ուսուցման հիմնակետ:

Դրանք կարող են կիրառվել էջում տեղեկատվության տարածման նպատակով՝ երաշխավորելու, որ թեմատիկ հետևողականությունը պահպանվում է: Եթե մեկ սլայդը չափազանց փոքր է մեկ հիմնակետի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու համար, ապա երկրորդ սլայդի վրա շարունակելու փոխարեն մտածեք այդ տեղեկատվությունը վերնագրերով կամ կետերով ներկայացնելու մասին:

Գործնական օրինակների համար ծանոթացեք «ՄԻԵԿ-ի ներածություն[20]» HELP ծրագրի դասընթացին

### Տեսանյութերի օգտագործում[21]

Այսօրվա օգտատերը դյուրին և վերահսկելի մուտք ունի (ինտերակտիվ) տեսանյութերին: Վեբ մեդիան հնարավորություն է ընձեռել տեսանյութերի հեռարձակման համար՝ ինտերնետով դրանք տարածելու և դիտելու նպատակով:

20 http://help.elearning.ext.coe.int/?id=866:

21 Վերցված է *Կրթության մեջ թվային վիդեո- և աուդիոնյութերի կիրառման մասին ձեռնարկից* (The VideoAktiv նախագիծ) https://moodle.technion.ac.il/pluginfile.php/344724/mod_resource/content/0/Ulpan/VideoAktiv_Handbook_fin.pdf: Վերջին մուտքը՝ 2016թ. մայիսի 24-ին:

Տեսանյութը հաճախ զուգորդվում է ուսումնական այլ միջոցառումների հետ: Blackboard-ի և Moodle-ի նման վիրտուալ ուսուցման հարթակները դարձել են լայնորեն օգտագործվող՝ տրամադրելով հարաբերականորեն պարզ թվային տիրույթ՝ ուսումնական ռեսուրսների, ներառյալ՝ վեբ ներկայացումների և մուլտիմեդիա ռեսուրսների ներկայացման համար: Տեսանյութն այլևս որպես հեռուստատեսային արտադրանք չի ընկալվում: Այժմ այն ուսումնական (և ավելի ու ավելի ինտերակտիվ) միջոց է, որը նաև դյուրամատչելի է, հեշտությամբ տրամադրվում է և հաճախ օգնում կամ լիարժեքորեն ինտեգրվում կրթական ծրագրերին: Երիտասարդներն արդեն հեշտությամբ սովորում են տեսաձայնային նյութերի միջոցով: Արդյունքում նրանք կդառնան այսպես կոչված՝ ավելի տեսա-լսողական բնույթի սովորողներ: Տեսանյութերի մշակումը և կրթության ոլորտում այն օգտագործելու եղանակի որոշումը մեծ մարտահրավեր է դասավանդողների համար: Նույնը կարելի է ասել իրավական և մարդու իրավունքների կրթության ոլորտում աշխատող վերապատրաստողների համար:

## Ինչո՞ւ օգտագործել տեսանյութ[22]

Ինչպես հին ասացվածքն է ասում՝ «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»: Եկե՛ք համոզվենք դրանում՝ նայելով HELP ծրագրի տեսանյութը (Եվրոպայի խորհուրդ):

[Տեսանյութ՝ Ինչո՞ւ է HELP-ը կարևոր, գործիք՝ windows media player]

Տեսանյութը/անիմացիան՝ ձայնի և ինչյունի հետ համատեղված, շատ արժեքավոր է դառնում դիտողի համար: Այն հուզական ազդակ է հաղորդում մտքին և խթանում է ընկալումն ու մոտիվացիան թեմայի վիզուալիզացիայի նկատմամբ: Համեմատե՛ք այն զուտ թեմայի վերաբերյալ տեքստ կարդալու հետ և կհասկանաք պատկերի և ձայնի հավելյալ

22 Վերցված է *Կրթության մեջ թվային վիդեո- և աուդիոնյութերի կիրառման մասին ձեռնարկից* (The VideoAktiv նախագիծ) https://moodle.technion.ac.il/pluginfile.php/344724/mod_resource/content/0/Ulpan/VideoAktiv_Handbook_fin.pdf: Վերջին մուտքը՝ 2016թ. մայիսի 24-ին:

ՆՇՈՒՄՆԵՐ

արժեքը: Լավագույն օրինակը «Եվրոպայի խիղճը» տեսանյութն է, որը կներկայացվի հետագայում մի շարք լրացուցիչ օրինակների հետ միասին:

Դուք հաճախ եք լսում, որ տեսանյութը համապատասխանում է ճկուն կրթության կարիքներին՝ մատչելիություն ապահովելով ցանկացած պահի և ցանկացած վայրում: Սակայն նույնը կարելի է ասել նաև գրքի վերաբերյալ: Բացի այդ, գրքի առավելությունն այն է, որ դրանից օգտվելու համար անհրաժեշտ չեն տեխնիկական պայմաններ: Ուրեմն ինչն է գրավիչ դարձնում տեսանյութը: Ինչպես նշում է Aumont-ը[23], պատկերները գիտելիքի, համոզմունքի և հաճույքի աղբյուր են, և յուրաքանչյուր բիտ նույնքան հզոր է, որքան գրված բառը:

Moss[24]-ը նշում է, որ տեսանյութը տարբերվում է ուսումնական այլ տեխնոլոգիաներից նրանով, որ ենթադրում է տեսողական զգայարանի օգտագործում: Շարժվող պատկերը կարող է օգնել ուսանողին պատկերացնել որևէ գործընթաց կամ տեսնել, թե ինչ-որ բան ինչպես է աշխատում, շարժվում կամ կատարվում: Dale-ը[25] համարում էր, որ շարժվող պատկերը կարող է հավասարակշռել, իր կարծիքով, ակադեմիական կրթությանը բնորոշ «գերխոսքավորումը»:

Սակայն շարժվող պատկերի տեսանելի ակնհայտ նշանակությունը չէ միայն, որ ինքնին կարևոր է: Ակադեմիական նյութեր մշակողները հաճախ անդրադառնում են տեսանյութի մոտիվացնող ասպեկտներին և հուզական գրավչությանը: Պատկերները միշտ կրում են (կիսա) թաքնված ուղերձներ, ինչպես՝ պատմողական, հուզական, հրամայական, իրական և խորհրդանշական:

Տեսանյութի (ներառյալ՝ անիմացիայի) ազդեցությունն ուսուցողական այլ գործողությունների համեմատ առանձնանում է հետևյալով՝

- Տեսանյութն ապահովում է բարձր աստիճանի վիզուալիզացիա,
- Շարժվող պատկերները դասընթացի նյութին «կենդանի շունչ» են հաղորդում,
- Շարժվող պատկերներն ավելացնում են իսկություն և իրականություն ուսուցման համատեքստին,
- Տեսանյութը մտորումների տեղիք է տալիս, ձևավորում է համապատասխան մթնոլորտ և առաջացնում է հույզեր,
- Ձայնի հետ զուգորդվող պատկերներն առավել լավ են ընկալվում ուղեղի կողմից, քան գրված տեքստը,
- Տեսանյութն ունի պատկերների շարժումը սկսելու, կանգնեցնելու և հետ պտտելու հնարավորություն (վերլուծության և ռեֆլեքսիայի նպատակով),
- Տեսանյութը ցանկության դեպքում կարելի է կրկին դիտել, սովորողները կարող են կրկնել տեսանյութի հատվածները երբ և որքան ցանկանան՝ նյութը լիարժեք հասկանալու համար
- Այն կարող է օգնել բացատրել բարդ պատմությունները (անիմացիա):

Անիմացիայի օրինակ, որը դյուրին է դարձնում բարդ պատմության ընկալումը՝

23 Aumont J (1997) *The Image* (London: British Film Institute):
24 Moss R (1983) *Video: The Educational Challenge* (London: Croom Helm Ltd):
25 Dale E (1962) *Audio-Visual Methods in Teaching* (New York: Holt, Rihehars and Winston):

## ՊԱՏՐԱՍՏ ՎԱՂՎԱՆ

## ՆՈՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*[Նիդեռլանդների դատավորների վերապատրաստման ինստիտուտի կողմից մշակված անիմացիա, որը ներկայացնում է ինստիտուտի ռազմավարական նպատակները: Մոտ 3 րոպե տևողությամբ մուլտիպլիկացիոն ֆիլմ և կադրից դուրս խոսք՝ անգլերեն լեզվով]*

Տեսանյութի և պատկերների օգտագործման ազդեցությունը պատկերացնելու համար պարզապես ծանոթացեք հաջորդ բաժնի էջ 118-ում ներկայացված գրաֆիկին (Dale): Դեյլի՝ փորձառության կոնը ցույց է տալիս, որ պատկերի և ձայնի համատեղումը հանգեցնում է ուսումնական խնդրի ավելի արդյունավետ իրականացմանը, քան տեքստի կամ գրքի ընթերցումը: (*Dale's Cone of Experience (Dale, 1969*), սա նաև ներկայացված է 1-ին բաժնում):

Ինչ վերաբերում է ՄԻԵԿ-ին, ապա հաճախ կարելի է լսել, որ արդարադատության ոլորտի մասնագետներն անդամ պետություններում այնքան էլ պատրաստակամ չեն ՄԻԵԿ կիրառելուն, քանի որ նրանք դժվարություններ ունեն առաջին հերթին իրենց ներպետական օրենսդրությունը հասկանալու և կիրառելու առումով: Տեսանյութը հրաշալի գործիք է այս խոչընդոտի հաղթահարման համար՝ հուզական մեծ գրավչության շնորհիվ: Այն կարող է խթանել ուսանողներին և ուսուցման համատեքստը, ապա և կյանքի կոչել ՄԻԵԿ-ը: Օրինակ՝ դիտեք «Եվրոպայի խիղճը» ֆիլմը, որը մշակել և տարածել է Եվրոպայի խորհուրդը՝ http://youtu.be/lJdoe02cY0U:

> «Եվրոպայի խիղճը» ֆիլմը նախատեսված է լայն հասարակության համար: Այն ներկայացնում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, դրա գործառույթները և աշխատանքային գործելակերպը: Այս վավերագրական ֆիլմը տևում է մոտ 15 րոպե, ուստի կարելի է այն դիտել ուսումնական ծրագրի շրջանակում, օրինակ՝ քաղաքացիական իրավունքի դասընթացի: Կամ այն կարող են դիտել բոլոր նրանք, ովքեր ցանկություն ունեն ավելին իմանալ Դատարանի մասին, որը վերահսկում է Եվրոպայում մարդու իրավունքների չափորոշիչներին համապատասխանության ապահովումը վերջին 50 տարիների ընթացքում: Ֆիլմը, մասնավորապես, ներկայացնում է Դատարանի քննած գործերի կոնկրետ օրինակներ և անդրադառնում Դատարանի ապագա հեռանկարներին և ի հայտ եկած մարտահրավերներին:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

Գիտակցելով տեսանյութի կրթական ներուժը՝ զարմանալի չէ, որ այսօր կրթական շատ կազմակերպություններ մուլտիմեդիա նյութերի մշակման ծառայություններ են մատուցում կամ նույնիսկ ստուդիա են ստեղծում՝ մեդիայի վրա հիմնված ուսուցմանը և դասավանդմանն աջակցելու նպատակով: Սակայն անհրաժեշտ է տեղյակ լինել այն կազմակերպական մարտահրավերներին, որոնք ի հայտ են գալիս տեսանյութերի՝ որպես նորարարական արտադրանքի մշակման ոլորտում: Ուսուցիչները և դասընթաց մշակողները/ղեկավարողները նոր հմտությունների կարիք ունեն՝ մեդիան և անհրաժեշտ սարքավորումները օգտագործելու համար: Բացի այդ, առկա են խնդիրներ մեդիա բովանդակությունը դասընթացում մանկավարժական տեսանկյունից գրագետ օգտագործելու հետ կապված: Եվ վերջապես, անհրաժեշտ է տեղյակ լինել այն բարդություններին, որոնք ծագում են կազմակերպության կողմից տեսանյութեր արտադրելու, պահպանելու, տարածելու և տրամադրելու ժամանակ հեղինակային իրավունքների և տեխնիկական պայմանների հետ կապված: Այս թեմայի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն կտրամադրվի ստորև՝ սույն գլխում:

**Մանկավարժական հիմք**

Երեք «I»-երի շրջանակը[26] դասավանդողներին և դասընթաց մշակողներին տրամադրում է օգտակար մեթոդաբանություն և գործնական տեղեկատվություն տեսանյութեր պարունակող ուսումնական վարժությունների նախագծման վերաբերյալ:

Ֆիլմը և տեսանյութը հաճախ են կապակցվում դասական ինստրուկցիոն կամ փոխանցման մանկավարժական մոտեցման հետ: Դասավանդողը վերահսկում է և ընտրում ուսուցման ռեսուրսները, ինչպես նաև ժամանակը և վայրը:

Այդուհանդերձ, կոնստրուկտիվիստական մոտեցման համաձայն՝ մարդիկ կառուցում են իրենց սեփական աշխարհընկալումը՝ ստեղծելով իրենց սեփական անհատական մտավոր մոդելները փորձի միջոցով: Հետևաբար, կոնստրուկտիվիզմի հիմնական տարրն ինտերակտիվությունն է, որի միջոցով ուսումնական ռեսուրսների և փորձի վերահսկողությունը, ընտրությունը և մատչելիությունը սովորողին հնարավորություն են ընձեռում ակտիվ կերպով կառուցել իր սեփական գիտելիքը:

Ներկայումս դասավանդողների համար մանկավարժական խնդիրները դուրս են եկել ուսուցման/փոխանցման մոդելի կամ նույնիսկ սովորաբար լայնորեն ընդունվող կոնստրուկտիվիստական մոտեցման սահմաններից՝ տեղավորվելով համագործակցային, տեղայնացված և երկխոսության մոդելների մեջ:

Թվային տեսանյութն այլ վեբ գործիքների հետ հեշտությամբ զուգորդելու հնարավորությունը թույլ է տալիս տեսանյութի՝ որպես զուտ ներկայացնելու և ուսուցանելու (մեկուսացված) գործիքի անցումը դեպի տեսանյութի՝ որպես ուսանողի գործունեության, համագործակցության և հաղորդակցության վրա կենտրոնացող գործիքի: Մանկավարժական այս անցումներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում Երեք «I»-երի շրջանակի միջոցով:

26 Young C, Asensio M (2002) *Looking Through Three I's: the pedagogic use of streaming video*, Proceedings of Networked Learning, Sheffield:

| ԱՐԺԵՔ | ՏԵԽՆՈԼՈԳԻԱ | ՎԵՐԱՀՍԿՈ-ՂՈՒԹՅՈՒՆ | ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ |
|---|---|---|---|
| Պատկեր | Ֆիլմ, հեռուստատեսություն, տեսաժապավեն | Դասավանդող | Փոխանցման մոդել |
| Պատկեր + ինտերակտիվություն | Տեսասկավառակ, սեղանի տեսահամակարգ, մուլտիմեդիա, CD-ROM | Ուսանող | Կոնստրուկտիվիստական մոդել |
| Պատկեր + ինտերակտիվություն + | Վեբ ինտեգրում և հեռարձակվող մեդիա | Բաշխված | Համագործակցություն, համատեքստավորում, համայնք |

Երեք «I»-երի շրջանակը և դրա հիմքում ընկած մանկավարժական հեռանկարները[27]

Տեսանյութի օգտագործումը վերապատրաստման մեջ

Այս բաժնի նպատակն է ընդգծել կրթության մեջ տեսանյութի օգտագործման ձևերը՝ անդրադառնալով դրանց մանկավարժական արժեքին:

## «Խոսող գլուխ» դասախոսություններ և գործնական պարապմունքներ

Մի շարք պրակտիկ մասնագետների համար ինքնաստեղծ կրթական տեսանյութի մեկնարկային կետը «խոսող գլուխ» ձևաչափն է, այսինքն՝ դասախոսության, գործնական կամ լաբորատոր պարապմունքի տեսագրությունը, որտեղ դասավանդողը խոշոր պլանով ուղղակիորեն խոսում է կենդանի լսարանի կամ տեսախցիկի առջև: Այդուհանդերձ, արդյունքների փոխարկումը թվային տեսաձևաչափի կարող է հիասթափեցնող լինել սովորողի ներգրավվման տեսանկյունից: Պատկերի կազմությունը հաճախ խնդրահարույց է, քանի որ կենդանի միջոցառումների ընթացքում դասավանդողները, սովորաբար, շարժվում են, ինչը կարող է շեղել ուշադրությունը, և պատկերի ու ձայնի որակը կարող է օպտիմալից ցածր լինել, եթե միջոցառումն ուղիղ ռեժիմով է նկարահանվել: Եթե դասավանդողը լավ «կատարող» է, ապա նրա խանդավառությունը և մոտեցումը կարող են կենդանի շունչ հաղորդել թեմային և գրավել ուսանողի ուշադրությունը:

27 Վերցված է *Կրթության մեջ թվային վիդեո- և աուդիոնյութերի կիրառման մասին ձեռնարկից* (The VideoAktiv նախագիծ) https://moodle.technion.ac.il/pluginfile.php/344724/mod_resource/content/0/Ulpan/VideoAktiv_Handbook_fin.pdf: Վերջին մուտքը՝ 2016թ. մայիսի 24-ին:

ՆՇՈՒՄՆԵՐ

## Վավերական տեսանյութերի արխիվի օգտագործում

Դասավանդողների համար կրթական տեսանյութի օգտագործման երկրորդ եղանակն առկա տեսաձայնային արխիվային ռեսուրսների կիրառումն է: Վերջին տարիներին տեղի է ունեցել թվային արխիվների միջազգային տարածում՝ կրթական լսարանին առաջարկելով հեղինակային իրավունքով չպաշտպանված թվային մեդիա ռեսուրսներ: Մեծաթիվ ազգային պորտալներում տեղ գտած նյութերը կարելի է որոնել, ընտրել, օգտագործել, խմբագրել և ներդնել, օրինակ՝ վիրտուալ ուսուցման տիրույթում:

## Ինչպես գործնականում կիրառել տեսանյութերը

Տեսանյութն օգտագործվում է ինչ-որ կոնկրետ բան կատարելու գործընթացը, ընթացակարգը և տարբեր փուլերը ցույց տալու համար: Այն նաև օգտագործվում է որպես փորձագետներին և սկսնակներին պրակտիկայում ներկայացնելու մեթոդ: Ուսուցողական տեսանյութերը վաղուց ի վեր կիրառվում են կրթության ոլորտում, սակայն թվային ձևաչափի հիմնական առավելությունն այն է, որ այլևս տեքստի ամբողջական գծային կառուցման հարկ չկա, և օգտատերերը կարող են համապատասխան ցանկից ընտրություն կատարել՝ ըստ մակարդակի և անհրաժեշտության: Լավագույն օրինակները համատեղում են անիմացիոն կադրեր, «խոսող գլուխներ» և արխիվային նյութեր (ինչպես՝ իրավիճակային խնդիրներ)՝ սովորողի համար գրավիչ, հետաքրքիր և հարաբերականորեն ինտերակտիվ փորձառություն խթանելու նպատակով: Թերությունն այն է, որ առցանց ուսուցման առանձին փաթեթների ստեղծումը խրթին է, ժամանակատար և կարող է ծախսատար լինել:

## «Փորձագետի հետ հարցազրույց կամ փորձագետի ներկայացում

Տեխնիկական տեսանկյունից՝ հրավիրված դասախոսի ներկայությունը լսարանում կարող է նման լինել «խոսող գլխի» ձայնագրմանը, սակայն մանկավարժական նպատակը, սովորաբար, գործող մասնագետի կամ փորձագետի խոր գիտելիքների և տեղեկացվածության միջոցով ուսուցումը համատեքստավորելն է կամ այլընտրանքային կարծիք ներկայացնելը: Նման միջոցառումներն օգնում են խթանել հետագա քննարկումները, որտեղ տեսանյութի բովանդակությունը սովորողների համար դառնում է վկայակոչման աղբյուր:

## Տեսաբլոգներ՝ «մտածե՛ք բարձրաձայն»

Լայն տարածում են գտել կրթական բլոգերը, որտեղ սուբյեկտը (սովորողը կամ դասավանդողը) տեսագրում է իր մտքերը և գործողությունները: Բլոգերի հաջողությունը կախված է ոչ ֆորմալ անհատական ռեֆլեքսիայից, իսկ, ինչպես տեսանք վերևում, տեսաձայնային նյութերը կարող են փոխանցել տոնայնություն, հումոր և ինքնաբերականություն: Սուբյեկտն ինքնուրույն կարող է ստեղծել տեսաօրագիր, կամ նրան հուշելու գործառույթը կարող է իրականացնել տեսախցիկից այն կողմ գտնվող որևէ մեկը:

## Իրավիճակային դեպքերի ուսումնասիրության/մոդելավորման և դերախաղերի տեսանյութեր

Այստեղ նպատակը լաբորատոր փորձերի մոդելավորումն է, երբ անվտանգությունը կարող է հարցականի տակ լինել, կամ դերախաղի անցկացումը՝ իրավիճակային դեպքերի ներկայացման միջոցով, որտեղ ուսանողները կարող են լսել տարբեր արձագանքներ և ունենալ տարբեր վարքային դրսևորումներ: Այս վարքագծերի վերլուծության միջոցով ուսանողները կարող են ավելի խոր պատկերացում ձևավորել դրված խնդիրների վերաբերյալ: Այս դեպքում տեսանյութն ապահովում է «իրական կյանքի» համատեքստ և/կամ հուզական ազդեցություն:

## Տեսանյութեր իրական իրադարձությունների կամ իրավիճակների վերաբերյալ

Այստեղ նպատակն այնպիսի գործողության նկարահանումն է, որը ֆիզիկապես հնարավոր չէ ներկայացնել լսարանում: Սա վերաբերում է դրսում կատարվող ցանկացած իրադարձության կամ իրավիճակի, որպես կանոն՝ դաշտային ուղևորություններին: Նմանապես, տեսանյութի միջոցով հասանելի են դառնում այն միջոցառումները, որոնցում ուսանողների մեծ խմբերի մասնակցությունը անհնարին է, օրինակ՝ կլինիկական և արդյունաբերական ոլորտներում: Այս դեպքում կարող են դիտարկվել, մեկնաբանվել և քննարկվել իրական կյանքում տեղի ունեցող դեպքեր: Դրսի փորձառությունների հասանելիությունը հնարավորություն է ընձեռում համատեքստավորման և գիտելիքի փոխանցման համար:

ՆՇՈՒՄՆԵՐ

## Ներկայացման/կատարողական հմտություններ և հետադարձ կապ

Ռեֆլեքսիվ ինքնատեսագրումը կիրառվել է տարիներ շարունակ՝ խթանելու սովորողների գործնական հմտությունները: Նպատակն է տեսագրել, վերանայել և բարելավել անհատների ու խմբերի կատարողականը՝ ռեֆլեքսիայի և քննարկումների միջոցով: Այս մոտեցումը նպաստում է ինքնուրույն ուսուցմանը, մեծացնում է մոտիվացիան և դրդում է սովորողներին գտնել իրենց սեփական լուծումները՝ բարձրացնելով նրանց ինքնավստահությունը: Թեկուզև ուղղորդվելով՝ սովորողն այս գործընթացի լիարժեք մասնակից է: Այս տեսագրությունները կարող են հետագայում ներառվել ուսանողների էլեկտրոնային պորտֆոլիոներում:

### Սահմանե՛ք ձեր դիդակտիկ մոտեցումը

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են առաջարկություններ և օրինակներ, որոնք կօգնեն ձեզ սահմանել ձեր դիդակտիկ մոտեցումը:

| ԻՆՉ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՆԵԼ | ՄԵԹՈԴ/ ՄԻՋՈՑ | ՆԿԱՐԱԳԻՐ |
|---|---|---|
| **Ցույց տալ որևէ գործողություն, իրավիճակ, որը հնարավոր չէ ֆիզիկապես բերել լսարան** | Ռեալականություն | Դրսում տեղի ունեցող իրադարձություն, ՄԻԵԴ լսումներ, պատմական խնդիրներ ի ցույց դնող տեսարան և այլն: Ձեր ուսանողներն այս տեսանյութերը կարող են դիտարկել, վերլուծել, մեկնաբանել և քննարկել:<br>**ՕՐԻՆԱԿ**<br>Տեսանյութ ՄԻԵԴ-ի մասին՝ «Եվրոպայի խիղճը»: Փաստագրական ֆիլմ՝ կադրից դուրս խոսքով և հուզական մեծ գրավչությամբ (մոտ 15 րոպե տևողությամբ): Անդրադառնում է ՄԻԵԿ-ի պատմությանն ու առաքելությանը:<br>http://youtu.be/IJdoe02cY0U |
| **Ցույց տալ որևէ գործողություն, որը հնարավոր չէ ֆիզիկապես դիտարկել** | Մոդելավորում | Բեմադրվում է իրավիճակ, որը նման է փաստացի իրադարձությանը: Մոդելավորման, և ոչ թե իրական իրադարձության տեսագրման եղանակի ընտրությունը պայմանավորված է հետևյալ նկատառումներով՝ 1. Անվտանգություն, 2. Գործողությունը տեղի է ունեցել անցյալում, 3. Հազվադեպ հանդիպող իրավիճակներ (դժվար է կամ ծախսատար իրական կյանքում տեսանկարահանելը), 4. Ցանկանում եք ցույց տալ այլընտրանքային տարբերակներ՝ լավ և վատ օրինակներ:<br>**ՕՐԻՆԱԿ**<br>Վարույթի/դատական նիստի տեսագրում, ուսանողներին այն ցուցադրում, թույլ տվեք նրանց վերլուծել նախադեպը, ամփոփել այն իրենց սեփական վճռով, վերանայել վճիռը և մտորել որոշման շուրջ:<br>https://www.youtube.com/watch?v=HwB8PtH6XKw |

| ԻՆՉ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՆԵԼ | ՄԵԹՈԴ/ ՄԻՋՈՑ | ՆԿԱՐԱԳԻՐ |
|---|---|---|
| **Ներկայացնել կոնկրետ ընթացակարգ** | Ինստրուկցիոն | Տեսանյութը պատրաստված է ըստ ժամանակագրության և ցույց է տալիս գործընթացի տարբեր փուլերը:<br>**ՕՐԻՆԱԿՆԵՐ**<br>Տեսանյութ՝ «Դատարան դիմում - բողոք ներկայացնելու ճիշտ ձևը»:<br>Անիմացիա՝ գրաֆիկական պատկերներով և կադրից դուրս խոսքով (մոտ 4 րոպե տևողությամբ): Անդրադառնում է ընթացակարգին, ունի ուսուցողական նպատակ:<br>http://youtu.be/mA_iGhvxYFM<br>Տեսանյութ ՄԻԵԴ՝ «Ընդունելիության պայմանները»:<br>Անիմացիա՝ գրաֆիկական պատկերներով և կադրից դուրս խոսքով (մոտ 3.40 րոպե տևողությամբ): Անդրադառնում է ընթացակարգին, ունի ուսուցողական նպատակ:<br>http://youtu.be/mcbDDhs5ZVA?list=PLT-6qb4oU5fhzKQdkQk6O7UPNhSuAWsB9<br><br>Տեսանյութ՝ HUDOC տվյալների բազայում դատարանի նախադեպային իրավունքի որոնում: Համակարգչի էկրանին տեղի ունեցող գործողությունների ձայնագրում կադրից դուրս խոսքով, ունի ուսուցողական նպատակ (մոտ 3 րոպե տևողությամբ):<br>https://www.youtube.com/watch?v=reO12mvvlYE<br><br>Տեսանյութ՝ դասախոսի մասնակցությամբ և կանաչ էկրանով (ստուդիա), որը ցույց է տալիս տեղանքում արված կադրեր, բնապահպանական իրավունքի համակարգի գրաֆիկական պատկերում (հոլանդերենով, մոտ 2 րոպե տևողությամբ):<br>http://youtu.be/GQcUELyWV_o |
| **Օրինակներ տրամադրել թեմայի վերաբերյալ** | Պատկերում անիմացիաներ | Կոնկրետ իրավիճակներ, որոնք ներկայացնում են ուսումնական նյութը, սովորողներին օգնում են ավելի հեշտ այն հասկանալ և մտապահել:<br>Տեսանյութ ՄԻԵԿ-ի վերաբերյալ, որում ներկայացված են կոնվենցիայի հիմնական իրավունքները և ազատությունները:<br>**ՕՐԻՆԱԿՆԵՐ**<br>• Անիմացիաներ՝ պատկերներով և ձայնով (երաժշտություն)՝ առանց կադրից դուրս խոսքի: Անդրադառնում է կոնվենցիայի հոդվածների նշանակությանը՝ տրամադրելով տեղեկատվություն և խթանելով մոտիվացիան (մոտ 3 րոպե տևողությամբ): http://youtu.be/MOcmUQTgjCw<br>• Անիմացիաներ՝ պատկերներով և կադրից դուրս ձայնով (ՄԹ): Վերնագիր՝ «Ինչպես է դա աշխատում՝ ՄԻԵԿ-ը ՄԹ ինստիտուտում» (մոտ 7 րոպե տևողությամբ): http://youtu.be/N-y75YQXQAo |

ՆՇՈՒՄՆԵՐ

| ԻՆՉ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՆԵԼ | ՄԵԹՈԴ/ ՄԻՋՈՑ | ՆԿԱՐԱԳԻՐ |
|---|---|---|
| **Տեսագրել դասախոսություն կամ ներկայացում (վեբինար կամ վեբ հեռարձակում)** | «Խոսող գլուխ» | Դասավանդողը/ներկայացնողը խոսում է տեսախցիկի առջև: Միաժամանակ, նրա խոսքն ուղղված է նաև լսարանին: Ժապավենը նայելիս տպավորություն է ստեղծվում, որ բանախոսը դիմում է այն դիտողին:<br>http://era-comm.eu/stream/Rostant_114DV25/index.html<br>http://media.ssr.nl/Mediasite/Play/b0a4f985f16c4cc19096b4ef4e965fd71d |
| **Տեսագրել որևէ մեկի մտորումները/ արձագանքները/ որոնք արտահայտում են նրանց մտորումները** | Մտածել բարձրաձայն Տեսաօրագիր /հարցազրույց | Տեսաօրագիր՝ սուբյեկտը խոսում է տեսախցիկի առջև միայնակ: Հարցազրույց՝ մեկ այլ անձի կողմից խթանված մտորումներ:<br>**ՕՐԻՆԱԿՆԵՐ**<br>• Հանցագործության զոհի հետ հարցազրույցի տեսագրում, որը խոսում է իր կյանքի վրա հանցագործության թողած հետևանքների և հանցագործի նկատմամբ իր զգացումների մասին: Նպատակն է դատավորների շրջանում բարձրացնել իրազեկությունը հանցագործության անհատական ազդեցության վերաբերյալ:<br>• Հարցազրույց ՄԻԵԴ-ի հոլանդացի դատավոր Յոս Սիլվիսի (Jos Silvis) հետ, օգտագործվում է նոր նշանակված դատավորների վերապատրաստման ժամանակ: Վերնագիր՝ Եվրոպական իրավունք, ներածություն կադրից դուրս խոսքով, տեղում արված կադրեր, կանաչ էկրան, որի վրա կան ֆոնային պատկերներ (մոտ 25 րոպե տևողությամբ): https://media.ssr.nl/Mediasite/ Play/03b6d5c9b11c41a2a8b906114542b9d91d |
| **Տեսագրել միջոցառում՝ այն ավելի ուշ դիտարկելու և վերլուծելու համար** | Ճանճը պատին | Տեսախցիկը ֆիքսված է մեկ կետում և գրանցում է տեղի ունեցողը: Դուք կարող եք կիրառել այս մեթոդը պատրաստի սցենար չունենալու դեպքում: Սուբյեկտը հաճախ չի փոխում իր դիրքը և տարբեր կողմերից դիտանկյան փոփոխման կարիք չկա (մանրամասն վերանայում): Այնուհետ դուք կարող եք տեսագրությունը հետ պտտել և քննարկել:<br>**ՕՐԻՆԱԿ**<br>Սա հղում է մի կայքէջի, որտեղ կան ՄԻԵԴ-ի դատալսումների բոլոր վեբ հեռարձակումները: Այս կայքում դուք կարող եք դիտել դատալսումների վեբ հեռարձակումները՝ տեսակավորված ըստ ամսաթվի, երկրի, այդ թվում՝ մի քանի լեզուներով, վճռի և մամուլի հաղորդագրության:<br>http://youtu.be/MOcmUQTgjCw |

| ԻՆՉ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԱՆԵԼ | ՄԵԹՈԴ/ ՄԻՋՈՑ | ՆԿԱՐԱԳԻՐ |
|---|---|---|
| **Տեսագրել միջոցառում՝ այն արխիվացնելու և ավելի ուշ դրան անդրադառնալու համար** | Արխիվ | Կախված է ձեր հնարավորություններից, այն որակից, որ ցանկանում եք ապահովել, և ձեր սեմինարի/աշխատաժողովի/համաժողովի բարդությունից:<br>**ՕՐԻՆԱԿ**<br>Սա հղում է մի կայքէջի, որտեղ կան ՄԻԵԴ-ի դատալսումների բոլոր վեբ հեռարձակումները: Այս կայքում դուք կարող եք դիտել դատալսումների վեբ հեռարձակումները՝ տեսակավորված ըստ ամսաթվի, երկրի, այդ թվում՝ մի քանի լեզուներով, վճռի և մամուլի հաղորդագրության:<br>http://www.echr.coe.int/Pages/home.aspx?p=hearings&w=4604314_07012015&language=en |
| **Ուսանողներին հնարավորություն տալ՝ դիտարկելու սեփական վարքագիծը** | Դերախաղ | Այս դեպքում տեսանյութն ուսանողների համար ծառայում է որպես հայելի՝ մասնագիտական իրավիճակում իրենց կողքից տեսնելու համար: Աշխատանքային միջավայրի նմանակման միջոցով ուսանողները փորձում են տարբեր դերեր և վարքագծեր: Տեսագրեք և դիտեք սկզբից: Այժմ ուսուցանվողները կարող են վերլուծել և քննարկել իրենց համակուրսեցիների հետ, թե ինչը կարելի է բարելավել: Հնարավորության դեպքում սա կարելի է նաև տեսագրել իրական կյանքի իրավիճակում:<br>**ՕՐԻՆԱԿ**<br>Դատախաղի տեսագրում: |

*Վերոնշյալ սխեմայում բերված որոշ օրինակներ հասանելի են ազատ մուտք ունեցող տեսանյութերի միջոցով: Բոլոր տեսանյութերը հեռարձակվում են YouTube սերվերից, արտադրված և հրապարակված են ՄԻԵԿ-ի մամուլի բաժնի կողմից և նախատեսված են նաև կրթական նպատակների համար:

### Տեսանյութն արդյունավետ դարձրեք

Եթե դուք որոշել եք տեսանյութ օգտագործել, ապա ցանկանում եք, որ այն կրթական տեսանկյունից լինի արդյունավետ: Լավ տեսանյութը պետք է համապատասխանի մանկավարժական որոշ պահանջների: Ուսանողների մոտիվացիան և նրանց վրա ուսումնական նյութի ազդեցությունը պայմանավորված է թեմայի ընտրությամբ և համապատասխան նյութ գտնելուց կամ մշակելուց: Տեսանյութը հզոր միջոց է, եթե նյութը համապատասխանում է ուսանողների ունեցած գիտելիքների մակարդակին և եթե այն ուժեղ հույզեր է առաջացնում ներկայացվող թեմայի նկատմամբ:

Դուք նաև պետք է տեղյակ լինեք տեսանյութերի տարածման մեթոդներին: Ինչ միջավայրում է ցուցադրվելու նյութը: Արդյոք դա լինելու է լսարանում ավանդական դասախոսության ընթացքում, թե՞ ուսանողներն այն դիտելու են տան պայմաններում՝ իրենց համակարգչով: Արդյոք նրանք դա դիտելու են խմբակային, թե՞ անհատապես: Արդյոք դիտումը կապվա՞ծ է որոշակի ժամանակահատվածի կամ տարածքի հետ, թե՞ նրանք կկարողանան դիտել այն ցանկացած պահի և ցանկացած վայրում: Արդյոք այն ցո՞ւյց է տրվելու մեծ էկրանի վրա, թե՞ համակարգչի վրա: Տեսանյութի տևողությունը որոշելիս պետք է հաշվի առնել, թե որտեղ է այն ցուցադրվելու:

ՆՇՈՒՄՆԵՐ

### Առկա տեսանյութի օգտագործում կամ սեփական արտադրություն

Վերոնշյալ դիդակտիկ մոտեցումից կախված՝ տեսանյութ օգտագործելու ցանկության դեպքում ունեք տարբերակներ: Դուք կարող եք որոշել օգտագործել առկա տեսանյութերը, մշակել ձեր սեփական վեբինարը և ստեղծել ձեր սեփական տեսանյութը: Գումար խնայելու նպատակով խորհուրդ է տրվում օգտագործման համար փնտրել պատրաստի նյութեր նախքան ձեր սեփականը պատրաստելը:

Այնուամենայնիվ, թե՛ պատրաստի նյութեր փնտրելը և թե՛ սեփականը ստեղծելն ունեն իրենց թերությունները և առավելությունները: Ձեր սեփական բովանդակությունը ստեղծելու դեպքում նյութը լավագույնս կծառայի ձեր սահմանած դասավանդման և ուսումնական նպատակներին: Դուք կարող եք ստեղծել հենց այն բովանդակությունը, որը, ձեր կարծիքով, անհրաժեշտ է: Սակայն դա կարող է պահանջել շատ ջանքեր և տեխնիկական հմտություններ, և ոչ բոլոր դասընթացավարները կամ դասավանդողները կարող են լավ տեսանյութ պատրաստել: Առկա նյութերի օգտագործումն ունի մեծ առավելություն այն իմաստով, որ ստեղծագործական ամբողջ աշխատանքն արդեն արված է (և ավելին, կատարված է մասնագետների կողմից, ովքեր գիտեն, թե ինչպես պատրաստել լավ տեսանյութ): Այդուհանդերձ, հնարավոր է, որ դուք ստիպված լինեք ընտրել և գուցե խմբագրել այն նյութը, որը վերաբերում է ձեր կոնկրետ դասընթացին: Ստորև ներկայացված սխեմայում նշված են առավելություններն ու թերությունները, որոնք կօգնեն ձեզ կատարել ճիշտ ընտրություն:

| ՄԱՏՉԵԼԻ Է ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ | «ԽՈՍՈՂ ԳԼՈՒԽ» ՁԵՎԱՉԱՓԻ ՍՏԵՂԾՈՒՄ | ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ (ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԴՐՍՈՒՄ) |
|---|---|---|
| Youtube/Vimeo | Լսարանի դասախոսության ձայնագրում | Դերախաղի ձայնագրում |
| Coursera | Վեբինար կամ վեբ հեռարձակում | Դատալսումների ձայնագրում |
| ՄԻԵԿ-ի տեսանյութեր մամուլի համար | Վեբ հեռարձակում | Անիմացիայի ստեղծում |
| Հեռուստատեսություն | | Փաստավավերագրական ոճի տեսանյութ |
| Վավերագրական ֆիլմեր | | Հարցազրույցի ձայնագրում |
| Տեսանյութերի արխիվներ | | |
| **ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| Դյուրամատչելիություն | Արտադրական փոքր կարիքներ | Մատուցման անվտանգություն |
| Ցածր բյուջե | Հեշտ կիրառելի ծրագրային ապահովում | Որակի ապահովում |
| | Սեփական հոնորարի սահմանում | Բարձր վերահսկողություն |
| | | Սեփական հոնորարի սահմանում |
| **ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** |
| Երբեմն վստահելիության պակաս աղբյուրի նկատմամբ | Ծրագրային (խմբագրող) ապահովման գնում | Արտադրական մեծ ծախսեր (սարքավորումներ և ծրագրային ապահովում) |

| | | |
|---|---|---|
| Անցանկալի գովազդ | Տեսախցիկով և ձայնի ապահովման տեխնիկայով հագեցված ստուդիայի անհրաժեշտություն | Պահանջում է մուլտիմեդիա/խմբագրական հմտություններ |
| URL-ի փոփոխության վտանգ (երբ այն ներդրված է) | Մուլտիմեդիա արտադրական պահանջներ | Պահուստավորման և փաստաթղթավորման կազմակերպում |
| Հեղինակային իրավունքի հետ կապված խնդիրներ | Մուլտիմեդիա հմտությունների անհրաժեշտություն | Ժամանակատար, ծախսատար |
| ՍԵՐՎԵՐ | ՍԵՐՎԵՐ | ՍԵՐՎԵՐ |
| արտաքին | արտաքին | արտաքին |
| | ներքին | ներքին |

€ → €

**Հեղինակային իրավունքներ**

Առկա նյութերի օգտագործման հետ կապված շատ կարևոր և հաճախ անտեսվող խնդիր է հեղինակային իրավունքի հարցը: Ոչ բոլոր տեսանյութերն է կարելի հրապարակավ (նույնիսկ լսարանում) օգտագործել՝ առանց դրանց նկատմամբ հեղինակային իրավունք ունեցողների թույլտվության: Թեև ներպետական օրենսդրությունը հաճախ բարդ է հասկանալ, միջազգային հեղինակային իրավունքի ոգին, ըստ էության, նույնն է ամենուր: Յուրաքանչյուր գեղարվեստական գործի, գրքի, լուսանկարի, նկարի, տեսագրության, ձայնագրության կամ այլնի արտադրություն ինքնըստինքյան համարվում է հեղինակային իրավունքով պաշտպանված՝ իր իսկ ստեղծման փաստով:

Այնուամենայնիվ, Creative Commons (CC) կազմակերպությունը տրամադրում է անվճար գործիքներ, որոնք թույլ են տալիս հեղինակներին և դասավանդողներին, ըստ ցանկության, հեշտությամբ նշում կատարել իրենց ստեղծած աշխատանքի նկատմամբ սահմանափակումների վերացման վերաբերյալ: Creative Commons կազմակերպությունն ընդգրկում է ինտերնետային կայքեր, գիտական հրատարակություններ, երաժշտություն, տեսանյութեր, ֆիլմեր, դասընթացներ և այլն: Դուք կարող եք ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ CC-ի ինտերնետային կայքից՝ https://creativecommons.org/:

Եթե ցանկանում եք օգտագործել առկա նյութեր, որոնք ստեղծվել են մեկ ուրիշի կողմից, ապա ձեզ անհրաժեշտ է (գրավոր) թույլտվություն, եթե այդ նյութի վրա հստակ այլ բան նշված չէ:

Սեփական տեսանյութ ստեղծելիս հեղինակային իրավունքը կրկին խնդրահարույց է: Մտածեք տեսանյութում հայտնվող մարդկանց իրավունքների մասին, ինչպես օրինակ՝ դասընթացավարի (ներկայացնողի) կամ ուսանողների: Եվ ո՞ւմ են պատկանում իրավունքները, երբ նյութն արդեն մշակված է: Արդյոք դուք ունե՞ք իրավունքներ՝ որպես կրթական կազմակերպություն, կամ դասընթացավարը նույնպե՞ս իրավունքներ ունի: Հնարավոր է, որ որոշ դասախոսներ ցանկանան պայմանագիր կնքել, որի համաձայն՝ կվճարվեն տեսանյութի յուրաքանչյուր դիտման համար: Խորհուրդ է տրվում նախքան տեսանյութի հրապարակումն ուսումնասիրել, սահմանել և հաղորդել հեղինակային իրավունքների հետ կապված խնդիրները գործընթացում ներգրավված մարդկանց:

ՆՇՈՒՄՆԵՐ

**Վեբ դասախոսություններ**

Ներկայացման համար նախատեսված համակարգչային ծրագրերի, օրինակ՝ PowerPoint-ի լայն օգտագործման միջոցով դասախոսները հնարավորություն ունեն՝ ստեղծելու պարզ մուլտիմեդիա արտադրանք՝ ձայնով, պատկերներով և տեսահոլովակներով: Վերապատրաստմամբ զբաղվող մի շարք հաստատությունների համար սա այն եղանակն է, որով նրանք մատչելի են դարձնում լսարանային դասախոսությունները՝ մուլտիմեդիայի միջոցով:

Սակայն այսօր բուռն զարգացում է ապրում նաև վեբինարների արտադրության ոլորտը: Վեբինարը **համացանցի միջոցով անցկացվող սեմինարի** կարճ անվանումն է: Այն ցուցադրություն է, դասախոսություն, աշխատաժողով կամ սեմինար, որն իրականացվում է առցանց համաժողովների համար նախատեսված հատուկ ծրագրի միջոցով: Վեբինարի հիմնական հատկանիշը դրա ինտերակտիվ տարրերն են՝ տեղեկություններ տալու, ստանալու և քննարկելու հնարավորությունը: Վեբինարը չի կարելի շփոթել **վեբ հեռարձակման** հետ, որտեղ տվյալների փոխանցումը միակողմանի է տեղի ունենում և չի ապահովում ներկայացնողի և լսարանի միջև (կենդանի) հաղորդակցություն:

Վեբ հեռարձակման էկրանապատկեր [գործիք՝ Mediasite][28]

Թվային տեխնոլոգիան հարաբերականորեն դյուրին է դարձնում վեբ դասախոսությունների (կամ առցանց/թվային ցուցադրությունների) տիրույթում կողմնորոշումը և որոնումը: Տեսագրությունը, սովորաբար, բաժանվում է ըստ թեմաների՝ կարճ իրար հաջորդող մասերի (որոնք նաև կոչվում են «հոլովակներ»), իսկ սլայդային ներկայացումները սինխրոնացվում են տեսագրության և ձայնագրության հետ:

Վեբինարների և վեբ հեռարձակումների առավելությունն այն է, որ դրանք կարելի է օգտագործել ուսանողների մեծ խմբերին հասանելի լինելու համար՝ անկախ նրանց (հեռու) գտնվելու վայրից: Դրանք նաև ներառում են դասավանդողի դեմքի արտահայտությունը և ժեստերի լեզուն, ինչը նպաստում է ներգրավվածության մեծացմանը:

28 https://media.ssr.nl/Mediasite/Play/67776117d1cc4ede96edc2efe387eadd1d:

Ստորև ներկայացված աղյուսակում ցույց է տրված հեռարձակվող ներկայացումների մեթոդների տարբերությունները:

| ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ | ՄԱՏՈՒՑՈՒՄ | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| ▸ Ներկայացնել «առանձին» վեբ հեռարձակում<br>▸ Հարստացնել դասախոսությունը կամ լսարանային հանդիպումը ներկայացման միջոցով (շրջված լսարանի հասկացություն) | «Խոսող գլուխ» Հեռարձակում (համացանց) | ▸ Դիտում՝ ըստ պահանջի<br>▸ Անկախ գտնվելու վայրից<br>▸ Ցանկացած պահի և ցանկացած վայրում<br>▸ Ոչ համաժամանակյա մուտք<br>▸ Անհատական օգտագործում<br>▸ Կենդանի փոխազդեցության բացակայություն |
| ▸ Ներկայացնել «կենդանի» վեբինար | «Խոսող գլուխ» Հեռարձակում (համացանց) | ▸ Դիտվում է որոշակի օրվա որոշակի ժամի<br>▸ Անկախ գտնվելու վայրից<br>▸ Համաժամանակյա մուտք<br>▸ Կոլեկտիվ օգտագործում<br>▸ Կենդանի փոխազդեցություն |
| ▸ Ինտեգրել վեբ հեռարձակումը/վեբինարն ուսուցման այլ մեթոդներում | «Խոսող գլուխ» Հեռարձակում Էլեկտրոնային ուսուցում/ մուլտիմեդիա | ▸ Դասախոսությունը տեղադրված է թվային ուսուցման միջավայրում և մեկ (կամ մի քանի) դասընթացների ծրագրերում<br>▸ Դիտվում է ըստ պահանջի<br>▸ Անկախ գտնվելու վայրից<br>▸ Ցանկացած պահի և ցանկացած վայրում կամ որոշակի ժամի<br>▸ Ոչ համաժամանակյա և համաժամանակյա մուտք<br>▸ Անհատական և կոլեկտիվ օգտագործում<br>▸ Կենդանի և ոչ կենդանի ռեժիմով փոխազդեցություն |

**Խորհուրդներ՝ վեբ դասախոսություններ ստեղծելու համար**

Եթե դուք նախատեսում եք վեբ դասախոսություններ մշակել ձեր կազմակերպությունում, ապա ստորև կգտնեք մի քանի ընդհանուր խորհուրդներ, որոնք կարող են օգտակար լինել: Վեբինար կամ վեբ հեռարձակում իրականացնելը կամ ստեղծելը էականորեն տարբերվում է լսարանում նյութը ներկայացնելուց: Դա պարզապես դասընթացավարին տեսագրելը չէ: Դուք պետք է տեղյակ լինեք հետևյալին՝

- Տեխնիկական պայմաններ (բավարար թվային թողունակություն հեռարձակման համար),
- Ճիշտ ծրագրի ընտրություն (ուսումնասիրել տեխնիկական և հաղորդակցական ասպեկտները),
- Ձայնագրումը դյուրին դարձնող սարքավորումներ՝ տեսախցիկ, ձայնագրիչ և այլն (գնել կամ վարձակալել),
- Սովորեցնել դասընթացավարին, թե ինչպես ստեղծել գրավիչ և արդյունավետ առ-

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

ցանց դասախոսություն,

- Վերապատրաստել և նշանակել մոդերատոր (որը կօգնի դասընթացավարին կենդանի ձայնագրության ընթացքում),
- Ապահովել տեխնիկական աջակցություն փորձարկման և (կենդանի ռեժիմով) ձայնագրման ընթացքում (մուտք գործելու հետ կապված խնդիրներ և այլն),
- Համակարգել մարքեթինգային հաղորդակցության ասպեկտները՝ հրավեր, գրանցում և այլն:

### Սահմանե՛ք վեբինարի ձևաչափը

Վեբինարը կարող է կառուցվել ամենատարբեր ձևաչափերով՝ տարբեր նպատակների ծառայելու համար: Ստորև ներկայացված են որոշ հայտնի ձևաչափեր, որոնք դուք կարող եք հաշվի առնել:

| | ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|---|---|
| **Մեկ բանախոս** | Մեկ ներկայացնող խոսում է, ցույց է տալիս և պատասխանում լսարանի հարցերին | Վեբինարի գործիքով համակարգվող և վերապատրաստվող ավելի սակավաթիվ մարդիկ | ▸ Միայնակ ներկայացնողն ավելի մեծ հավանականություն ունի հեղինակություն դառնալու «լսարանի առջև», ինչը լսարանում ոմանց մոտ կարող է առաջացնել դժկամություն՝ դասընթացին մասնակցելու և հարցեր տալու: |
| **Հարցազրույցի ոճ** | Հարցազրուցավարը տալիս է մի շարք նախապես որոշված հարցեր | Ավելի մեծ ներգրավում՝ բազմաթիվ կարծիքներ լսելու արդյունքում: Այն հանգամանքը, որ հարցազրուցավարը հարցեր է տալիս փորձագետ(ներ)ին, հաճախ լսարանին խրախուսում է անել նույնը | ▸ Ավելի շատ մարդկանց է անհրաժեշտ վերապատրաստել և կառավարել<br>▸ Ձայնագրությունը և փաստացի վեբինարը պլանավորելը կարող է ավելի դժվար լինել |
| **Հանձնախմբի կառավարվող քննարկում** | Բազմաթիվ մարդիկ են ներկա նույն պահին, երբ մոդերատորն ուղղորդում է քննարկումը | Առաջ է բերում է տարբեր կարծիքներ և տեսանկյուններ | ▸ Ավելի շատ մարդկանց է անհրաժեշտ վերապատրաստել և կառավարել<br>▸ Ձայնագրությունը և փաստացի վեբինարը պլանավորելը կարող է ավելի դժվար լինել<br>▸ Կարող է դժվարություն առաջանալ՝ հանձնախմբի անդամներին միաժամանակ խոսելուց հետ պահելու առումով |
| **Ինտերակտիվ** | Լսարանի անդամները լիարժեքորեն են մասնակցում դասընթացավարի կողմից տրված վարժությունների և ուղղորդվող երկխոսությունների միջոցով | Լավ իրականացման դեպքում մասնակիցները թեման ավելի լավ են ընկալում, քանի որ լիարժեքորեն են ներգրավվում երկխոսության և վարժությունների կատարման մեջ | ▸ Կարող է ներառել միայն փոքր խումբ<br>▸ Պահանջում է հմուտ և փորձառու դասընթացավար/ուղղորդող |

**Լսարանը գրավելու առավելությունը**

Շատ կարևոր է, որպեսզի դուք ունենաք առցանց դասախոսություն պատրաստելու ճիշտ հմտություններ, քանի որ ձեզ անհրաժեշտ է գրավել լսարանի ուշադրությունը: PowerPoint-ի միջոցով ներկայացումը պետք է շատ ավելի կառուցվածքային լինի, որպեսզի դիտողները կարողանան դրա միջոցով կողմնորոշվել թեմաների և սլայդների միջև: Բացի այդ, կարևոր է նաև ներկայացնողի (դասընթացավարի) դերակատարությունը, որը հաճախ թերագնահատվում է: Հումորը, տոնայնությունը, ժեստերը, արտասանությունը խիստ կարևոր գործոններ են: Հաշվի՛ առեք, որ առցանց դասախոսություն լսելիս այն դիտողների ուշադրությունը մնում է կենտրոնացած է ոչ ավելի, քան 10-15 րոպե:

Ներկայացնողի և դիտողների միջև փոխազդեցությունը կօգնի կենդանի պահել ձեր լսարանը: Ներկայացման համար նախատեսված համակարգչային ծրագրերը տարբեր գործիքներ են նախատեսում լսարանի հետ փոխազդեցության մեջ մտնելու համար: Հետևաբար, շատ ցանկալի է, որ ձեր առցանց դասախոսությունը մշակվի ինտերակտիվ տարրերի համադրմամբ, օրինակ՝ հարցեր, (առցանց) հարցումներ՝ ներկայացման և քննարկումային (կենդանի) դասախոսության ընթացքում: Թեև «խոսող գլուխը» տեսանյութի հարաբերականորեն պասիվ օգտագործման ձև է, այդուհանդերձ, լավ նախագծված լինելու և/կամ լավ մատուցման դեպքում «վիրտուալ պրոֆեսորը» կարող է զարմանալիորեն գրավիչ թվալ: Եթե ցանկանում եք ավելին իմանալ գրավիչ և արդյունավետ առցանց դասախոսություն մշակելու մասին, համացանցում կգտնեք դրա հետ կապված բազմաթիվ խորհուրդներ:

Էլեկտրոնային ուսուցման դասընթացի մշակում

Գոյություն ունեն էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակման բազմաթիվ ծրագրեր, որոնք մատչելի են շուկայում: Էլեկտրոնային ուսուցման նախագծման և մշակման նպատակով՝ HELP ծրագիրը որպես գործիք ընտրել է Articulate Storyline-ը: Կան Storyline-ի մի շարք առավելություններ:

- Ունի ճանաչելի ինտերֆեյս այն օգտատերերի համար, որոնք, սովորաբար, Microsoft Office են օգտագործել:
- Տրամադրում է ձևանմուշներ և փոխազդեցության հնարավորություններ, որոնք կարող են հարմարեցվել օգտատերերի կողմից:
- Ունի համացանցում խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերող մեծ համայնք:

## բ. Դասընթացի համապատասխանեցում (բովանդակություն և ձևաչափ)

### i. Ազգային դասընթացավարի ընտրություն

Ազգային դասընթացավարը կարևոր դեր է խաղում իրականացման փուլում, քանի որ ակնկալվում է, որ նա պետք է աշխատի բովանդակության վրա՝ մոդելային դասընթացը պիլոտային երկրի իրավակարգին համապատասխանեցնելու միջոցով, ինչպես նաև վարի դասընթացը (զուգակցված կամ հեռավար):

Ազգային դասընթացավարը նշանակվում է համատեղ HELP-ի քարտուղարության և ՎԱԻ-ի կամ ՓՄ-ի կողմից փորձառության և կարողությունների հիման վրա: Պահանջվում է, որպեսզի ազգային դասընթացավարը լինի ոլորտի փորձագետ և ունենա վերա-

ՆՇՈՒՄՆԵՐ

պատրաստում իրականացնելու որոշ փորձառություն: Բացի այդ, պահանջվում է անգլերեն լեզվի իմացության լավ մակարդակ՝ HELP-ի քարտուղարության հետ հաղորդակցությունը դյուրին դարձնելու նպատակով: Ըստ էության, ակնկալվում է, որ ազգային դասընթացավարը կանոնավոր կերպով պետք է տեղեկացնի HELP-ի քարտուղարությանը դասընթացի իրականացման ընթացքի վերաբերյալ:

Նշանակումը կարող է վերջնականացվել ցանկացած պահի՝ մինչև համապատասխանեցման փուլի սկիզբը: Եթե դասընթացավարը նշանակվել է ավելի վաղ փուլում, ապա նա կարող է ներգրավված լինել նաև բովանդակության մշակման փուլում՝ մասնակցելով ԱԽ-ի հանդիպմանը:

Նման մասնակցությունը կարող է օգնել դասընթացավարին ծանոթանալ HELP-ի մեթոդաբանությանը և այն դերին, որն ինքը ստանձնում է:

Ամեն դեպքում ազգային դասընթացավարին հրավիրում են մասնակցել HELP-ի՝ Վերապատրաստում վերապատրաստողների համար (ՎՎՀ) սեսիաներից որևէ մեկին, որոնք կազմակերպվում են HELP ծրագրի շրջանակում: Սեսիան նախատեսվում է անցկացնել նախքան համապատասխանեցման փուլի սկիզբը:

Վերապատրաստում վերապատրաստողների համար

**Ներածություն**

HELP ծրագիրը վերջին տարիներին նշանակալի զարգացում է ապրել, որի արդյունքում գործընկեր երկրների թիվը 12-ից այժմ դարձել է 47: Բացի այդ, այժմ ծրագրի ուշադրության կենտրոնում են փաստաբանները, ինչպես նաև դատավորներն ու դատախազները: HELP-ի հովանու ներքո մշակվել են համատեղ ծրագրեր, որոնց թվում են՝

- «HELP-ը 28-ում», որը ֆինանսավորվել է ԵՄ Արդարադատության գլխավոր տնօրինության դրամաշնորհի շրջանակում,
- «HELP-ը Ռուսաստանի Դաշնությունում», որը ֆինանսավորվել է ՄԻՀՀ-ի կողմից,
- «HELP-ն Արևմտյան Բալկաններում և Թուրքիայում», որը ֆինանսավորվել է ՄԻՀՀ-ի կողմից,
- «Ազատ արտահայտվելու իրավունք» ծրագիրը Թուրքիայում, որը համաֆինանսավորվել է ԵՄ-ի կողմից,
- Այլ:

Դրանք ներառում են տարբեր նոր դասընթացների մշակում և իրականացնում ու ստեղծում են HELP-ի ազգային դասընթացավարների նոր պահանջարկ, որոնք ունեն ներպետական մակարդակում մեծ թվով հեռավար, առերես և զուգակցված ձևաչափերով HELP-ի կրթական դասընթացներ վարելու հմտություններ և մոտիվացիա:

Հետևաբար, ՎՎՀ-ները մշակվել են այդ պահանջարկը բավարարելու, վերապատրաստման ազգային ինստիտուտների և փաստաբանների միությունների ներկայացուցիչներին որպես HELP-ի դասընթացավարներ վերապատրաստելու և HELP-ի մեթոդաբանությունը նրանց ներկայացնելու նպատակով:

HELP-ի ՎՎՀ-ները հատկապես ուղղված են նշանակալի կարողությունների ձեռքբերմանը և HELP-ի մեթոդաբանության լիարժեք ընկալման ապահովմանը:

## ՆՊԱՏԱԿ

Նպատակն է երաշխավորել HELP-ի հեռավար, զուգակցված և առերես ուսուցման դասընթացների **բարձր որակը և ներդաշնակեցումը**՝ HELP-ի դասընթացավարների համար անցկացնելով համապատասխան վերապատրաստում HELP-ի մեթոդաբանության և էլեկտրոնային ուսուցման (Moodle) հարթակի վերաբերյալ:

**Նպատակներ՝**

- Մասնակիցներին տեղեկացնել Ստրասբուրգի իրավագիտության վերջին փոփոխություններին,
- Բացատրել ուսումնական խնդիրների սահմանման, կարիքների գնահատման, ներպետական իրավակարգին դասընթացի համապատասխանեցման և գնահատումների ընթացքում կիրառվող HELP-ի սկզբունքները և մեթոդները,
- Մասնակիցներին վերապատրաստել HELP-ի էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակից օգտվելու համար (էջի ստեղծումից մինչև տարբեր գործողություններ և ռեսուրսներ, որոնք հասանելի են HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում),
- Քննարկել վերապատրաստողների դերն ազգային դասընթացներում և զարգացնել մասնակիցների համապատասխան կարողությունները HELP-ի հեռավար, զուգակցված և առերես ուսուցման դասընթացները վարելու համար,
- Ստեղծել վերապատրաստողների ներպետական ցանց, որոնք ունեն հմտություններ և մոտիվացիա վերապատրաստման ազգային ինստիտուտներում (ՎԱԻ-ներ) և փաստաբանների միություններում (ՓՄ-ներ) HELP-ի դասընթացները վարելու համար,
- Ստեղծել բաց երկխոսության տիրույթ և փոխանակվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) իրավագիտության վերաբերյալ հեռավար, զուգակցված և առերես ուսուցման դասընթացների իրականացման լավագույն փորձառություններով:

ՆՇՈՒՄՆԵՐ

**ՎՎՀ-ի ընթացքում զարգացվող կարողությունները**

**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ 1.** Մշակել կրթական ծրագրեր HELP-ի մոդելային ուսումնական ծրագրի հիման վրա՝ վերապատրաստման կարիքների գնահատում անցկացնելուց մինչև ուսումնական խնդիրների սահմանում, ուսումնական ծրագրի համապատասխանեցում ներպետական իրավակարգին և դասընթացի գնահատում:

**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ 2.** Օգտագործել HELP-ի էլեկտրոնային ուսուցման (Moodle) հարթակը և դրա ռեսուրսներն ու գործիքները:

**ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ 3.** Հասկանալ և խթանել անհատական և խմբային ուսուցման գործընթացը:

### ՎՎՀ-ի մասնակիցներ

Մասնակիցների ընտրության ժամանակ նախապատվությունը տրվում է ՎԱԻ-ներում և ՓՄ-ներում արդյունավետ աշխատանքային գործունեություն ծավալող մասնագետներին: Ստրասբուրգի դասընթացին, սովորաբար, ներկա է գտնվում Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից 30-60 մասնակից: Թիրախային խմբում ՎԱԻ-ների և ՓՄ-ների ներկայացուցիչներ են, որոնք ունեն իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման փորձ, նույնիսկ միջազգային վերապատրաստման փորձ կամ այն ձեռք բերելու մեծ մոտիվացիա: Նրանք տիրապետում են անգլերեն լեզվին և պատրաստ են վարել HELP-ի դասընթացները:

Դասընթացն ավարտած մասնակիցներին ներառում են HELP-ի արտոնագրված վերապատրաստողների ցանկում, որը հասանելի է HELP-ի ինտերնետային կայքում: Թե՛ Եվրոպայի խորհրդի գրասենյակները և թե՛ ՎԱԻ-ները/ՓՄ-ները տեղեկացվում են ՄԻԵԿ-ի վերաբերյալ ներպետական կամ միջազգային միջոցառումների համար վերապատրաստողների այս ցանկից ընտրություն կատարելու հնարավորության մասին: Տվյալներ են հավաքագրվում նաև վերապատրաստողի աշխատանքային լեզուների իմացության, մասնագիտական կրթության մասին, ինչպես նաև, թե որ երկրում է նա գործունեություն ծավալում՝ բազմակողմանի և միջազգային համագործակցությունը դյուրին դարձնելու նպատակով:

2014 և 2015 թվականների տարեկան ցանցային համաժողովների ընթացքում ստացված արձագանքները վկայում էին վերապատրաստման նմանօրինակ միջոցառումներին ցուցաբերվող մեծ աջակցության մասին: Դա զարգացնում է ազգային դասընթացավարների ընդունակությունը՝ ձևավորելու **սեփականի (դասընթացի վերաբերյալ) ընկալումը**:

### ՎՎՀ-ի տարրեր

HELP-ի վերապատրաստողների համար վերապատրաստման ծրագիրը նախագծվել է այնպես, որպեսզի մասնակիցներին ներկայացվի, թե ինչպես նրանք մշակեն իրենց սեփական դասընթացները՝ կիրառելով HELP-ի մեթոդաբանությունը և օգտագործելով մոդելային դասընթացների նյութերը, գործիքները և ռեսուրսները, որոնք հասանելի են էլեկտրոնային ուսուցման հարթակում, ինչպես նաև վերապատրաստման ինտերակտիվ մեթոդները: Այսպիսով, վերապատրաստումը բաղկացած է հետևյալ մասերից և տարրերից՝

| ՄԱՍ 1 ԲԱՑՈՒՄ | |
|---|---|
| **ՎՎՀ-ի տարր** | HELP-ի զուգակցված դասընթաց |
| **HELP-ի ներկայացում** | Ներկայացման նպատակը ծրագրի, դրա առաքելության մասին նախնական տեղեկատվության տրամադրումն է և պետական լեզվով հասանելի դասընթացներ ներկայացնելը:<br>Ներկայացումը կարելի է կազմակերպել տարբեր ձևերով՝<br>▸ Անիմացիոն տեսանյութ,<br>▸ Ինտերնետային էջ և էլեկտրոնային ուսուցման հարթակ,<br>▸ Prezi կամ ppt համակարգչային ծրագրերի միջոցով: |

ՆՇՈՒՄՆԵՐ

| | |
|---|---|
| **ՎՎՀ-ի նպատակներ և խնդիրներ** | Դասընթացի նպատակի և ուսումնական խնդիրների մասին սովորողներին տեղեկացրեք առաջին առերես հանդիպման (մեկնարկի) ժամանակ կամ նույնիսկ մինչ այդ՝ մասնակցության հրավեր-հայտարարության միջոցով: |
| **Մասնակիցների ներկայացում, խմբի մերձեցմանն ուղղված վարժություններ** | Այս տարրը մասնակիցներին օգնում է անկաշկանդ հարցեր ուղղել և վստահ լինել, որ իրենց նկատմամբ հարգանք կդրսևորվի: Այն նաև նպաստում է խմբում մասնակիցների ինքնահաստատմանն՝ առաջին կամ երբեմն դասընթացի միջանկյալ հանդիպումների ժամանակ: |
| **ՄԱՍ 2 ԹԵՄԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ** | |
| **ՎՎՀ-ի տարր** | HELP-ի զուգակցված դասընթաց: |
| **Փորձագետի ներկայացում Հանձնախմբի քննարկում Բանավեճ Արագ դատախաղ** | Այս տարրի նպատակն է ցույց տալ ներկայացման տարբեր ձևաչափեր, այլ ոչ թե կարդալ թեմայի շուրջ համապարփակ դասախոսություն: Պահանջվում են նախնական գիտելիքներ ընտրված թեմաների շուրջ: |
| **ՄԱՍ 3 ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄՈՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ՝ HELP-ի ԶՈՒԳԱԿՑՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՄՇԱԿԵԼՈՒ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ** | |
| **ՎՎՀ-ի տարր** | HELP-ի զուգակցված դասընթաց: |
| **Moodle աշխատաժողով** | Մասնակիցները ձեռք են բերում գործնական հմտություններ դասընթացի էջը մշակելու ժամանակ՝ օգտագործելով HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակը: Վերապատրաստողը մասնակիցներին ցույց է տալիս հասանելի հիմնական գործիքներն ու ռեսուրսները: |
| **Վերապատրաստողների կարողություններին նվիրված աշխատաժողով** | Խմբի դինամիկայի, մեծահասակների վերապատրաստման առանձնահատկությունների, վերապատրաստման մեթոդների (փոքր խմբով քննարկում, մտքերի գրոհ, խմբային թեմատիկ քննարկումներ, դասակարգում, դերախաղեր, իրավիճակային խնդիրներ, մոդելավորում և դեբրիֆինգ) մասին ընդհանուր պատկերացում: Մասնակիցները քննարկում են ուսումնական բուրգը, վերապատրաստման մեթոդները և գիտելիքների, հմտությունների և արժեքների միջև տարբերությունները: Նրանց ներկայացվում է նաև ուսանողակենտրոն մեթոդաբանությունը: |
| **HELP-ի դասընթացի նախագծմանը նվիրված աշխատաժողով** | Ընդհանուր պատկերացում, թե ինչպես մշակել կրթական ծրագիր HELP-ի մոդելային ուսումնական ծրագրի միջոցով: Վերապատրաստողը ցույց է տալիս վերապատրաստման կարիքների գնահատման անհրաժեշտությունը, թե ինչպես վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքների հիման վրա մշակել ուսումնական խնդիրները և դասընթացի ընդհանուր կառուցվածքը: Մասնակիցները ձևակերպում են ուսումնական խնդիրները՝ օգտագործելով SMART ցուցիչները: |
| **ՎՎՀ-ի մասնակիցների կողմից մշակված և իրականացված ուսումնական սեսիաներ** | Դասընթացի մշակման և իրականացման գործընթացի լիարժեք մոդելավորում: Այս հատվածը պարունակում է մի առաջադրանք, որը հիմնված է կրթական այն սկզբունքի վրա, որի նպատակն է նախագծերի իրականացումը, նոր գիտելիքների կիրառումն իրական կյանքի իրավիճակներում: Այն նաև խթանում է ներգրավվածությունը սովորողների շրջանում, ծրագիրն առնչում է նրանց փորձառությանը և մեծացնում տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և ներկայացնելու և այլոց հետ համագործակցելու հմտությունները: |

Ուսումնական առաջին սեսիայի ժամանակ դասընթացի խմբերից մեկի ենթախմբերից յուրաքանչյուրն առաջնորդում է մյուս դասընթացի ենթախմբերին: Մի խումբը ներկայացնում է մշակված դասընթացը մյուս խմբին: Երկրորդ սեսիայի ժամանակ հակառակն է տեղի ունենում՝ ենթախմբերն առաջնորդում են առաջին երկու խմբերին: Այդպիսով նրանք փոխհատվում են, ուստի չեն առաջնորդի այն նույն խմբին, որն առաջնորդել է իրենց:

## ՄԱՍ 4 ԱՄՓՈՓՈՒՄ

| | |
|---|---|
| **ՎՎՀ-ի տարր Դեբրիֆինգ** | HELP-ի զուգակցված դասընթաց:<br>Դեբրիֆինգի նպատակն է անդրադառնալ ուսման սեփական փորձին և վերապատրաստման ընթացքում հանդիպած դժվարություններին և դրանք առնչել անհատական հմտությունների և ուսումնական նպատակների հետ: |
| **HELP ծրագրի ապագան և իմ անձնական պլանները**<br>**Անանուն հարցաթերթ՝ վերապատրաստվողների լրացման համար և գնահատման ձևաթերթ՝ վերապատրաստողների լրացման համար** | Դասընթացի գնահատում: |

| | հոկտ. 6, 2015թ. | հոկտ. 7, 2015թ., չորեքշաբթի | հոկտ. 8, 2015թ., հինգշաբթի | հոկտ. 9, 2015թ., ուրբաթ | հոկտ. 10, 2015թ., շաբաթ | հոկտ. 11, 2015թ. |
|---|---|---|---|---|---|---|
| 8:00-9:00 | | Նախաճաշ | | | | |
| 9:00-9: 30 | | | ԲՐԻՖԻՆԳ | | | |
| 9:30-11:00 | | **Պաշտոնական բացում: Help ծրագրի ներկայացում** | **Աշխատաժողով** | **Դասընթացի նախագծում** | **Ուսուցողական սեսիա 2** | Մասնակիցների մեկնում |
| 11:00-11:30 | | Ընդմիջում | | | | |
| 11:30-13:00 | | **Թիմաստեղծ միջոցառումներ** | **Աշխատաժողով** | **Դասընթացի նախագծում** | **Ուսուցողական սեսիա 2** | Մասնակիցների մեկնում |
| 13:00-14:30 | | Ճաշ | | | | |
| 14:30-16:00 | | **Իրավաբանական կրթություն՝ այլընտրանքային տեսակետ**<br>հիմն. բանախոսի ներկայացում իրավական ֆորում | **Աշխատաժողով** | **Ուսուցողական սեսիա 1** | **Գնահատում՝ Help ծրագրի կիրառումը ձեր տեղական ՎՀԻ-ում** | |
| 16:00-16:30 | | Ընդմիջում | | | | |
| 16:30-18:00 | Մասնակիցների ժամանում, դիմավորում և գրանցում | **Հեռաուսուցման դրական և բացասական կողմերը իրավաբանական կրթության համար**<br>Ակտիվ քննարկում | **Աշխատաժողով** | **Ուսուցողական սեսիա 1** | **Help-ի ապագան Ուսանողներում**<br>Գաղափարների ներկայացում | |
| 18:00-19:00 | | ԴԵԲՐԻՖԻՆԳ | | | | |
| 19:00-20:30 | Ընթրիք | | | | | |

ՆՇՈՒՄՆԵՐ

**ՎՎՀ-ի գնահատումը**

Վերապատրաստողների համար վերապատրաստման գնահատումը կարող է ներառել հետևյալ ասպեկտները՝

1) Կացարան, սնունդ, դասընթացի կազմակերպման վայր և փոխադրամիջոց:

2) Դասընթացի նպատակ, ակնկալիքներ և վերապատրաստման մեթոդներ:

3) Բովանդակություն (դասընթացի սեսիաներ):

Սովորաբար, մասնակիցներն ավելի կարևոր և հետաքրքիր են համարում հետևյալ սեսիաները՝

- Վերապատրաստման սեփական սեսիաների պատրաստումը,
- Երեքժամյա վերապատրաստման սեսիա մասնակիցների կողմից,
- Moodle հարթակ,
- HELP-ի մեթոդաբանություն,
- Մարդու իրավունքների կրթության մոտեցումներ և սկզբունքներ:

Մասնակիցները նվազ կարևոր են համարում՝

- Ամսագրերի ներկայացումները,
- Փորձագետների հետ լիակազմ քննարկումները,
- Հետադարձ կապի ապահովման չափազանց երկարատև գործընթացը:

---

Մասնակիցների կողմից արված մեկնաբանությունները և առաջարկությունները՝

- «Ես կցանկանայի շարունակել HELP ծրագրին իմ մասնակցությունը»:
- «Կրճատել աշխատանքային ժամերը՝ հասցնելով օրական 6 ժամի»:
- «Մասնակիցները պետք է լավ տեղեկացված լինեն դասընթացի հստակ նպատակներին և խնդիրներին նախքան դասընթացը մեկնարկը»:
- «Շնորհակալություն փորձառության հարստացման համար»:
- «Շատ հաճելի է, որ մասնակիցների ուսումնառությունը վերապատրաստողների ուշադրության կենտրոնում էր»:
- «Հետաքրքիր փորձառություն է, ցանկանում եմ շարունակել այն»:
- «Շնորհակալություն ամեն ինչի համար»:
- «Ինձ դուր եկավ թիմի բարձր պրոֆեսիոնալիզմը»:
- «Վերապատրաստումը շատ արդյունավետ էր»:
- «Պետք է ավելի շատ ժամանակ հատկացնել Moodle հարթակի վերաբերյալ վերապատրաստմանը»:
- «Ցանկալի է անցկացնել ավելի շատ HELP-ի վերապատրաստումներ, ինչպես նաև ունենալ փորձի և հմտությունների փոխանակման հարթակ»:
- «Պրոֆեսիոնալ և ինտերակտիվ»:

## ՍՏՈՒԳԱՑԱՆԿ՝ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ

1. Որոշե՛ք ՎՎՀ-ի օրը:
2. Պատրաստե՛ք փաստաթղթերը (վայրը՝ «քաղաքից դուրս», համաժողովի սենյակ՝ 30 մասնակցի համար, երեք փոքր սենյակ՝ 10-12 մասնակիցների համար, որոնք հասանելի կլինեն 9:00-19:00-ը, գերազանց ինտերնետային կապ, 6 համակարգիչ, պրոյեկտոր, սուրճի ընդմիջումներ) ՎՎՀ-ից առնվազն երեք-չորս ամիս առաջ:
3. Վերապատրաստողների հավաքագրման հայտարարություն՝ ՎՎՀ-ից առնվազն երեք-չորս ամիս առաջ:
4. Մեկօրյա նախապատրաստական հանդիպում վերապատրաստողների հետ՝ ՎՎՀ-ից առնվազն երկու ամիս առաջ (խնդիրներ, ակնկալվող արդյունք, HELP-ի դասընթացների ընտրություն ՎՎՀ-ի համար, փորձագետների ընտրություն, սեսիաների ամփոփ նկարագիր և առաջադրանքների բաշխում):
5. Մասնակիցների հավաքագրման հայտարարություն՝ ՎՎՀ-ից 45 օր առաջ:
6. Փորձագետների հավաքագրման հայտարարություն՝ ՎՎՀ-ից 45 օր առաջ:
7. ՎՎՀ-ի էջը Moodle հարթակում՝ օրակարգով, դասընթացի ներկայացմամբ և հայեցակարգով:
8. Մասնակիցներին ՎՎՀ-ին մասնակցության մասին հաստատում, համակարգում գրանցում, ՎՎՀ-ի նախնական առաջադրանք՝ ՎՎՀ-ից առնվազն երկու շաբաթ առաջ:
9. Տեղում նախապատրաստական հանդիպում վերապատրաստողների հետ՝ ՎՎՀ-ից մեկ օր առաջ:
10. Դասընթացի գնահատում մասնակիցների և վերապատրաստողների կողմից, աշխատանքային առաքելության մասին հաշվետվություն՝ ՎՎՀ-ից մեկ շաբաթ անց:
11. Ավարտական առաջադրանքի վերջնաժամկետ՝ ՎՎՀ-ից մեկ ամիս անց:
12. Վերապատրաստողների հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ (ամենօրյա մշակված գաղափարների ամփոփում, առաջարկություններ ապագայի համար)՝ ՎՎՀ-ից մեկ ամիս անց:
13. ՎՎՀ-ի արդյունքները՝ ՎՎՀ-ից մեկուկես ամիս անց:
14. Ամբողջական ամփոփիչ հաշվետվություն՝ ՎՎՀ-ից երկու ամիս անց:
15. Վկայականներ՝ ՎՎՀ-ից երկուսուկես ամիս անց:
16. Թարմացում կամ «վերապատրաստումն ըստ էության»՝ տարվա ընթացքում:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

### ii. Թարգմանություն պետական լեզվով

Կանխատեսելի լեզվական խոչընդոտների պատճառով իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստումը կարող է ավելի արդյունավետ լինել, եթե այն իրականացվի պետական լեզվով: Եթե սովորողները չունեն անգլերենի կատարյալ իմացություն, ապա նրանց մասնակցությունը դասընթացին կարող է լինել ապակողմնորոշիչ և հանգեցնել սովորածի սխալ կիրառության: Բացի այդ, սովորողների մեծ մասի համար առօրյա աշխատանքային լեզուն պետական լեզուն է:

Որոշ դեպքերում իրավական ոլորտի մասնագետների համար կարող է առավել օգտակար լինել անգլերեն լեզվով վերապատրաստումը՝ հատկապես դատական գործերի առումով, քանի որ նյութերը կարող են թարգմանված չլինել: Բացի այդ, դրանք կարող են կիրառվել միջազգային դասընթացների իրականացման համար՝ տարբեր երկրներից իրավական ոլորտի մասնագետների խառը խմբերի պարագայում, որոնց աշխատանքային լեզուն անգլերենն է:

Ինչ վերաբերում է հեռավար կամ զուգորդված դասընթացներին, որոնք իրականացվում են պետական լեզվով, անգլերեն մոդելային դասընթացը թարգմանվում է պիլոտային երկրի պետական լեզվով: Գործնական առումով վերապատրաստման նյութերն ուղարկվում են թարգմանչական ծառայություններ մատուցողներին: Ինչ վերաբերում է դասընթացի ինտերակտիվ տարբերակին, ապա Articulate ծրագրից դուրս է բերվում երկայունականի աղյուսակը և ուղարկվում է թարգմանիչներին: Աջ սյունակում մուտքագրելով թարգմանությունը՝ տեքստը կարող է ինքնաբերաբար վերբեռնվել Articulate ծրագրում էլեկտրոնային ուսուցման մասնագետի կամ HELP-ի քարտուղարության կողմից:

Ինչպես ավելի վաղ նշվեց, դասընթացին ավելացվող տեսանյութերը հասանելի են միայն անգլերեն լեզվով: Տեսանյութերի տեքստը և ենթագրերը ներառված են թարգմանությունների փաթեթում և թարգմանված են պետական լեզվով: Այնուհետև դրանք ավելացվում են առանձին վանդակներում կամ՝ որպես ենթագրեր:

Որոշ խնդիրներ կարող են ի հայտ գալ, երբ թարգմանությունները որակյալ չեն և/կամ չեն իրականացվում պահանջվող ժամկետներում: Թարգմանությունների բարձր որակը երաշխավորելու համար անհրաժեշտ է դիմել վստահելի ծառայություն մատուցողի: Լավ գործելակերպը ենթադրում է նախապես ստուգել, թե արդյոք ծառայություն մատուցողն ունի իրավական և, մասնավորապես, մարդու իրավունքների ոլորտի փաստաթղթերի թարգմանության փորձ: Թարգմանիչներին կարելի է նաև հորդորել օգտվել Եվրոպայի խորհրդի մասնագիտական բառարաններից[29]:

Որակյալ թարգմանություն ապահովելու համար անհրաժեշտ ժամանակը տարբեր է՝ ելնելով տարբեր գործոններից, ինչպես օրինակ՝ բնօրինակ տեքստի որակից և բարդությունից: Ինչ վերաբերում է որակին, ապա այն կախված է նրանից, թե արդյոք տեքստը մշակվել է լեզվակրի կողմից և/կամ արդյոք որակի ստուգում իրականացվել է, թե ոչ: Տեքստի բարդության հետ կապված՝ թարգմանությունը կարող է ավելի հարթ լինել, և թարգմանությունների որակը՝ ավելի բարձր, եթե թարգմանիչներին տրամադրվեն ուղղորդող փաստաթղթեր:

Թարգմանությունից հետո իրականացվում է որակի ստուգում ազգային դասընթաց-

29 Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների ներպետական իրականացման աջակցության բաժինը պատրաստել է մասնագիտական բառարաններ անգլերենից ադրբեջաներեն, բուլղարերեն, վրացերեն, ռումիներեն, ռուսերեն, սերբերեն, ուկրաիներեն, թուրքերեն: Դրանք հասանելի են բաժնի ինտերնետային կայքում՝ http://www.coe.int/t/dgi/hr-natimplement/documentation_en.asp:

վարի կողմից, որին ամեն դեպքում խնդրում են վերանայել նյութերը՝ ներպետական իրավակարգին դրանց համապատասխանեցման նկատառումով: Բովանդակության համապատասխանեցումը դասընթացի մեկնարկի նախապատրաստման համար:

### Համապատասխանեցումը ներպետական իրավակարգին

Ինչպես ավելի վաղ նշվեց, ազգային դասընթացավարը կարևոր դեր է խաղում, քանի որ նրա առաջադրանքներից մեկը մոդելային դասընթացը ներպետական իրավակարգին համապատասխանեցնելն է: Դասընթացավարի կողմից կատարվող աշխատանքի ծավալները կախված են մոդելային դասընթացի թեմայից և թիրախային լսարանի կարիքներին այն համապատասխանեցնելու նպատակներից:

Որպես ներածություն՝ ակնկալվում է, որ ազգային դասընթացավարը պետք է մշակի ներպետական մակարդակում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) կիրառման վերաբերյալ ներկայացում: Այն կարող է ներառել ներպետական իրավունքում ՄԻԵԿ-ի կարգավիճակը և միջազգային պայմանագրերի իրավական ուժը (կիրառվում է արդյոք դուալիստական, թե՞ մոնիստական մոտեցում):

Բացի այդ, ակնկալվում է, որ ազգային դասընթացավարը պետք է խմբագրի վերապատրաստման առկա նյութերը կամ լրացուցիչ մոդուլ մշակի կամ ամբողջ դասընթացում հղումներ կատարի օրենսդրությանը և ներպետական իրավագիտությանը:

Ի հավելումն դասընթացի բովանդակության՝ ակնկալվում է, որ ազգային դասընթացավարն ԱԽ-ի մշակած լրացուցիչ նյութերի ցանկում ավելացնի այն բոլոր նյութերը, որոնք վերաբերելի են ներպետական մակարդակում: Եվ վերջապես, նա պետք է առաջադրանքները համապատասխանեցնի սովորողների կարիքներին և գիտելիքների մակարդակին:

### Համապատասխանեցումը լսարանին

Դասընթացի բովանդակությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել ոչ միայն ներպետական իրավակարգին, այլև թիրախային լսարանին: Ինչպես նշվեց, կախված նրանից, թե դասընթացը նախատեսված է փաստաբանների, դատավորների, թե դատախազների համար, կարիքները և նյութերի արդիականությունը կարող են տարբեր լինել: Վերապատրաստողի դերն է՝ վերապատրաստման համապատասխանեցումը լսարանին:

### Էլեկտրոնային ուսուցում: Վերապատրաստման նյութերի վերբեռնումը HELP-ի Moodle հարթակ

Վերապատրաստման նյութերը վերջնական տեսքի բերելուց հետո ազգային դասընթացավարը դրանք վերբեռնում է HELP-ի Moodle հարթակ: Դասընթացի համար նախատեսված հատուկ էջը ստեղծում է HELP-ի քարտուղարությունը, և այն հասանելի է միայն սովորողներին: Դասընթացի վարման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կտրամադրվեն սույն ուղեցույցի հատուկ նախատեսված բաժնում (քայլ 3, դ, iv, էջ 126):

Ազգային դասընթացավարը վերապատրաստում է անցնում, թե ինչպես վերբեռնել վերապատրաստման նյութերը և կառավարել Moodle էջը ՎՎՀ-ի ընթացքում: Բացի այդ, դասընթացավարը կարող է ապավինել HELP-ի քարտուղարությանը, ինչպես նաև օգտվել ուղենիշներից և առկա որոշ ուսումնական ձեռնարկներից, որոնցում ներկայացվում է, թե ինչպես աշխատել HELP-ի Moodle հարթակում: Կարող է անհրաժեշտ լինել լրացու-

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

ցիչ տեխնիկական աջակցություն, օրինակ, երբ դասընթացը ՎՎՀ-ից անմիջապես հետո չի մեկնարկում կամ եթե դասընթացավարը բախվում է խնդիրների, որոնք նախատեսված չեն եղել վերապատրաստման ընթացքում:

Որպես դասընթացը վարելու համար պատասխանատու անձ՝ ազգային դասընթացավարը կարող է սահմանել վերբեռնման ժամանակացույց: Դա նշանակում է, որ վերապատրաստման բոլոր նյութերը կարող են միանգամից վերբեռնվել նախքան դասընթացի մեկնարկը կամ կանոնավոր կերպով՝ ըստ մոդուլների: Եթե բոլոր նյութերը միանգամից են վերբեռնվում, ապա դրանք հասանելի կլինեն սովորողներին՝ ըստ դասընթացի ժամանակացույցի:

## Քայլ 3՝ Ինչպես իրականացնել դասընթացը

### ա. Վերապատրաստման առավել համապատասխան մեթոդ(ներ)ի ընտրություն

Նոր դասընթաց մշակելիս հաճախ հնարավոր է աննկատ որդեգրել վերապատրաստման մեթոդներ՝ առանց հստակ հասկանալու, թե արդյոք դրանք այն լավագույն եղանակներն են, որոնց միջոցով սովորողները ձեռք կբերեն ՈՒԽ-ների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և արժեքներ:

Վերապատրաստումը (ինչպես այժմ նաև՝ ուսուցումը համալսարանում) հաճախ բնութագրվում է դասավանդման/ուսուցման երկու հիմնական մեթոդներով՝ դասախոսություններ և սեմինարներ/գործնական պարապմունքներ: (Բարձրագույն կրթության ոլորտում լաբորատոր աշխատանքը, դաշտային աշխատանքը, նախագծերը և ատենախոսությունները նույնպես կարող են առկա լինել: Մասնագիտական վերապատրաստման համատեքստում դրանք կարող են փոխարինվել այցերով և հաշվետվությունների պատրաստմամբ):

Ինչպես սույն ուղեցույցի այս բաժնում նշվեց, շատ «սովորողներ» կարող են ցածր ակնկալիքներ ունենալ վերապատրաստումից՝ հաշվի առնելով ստացված իրավաբանական կրթության մասին իրենց հիշողությունները: Հետևաբար, հստակ անհրաժեշտություն կա հեռանալ ավանդական ուսուցումից, քանի որ՝

- Ակտիվ ուսուցումը «սովորողին» մոտեցնում է իրական կյանքին և օգնում ձեռք բերել հմտություններ ու փոխել մոտեցումները՝ զուտ գիտելիքներ փոխանցելու փոխարեն:
- Գոյություն ունի անհատականացված ուսուցման կամ ուսանողակենտրոն մոտեցման նկատմամբ աճող հետաքրքրություն:

Ահա թե ինչու խիստ կարևոր է վերապատրաստման դասընթաց մշակելիս գնահատել կարիքները, ճանաչել լսարանը և բացահայտել հնարավոր մարտահրավերները՝ ուսուցման համապատասխան տեխնիկաներ ընտրելու համար:

Կրթական ոլորտի մասնագետներն այժմ հասկանում են այն երկու հիմնական կետերը, որոնք պետք է մտապահել վերապատրաստման ընթացքում՝

- Ավելի արդյունավետ սովորելուն ուղղված մոտեցումների վերաբերյալ ընդհանուր սկզբունքներ:
- Մարդիկ տարբեր են. անհատները սովորում են տարբեր ձևերով:

- Առաջին կետն ավելի դյուրին է ներկայացնել գրաֆիկական պատկերով՝




Դեյլի Փորձառության կոնը (Dale, 1969)

Երկրորդ կետը, որ անհատներն *իսկապես* սովորում են տարբեր ձևերով, առավել մեծ դժվարություն է ներկայացնում դասընթաց մշակող վերապատրաստողների համար: Չափահաս անհատներն ունեն ուսման տարբեր ոճեր: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գոյություն ունի ուսման երեք ոճ՝ տեսողական, լսողական և կինեսթետիկ: Տեսողական ոճով սովորողներին կարևոր է տրամադրել նկարներ, աղյուսակներ և այլ պատկերներ: Լսողական ոճով սովորողները սովորում են քննարկումների ձևով՝ խոսելու և լսելու միջոցով: Կինեսթետիկ ոճի պարագայում անհատը սովորում է գործողություն կատարելով, և նրա համար օգտակար են դերախաղերն ու բանավեճերը:

Լավ նորությունն այն է, որ թեև մարդիկ մեծամասամբ նախընտրում են այս ոճերից որևէ մեկը, շատերն արձագանքում են նաև այս ոճերի համադրությանը: Դեռ ավելին, մեծահասակներին վերապատրաստելն ավելի դյուրին է, քան երեխաներին ուսուցանելը՝ անկախ երեխաների նախընտրած ուսման ոճից: Մեծահասակների կրթության (անդրագոգիկա) ոլորտում ուսումնասիրությունների համաձայն՝ մեծահասակներն այլ կերպ են սովորում, քան երեխաները: Անդրագոգիկայի հիմնադիր Մալքոլմ Նոուելսը (Malcolm Knowles) սահմանել է մեծահասակների ուսուցման վեց սկզբունք՝

- Մեծահասակներն ունեն սովորելու ներքին մոտիվացիա և ինքնուղղորդվող են,
- Ուսման գործընթացում մեծահասակները հիմնվում են ունեցած կյանքի փորձի և գիտելիքների վրա,
- Մեծահասակները նպատակասլաց են,
- Մեծահասակները կարևորում են վերաբերելի նյութի մատուցումը,
- Մեծահասակները գործնական են,

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

- Մեծահասակները պահանջում են հարգալից վերաբերմունք[30]:

Վերոնշյալի լույսի ներքո, մեծահասակներին վերապատրաստելիս ուսուցման բազմազան մեթոդոլոգիաներին հիմնված դասավանդման ոճն առավելագույնի կհասցնի սովորողներին ներկայացվող նյութի յուրացումը: Բացի այդ, սովորողների սեփական փորձառության վրա հիմնվելը, ինչպես նաև վերապատրաստման արդիականության և գործնականում կիրառելիության երաշխավորում կապահովեն վերապատրաստման հաջողությունը:

## բ. Վերապատրաստման մեթոդի ընտրությունն ուսումնական խնդիրներին համապատասխանեցնելը

Վերապատրաստման դասընթացի մշակման (գրեթե) վերջին քայլը սահմանված ՈՒԽ-ների ապահովման համար առավել նպատակահարմար մեթոդների ընտրությունն է, այսինքն՝ ընտրելը, թե վերապատրաստման որ մեթոդներն առավել մեծ հավանականություն ունեն՝ սովորողներին օգնելու հասնել ուսումնական խնդիրների կատարմանը (ինչը ստուգված է արդեն իսկ ընտրված գնահատման գործիքներով):

Հիմնական էությունն ՈՒԽ-ների, գնահատման գործիքների և վերապատրաստման մեթոդների համապատասխանեցումն է: Գոյություն ունի մեթոդների լայն ընտրանի: Դասավանդման և ուսուցման մեթոդների հետևյալ աղյուսակից (վերցված՝ Bourner, 1997 և Biggs, 2003[31]) երևում է, թե վերապատրաստման դասընթաց մշակողներն ինչ ընտրության առջև են կանգնած՝ նույնիսկ առանց նկատի առնելու հեռաուսուցումը կամ SS մեթոդները՝

30 Knowles M. (1984) *Andragogy in Action* (San Francisco: Jossey-Bass):
31 Bourner T (1997) "Teaching Methods for Learning Outcomes" *Education + Training 39.9, 344-348; Biggs J.B (2003) Teaching for quality learning at university* (Buckingham: Open University Press/Society for Research into Higher Education):

| | ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ԳԻՏԵԼԻՔ | ԳԻՏԵԼԻՔԻ ՄՇԱԿՈՒՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄ | ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՆԵՐԱՑՈՒՄ | ԱՆՀԱՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ | ՍԵՓԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ |
| ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | Դասախոսություններ<br>Հրավիրված դասախոսություններ<br>Հայեցակարգի քարտեզագրում<br>Բարձրաձայն մտածելու միջոցով մոդելավորում<br>Էլեկտրոնային քվեարկության համակարգեր (ԷՔՀ) | Իրավիճակային խնդիրներ<br>Գործնական աշխատանքներ<br>Լաբորատոր աշխատանքներ<br>Ցուցադրումներ<br>Փորձարկումներ<br>Մոդելավորումներ<br>Քննարկում<br>Բանավեճ<br>Սեմինարներ և գործնական պարապմունքներ<br>Ղեկավարում<br>Համակարգչի միջոցով իրականացվող քննարկում | Աշխատաժողովներ<br>Ուղեղների գրոհ<br>Լաբորատոր աշխատանքներ<br>Գործնական աշխատանքներ<br>Դաշտային աշխատանք<br>Քննարկում<br>Փորձարկումներ<br>Ղեկավարում | Հետադարձ կապ<br>Ուսման պայմանագրեր<br>Դերախաղ<br>Մենթորություն<br>Քոուչինգ<br>Փորձառական ուսում | |
| ՍՈՎՈՐՈՂԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | Տեղեկատվության որոնման հետ կապված առաջադրանքներ<br>Ուղղորդվող անհատական հետազոտություն | Նախագծեր<br>Խնդիրների վրա հիմնված ուսուցում<br>Էսսեներ<br>Աշխատանքահեն ուսուցում<br>Խմբային աշխատանք<br>Սովորողի կողմից իրականացվող ներկայացումներ<br>Սովորողի կողմից վարվող սեմինարներ<br>Գրականության ուսումնասիրություն<br>Գործընկերոջ գնահատում<br>Սովորողի մենթորություն<br>Գործընկերոջ օգնությամբ ուսում<br>Ինքնագնահատում | Հարցման վրա հիմնված ուսում<br>Հետազոտական նախագծեր<br>Ատենախոսություններ<br>Խմբային աշխատանք<br>Մտքի քարտեզագրում<br>Խնդրի լուծում<br>Միջառարկայական նախագծեր<br>Ծառայությունների ուսուցում<br>Ուսանողի կողմից կազմակերպված միջոցառում | Ամսագրեր<br>Ինքնագնահատում | ԱԶԾ (PDP)<br>Ուսուցման տեղեկամատյաններ<br>Նախագծեր<br>Անկախ հետազոտություն<br>Ատենախոսություններ<br>Պրակտիկա աշխատավայրում<br>Պորտֆոլիոյի ստեղծում |

ՆՇՈՒՄՆԵՐ

Այս աղյուսակն օգտակար է վերապատրաստման մեթոդն ՈւԽ-ները սահմանող ձևին համապատասխանեցնելու համար: Այդուհանդերձ, այս ուղեցույցում առաջարկվող մոդելը կոչ է անում ՈւԽ-ները հանգամանորեն համապատասխանեցնել ոչ միայն գնահատման համակարգին, այլև վերապատրաստման և ուսուցման գործընթացներին: Ինչպես արդեն նշվեց, գնահատման գործիքների վաղ մշակումը նախատեսում է տարբեր «առաջադրանքներ», որոնք կարող են ներհյուսվել վերապատրաստման նախագծում: Օրինակ՝

| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ | ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ |
|---|---|---|
| Այս դասընթացի ավարտին դուք պետք է կարողանաք՝ | | |
| գնահատել մեծահասակների կրթության ոլորտում առկա խնդիրների գործնական լուծումները | Պրակտիկ խնդրի վերաբերյալ դեպքի ուսումնասիրություն, որի համար ուսանողը պետք է լուծումներ առաջարկի<br><br>Պորտֆոլիո, որտեղ ուսանողը կարևորում է սեփական պրակտիկան՝ սևեռվելով խնդիրների և առաջարկվող լուծումների վրա | Դեպքի գործնական ուսումնասիրության քննարկում<br><br>Աշխատանքի տեղավորման վերահսկում |
| կատարել հիմնավոր համեմատություններ Եվրոպայի տարբեր հատվածների և պատմական տարբեր փուլերի միջև՝ պատմական ծանրակշիռ վկայությունների հիման վրա | **Բանավիճային փաստաթուղթ**, որում երկու ուսանողներ որդեգրում են դիրքորոշում և պետք է հիմնավորեն իրենց մոտեցումը սեմինարի մյուս մասնակիցների առջև, դնեն քվեարկության և իրենց փաստարկները ներկայացնեն գրավոր՝ նշելով քվեարկության արդյունքները և թե ինչ հավելյալ գիտելիք են քաղել բանավեճից | Թեման/ժամանակահատվածը լուսաբանող դասախոսությունների շարք<br><br>Սեմինար քննարկում՝ օգտագործելով հիմնական աղբյուրները և ընդհանուր երկրորդային նյութերը՝ ընդհանուր պատկերացում կազմելու համար<br><br>Առաջարկվող գրականություն |

## գ. Դասընթացի մեկնարկը

Թեև կապերը ՎԱԻ-ի հետ դատավորների և դատախազների համար կամ ՓՄ-ի հետ փաստաբանների համար պետք է ստեղծել ավելի վաղ փուլում, HELP-ի քարտուղարության և Գործընկերոջ միջև համագործակցությունն անհրաժեշտ է ապահովել նախապատրաստական փուլում՝ նախքան դասընթացի մեկնարկը: Անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը՝

- Որոշում կայացնել ձևաչափի, տևողության և ժամանակացույցի վերաբերյալ:

- Որոշում կայացնել շարունակական վերապատրաստման շրջանակում կրեդիտների ճանաչման վերաբերյալ (եթե կիրառելի է):
- Ընտրել սովորողներին:
- Կազմակերպել մեկնարկային հանդիպում: Մեկնարկային հանդիպումը ծրագրի մեկնարկին նվիրված միջոցառում է, որը հաճախ առաջին հնարավորությունն է վերապատրաստողի համար՝ սովորողներին/դասընթացի մասնակիցներին հանդիպելու և դասընթացի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն տրամադրելու համար:

## i. Ձևաչափ, տևողություն և ժամանակացույց

Ելնելով ներպետական կարիքների գնահատումից՝ ՎԱԻ/ՓՄ-ն ազգային դասընթացավարի հետ միասին փոխհամաձայնության է գալիս դասընթացի ձևաչափի, տևողության և ժամանակացույցի շուրջ: HELP-ի քարտուղարությանը պետք է տեղեկացնել դասընթացի մեկնարկի, դրա կազմակերպման և մատուցման վերահսկման մեխանիզմների մասին:

Դասընթացի ձևաչափի վերաբերյալ համաձայնության գալու ժամանակ Գործընկեր հաստատությունը պետք է որոշում կայացնի, թե արդյոք դասընթացը իրականացվելու է հեռաուսուցման ձևաչափով, ինչը նշանակում է, որ սովորողները կհանդիպեն միայն մեկնարկային հանդիպմանը և կմասնակցեն դասընթացին, որի վերապատրաստման նյութերը հասանելի կլինեն HELP-ի Moodle հարթակում, թե զուգակցված ուսուցման ձևաչափով, այսինքն՝ հեռաուսուցման և առերես դասավանդման համադրությամբ, երբ սովորողները կմասնակցեն դասախոսությունների և զուգահեռաբար կօգտվեն վերապատրաստման նյութերից, որոնք տեղադրված կլինեն HELP-ի Moodle էջում:

Ինչ վերաբերում է տևողությանը և ժամանակացույցին, ապա նախքան դասընթացի մեկնարկը պետք է որոշել, թե արդյոք մոդուլները սովորողներին հասանելի են լինելու: Այլ կերպ ասած՝ անկախ նրանից, թե վերապատրաստման նյութերը նախապես վերբեռնվել են, թե ոչ, դրանց հասանելիությունը սահմանափակ է մինչև հրապարակման նախատեսված օրը: Նախորդ մոդուլները հասանելի են մնում առցանց ձևաչափով մինչև այդ դասընթացի ավարտը, և ավարտից հետո էլ վերապատրաստման ամբողջ փաթեթը նույնպես մնում է հասանելի: Հրապարակման ժամկետներն ազդեցություն ունեն սովորողների միջին հաճախելիության վրա, որը զգալիորեն նվազում է, եթե դասընթացի տևողությունը գերազանցում է երեք ամիսը:

Լավագույն գործելակերպն է սովորողներին նախապես տեղեկացնել (ընտրության գործընթացում կամ ամենաուշը մեկնարկային հանդիպման ժամանակ) դասընթացին արդյունավետ մասնակցելու համար պահանջվող ժամանակաքանակի մասին: Սովորողները պետք է նախապես տեղյակ լինեն վկայական ստանալու համար սահմանված ժամկետներում նախատեսված իրենց պարտավորությունների մասին: Նպատակը, կրկին, անսպասելի ծանրաբեռնվածության հետևանքով հաճախելիության հետ կապված խնդիրներից խուսափելն է:

## ii. Կրեդիտների ճանաչում

Այն երկրներում, որտեղ սովորողները հնարավորություն ունեն հավատարմագրելու դասընթացին իրենց մասնակցությունը, ՎԱԻ/ՓՄ-ն կարող է համաձայնություն տալ՝ ճանաչելու դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակիցների կողմից ստացած որոշակի

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

թվով կրեդիտները: Կրեդիտների քանակը, սովորաբար, հաշվարկվում է գործընկերոջ կողմից վերապատրաստմանը հատկացրած ժամերի հիման վրա:

Փորձը ցույց է տալիս, որ կրեդիտների ճանաչումը մեծացնում է սովորելու մոտիվացիան և նպաստում է դասընթացն ավարտելուն:

### iii. Մասնակիցների ընտրություն

HELP-ի հեռավար/զուգակցված դասընթացը մեկնարկում է մինչև 25 անդամ ունեցող ընտրված դատավորների, փաստաբանների կամ դատախազների խմբերի համար: Քանի որ դասընթացը վարում է ազգային դասընթացավարը, որը պետք է գնահատի մասնակիցների կատարած առաջադրանքները, ապա 25-ը մասնակիցների առավելագույն քանակն է: Այն դեպքերում, երբ ՎԱԻ/ՓՄ-ն ձգտում է ներառել ավելի մեծ թվով մասնակիցների, ապա պետք է նշանակվի երկրորդ դասընթացավարը:

Ներպետական արդարադատության վերապատրաստման համակարգից կախված՝ որոշ երկրներում պիլոտային խումբը կազմված է լինում դատավորներից և հանրային դատախազներից: Այլ երկրներում վերապատրաստումը կազմակերպվում է առանձին մարմինների կողմից, և երկու համապատասխան մարմիններն էլ պետք է համաձայնության գան համատեղ վերապատրաստում կազմակերպելու վերաբերյալ: Ի տարբերության սրան՝ փաստաբանների համար նախատեսված վերապատրաստումը միայն համապատասխան մասնագիտացված մարմնի պատասխանատվության շրջանակում է, ինչպես օրինակ՝ ՓՄ-ի:

HELP ծրագրի շրջանակում ներառված են թե՛ վերպետական, թե՛ միջմասնագիտական դասընթացներ: HELP-ի վերպետական դասընթացը մեկնարկում է տարբեր երկրներից իրավական ոլորտի մասնագետների նույն կատեգորիաների համար: Աշխատանքային լեզուն անգլերենն է կամ այն լեզուն, որն ընդհանուր է տվյալ երկրների համար, եթե խոսքը համանման երկրներ ներառող տարածաշրջանային դասընթացի մասին է (օրինակ՝ Բալկանների կամ ռուսախոս երկրների համար նախատեսված տարածաշրջանային դասընթաց): Վերպետական դասընթացի մեկնարկի հավելյալ արժեքն այն է, որ այն լավագույն փորձի փոխանակման հնարավորություն է ստեղծում այլ իրավակարգի մասնագետների համար: Արդյունքում՝ դասընթացը լինում է ավելի դինամիկ և իր բնույթով միջազգային:

HELP-ի միջմասնագիտական դասընթացը ներառում է իրավական ոլորտի և փոխհատվող հարցերով զբաղվող մասնագետների: Թեև նման դասընթաց առայժմ չի մեկնարկել, HELP-ը մշակել է ուսումնական մի շարք ծրագրեր այնպիսի թեմաների շուրջ, որոնք ներառում են միջմասնագիտական հարցեր: Նման հնարավորություն քննարկվել է 2015թ. HELP Ցանցի համաժողովի[32] ընթացքում՝ *Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գործընթացում իրավական ոլորտի և այլ մասնագետների միջև փոխգործակցություն* խորագրով:

Անկախ դասընթացի բնույթից՝ մասնակիցներն ընտրվում են ՎԱԻ/ՓՄ-ի կողմից HELP-ի քարտուղարության հետ միասին: Ընտրության չափանիշները և ընթացակարգերը սահմանվում են նախապես և ներկայացվում են հավանական մասնակիցներին: Սովորաբար, հայտարարությունը տարածվում է իրավական ոլորտի այն մասնագետների շրջանում, որոնք կարող են դիմել սահմանված ժամկետում:

32 http://www.coe.int/en/web/help/-/15519813:

Ընտրություն կատարելու գործընթացի ավարտից հետո մասնակիցներին տեղեկացնում են մեկնարկային հանդիպման մասին և խնդրում հաշիվ բացել HELP-ի Moodle հարթակում: Բացի նրանից, որ մասնակիցները կարող են ուսումնասիրել HELP-ի ինտերնետային կայքը և Moodle հարթակը՝ ծանոթանալով ծրագրին, հաշիվների գոյությունը հեշտացնում է նրանց հետագա ներգրավվումը Moodle էջի դասընթացին:

### iv. Մեկնարկային հանդիպման կազմակերպում

Մեկնարկային հանդիպումը, ըստ էության, առաջին հանդիպումն է HELP-ի քարտուղարության, ազգային դասընթացավարի, ՎԱԻ/ՓՄ-ի ներկայացուցչի և դասընթացի մասնակիցների միջև: Դրա նպատակն է մասնակիցներին ներկայացնել HELP ծրագիրը և նրանց տրամադրել համապատասխան ամբողջ տեղեկատվությունը: Դա հատկապես կարևոր է հեռաուսուցման դասընթացի մեկնարկի դեպքում, քանի որ այն կարող է մասնակիցների համար ներկա գտնվելու և դասընթացավարին անձնապես հանդիպելու միակ հնարավորությունը լինել:

Մեկնարկային հանդիպումը մեկօրյա հանդիպում է և հնարավորության դեպքում կազմակերպվում է պիլոտային երկրներում ՎԱԻ/ՓՄ-ի տարածքում: Միջոցառմանը պետք է նախապատրաստվել, քանի որ դասընթացի մասնակիցներին կարող է անհրաժեշտ լինել մեկնել իրենց քաղաքներից՝ հանդիպման վայր հասնելու համար: Քանի որ մեկնարկային հանդիպումը կազմակերպվում է պիլոտային երկրի պետական լեզվով, սովորաբար, անհրաժեշտ է լինում թարգմանչական ծառայություն՝ HELP-ի քարտուղարության և միջազգային բանախոսների խոսքը թարգմանելու համար:

#### Մեկնարկային հանդիպման բովանդակությունը

Ինչպես արդեն նշվեց, մեկնարկային հանդիպման հիմնական նպատակը մասնակիցներին գործնական ամբողջ տեղեկատվության, ինչպես նաև անձնապես հանդիպելու հնարավորության տրամադրումն է: Այդուհանդերձ, մեկնարկային հանդիպման նպատակն է նաև մասնակիցներին ներկայացնել դասընթացի թեման մեկ կամ ավելի ներկայացումների միջոցով:

Հաշվի առնելով, որ մեկնարկային հանդիպման օրակարգը պետք է խմբագրվի՝ ըստ թեմայի, պիլոտային երկրի կարիքների, բանախոսների հասանելիության և այլն, այն պետք է ներառի հետևյալը՝

- Ողջույնի խոսք,
- HELP ծրագրի ներկայացում,
- ՄԻԵԿ-ի կիրառումը ներպետական մակարդակում,
- Համապատասխան թեմայի և դրա վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի ներկայացում,
- Դասընթացի ծրագրի ներկայացում,
- Մասնակիցների ակնկալիքները և կարիքները:

Սովորաբար, ողջույնի խոսքով հանդես են գալիս հյուրընկալող ՎԱԻ/ՓՄ-ի մեկ կամ մի քանի ներկայացուցիչ՝ որպես HELP-ի քարտուղարության հետ համագործակցության առհավատչյա: Այնուհետև քարտուղարության ներկայացուցիչը ներկայացնում է HELP ծրագիրը: Ժամանակի սղության նկատառումով ներկայացումը կենտրոնանում է ծրագրի

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

հիմնական ասպեկտների, մասնավորապես՝ HELP ցանցի, դրա նպատակների, գործունեության և մեթոդաբանության վրա: Մեկնարկային հանդիպման ընթացքում նաև ցուցադրվում է HELP-ի ինտերնետային կայքը, ինչը հետապնդում է երկու նպատակ: Առաջին՝ այն մասնակիցներին հնարավորություն է ընձեռում ավելի շատ տեղեկություններ գտնել HELP-ի մասին, և երկրորդ՝ օգտակար է մասնակիցներին ցույց տալ, թե ինչպես մուտք գործել HELP-ի Moodle հարթակ:

Ներպետական մակարդակում ՄԻԵԿ-ի կիրառության և ՄԻԵԴ-ի համապատասխան նախադեպային իրավունքի մասին, որպես կանոն, ներկայացնում են միջազգային և/կամ ազգային բանախոսները, որոնց համատեղ նշանակում են HELP-ի քարտուղարությունը և ՎԱԻ/ՓՄ-ն: Բանախոսների ընտրության մասին ավելի մանրամասն ներկայացված է հաջորդիվ:

Ազգային դասընթացավարը մասնակիցներին տրամադրում է գործնական բնույթի տեղեկություններ, ինչպես օրինակ՝ դասընթացի տևողության և ժամանակացույցի մասին: Ինչպես ավելի վաղ նշվեց (մաս 2, քայլ 3, գ, էջ 119), այդ հարցերը համաձայնեցվում են նախքան մեկնարկային հանդիպման կազմակերպումը:

Լավ գործելակերպ է մասնակիցների ակնկալիքների և կոնկրետ կարիքների վերաբերյալ տեղեկանալ կարծիքների հավաքագրման միջոցով: Դրանք կարող են վերանայվել նախքան դասընթացի ավարտը և համեմատվել դասընթացի վերաբերյալ մասնակիցների վերջնական արձագանքների հետ:

Տե՛ս՝ Հավելված 4՝ օրակարգ (էջ 158):

### Բանախոսների ընտրություն

Մեկնարկային հանդիպմանը մասնակցելու և թեման ներկայացնելու հրավեր են ստանում ոլորտի միջազգային և ազգային փորձագետները: Հաջող մեկնարկային հանդիպման համար առանցքային նշանակություն ունի բանախոսների ընտրությունը՝ նկատի առնելով, որ ներկայացման բարձր մակարդակը կարող է մասնակիցներին ներգրավել թեմայի մեջ և միաժամանակ մոտիվացնել նրանց լիարժեք մասնակցել դասընթացին:

Լավ գործելակերպ է որպես միջազգային բանախոս ԱԽ-ի անդամներից մեկին հրավիրելը, քանի որ նա ծանոթ է թեմային և դասընթացի բովանդակությանը: Որպես այլընտրանք՝ ներկայացմամբ կարող է հանդես գալ ՄԻԵԴ-ի ռեեստրից կամ հետազոտությունների բաժնից որևէ փաստաբան:

Ազգային բանախոսը հանդես է գալիս ներպետական իրավակարգին ուղղված ներկայացմամբ, որը նախատեսված է դասընթացին ներգրավված իրավական ոլորտի մասնագետների տվյալ կատեգորիայի համար: Մասնակիցների հետաքրքրությունը խթանելու նպատակով՝ հղումներ են արվում ներպետական օրենսդրությանը և ներպետական նախադեպային իրավունքի թարմ օրինակներին:

### Հետագա առերես հանդիպում զուգակցված դասընթացի դեպքում

Երբ ուսումնական ծրագիրը նախատեսված է զուգակցված դասընթացի մեկնարկի համար, մեկնարկային հանդիպմանը հետևում են առերես այլ հանդիպումներ: Դրանք կազմակերպվում են ՎԱԻ/ՓՄ-ի կողմից, և դրանց մասնակցում է ազգային դասընթացավարը՝ անհրաժեշտության դեպքում ազգային բանախոսի հետ միասին: Այս հանդիպում-

ները կազմակերպվում են HELP-ի քարտուղարությունից անկախ, ինչը նշանակում է, որ դասընթացավարը պետք է շարունակաբար տեղեկացնել յուրաքանչյուր հանդիպման օրվա և բովանդակության մասին, սակայն քարտուղարությունը չի զբաղվում դրա կազմակերպմամբ:

## դ. Վերապատրաստման տրամադրում՝ ինչպե՞ս և ո՞ւմ կողմից

### i. Մի ոլորտում վերապատրաստում անցկացնելու տարբեր մեթոդները HELP-ի ռեսուրսների միջոցով

#### Հեռաուսուցում

Հեռաուսուցման դասընթացները, HELP-ի մեթոդաբանության համաձայն, առցանց դասընթացներ են, երբ բոլոր նյութերը գտնվում են HELP-ի հարթակում, և ամբողջ ուսումնական գործընթացը ծավալվում է այնտեղ՝ ազգային դասընթացավարի օգնությամբ: HELP-ը վերապատրաստում է ազգային դասընթացավարներին HELP-ի հարթակից և մեթոդաբանությունից օգտվելու համար: Նրանց դերն է դասընթացը ներպետական իրավակարգին և մասնակիցների կարիքներին համապատասխանեցնելը, մասնակիցների հետ յուրաքանչյուր սեսիային հետևելը՝ դասընթացի բովանդակությանը և հարթակում հրապարակված տարբեր գործողություններին համահունչ: Այդ գործողությունները կարող են ներառել վեբ համաժողովներ, աշխատաժողովներ, համատեղ մշակված փաստաթղթեր, չաթեր, ֆորումներ, ինքնագնահատմանն ուղղված գործողություններ, ինչպես նաև իրավիճակային խնդիրներ և վերապատրաստողի կողմից գնահատում: Այս ձևաչափը խթանում է փոխգործակցությունն ինչպես մասնակիցների և վերապատրաստողների, այնպես էլ մասնակիցների միջև, որոնք կարող են կարծիքներ փոխանակել և հարցեր տալ միմյանց վերոնշյալ գործիքների օգնությամբ:

Հեռաուսուցման առավելությունը նյութերի դյուրամատչելիությունն է և հարմարությունը մասնակիցների ուսման տեմպի և աշխատանքային գրաֆիկների առումով:

#### Ինքնուսուցում

Ինքնուսուցման ռեսուրսները ներառում են հեռաուսուցման դասընթացներ, որոնք արդեն փորձարկվել են և փոխանցվել ինքնուսուցման բաժին: Այս դեպքում դասընթացն այլևս չունի այն առավելությունը, որը նախատեսում է փոխգործակցության ապահովում մասնակիցների միջև, սակայն այն հասանելի է հարթակում հաշիվ ունեցող բոլոր օգտատերերի համար: Յուրաքանչյուր օգտատեր կարող է անցնել դասընթացն իր ընտրած տեմպով և օգտագործել **միայն ինքնագնահատման գործիքները**:

Հարթակի ինքնուսուցման բաժինը նաև ներառում է ՄԻԵԿ-ի հոդվածների վերաբերյալ բազմաթիվ ուսումնական նյութեր՝ տարբեր լեզուներով: Հասանելի են տարբեր թեմաների շուրջ ձեռնարկներ, ինչպես նաև ՄԻԵԿ-ին առնչվող տարբեր հարցերին նվիրված ներկայացումներ, որոնք տրամադրվում են ազգային դասընթացավարների կողմից:

#### Զուգակցված ուսուցում

Զուգակցված ուսուցման դեպքում կիրառվում են թե՛ առցանց հեռաուսուցումը և թե՛ ավելի ավանդական առերես վերապատրաստումը: Այն հնարավորություն է տալիս ինչպես ժա-

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

մանակ խնայել և օգտվել էլեկտրոնային հարթակում ներկայացվող նյութերից, այնպես էլ տրամադրում է առերես վերապատրաստման և կենդանի շփման առավելություններ: Այս դեպքում հեռաուսուցումը կարելի է կիրառել առերես դասին նախապատրաստվելու նպատակով՝ որպես գիտելիքների նախնական տրամադրման և առաջադրանքներ տալու կամ միասին կատարելու եղանակ:

### ii. HELP-ի քարտուղարության դերը

HELP-ի քարտուղարությունն աջակցում է HELP ցանցի անդամներին ՄԻ ոլորտում վերապատրաստում անցկացնելու հարցում ցանկացած ժամանակ, երբ նրանք մտադիր են կազմակերպել առցանց կամ զուգակցված վերապատրաստում ՄԻԵԿ-ի վերաբերյալ: HELP-ի բոլոր նյութերն առցանց հասանելի են HELP-ի ինտերնետային կայքում, դրանց օգտագործումն անվճար է, և դրանք հասանելի են իրավական ոլորտի այն բոլոր մասնագետներին, որոնք հաշիվ ունեն HELP-ի ինտերնետային կայքում: Եթե վերապատրաստման ազգային ինստիտուտը կամ փաստաբանների միությունը ցանկանում է սկսել հեռավար կամ զուգակցված դասընթաց առկա թեմաներից որևէ մեկի վերաբերյալ, ապա HELP-ի քարտուղարությունն աջակցում է դասընթացի կազմակերպման հարցում, տրամադրում վերապատրաստման նյութերը, ինչպես նաև ապահովում է ուսուցման միջավայրը:

Հասանելի դասընթացների մասին ավելին իմանալու համար, ինչպես նաև պարզելու, թե դրանք որ լեզուներով են արդեն թարգմանվել, ծանոթացեք HELP-ի դասընթացների կատալոգին[33]:

HELP-ի քարտուղարությունը նաև ապահովում է, որպեսզի HELP-ի մեթոդաբանության մասին տեղեկություններ ներկայացվեն Եվրոպայի խորհրդի կողմից իրականացվող գործընկերային յուրաքանչյուր ծրագրի համատեքստում՝ իրավական ոլորտի եվրոպացի մասնագետներին ՄԻԵԿ-ի վերաբերյալ տրամադրվող վերապատրաստումների առումով ներդաշնակեցում երաշխավորելու նպատակով:

HELP-ի քարտուղարությունը համագործակցում է մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումներով զբաղվող միջազգային այլ կազմակերպությունների (ՄԱԿ-ի գործակալություններ, ՄԻԳՀԳ, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ և այլն) և միջազգային մակարդակում համապատասխան գործընկերների հետ (ԴՈՒԵՑ, CCBE և այլն):

### iii. Վերապատրաստման ինստիտուտի դերը

Պետություններում իրավական ոլորտի մասնագետների վերապատրաստման համար պատասխանատու վերապատրաստման ինստիտուտն ունի ՄԻ-ի և ՄԻԵԿ-ի ոլորտում իրավական ոլորտի մասնագետներին վերապատրաստելու պատասխանատվություն: HELP-ի ռեսուրսներն օգտագործելու հնարավորությունը ենթադրում է վերապատրաստման որակյալ նյութերի հասանելիության ապահովում: Առցանց ձևաչափը հնարավորինս մեծ թվով իրավական ոլորտի մասնագետներ վերապատրաստելու ծախսարդյունավետ

33 https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168065457b:

միջոց է:

ՎԱԻ-ները և ՓՄ-ները պատասխանատվություն են կրում՝ օգնելու ազգային դասընթացավարներին ներպետական իրավակարգին նյութերի համապատասխանեցման հարցում: Դասընթացի փուլայնացումից և այն մասնակիցների առաջին պիլոտային խմբում փորձարկելուց հետո ՎԱԻ/ՓՄ-ն պետք է այն ընդունելու որոշում կայացնի և հոգ տանի, որ դասընթացը լինի արդիական ու շարունակի օգուտ բերել տվյալ երկրի իրավական ոլորտի մասնագետներին:

## iv. Վերապատրաստողի դերը

HELP-ի մոդելային դասընթացի տեղայնացումը

HELP-ի դասընթացի վերապատրաստողի դերը HELP-ի մոդելային դասընթացը սեփական ներպետական իրավակարգին համապատասխանեցնելն է: Երբ դասընթացը մեկնարկում է ձեր երկրում և ձեր պետական լեզվով, ապա դասընթացի նյութերը ձեզ ուղարկվում են ձեր պետական լեզվով: Այդուհանդերձ, այս նյութերն անհրաժեշտ է համապատասխանեցնել ձեր ներպետական իրավակարգին, ինչպես նաև թիրախային լսարանին:

### Համապատասխանեցում ներպետական իրավակարգին

HELP-ը պահանջում է, որպեսզի HELP-ի դասընթաց մեկնարկող ազգային դասընթացավարները պատրաստեն ներածական փաստաթուղթ՝ նկարագրելով, թե ինչպես են ՄԻԵԿ-ը և դասընթացին վերաբերող այլ փաստաթղթերը մեկնաբանվում ներպետական մակարդակում: ՄԻԵԿ-ի ներպետական կիրառությունը կարևոր նախադրյալ է, որը մասնակիցները պետք է հասկանան: Եթե ձեր երկրում նախկինում մեկնարկած դասընթացների համար արդեն իսկ մշակվել են նման փաստաթղթեր, ապա դուք կարող եք կրկին օգտագործել այդ փաստաթուղթը:

Դասընթացը ձեր ներպետական իրավակարգին համապատասխանեցնելը նշանակում է վերցնել մոդելային դասընթացը և որոշել, թե ինչն է համապատասխան և ինչն է առավել կարևոր: Տարբեր երկրներ ունեն տարբեր խնդիրներ: Մոդելային դասընթացի նպատակն է ներառել հնարավորինս շատ խնդիրներ և փորձել մտածել ծագած բոլոր հնարավոր խնդիրների մասին ՄԻԵԿ-ի տեսանկյունից՝ առավելապես հիմնվելով ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի վրա: Եթե դուք տեսնում եք, որ որևէ խնդրի արժե տրամադրել ավելի շատ ժամանակ, ապա ձեր դերը հենց դա ընդգծելն է:

Գործնականում սա ենթադրում է, որ դուք ձեր դասընթացի մասնակիցների համար պետք է նշեք, թե ինչին է անհրաժեշտ ավելի շատ ուշադրություն դարձնել, և տրամադրեք համապատասխան լրացուցիչ նյութեր: Moodle հարթակում դուք հնարավորություն ունեք ավելացնել լրացուցիչ փաստաթղթեր, նախադեպային իրավունք, հղումներ, տեսանյութեր և գործողության այլ տեսակներ կամ ռեսուրսներ:

### Համապատասխանեցում թիրախային լսարանին

Ներպետական իրավակարգին ձեր դասընթացի համապատասխանեցումից հետո՝ համապատասխանեցման երկրորդ մակարդակը թիրախային լսարանին այն համապատասխանեցնելն է: Դա ենթադրում է ճանաչել ձեր լսարանը և գնահատել կարիքները:

Իրավական ոլորտի մասնագետների տարբեր կատեգորիաներ ունեն տարբեր կարիք-

ՆՇՈՒՄՆԵՐ

ներ: Սա կարևոր է հաշվի առնել ոչ միայն լսարանին տրամադրվող տեղեկատվության տեսակի առումով, այլև այդ տեղեկատվությունը ներկայացնելու եղանակի և այդ նպատակով կիրառվող գործիքների տեսանկյունից:

Ինչ վերաբերում է առաջին կետին, այսինքն՝ մատուցվելիք տեղեկատվության տարբեր տեսակներին, ապա, որպես ձեր դասընթացի մասնակիցների գործընկեր, դուք կարող եք իմանալ, թե որ տեղեկատվությունն է առավել կարևոր մասնակիցների համար և թե նրանց իսկապես ինչ է անհրաժեշտ իմանալ: Դա ձեզ հնարավորություն կտա կենտրոնանալ հիրավի կարևոր խնդիրների վրա: Շատ կարևոր է ապահովել դասընթացի արդիական և գործնական լինելը: Մասնակիցները պետք է հասկանան այս վերապատրաստման անհրաժեշտությունը և իմանան, թե ինչպես են ապագայում կիրառելու ստացված տեղեկատվությունը:

Ինչ վերաբերում է երկրորդ կետին՝ դասընթացի մասնակիցներին տեղեկատվությունը ներկայացնելու տարբեր եղանակների մասին, ապա դա նույնպես կարևոր է հաշվի առնել այն առումով, որ ոչ բոլոր մասնակիցներն են արձագանքելու ուսուցման նույն մոտեցումներին: Դուք պետք է հաշվի առնեք՝ արդյոք վերապատրաստելու եք իրավական ոլորտի ավագ մասնագետների, թե ուսանողների: Այս երկու խիստ տարբեր դեպքերում մոտեցումը ևս շատ տարբեր է: Այդուհանդերձ, բազմազան ռեսուրսների և գործողության տեսակների հասանելիությունը միշտ էլ օգտակար է, և գործնական մոտեցումը հաջողության բանալին է: Վերապատրաստումն առավել արդյունավետ է, երբ այն ավելի ինտերակտիվ է: Հետևաբար, զուգակցված ուսուցումը շատ օգտակար է: Էլեկտրոնային ուսուցման հարթակը կարող է, օրինակ, օգտագործվել տեղեկատվություն հաղորդելու և առերես հանդիպմանը նախապատրաստվելու համար: Կարևոր է ճանաչել թիրախային լսարանը՝ նրանց արդյունավետ վերապատրաստելու նպատակով:

Գործնական և արդյունավետ վերապատրաստումը ենթադրում է ոչ միայն գիտելիքի ստացում, այլև երաշխիք, որ մասնակիցները հմտություններ ձեռք կբերեն այդ գիտելիքը կիրառելու համար և համապատասխան մոտեցում կզարգացնեն այդ հմտություններն արդյունավետ օգտագործելու համար:

### Մոդուլների հրապարակում[34]

Ինչպես նախկինում նշվեց, վերապատրաստման նյութերը կարող են միանգամից վերբեռնվել նախքան դասընթացի մեկնարկը և/կամ կանոնավոր կերպով վերբեռնվել ըստ մոդուլների: Եթե բոլոր նյութերը միանգամից են վերբեռնվում, ապա դրանք հասանելի կլինեն մասնակիցներին՝ ըստ դասընթացի ժամանակացույցի:

Ազգային դասընթացավարի խնդիրն է ապահովել, որպեսզի յուրաքանչյուր մոդուլ մասնակիցներին հասանելի լինի պատշաճ ժամկետներում (սա ներառում է դասընթացի բովանդակություն, ներպետական իրավակարգին համապատասխանեցում, համապատասխան նախադեպային իրավունք, լրացուցիչ ռեսուրսներ, առաջադրանքներ) և օգնել նրանց տեխնիկական խնդիրներ ծագելու դեպքում:

34 Moodle-ին առնչվող բոլոր հարցերի դեպքում օգտվեք քայլ առ քայլ ուղեցույցից և ուսումնական ձեռնարկներից, որոնք հասանելի են HELP-ի հարթակում՝ http://help.elearning.ext.coe.int/:

### Դասընթացի նախագծում

«Դասընթացի նախագծում» ասելով՝ նկատի ունենք այն եղանակը, որի միջոցով դասընթացը ձևավորվում է և ներկայացվում Moodle հարթակում, որը HELP-ի կողմից օգտագործվող էլեկտրոնային ուսուցման հարթակն է:




Յուրաքանչյուր դասընթաց սկսվում է դասընթացի պատկերով և վերնագրով: Դրանցից ներքև զետեղված են նորությունների ֆորումը և քննարկումների ֆորումը: Ֆորումների կիրառման մասին տես ստորև՝ էջ 129: Այս ֆորումներն ընդհանուր են դասընթացի համար: Ապա կարելի է ավելացնել քննարկումների համար նախատեսված առանձին ֆորումներ յուրաքանչյուր մոդուլի համար՝ առավել որոշակի հարցերի քննարկման նպատակով:

Այնուհետև յուրաքանչյուր մոդուլ ներկայացվում է միևնույն ձևով, ներառյալ՝ մոդուլի անվանումը (մոդուլ 1, մոդուլ 2 ...), տվյալ մոդուլի համար նախատեսված պատկերը և այդ պատկերի ներքևում մոդուլի վերնագիրը: Դասընթացի բովանդակությունն այնուհետ ներկայացվում է «պիտակներով», որոնք բաշխվում են հետևյալ ձևով՝

- Ներկայացումներ
- Լրացուցիչ ռեսուրսներ
- Օգտակար հղումներ
- Տեսանյութեր և մուլտիմեդիա
- Գնահատում
- Լրացուցիչ առաջադրանքներ

---

- Ստեղծեք գեղեցիկ տեսք և զգացողություն:
- Ռեսուրսները տեղադրեք դրանցից օգտվելու հարմար ձևով:

---

### SCORM փաթեթի վերբեռնում

SCORM փաթեթը (փաթեթ, որի հիման վրա իրականացվում է էլեկտրոնային ուսուցումը) այն ձևաչափն է, որ ստանում է ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման դասընթացը: HELP-ի քարտուղարությունը, սովորաբար, այն վերբեռնում է դասընթացի էջին և ինտերնետային էջի՝ ինքնուսուցման բաժնում: Սա կատարվում է «ավելացնել միջոցառում կամ ռեսուրս» հատված գնալու և «SCORM» փաթեթ տարբերակն ընտրելու միջոցով:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

### Նյութերի ներմուծում

Մեկ դասընթացից մյուսը նյութեր ներմուծելը ոչ միայն հնարավոր է, այլև՝ դյուրին: Դասընթացը կարելի է հեշտությամբ կրկնօրինակել, երբ այն անհրաժեշտ է վերսկսել:

### Լրացուցիչ ռեսուրսներ

Լրացուցիչ ռեսուրսները կարևոր են հատկապես ներպետական իրավակարգին դրանք համապատասխանեցնելու գործընթացում: Լրացուցիչ ռեսուրսները կարող են ներառել հղումներ ինտերնետային կայքերին, պարունակել լրացուցիչ գրականություն և հղումներ դասագրքերին: Դրանք այնպիսի ռեսուրսներ են, որոնք կարող են օգտակար լինել դասընթացի մասնակցի համար, սակայն հիմնական դերակատարություն չունենալ գիտելիքների ստացման առումով: Լրացուցիչ ռեսուրսների ձևով ներկայացվում են թեմայի վերաբերյալ հասանելի ռեսուրսները:

### Տեսանյութեր

Տեսանյութերը կարող են օգտագործվել երկու տարբերակով: Համապատասխան տեսանյութերին հղումները կարող են ավելացվել դասընթացին: Հանրային տիրույթում զետեղված և թույլտվություն պահանջող տեսանյութերը կարող են օգտագործվել այս ձևով: Տեսանյութերը կարելի է նաև ներդնել դասընթացում, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տեսանյութի տեսակին: Եվրոպայի խորհրդի ալիքից կամ HELP ծրագրից ստացված տեսանյութերը կարելի է ներդնել հենց դասընթացի մեջ: Այս ձևով կարելի է նաև օգտագործել ձեր սեփական տեսանյութերը կամ հատուկ ձեր դասընթացի համար մշակված տեսանյութերը:

Օգտվե՛ք Moodle-ի քայլ առ քայլ ուղեցույցից՝ պարզելու, թե ինչպես դա անել:

## Ֆորումների օգտագործում

HELP-ի Moodle հարթակում դասընթացի էջին ի սկզբանե զետեղված են երկու ֆորումներ՝ նորությունների և քննարկումների: Թեև այդ ֆորումները կառուցված են միևնույն ձևով, դրանց բովանդակությունը և շրջանակը տարբեր է, և ազգային դասընթացավարից պահանջվում է այդ երկուսն էլ կառավարել:

### Նորությունների ֆորում

Նորությունների ֆորումի նպատակն է մասնակիցներին տրամադրել դասընթացի մասին ամբողջ գործնական տեղեկատվությունը, ինչպես օրինակ՝ մոդուլների հրապարակման ամսաթվերը, վերջնաժամկետները և այլն:

### Քննարկումների ֆորում

Եվ ընդհակառակը, քննարկումների ֆորումն այն տիրույթն է, որտեղ մասնակիցները կարող են բանավեճ ծավալել: ԱԽ-ի անդամների առաջարկած թեմայից ելնելով՝ ազգային դասընթացավարը հարցեր է տալիս այդ թեմայի և ներպետական օրենսդրության

կամ նախադեպային իրավունքի վերաբերյալ: Նկատի առնելով, որ ֆորումը նախատեսված է որպես մի տիրույթ, որտեղ դասընթացի մասնակիցներն արտահայտում են իրենց կարծիքը, խորհուրդ է տրվում կիրառել բաց հարցերի ձևաչափը: Բացի այդ, մասնակիցները պետք է տեղյակ լինեն այն փաստին, որ վերջնական գնահատումը չի կատարվում նրանց կողմից տրված պատասխանների հիման վրա, և որ ֆորումը հասանելի է միայն տվյալ դասընթացի մասնակիցների համար:

Ազգային դասընթացավարը սկսում է քննարկումը՝ կատարելով որևէ գրառում, որից հետո բոլոր մասնակիցները կարող են պատասխանել առկա գրառումներին և նոր գրառումներ թողնել:

### Վիքի

Վիքին Moodle հարթակում գործիք է, որը հնարավորություն է ընձեռում համատեղ ստեղծել աշխատանքային փաստաթղթեր: Դա կարող է օգտակար լինել խմբային այնպիսի աշխատանքի համար, ինչպես օրինակ՝ դատախաղին նախապատրաստումը (տես ստորև՝ էջ 132): HELP-ը նաև օգտագործում է վիքի գործիքը դասընթացի ուսումնական ծրագրի մշակման համար փորձագետների աշխատանքային խմբում, որի նպատակն է մշակել HELP-ի հեռաուսուցման դասընթաց:

### BBB վեբ համաժողովի գործիք

Moodle հարթակն առաջարկում է վեբ համաժողովներ կազմակերպելու հնարավորություն՝ առանց որևէ ծրագիր ներբեռնելու անհրաժեշտության: Գործիքը ներդրված է հարթակում և կարող է լինել դասընթացի մի մասը: Այն շատ օգտակար գործիք է, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել առցանց ներկայացումներ, ինչպես նաև օգտագործել տարբեր ձևաչափերի էլեկտրոնային փաստաթղթեր կամ PowerPoint ներկայացումներ: BBB-ն կարող է կիրառվել միմյանցից հեռու բնակվող մասնակիցների միջև քննարկում կազմակերպելու նպատակով: Օրինակ՝ այն օգտագործվել է փաստաբանների համար նախատեսված՝ ՄԻԵԴ ներկայացվող դիմում բողոքների ընդունելիության չափանիշներին նվիրված վերպետական դասընթացի մեկնարկի համար: Այն օգտագործելը դյուրին է, միանգամայն փոխարինում է առերես անցկացվող հանդիպումները և չի նախատեսում հատուկ եղանակով մուտք գործելու անհրաժեշտություն: Այս գործիքը տեղադրվում է դասընթացի էջին, և դասընթացի բոլոր մասնակիցները մուտք են ունենում դրան՝ պարզապես համապատասխան կոճակի վրա սեղմելու միջոցով:

BBB-ն նախատեսում է տեսահամաժողովը ձայնագրելու հնարավորություն: Սա հիանալի միջոց է դասընթացի այն մասնակիցների համար, որոնք հնարավորություն չեն ունեցել մասնակցել տեսահամաժողովին, դիտել այն:

### Առցանց զրույց

Առցանց զրույցները նույնպես հասանելի են՝ BBB-ի նույն ձևաչափով, սակայն առանց տեսահամակարգի: Այս գործիքը տարբերվում է ֆորումից նրանով, որ բոլոր մասնակիցները կամ նրանց մի մասը միանում են միևնույն ժամանակ և կարող են մասնակցել որևէ գաղափարի քննարկմանը կամ կարծիքներ արտահայտել: Առցանց զրույցը վարում է վերապատրաստող դասընթացավարը, որն ապահովում է հետադարձ կապը կամ օգնում է մասնակիցներին ճիշտ ուղղությամբ տանել քննարկումը:

ՆՇՈՒՄՆԵՐ

### Առաջադրանքներ

Բովանդակության մշակման փուլում ԱԽ-ի անդամները մշակում են տարբեր տեսակի առաջադրանքներ, որոնք օգտագործվում են դասընթացի ժամանակ, ինչպես օրինակ՝ իրավիճակային խնդիրներ, էսսեներ, մի քանի կամ ճիշտ/սխալ պատասխաններ նախատեսող թեստեր և այլն: Յուրաքանչյուր առաջադրանքի բովանդակությունը և բարդությունը կախված է թեմայից, և ազգային դասընթացավարը պատասխանատու է դրանք թիրախային խմբի կարիքներին և նախնական գիտելիքներին համապատասխանեցնելու համար:

Որոշ առաջադրանքներ մշակված են այնպես, որ Moodle-ն ավտոմատ կերպով արձագանքում է դրանց կատարմանը: Այդ դեպքերում ազգային դասընթացավարից չի ակնկալվում ուղղել կամ գնահատել կատարված առաջադրանքները, սակայն նա պետք է վերլուծի Moodle հարթակի տրամադրած վիճակագրական տվյալները:

Եվ ընդհակառակը, որոշ առաջադրանքների համար անհրաժեշտ է դասընթացավարի անհատական արձագանքը: Սա վերաբերում է հավաստագրման հետ կապված ավարտական առաջադրանքին: Ըստ էության, ազգային դասընթացավարից ակնկալվում է նշել այն մարդկանց անունները, որոնք հաջողությամբ են մասնակցել դասընթացին և իրավունք ունեն ստանալ վկայական՝ ավարտական առաջադրանքի արդյունքների հիման վրա:

**Թեստ**

Սովորաբար, թեստը ներառում է մի քանի կամ ճիշտ/սխալ պատասխաններ նախատեսող հարցեր: Թեստը մասնակցին հնարավորություն է ընձեռում համակարգից ստանալ ավտոմատ արձագանք, քանի որ պատասխանները նախապես մուտքագրվում են դասընթացավարի կողմից: Թեստ մշակելիս վերապատրաստողը մուտքագրում է ավտոմատ եղանակով մատուցվող արձագանք՝ ճիշտ և սխալ պատասխանների համար:

**Էսսե**

Էսսեի հարցերը պահանջում են դասընթացավարի ներգրավվածությունը, որը գրավոր արձագանք է տրամադրում մասնակիցներին նրանց կատարած առաջադրանքների վերաբերյալ: Սա ավելի ժամանակատար է թե՛ մասնակցի և թե՛ դասընթացավարի համար, սակայն կարող է խիստ օգտակար լինել ձեռք բերված որևէ հասկացության կամ հմտության գնահատման առումով, օրինակ՝ իրավիճակային խնդիրների միջոցով:

**Ինքնագնահատում**

Մի քանի կամ ճիշտ/սխալ պատասխաններ նախատեսող հարցերն կարող են օգտագործվել ինքնագնահատման նպատակով, քանի որ համակարգն արձագանքում է մասնակցին և նրան տրամադրում է իր համապատասխան գնահատականը: Ինտերակտիվ էլեկտրոնային ուսուցման փաթեթ մշակելիս դասընթացի մեջ կարելի է ներմուծել նաև «գիտելիքի ստուգումներ»: Իսկապես, հասկացության մասին կարդալուց հետո մասնակցի համար կարող է օգտակար լինել անմիջապես ստուգել իր գիտելիքները ինքնաստուգիչ հարցերի միջոցով:

**Ինչո՞ւ է կարևոր դատախաղը**

Դատախաղն իրական դատալսման, և ավելի լայն իմաստով, ամբողջ դատավարության մոդելավորումն է, որը սկսվում է փաստարկների նախապատրաստմամբ և ավարտվում դատավճռով:

Որպես վերապատրաստման նպատակով անցկացվող վարժություն՝ դատախաղը սկիզբ է առել բրիտանական և ամերիկյան համալսարանական ավանդույթներից, երբ ուսանողները կարող էին իրենց հիմնավորելու և ճարտասանական հմտությունները փորձարկել պրոֆեսորների կողմից առաջարկած ենթադրյալ գործերի վերաբերյալ փաստարկների ներկայացման միջոցով: Այն ժամանակ, ինչպեսև այժմ, դասախոսները հաճախ խաղում էին դատավորների դերը: Այսօր իրավաբանական շատ ընկերություններ և որոշ երկրներում նաև դատախազության մարմիններ օգտագործում են դատախաղերը՝ դատական լսումներին նախապատրաստվելու նպատակով:

Ոչ ֆորմալ կրթության և «զուգակցված» ուսուցման զարգացման հետ զուգահեռ, դատախաղերը՝ որպես վերապատրաստման մեթոդաբանություն, աստիճանաբար ավելի մեծ տարածում են գտնում իրավաբանական դպրոցներում և վերապատրաստում իրականացնող տարբեր հաստատություններում ոչ միայն որպես սովորողների գիտելիքների գնահատման միջոց, այլև որպես նրանց մոտիվացնելու եղանակ՝ ավելի մեծ թվով ունակությունների բացահայտման միջոցով, որոնք նրանք այլապես չէին էլ օգտագործի: Մրցակցային միջավայրի ստեղծումը նախատեսում է սովորողների ուշադրության առավել կենտրոնացում՝ տեղեկատվությունն արագ ընկալելու, մտապահելու և վերլուծելու համար: Այնուամենայնիվ, կարևոր է չմոռանալ այս վարժության վերապատրաստող բնույթի մասին և խուսափել հաղթանակը որպես վերջնանպատակ ներկայացնելուց:

Վերապատրաստող դասընթացավարի դերը խիստ կարևոր է՝ երաշխավորելու, որ յուրաքանչյուր դատախաղ պարզապես մրցություն է, որտեղ, ինչպես ասել է Պիեռ դե Կուբերտեն՝ «Կարևորը հաղթանակը չէ, այլ մասնակցությունը»:

Դատախաղերի նպատակն է զարգացնել այնպիսի հմտություններ, ինչպիսիք են գործի վերլուծությունը, փաստարկների հիմնավորումը, քննադատական մտածողությունը և հրապարակային խոսքը: Այն մասնակիցների համար տեսական գիտելիքները համատեքստում տեղադրելու և գործնականում իրավական սկզբունքներ կիրառելու հնարավորություն է:

Քանի որ դատախաղերը, որպես վարժություններ, հանդիսանում են անգլո-սաքսոնական իրավական ավանդույթի մաս, ապա նախապատրաստման ընթացքում շեշտը դրվում է դատական պրակտիկայի միջոցով համապատասխան չափանիշների և մոտեցումների որոնման, այլ ոչ թե պարզապես օրենսդրության այս կամ այն հատվածի վրա: Դա կարող է խրթին լինել մայրցամաքային իրավական համակարգի երկրներից եկած մասնակիցների համար: Սակայն գլոբալացված աշխարհում իրավական ավանդույթները միահյուսվում են: Սա հատկապես կարևոր է մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման համար, քանի որ մարդու իրավունքների պաշտպանության չափորոշիչները սահմանված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում, Եվրոպական միության Արդարադատության դատարանի իրավագիտության մեջ և հանդիպում են նաև ՄԱԿ-ի քվազիդատական մարմինների պրակտիկայում:

ՆՇՈՒՄՆԵՐ

Ինչպես փորձը ցույց է տալիս, նախկին դատական պրակտիկայի հիմքով փաստարկներ կառուցելու, ինչպես նաև կիրառելի նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ իրավական նորմերի մեկնաբանության կարողությունը մայրցամաքային իրավական համակարգի երկրների իրավական ոլորտի շատ մասնագետների թույլ կողմն է: Դատախաղերը դրան անդրադառնալու պատշաճ գործիք են:

Դատախաղերը կարող են կազմակերպվել որոշակի թեմայի կամ ոլորտի վերաբերյալ գիտելիքների մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև որոշակի իրավական գործիքների հետ աշխատելու հմտությունների ամրապնդման նպատակով՝ ներպետական և միջազգային դատարաններ, քվազիդատական մարմիններ և այլն: Դրանք կարող են օգտագործվել իրավական կամ քաղաքական բարդ երևույթների կամ նույնիսկ քաղաքական իրադարձությունների վերլուծության նպատակով[35]:

Ուսանողների համար նախատեսված առավել հայտնի դատախաղի միջազգային մրցույթներից են Jessup միջազգային մրցույթ-դատախաղը, որը հիմնված է Արդարադատության միջազգային դատարանում դատավարության ընդօրինակման վրա, Rene Cassin մրցույթ-դատախաղը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դատավարության ընդօրինակումն է, Willem C. Vis միջազգային առևտրային արբիտրաժի դատախաղը, որն ընդօրինակում է *ad hoc* առևտրային արբիտրաժի աշխատանքը: Ոգեշնչման նպատակով, առաջին անգամ դատախաղի մրցույթ նախապատրաստելիս արժե ծանոթանալ նշված մրցույթների կայքէջերին:

### Որտեղ այն կիրառել

Դատախաղն իրավաբանական խորհրդատվության կլինիկաներում և արտածրագրային գործունեության այլ տեսակներում հաճախ կիրառվող մեթոդաբանություն է: Իրավական ոլորտի մասնագետների շարունակական վերապատրաստման մեջ այն կարող է կիրառվել որպես վերապատրաստման դասընթացի ավարտական վարժություն: Դատախաղերը երբեմն նաև օգտագործվում են ավարտական քննության անցկացման ժամանակ, թեև դա ունի որոշ սահմանափակումներ, մասնավորապես, երբ անհրաժեշտ է ֆորմալ գնահատում:

«Զուգակցված» ուսուցման դեպքում այս վարժությունը կարելի է օգտագործել առերես հանդիպումների ընթացքում, որոնք տեղի են ունենում վերապատրաստման դասընթացի մոդուլների միջև՝ գիտելիքները և հմտություններն ամրապնդելու նպատակով, ինչպես նաև որպես դասընթացի ավարտական առաջադրանքներից մեկը: Դրա կիրառությունը լիարժեք հեռաուսուցման դասընթացի դեպքում սահմանափակված է, քանի որ խմբի բոլոր մասնակիցների համար պարտադիր չէ լինել միևնույն ժամանակ մեկ վայրում:

### Ինչպես այն կազմակերպել

Դատախաղի կազմակերպումը և ձևաչափը կախված են նպատակներից և ֆինանսական ու մարդկային ռեսուրսների առկայությունից: Ավելի մեծ միջոցառումների դեպքում, որոնք կարող են տևել 2-3 օր և ներառել ընտրության փուլեր, կարող է պահանջվել 4-5-հոգանոց խումբ: Կամավորների առկայությունը, որոնք հանդես կգան դատավորների, դատական կարգադրիչների դերում, խիստ կարևոր է: Նույնիսկ եթե բանավոր մասը (դատախաղի լսումները) կարող է պահանջել ընդամենը մեկ դատավորի առկայություն

35 2015թ. Jessup դատախաղը մասամբ հիմնված էր 2014թ. մայիսին Ռուսաստանի կողմից Ղրիմի բռնակցման շուրջ ստեղծված իրավիճակի վրա:

(թեև նախընտրելի թիվը երեքն է), հանուն անկողմնակալության՝ գրավոր ներկայացված փաստարկները պետք է գնահատվեն մի քանի դատավորի կողմից: Ավելի փոքրամասշտաբ տարբերակների դեպքում բավարար կլինի մեկ դասընթացավար և մեկ օգնական:

## Գործը և նախապատրաստումը

Ցանկացած դատախաղի առանցքային տարր է դատախաղում քննվելիք գործը: Անկախ նրանից, թե այն վերցված է իրական գործից, թե հորինված է, պետք է լինի հստակ: Դա նշանակում է, որ պետք է լինի ներքին տրամաբանություն, և չպետք է լինեն փաստերի անհամապատասխանություն գործի տարբեր մասերում: Մասնակիցները պետք է ունենան բավարար տեղեկություններ փաստերի վերաբերյալ և տրամադրված մտացածին (կամ իրական) օրենսդրական ակտերից, որպեսզի նրանք ստիպված չլինեն որևէ բան հորինել: Իրականում դատախաղերի կանոնների մեծ մասը բացահայտ կերպով արգելում է, որ մասնակիցները հորինեն փաստեր կամ մանրամասներ, որոնք առկա չեն գործում (սա չի վերաբերում այս փաստերի կամ իրավական ակտերի մեկնաբանությանը):

Գործի ծավալը կախված է նրանից, թե որքան ժամանակ կունենան մասնակիցները դատախաղին նախապատրաստվելու համար և, սովորաբար, կազմված է 15-30 էջից: Ի տարբերություն սովորական իրավիճակային խնդրի, երբ սովորողները կարող են խնդիրը ստանալ առաջին անգամ լսարանում կամ առցանց վարժության ընթացքում, և պետք է անմիջապես բանավոր փաստարկներ ներկայացնեն քննարկումից մի քանի րոպե անց, դատախաղը պահանջում է լուրջ նախապատրաստում: Ուստի կարևոր է, որ սովորողները գործը և կանոնները ստանան իրենց գրավոր փաստարկների հանձնման վերջնաժամկետից առնվազն մեկ ամիս առաջ:

Խմբի մեծությունից կախված՝ մասնակիցները կարող են ստանալ անհատական (փոքր խմբի դեպքում) կամ թիմային առաջադրանքներ: Երկու դեպքում էլ անհատին կամ խմբին կարող է հանձնարարվել փաստարկներ նախապատրաստել վարույթի մեկ կամ երկու կողմերի համար: Երկրորդ դեպքում ավելի երկար ժամանակ է պահանջվում, թեև կրթական առումով կարող է էականարեն ավելի արդյունավետ լինել:

## Դատավորներ

Հիմնականում շատ քիչ պահանջներ են առաջադրվում այն «դատավորներին», որոնք կամավոր մասնակցում են դատախաղերին: Ընդհանուր պահանջներից մեկն իրավագիտության ոլորտում գիտական աստիճանի առկայությունն է և ծանոթ լինելն այն ոլորտին, որին ուղղված է դատախաղը: Սակայն դատավորները պարտավոր են լավ նախապատրաստվել: Նրանք պետք է լավ իմանան գործի մանրամասները, կիրառելի իրավունքը և լավագույն դեպքում հարցեր նախապատրաստեն կողմերի համար: Դա հեշտացնելու նպատակով դատավորների համար մշակվում է հատուկ ուղեցույց, որը հաճախ կոչվում է «Դատավորի հուշագիր»: Այս փաստաթղթում տրամադրվում են տվյալ գործի մանրամասն և համակարգված վերլուծությունը և բարձրացված իրավական խնդիրները, ներկայացվում են հղումներ կամ նույնիսկ մեջբերումներ, առնչվող իրավական նորմեր և գործելակերպ, ինչը մեծապես խնայում է դատավորների նախապատրաստման համար անհրաժեշտ ժամանակը: Այնուամենայնիվ, դատավորներին պետք է խրախուսել չսահմանափակվել այդ ուղեցույցով և սեփական հետազոտություններ անցկացնել:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

### Գրավոր փուլ

Գրավոր փաստարկների նախապատրաստումը գործի հետ աշխատանքի առաջին փուլն է: Միշտ խրախուսվում է, որպեսզի խմբերը (կամ անհատական մասնակիցները) ունենան հարցերի ցանկ, որոնց շուրջ պետք է մտորեն, օրինակ՝ «կողմերի համար նախապատրաստած հարցեր»՝ վարույթի տվյալ կողմի իրավական դիրքորոշման հետ մեկտեղ: Թիմային աշխատանքի ժամանակ դասընթացավարի դերն առավել կարևոր է:

Գրավոր ներկայացված փաստարկները գնահատվում են «դատավորների» կողմից՝ նախապես սահմանված չափանիշների հիման վրա (տես Հավելվածը): Մի քանի խմբերի առկայության դեպքում նրանցից մի քանիսը կարող են դուրս մնալ այս փուլում: Սակայն ավելի փոքր մրցույթների դեպքում նպատակահարմար է բոլոր խմբերին թույլ տալ անցնել բանավոր փուլ և նրանց գրավոր առաջադրանքի գնահատականները հաշվի առնել միայն վերջնական արդյունքների ամփոփման ժամանակ:

### Բանավոր փուլ

Սա յուրաքանչյուր դատախաղի հիմնական «թատերական» փուլն է, երբ սովորողները ոչ միայն հնարավորություն ունեն գործի դնելու իրենց ճարտասանական հմտությունները, այլև կիրառելու իրավական նորմերի և սկզբունքներ լայն շրջանակը, որ սահմանված է նախադեպային իրավունքում և հայեցակարգում (բանավոր լսումների կանոնների օրինակին ծանոթանալու համար տես Հավելվածը): Կարևոր է, որպեսզի կազմակերպիչները լսարանը կահավորեն դատարանի դահլիճի նմանությամբ՝ հատուկ տեղ հատկացնելով դատավորների հանձնախմբին, առանձին սեղաններ՝ վարույթի կողմերի համար, նստարաններ՝ լսարանի և ժամաչափորդի համար: Մեկ նիստը, սովորաբար, տևում է 30-40 րոպե և ներառում է թիմերի ընդհանուր ներկայացումներն ու հերքումները:

Այս փուլի ամենակարևոր մասն այն արձագանքն է, որ բոլոր խմբերը ստանում են դատավորներից վճռի հրապարակումից հետո: Սա այն պահն է, երբ անհրաժեշտ է ընդգծել մասնակիցների կատարողականի ուժեղ ու թույլ տարրերը և խորհուրդներ տալ նրանց կատարողականի բարելավման նպատակով:

Դատախաղի վարժությունների նման գործողությունների համար նախատեսված գործիքներ կարելի է գտնել Մարդու իրավունքների կրթության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կողմնացույցում[36]:

### Սովորողներին աջակցելու կարևորությունը

Սովորողներին աջակցելը բաց և հեռավար կրթության առանցքային բաղադրիչներից մեկն է: Սովորողներին աջակցող մեխանիզմների որակը և մասշտաբները որոշիչ են բաց և հեռավար կրթական ծրագրերի ընդհանուր որակի համար: Կրթական կազմակերպությունների կողմից սա իրականացվում է հիմնականում երկու եղանակով՝ տեխնիկական և մարդկային ռեսուրսներով: Տեխնիկական ռեսուրսներն են, օրինակ՝ ուսումնական նյութերի ինստրուկցիոն դիզայնը, ուսումնական ուղեցույցների, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակումը, տարատեսակ հարցաշարերը, վիճակագրական վերլուծության մեթոդները և այլն: Մարդկային ռեսուրսներն են խորհրդատուները և դասընթացավարները, որոնք մշտական աջակցություն և խորհրդատվություն են տրամադրում ուսման ամբողջ ընթացքում:

36 http://www.eycb.coe.int/compass/:

Անշուշտ, ավանդական կրթության մեջ առերես հաղորդակցությունը նույնպես կարող է ունենալ մի շարք թերություններ, ինչպես քննարկվեց Մաս 2-ում: Այսինքն՝ առերես հաղորդակցության պարագայում կարող են առկա լինել լեզվական, հոգեբանական, միջանձնային, մշակութային, էկոլոգիական բնույթի «հեռավորություններ» (4): Ուստի ավանդական կրթության մեջ, որտեղ առերես հաղորդակցությունը դասավանդման հիմնական մեթոդն է, սովորողին աջակցող մեխանիզմները նույնպես կարող են օգտակար լինել:

Էլեկտրոնային ուսուցման ոլորտում ուսանողին աջակցություն են տրամադրում վերապատրաստող կամ կրթական կազմակերպությունները երկու եղանակով՝ սովորողին աջակցություն և ուսուցմանն աջակցություն: Սովորողին աջակցությունը ենթադրում է ուսանողներին համակարգված աջակցության ցուցաբերում՝ ուսուցման գործընթացի կառավարման առումով անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրման միջոցով: Էլեկտրոնային ուսուցման ոլորտում սովորողին աջակցությունը համակարգված է և ներառում է հետևյալ փուլերը՝

- Տեղեկատվական փուլ,
- Ուղղորդման փուլ,
- Գրանցման փուլ,
- Ինտեգրման փուլ,
- Հավատարմագրմանն օժանդակության փուլ,
- Հետագա ուսուցման ուղղորդման փուլ:

Ուսուցմանն աջակցությունը այն համակարգված աջակցությունն է, որը տրամադրվում է վերապատրաստող կազմակերպության կողմից ուսուցման փաստացի գործընթացում: Ուսուցմանն աջակցությունը տրամադրվում է ուսումնական փուլում, որը կազմակերպվում է համաժամանակյա և ոչ համաժամանակյա առցանց ուսուցման ձևաչափերով: Ոչ համաժամանակյա և համաժամանակյա առցանց ուսուցման գործընթացը կազմակերպվում է էլեկտրոնային ուսուցման ուսումնական նյութերի տրամադրման և էլեկտրոնային նամակների, զրույցների, ֆորումների և այլնի կիրառման միջոցով: Այս բոլոր մեխանիզմները փոխգործակցության հնարավորություն են ընձեռում ոչ միայն դասընթացավարի և սովորողի, այլև սովորողների միջև: Գործնականում էլեկտրոնային ուսուցման ծրագրերում դա կարող է կիրառվել հետևյալ եղանակով՝

- Հեռավար կրթության ուսումնական նյութերի տրամադրում համաժամանակյա առցանց ուսուցման տեխնիկաների և ոչ համաժամանակյա առցանց ուսուցման հարթակների միջոցով:
- Քննարկման համար նախատեսված ֆորումներ: Քննարկման համար նախատեսված վեբ սենյակները բոլոր ուսանողներին դասընթացի շրջանակում գաղափարներ փոխանակելու, հարցեր տալու, մեկնաբանություններ թողնելու և այլ հնարավորություններ են ընձեռում: Քննարկման համար նախատեսված վեբ սենյակները պետք է լինեն դասավանդողի կամ դասընթացավարի վերահսկողության ներքո:
- Էլեկտրոնային նամակագրություն՝ դասավանդողների և/կամ մյուս ուսանողների հետ կապ հաստատելու գործիք:
- Էլեկտրոնային ուսումնական ձեռնարկներ: Էլեկտրոնային փաստաթղթեր, որոնք ուսանողներին հնարավորություն են ընձեռում հասնել ուսումնական խնդիրներին:
- Ռեսուրսներ/գրադարան: Էլեկտրոնային մուտք լրացուցիչ ռեսուրսներին՝ ուսանողի

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

ուսմանն աջակցելու նպատակով:

- Ուսանողի ինքնագնահատում: Կոնկրետ դասընթացի շրջանակում ուսանողի առաջընթացի մշտադիտարկման համար նախատեսված էլեկտրոնային մեխանիզմ: Այն օգնում է ուսանողներին պարզել իրենց առաջընթացի դինամիկան:
- Ավտոմատացված գնահատում: Այս էլեկտրոնային գործիքը թույլ է տալիս ամփոփել վերջնական արդյունքները, որոնք օգտագործվում են հավաստագրման փուլում:
- Դասընթացավարի կողմից գնահատում: Դասընթացավարին/ուսուցչին ստուգման և գնահատման նպատակով աշխատանք ուղարկելու գործիք:
- Ուսանողական պորտֆոլիոներ: Յուրաքանչյուր ուսանողի համար նախատեսված էլեկտրոնային անհատական էջ, որը հնարավորություն է տալիս առցանց կապ հաստատել այլ ուսանողների հետ, նրանց ներկայացնել իրենց աշխատանքը, տրամադրել դասընթացի վերաբերյալ տեղեկատվության ստացման այլընտրանքային աղբյուրներ:

Ուսանողին շարունակական և միասնական աջակցության ծառայությունը, սովորաբար, ներառում է՝

- Գրանցման հետ կապված հաճախակի տրվող հարցերի բաժին,
- Տեխնիկական աջակցություն ստանալու ծառայության մատչելիություն,
- Գրանցման հետ կապված աջակցություն,
- Դասընթացավարների հետ կապ հաստատելու հնարավորություն,
- Այլ ուսանողների հետ կապ հաստատելու հնարավորություն,
- Հետագա ուսման հետ կապված խորհրդատվության ապահովում,
- Քննարկման համար նախատեսված ֆորումներ,
- Էլեկտրոնային ուսումնական ձեռնարկներ,
- Առաջադրանքների հետ կապված հետադարձ կապի ապահովում,
- Դասնթացավարի մատչելիություն:

## Քայլ 4՝ Ինչպես գնահատել դասընթացը և հետևել դրա իրականացմանը

Այս բաժնում կքննարկենք՝

- Ինչպես գնահատել, թե արդյոք վերապատրաստումն արդյունավետ է եղել,
- Ինչպես օգնել սովորողներին կարծիք տալ անցկացված վերապատրաստման դասընթացի որակի վերաբերյալ,
- Ինչպես բացահայտել սովորողների ապագա վերապատրաստման կարիքները:

Վերապատրաստման հաջողությունը գնահատելը վերապատրաստման դասընթացի մշակման և մատուցման կենսական քայլերից մեկն է:

Այս գործընթացը շատ ավելին է ենթադրում, քան պարզապես ՈՒԽ-ների կատարման գնահատումը: Վերապատրաստման դասընթացի գնահատումը ներառում է բաց, ազնիվ և կառուցողական հետհայացք անցկացված վերապատրաստմանը՝ ապագայում այն բարելավելու ուղիներ գտնելու նպատակով:

Գնահատմանը պետք է մասնակցեն վերապատրաստողները և վերապատրաստվողները: Այդ գործընթացին կարող են մասնակցել նաև այլ կողմեր (օրինակ՝ ֆինանսական աջակցություն տրամադրող արտաքին կազմակերպություն կամ կազմակերպության ներսում աուդիտով զբաղվող համապատասխան ստորաբաժանում):

Գնահատումը մեծապես *հիմնված է փաստերի վրա*: Այն պետք է համապատասխանի մի շարք չափանիշների, ներառյալ՝ ինքնարտահայտման ազնվություն, շիտակություն և թերությունները բացահայտելու, ինչպես նաև ապագա վերապատրաստման մեջ բացահայտված թերությունների հետ կապված շտկումներ մտցնելու պատրաստակամություն:

Թեև սա ավելին է ենթադրում, քան այն հարցը, թե արդյոք «ՈՒԽ-ները լիովին կատարվել են», ՈՒԽ-ների օգտագործումը, որպես վերապատրաստումը գնահատելու մեկնարկային կետ, ակնհայտ է: Եթե ՈՒԽ-ների կատարման հետ կապված դժվարություններ են ծագում, ապա դա կարող է լինել մի շարք հարակից գործոնների պատճառով, օրինակ՝

### ԻՆՉՈ՞Ւ Է ԿԱՐԵՎՈՐ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Չորս հիմնական պատճառները՝

- Բարելավել մեր արդյունավետությունը՝ որպես վերապատրաստողներ: Գնահատումը մեզ ցույց կտա՝ արդյոք հասնե՞լ ենք մեր առջև դրված նպատակին և արդյունավե՞տ է եղել արդյոք ուսուցումը:
- Լինել հաշվետու: Վերապատրաստման անցկացման համար օգտագործվում են զգալի ռեսուրսներ: Մենք պետք է կարողանանք ցույց տալ, որ դրանք իմաստալից են ծախսվել:
- Փորձի փոխանակում: Ուրիշները կարող են սովորել ձեր հաջողություններից կամ սխալներից՝ ուսումնասիրելով ձեր գնահատումները: Ի լրումն առկա գիտելիքների՝ դուք կարող եք նշել, թե ինչն էր արդյունավետ կամ ոչ՝ կոնկրետ սովորողների համար:
- Գտնել մոտիվացիա: Երբ դուք տեսնում եք, որ ձեր կողմից իրականացված վերապատրաստումը արդյունավետ էր, ձեր և ձեր թիմի համար դա հպարտանալու առիթ է դառնում:

Վերցված է՝ ՄԻԳՀԳ-ի «Գնահատելով մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումները» ձեռնարկից (2011), էջ 22

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

- ՈՒԽ-ները չափազանց հավակնոտ են եղել,
- Վերապատրաստման ծրագրում ներառված առաջադրանքների կատարումը կապված չէր ՈՒԽ-ների հետ,
- Վերապատրաստման իրականացումը (օրինակ՝ մեթոդի ընտրությունը) չի նպաստել ՈՒԽ-ի կատարմանը,
- Լսարանի կարծիքով՝ ՈՒԽ-ները վերաբերելի չեն եղել:

Արժե պարզաբանել երկու կարևոր հարց, որոնք կարող են ի հայտ գալ գնահատման ընթացքում:

**Վերապատրաստողները** պետք է իմանան, թե արդյոք ուսումնական խնդիրները կատարվել են (այսինքն՝ վերապատրաստումն արդյոք արդյունավետ է եղել) և պետք է կարողանան բացահայտել սովորողների ապագա վերապատրաստման կարիքները (այսինքն՝ ուսումնական խնդիրն արդյոք *չի* կատարվել կամ մասամբ է կատարվել, և ինչպես որոշել, թե ինչ է անհրաժեշտ մատուցել վերապատրաստման հաջորդ փուլում): Անհատական տեսանկյունից (քանի որ վերապատրաստողներն իրենք՝ որպես սովորողներ, մտահոգված են սեփական կատարողականի բարելավմամբ) վերապատրաստողները ցանկանում են իմանալ, թե սովորողներն ինչ կարծիք ունեն լիակազմ և խմբային սեսիաների ընթացքում իրենց կատարողականի վերաբերյալ:

**Սովորողներին** նաև օգնություն է անհրաժեշտ՝ բացահայտելու, թե արդյոք իրենք կատարել են վերապատրաստման դասընթացի ուսումնական խնդիրները: Եթե ոչ, ապա հաջողության բացակայության *պատասխանատվությունը* կարող է ընկնել վերապատրաստողների ուսերին: Սակայն սովորողն անհատապես կրում է նաև այլ պատասխանատվություն՝ փորձելու գտնել ուղիներ, որոնցով հնարավոր է հաղթահարել նպատակների և պլանավորվածի միջև ընկած բացը: (Այլ կերպ ասած՝ սովորողը պետք է ինքն իրեն հարցնի՝ ինչ կարող եմ ես անել թերությունը վերացնելու համար՝ ընդունելով, որ այդ նպատակներին հասնելը թույլ կտա իրեն պատշաճ կատարել իր վրա դրված պարտականությունները որպես դատավոր, ոստիկան, բանտի աշխատակից և այլն):

Վերապատրաստման այս գնահատումը, ուստի, ծառայում է երկու հիմնական նպատակի: Առաջին՝ օգնելու բացահայտել ապագա վերապատրաստման կարիքները, և երկրորդ՝ օգնելու բարելավել վերապատրաստման իրականացումը:

## ա. Խնդրել սովորողներին հետադարձ կապի մեջ մտնել վերապատրաստողների հետ

Ուսումնական շրջափուլը հավասարապես վերաբերում է նաև վերապատրաստողներին: Նրանց պետք է խրախուսել՝ անդրադառնալու իրենց սեփական կատարողականին՝ որպես բանախոսներ կամ փոքր խմբերի հետ աշխատող դասընթացավարներ: Սակայն սովորողների արձագանքը վերապատրաստման վերաբերյալ այժմ կազմում է վերապատրաստման ընդունված և կենսական բաղադրիչը: Լսարանին արձագանքելու հնարավորություն չընձեռելը վկայում է վերապատրաստման նկատմամբ մասնագիտական հետաքրքրության բացակայության մասին:

Արդյունավետ լինելու նկատառումներով՝ վերապատրաստման վերաբերյալ սովորողների արձագանքը պետք է համապատասխանի հետևյալ հիմնական սկզբունքներին՝

- Սովորողներին պետք է տեղեկացնել, թե ինչու է իրենցից ակնկալվում արձագանք՝

ապագա վերապատրաստման որակի բարելավման, ինչպես նաև նոր ավարտված վերապատրաստման դասընթացի արդյունավետությունը գնահատելու նպատակով:

- Հետադարձ կապը պետք է լինի անանուն:
- Պետք է բավարար ժամանակ նախատեսվի (նախընտրելի է դասընթացի վերջում) արձագանքման համար: *Երբեք* մի՛ փորձեք ստանալ արձագանք սովորողների անձնական ժամանակի հաշվին, քանի որ հազիվ թե այն ստանաք:
- Հարցերը պետք է այնպես մշակված լինեն, որպեսզի ի հայտ բերեն **օգտակար** պատասխաններ:
- Տրվող հարցերը պետք է վերաբերեն թե՛ վերապատրաստողների կատարողականին և թե՛ վերապատրաստման ակնկալվող համապատասխանությանը կամ հաջողվածությանը:

Ինչ արձագանքներ են անհրաժեշտ վերապատրաստողներին, որպեսզի նրանք իրականացնեն վերապատրաստման արդյունավետ գնահատում: Արձագանքներ կարելի է ստանալ տարբեր եղանակներով՝ դասընթացի գնահատման ձևաթղթերի, դասընթացի վերաբերյալ ավարտական ամփոփումների, փոքր խմբերով քննարկումների միջոցով կամ նույնիսկ ոչ ֆորմալ ձևով՝ ընդմիջումների ընթացքում:

Սովորողներին անհրաժեշտ է առաջարկել կարծիք հայտնել այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են՝

- Սովորողների հետաքրքրվածությունը ընտրված թեմաներով,
- Թեմաների վերաբերելիությունը սովորողների մասնագիտական աշխատանքին,
- Վերապատրաստման կազմակերպչական կողմերը (վայր, ժամանակ և այլն),
- Նախապատրաստված նյութերի արժեքը և որակը,
- Փորձագետների կամ վերապատրաստողների ունեցած ներդրումների որակը (լիակազմ սեսիաներում) և փոքր խմբերով աշխատանքում (ներառյալ՝ դասընթացավարի դերը),
- Վերապատրաստման համար ընտրված մեթոդների շրջանակը, բազմազանությունը և նպատակահարմարությունը (այդ թվում՝ լիակազմ ներկայացում կամ բանավեճ, փոքր խմբերով աշխատանք, դատախաղ և այլն):

Գրավոր գնահատման ձևաթղթերի կիրառման դեպքում հարցերը կարող են ներառել տարատեսակ պատասխաններ, ինչպես օրինակ՝

---

**Գծային սանդղակ**՝ սովորողները նշում են իրենց բավարարվածության աստիճանը մի շարք պնդումների վերաբերյալ, օրինակ՝

Գնահատեք 1-5 սանդղակով (1=վատ, 5=գերազանց)

- Ելույթի ներկայացման ձևը,
- Ներկայացված տեղեկատվության բովանդակությունը,
- Տպագիր նյութերի օգտակարությունը,
- Թեմայի վերաբերյալ ձեր գիտելիքները *մինչև* դասընթացը,
- Թեմայի վերաբերյալ ձեր գիտելիքները դասընթացից *հետո:*

---

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

**Առավել պատշաճ պատասխանի ընտրություն՝** հնարավոր է մեկ (կամ ավելի) պատասխան, օրինակ՝

Ո՞րը կամ որո՞նք էին վերապատրաստման դասընթացին ձեր մասնակցության ամենակարևոր գործոն(ներ)ը:

[նշեք բոլոր պատասխանները, որոնք վերաբերում էին ձեր իրավիճակին]

- Զգում էի, որ օգտակար որևէ բան կսովորեմ:
- Վերապատրաստման բովանդակությունը վերաբերելի է իմ աշխատանքին:
- Իմ վերադասն է հանձնարարել մասնակցել:
- Իմ գործընկերները նշել էին, որ իրենք էլ են մասնակցում:
- Ցանկանում էի մասնակցել՝ այլ գործընկերների հանդիպելու նպատակով:

---

**Մեկ պատասխանի ընտրություն մի շարք այլընտրանքներից՝** ակնկալվում է մեկ պատասխան, օրինակ՝

Ձեր կարծիքով՝ որքանո՞վ է *արդիական* վերապատրաստումը ձեզ համար: Ընտրեք առավել համապատասխան տարբերակը՝

- Ես կկարողանամ անմիջապես կիրառել նոր գիտելիքները:
- Կարծում եմ՝ նոր գիտելիքները որոշ չափով օգտակար կլինեն ինձ համար մոտ ապագայում:
- Չեմ կարծում, որ նոր գիտելիքներն առանձնապես կկիրառեմ մոտ ապագայում:
- Ստացված գիտելիքներն ինձ համար կիրառելի չեն:

---

**Ակնկալում է սահմանափակ թվով բաց պատասխաններ՝** սովորողին հարցնում են հիմնական տպավորությունների մասին, օրինակ՝

Թվարկեք երեք ամենակարևոր բաները, որ սովորել եք/կկիրառեք ձեր աշխատանքում:

1.

2.

3.

---

Շատ կարևոր է նաև յուրաքանչյուր հարցախմբից հետո տեղ թողնել լրացուցիչ մեկնաբանությունների համար, որ սովորողը կարող է թողնելու ցանկություն ունենալ: Նման մեկնաբանություններ կարելի է ստանալ «լրացուցիչ մեկնաբանություններ» կամ «ինչ առաջարկներ ունեք ապագա վերապատրաստման բարելավման հետ կապված» ձևակերպումների միջոցով (սակայն հաշվի՛ առեք, որ օրինակ՝ «ունե՞ք որևէ առաջարկություն դասընթացի առաջին մասը բարելավելու վերաբերյալ» հարցն ավելի որոշակի է, և առավել հավանական է, որ վերապատրաստողները կստանան օգտակար արձագանք):

.....

.....

.....

.....

## բ. Գնահատում՝ արդյունքներ

Արդյունավետ գնահատումը օգտակար կլինի թե՛ վերապատրաստողների և թե՛ սովորողների համար: Յուրաքանչյուր խումբ կարելի է դիտարկել առանձին:

### Վերապատրաստողներ

Վերապատրաստողների կողմից վերապատրաստման գնահատումը նախատեսված է անցյալի սխալներից (և հաջողություններից) դասեր քաղելու համար: Նախատեսված գնահատումը կարող է տեղի ունենալ անմիջապես միջոցառումից հետո (եթե գնահատման վերաբերյալ սովորողների արձագանքները հնարավոր է արագ հավաքել), բայց գուցե ավելի նպատակահարմար կլինի այն իրականացնել ավելի ուշ (սակայն ոչ այնքան ուշ, որ վերապատրաստողների և մասնակիցների տպավորությունները մարած լինեն): «Փաստերը» կարող են ունենալ մի շարք տարբեր ձևեր՝

- Սովորողներից ստացված գնահատման ձևաթղթեր,
- Վերապատրաստողների (և դրսից հրավիրված փորձագետների) կարծիքն այն մասին, թե արդյոք (կամ ինչ չափով) իրականացվել են ուսումնական խնդիրները,
- Սովորողներն իրենք՝ իրենց վերաբերմունքը, մասնակցության մակարդակը, ակնկալվող գիտելիքները,
- Կազմակերպչական հարցեր (ժամանակ, վայր, փոքր խմբերի համար նախատեսված սենյակների առկայություն և այլն),
- Ծրագիրը (ներառյալ՝ վերապատրաստման մեթոդների բազմազանությունը և հավասարակշռությունը),
- Ապագա վերապատրաստման կարիքների բացահայտումը:

Այս ամենի հետ կապված (վերապատրաստման վերոնշյալ շրջանագծին հետևելիս)՝ կարևորվում է երկու հարց՝

- *Ի՞նչն է լավ ընթացել* (և ինչո՞ւ),
- *Ի՞նչը կարելի էր բարելավել (և ինչպե՞ս):*

Վերապատրաստողները նաև պետք է խորհեն, թե որքանով է հնարավոր տարածել վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները: Այս ասպեկտը հաճախ անտեսվում է: Վերապատրաստման ընթացքում ծախսվող մարդկային, նյութական և տնտեսական ռեսուրսները, սովորաբար, մեծ են, և կարևոր է ուղիներ գտնել այդ ռեսուրսների դրական ազդեցությունը մեծացնելու համար:

Մտածե՛ք հետևյալի մասին՝

- Սովորողներից արդյոք ակնկալվո՞ւմ է (կամ նրանց խրախուսվում է) տարածել վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքները: Սա կարելի է ձևակերպել որպես վերապատրաստման կոնկրետ ուսումնական խնդիր, բայց այդ դեպքում ձեզ կարող է անհրաժեշտ լինի հատուկ ուշադրություն դարձնել այն հարցին, թե արդյոք

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

սովորողների ընտրությունը պետք է պայմանավորված լինի՝ իրենք իրենց որպես վերապատրաստողներ տեսնելու կարողությամբ, *և* արդյոք վերապատրաստման ծրագիրը պետք է այդ դեպքում հատուկ դասընթացներ պարունակի՝ նվիրված իրենց կողմից սեփական բնակավայրերում վերապատրաստումների պլանավորմանը և անցկացմանը:

- Հնարավո՞ր է վերապատրաստումից հետո ռեսուրսները հավաքագրել և հասանելի դարձնել: Առաջարկե՛ք սովորողներին իրենց գործընկերներին տրամադրել ներկայացված նյութերը: Կարելի՞ է արդյոք փորձագետների դասախոսությունները ձայնագրել (կամ նույնիսկ տեսաձայնագրել) և պատճենել: Կարելի՞ է արդյոք նյութերը հասանելի դարձնել ինտերնետային կայքում:
- Արդյոք արժե՞ փորձել ռեսուրսների որևէ կենտրոն ստեղծել՝ խնդրելով մասնակիցներին տրամադրել այնպիսի նյութեր, որոնք կարող են օգտագործվել ապագա վերապատրաստումների ժամանակ:
- Սովորողներին արդյոք անհրաժե՞շտ է խրախուսել կապ հաստատել վերապատրաստման թիմի հետ, եթե նրանք նոր կամ պարզաբանման ենթակա հարցեր ունեն: Սա կարող է նաև հնարավորություն ընձեռել վերապատրաստողներին բացահայտել, թե ինչին է անհրաժեշտ ավելի շատ ուշադրություն դարձնել ապագա վերապատրաստման ընթացքում:

Վերապատրաստողները նույնպես կարող են ցանկություն ունենալ կարծիքներ հայտնել *վերապատրաստման* վերաբերյալ, թե ըստ էության՝ «ինչն է հաջողվել», «ինչը ոչ», և երկու դեպքում էլ՝ ինչու: Մասնավորապես, եթե վերապատրաստման փաթեթը մշակվել է այլոց կողմից ընդհանուր օգտագործման համար, ապա ծրագրային, մեթոդական հղկումները կամ փոքր խմբերով իրավիճակային խնդիրների անցկացումը կարող են տեղին լինել: Եվ ավելի նպատակահարմար է դրանք վերամշակելիս փորձել խուսափել նախկին սխալներից:

## Սովորողներ

Շատ ավելի խրթին է «սովորողներին» խրախուսել հասկանալու գնահատման նպատակը: «Վերապատրաստման շրջագիծը» ենթադրում է, որ ուսուցումը համակարգված և աջակցվող գործընթաց է: Ոստիկանության, դատական կամ այլ մասնագիտական վերապատրաստման համատեքստում հասնելը նրան, որ սովորողներն ընդունեն, որ իրենք ունեն սեփական ուսման և կատարողականի ու իրենց ապագա անհատական և մասնագիտական զարգացման վերաբերյալ արտահայտվելու պարտականություն, կարևոր է: (Նկատի՛ ունեցեք սակայն, որ նման գաղափարը հաղորդելը կարող է դժվար լինել, երբ այն, ըստ էության, ենթադրում է արժեքային փոփոխություն աշխատանքային մի մշակույթում, որտեղ միշտ չէ, որ առկա է շարունակական մասնագիտական զարգացման նշանակության ընկալումը):

Կարճ ասած՝ վերապատրաստման վերջնական նպատակն անհատների կարողությունների բարելավումն է այն առումով, որ նրանք կարողանան հասկանալ, թե ինչ և ինչու են սովորում, և վերանայել, պլանավորել ու պատասխանատվություն ստանձնել իրենց սեփական ուսման համար՝ օգնելով սովորողներին լինել առավել արդյունավետ, անկախ և ինքնավստահ ինքնուղղորդվող սովորողներ: Ուստի վերապատրաստողներին պետք է խրախուսել՝ օգնելու սովորողներին բացահայտել և արտահայտել իրենց ապագա վե-

ռապատրաստման կարիքները: Այդ նպատակով որոշ օժանդակություն է անհրաժեշտ սովորողներին՝ օգնելու.

- **Բացահայտել, թե ինչ չափով են իրականացվել *ընթացիկ* ուսումնական խնդիրները**՝ դրանք հակիրճ ամփոփելով վերապատրաստման վերջում: Եթե ուսումնական որոշակի խնդիրներ չեն կատարվել, ապա կարելի է հետևություն անել, որ առկա է ապագա վերապատրաստման բացահայտված կարիք: Ինչպե՞ս է դա իրականացվելու *թե՛* վերապատրաստողի և *թե՛* սովորողի կողմից:
- **Փորձել վեր հանել գաղափարներ կամ առաջարկություններ անել ապագա վերապատրաստման համար**՝ այս ձևով վերապատրաստողները կարող են որոշակի պատկերացում ձեռք բերել, թե լսարանի կարծիքով՝ ինչը կարևոր կլինի ապագա վերապատրաստման համար (այդպիսով կրկին շեշտելով այն ուղերձի կարևորությունը, որ վերապատրաստումը համապատասխանեցված է կոնկրետ լսարանների կարիքներին):

Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գնահատման հրաշալի ռեսուրս է, հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.ohchr. org/Documents/Publications/EvaluationHandbookPT18.pdf




Բոլոր մոդուլների հրապարակումից և մասնակիցների կողմից ավարտական առաջադրանքների հանձնումից հետո ազգային դասընթացավարը գնահատում է դասընթացի կարճաժամկետ ազդեցությունը: Դա արվում է HELP-ի Moodle հարթակում HELP-ի քարտուղարության օգնությամբ պետական լեզվով հարցաթերթիկ վերբեռնելու և մասնակիցներին այն լրացնելու խնդրանքով դիմելու միջոցով:

Հարցաթերթիկի նպատակն է հավաքել մասնակիցների արձագանքները վերապատրաստման նյութերի որակի, ազգային դասընթացավարի կողմից դասընթացը վարելու եղանակի և առօրյա աշխատանքում սովորածի հնարավոր կիրառման վերաբերյալ: Այդ արձագանքների հիման վրա ազգային դասընթացավարը զեկույց է ներկայացնում HELP-ի քարտուղարությանը՝ կցելով իր արձագանքը:

## գ. HELP-ի մոտեցումը մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գնահատմանը

HELP ծրագրի շրջանակում անգլերեն լեզվով մոդելային ուսումնական ծրագիրը մշակվելուց անմիջապես հետո այն փորձարկվում է մի շարք պիլոտային երկրներում: Յուրաքանչյուր դասընթացի ավարտից հետո բոլոր մասնակիցներին ուղարկվում է հարցաթերթիկ, և ամփոփված բոլոր տվյալները ենթարկվում են վերլուծության՝ պարզելու, թե դասընթացի որ մասն է անհրաժեշտ բարելավել կամ փոփոխել՝ ելնելով մասնակիցների իրական կարիքներից:

Առաջարկվում է համատեղ աշխատել ՎԱԻ-ներ/ՓՄ-ների հետ յուրաքանչյուր դասընթացի մասնակիցների խմբում՝ ֆոկուս խումբ ստեղծելու նպատակով: Այդ ֆոկուս խումբը

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

նախապես տեղեկացվում է, որ պետք է կրկին պատասխանի նույն հարցերին վերապատրաստման ավարտից 6 ամիս և 2 տարի հետո: Դա թույլ կտա ավելի լավ պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես են գիտելիքները և հմտությունները գործնականում կիրառվում մասնագիտական կյանքում:

Տեղեկատվության մեկ այլ աղբյուր է, անշուշտ, հեռաուսուցման դասընթացը վարող ազգային դասընթացավարի արձագանքը:

Հեռավար կրթության ոլորտում վերապատրաստողի դերը, հավանաբար, տարբեր է առերես վերապատրաստման ոլորտում նրա ունեցած դերից և պահանջում է որոշ մասնագիտական հմտություններ ու ռազմավարություններ: «Հեռավար կրթության ոլորտի դասավանդողները պետք է գործողությունները նախապես պլանավորեն, լինեն խիստ կազմակերպված և հաղորդակցվեն սովորողների հետ նոր եղանակներով: Նրանք պետք է հասանելի լինեն սովորողների համար, անհրաժեշտության դեպքում աշխատեն խմբերով և մենթորի կամ ֆասիլիտատորի դեր ստանձնեն սովորողների հետ իրենց փոխգործակցության ժամանակ: Եվ վերջապես, նրանք կարող են ստիպված լինեն ստանձնել ավելի շատ վարչական գործառույթներ՝ ի տարբերություն այն գործառույթների, որ նրանք ունեն լսարանային ուսուցման պարագայում»[37]:

Ուսուցման որակի ամփոփ գնահատման մասին տեղեկատվությունը չպետք է ներառի միայն ուսանողների կողմից տրված վարկանիշները, որոնք գնահատում են միայն ուսուցման այն կողմերը, որ ուղղակիորեն իրենց են առնչվում: Գնահատման այլ մեթոդները, ինչպես օրինակ՝ ինստրուկցիոն դիզայնի և բովանդակության գնահատումը գործընկերների կողմից (ինքնագնահատումների հետ միասին), կարող են հանգեցնել ուսուցման արդյունավետության առավել լիարժեք ընկալմանը և առավել օգտակար գնահատմանը:

Կարևոր է նաև ոչ ֆորմալ արձագանքը, որը ստացվում է քննարկումների միջոցով, առերես հանդիպումների կամ դեբրիֆինգի ու հավաստագրման արարողության ժամանակ: Որոշ երկրներում ավելի դյուրին է արձագանքներ ստանալ ոչ ֆորմալ հաղորդակցության միջոցով, ուստի շատ կարևոր է հաշվի առնել նաև նման եղանակով ձեռքբերվածները: Տե՛ս Հավելված 6՝ գնահատման հարցաթերթիկ:

## դ. HELP-ի դասընթացների գնահատման մակարդակները

### i. Մասնակիցների գնահատում

Հեռաուսուցման մասնակիցները, որոնք աշխատում են վերապատրաստողի վերահսկողության ներքո, ստանում են վկայականներ (որոշ դեպքերում՝ հավատարմագրում): Այդ նպատակով մասնակիցների գնահատումը պետք է մշակվի ուսումնական խնդիրներին համապատասխան: Արդյոք իրագործվե՞լ են ուսումնական խնդիրները: Սա մասամբ գնահատվում է մասնակիցների այս գնահատման արդյունքների հիման վրա: Փորձագետների աշխատանքային խումբը, որը մշակում է անգլերեն լեզվով մոդելային դասընթացը, մշակում է նաև թեստերը, իրավիճակային խնդիրները և այլ առաջադրանքներ:

### ii. Մասնակիցների կողմից գնահատում

Դասընթացի ավարտին մասնակիցներին խնդրում են գնահատել վերապատրաստումը՝ դասընթացի բովանդակության և ձևաչափի վերաբերյալ արձագանքելու միջոցով,

37 http://www.westga.edu/~distance/ojdla/summer72/tobin72.html:

ինչպեսև ներկայացնել իրենց կարծիքն այն մասին, թե արդյոք իրականացվել են ուսումնական խնդիրները: Այս գնահատման հարցաթերթիկները նույնն են և ցանկալի է, որ դրանք վերբեռնվեն անգլերեն լեզվով, որպեսզի HELP-ի քարտուղարությունը կարողանա հեշտությամբ ծանոթանալ ստացված արձագանքներին:

### iii. Հաշվետվություններ

Վերապատրաստողից պահանջվում է հաշվետվություն ներկայացնել ընդհանուր դասընթացի, վերապատրաստման մասնակիցների մասնակցության, դասընթացի բովանդակության, դասընթացի տեղայնացման և այլնի վերաբերյալ: Տես Հավելված 5՝ Դասընթացավարի հաշվետվությունը հեռաուսուցման դասընթացի վերաբերյալ:

## Ե. Հավաստագրում և դեբրիֆինգ

Ազգային դասընթացավարի տրամադրած ցուցակի հիման վրա HELP-ի քարտուղարությունը վկայականներ է շնորհել դասընթացն ավարտած մասնակիցներին: HELP-ի վկայականը շնորհվում է Եվրոպայի խորհրդի և ՎԱԻ/ՓՄ-ի կողմից համատեղ, և այն ստորագրում են երկու կողմերի ներկայացուցիչները: Վկայականներն ուղարկվում են ՎԱԻ/ՓՄ, որն այնուհետ դրանք բաժանում է մասնակիցներին: Վկայականները կարող են նաև տրամադրվել HELP-ի քարտուղարության որևէ անդամի կողմից, եթե կազմակերպվում է դեբրիֆինգ հանդիպում:

Այդ հանդիպումը կազմակերպվում է պիլոտային երկրում դասընթացի ավարտին՝ մրցանակներ հանձնելու նպատակով: Այս հանդիպման հավելյալ արժեքն այն է, որ HELP-ի քարտուղարությունն ամփոփում է մասնակիցների արձագանքները և գնահատում է վերապատրաստման կարիքները ապագա գործողությունների կազմակերպման համատեքստում: Դեբրիֆինգ հանդիպումը, սովորաբար, կազմակերպվում է այն երկրներում, որտեղ այդ օրը մեկնարկում է HELP-ի նույն կամ մեկ այլ հեռավար/զուգակցված դասընթաց:

### Հավաստագրման չափանիշները

Մասնակիցներին վկայական է շնորհվում այն չափանիշների հիման վրա, որոնք սահմանվել են դասընթացի նյութերի մշակման աշխատանքներում ներգրավված ԱԽ-ի անդամների կողմից: Ըստ թեմայի և թիրախային լսարանի՝ չափանիշները կարող են ներառել (սա կարող է փոփոխվել՝ ելնելով թիրախային լսարանից)՝

- ՄԻԵԿ-ի վերաբերյալ ներածական դասընթացի ավարտելը,
- Դասընթացին կանոնավոր կերպով մասնակցելը և նյութերն ընթերցելը,
- Քննարկումներին մասնակցելը,
- Յուրաքանչյուր մոդուլի համար նախատեսված առաջադրանքները հաջողությամբ կատարելը,
- Ավարտական առաջադրանքի 60%-ի շեմը հաղթահարելը:

Դասընթացն ավարտողների ցուցակը կազմում է վերապատրաստողը:

ՆՇՈՒՄՆԵՐ

.....

.....

.....

.....

### Վկայականների հանձնում

Վկայականները տպագրելու և HELP-ի ու ազգային ինստիտուտի կողմից դրանք համատեղ հանձնելու համար HELP-ի քարտուղարությանն անհրաժեշտ է ստանալ հետևյալ տեղեկությունները՝

- Դասընթացն ավարտողների ցանկը (անուն, ազգանուն),
- Գործընկեր հաստատության անվանումը և լոգոն (.jpg ձևաչափով և բարձր որակի պատկեր),
- Վերապատրաստման դասընթացի ավարտի ամսաթիվը:

Վկայականների տպագրության համար անհրաժեշտ է մի քանի շաբաթ, ուստի վերոնշյալ տեղեկությունները պետք է ուղարկվեն HELP-ի քարտուղարությանը դեբրիֆինգ հանդիպումից կամ հավաստագրումից մեկ ամիս առաջ:

## զ. Դասընթացի վերանայում

Պիլոտային փուլի նպատակն է դասընթացը փորձարկել տարբեր երկրներում՝ ստուգելու, թե արդյոք անհրաժեշտ է վերապատրաստման նյութերի վերանայում, թե ոչ, նախքան դրանք կտեղափոխվեն HELP-ի Moodle հարթակի ինքնուսուցման բաժին և հասանելի կդառնան բոլոր օգտատերերին:

Առկա դասընթացների ուսումնական ծրագրերը վերանայվում են պիլոտային փուլից հետո, եթե դրա անհրաժեշտության մասին նշվում է ազգային դասընթացավարների հաշվետվություններում: Բացի այդ, ուսումնական ծրագիրը կարող է վերանայվել որոշակի ժամանակ անց, երբ անհրաժեշտ է նախադեպային իրավունքի թարմացում: Վերապատրաստման նյութերը վերանայվում են ԱԽ-ի, HELP-ի խմբագրական խորհրդի, HELP-ի խորհրդակցական խորհրդի և Եվրոպայի խորհրդի համապատասխան բաժինների ներկայացուցիչների կողմից:

Հետադարձ կապի ապահովումը կարևոր է HELP-ի համար՝ նյութերի արդիականությունը երաշխավորելու և էլեկտրոնային ուսուցման դասընթացների մեթոդաբանությունը բարելավելու համար:

### Վերապատրաստողի արձագանքը

HELP-ի վերապատրաստողը HELP-ին տրամադրում է մանրամասն հաշվետվություն այն մասին, թե ինչպես է անցել վերապատրաստումը կամ դասընթացը՝ ներառելով տեղեկություններ հետևյալի մասին՝

- Մասնակիցների մոտիվացիան,
- Մասնակցությունը ֆորում(ներ)ին,
- Թեստերի արդյունքները,
- Դասընթացի ձևաչափը և տևողությունը և մասնակիցների արձագանքը,
- Դասընթացի համապատասխանեցումը, այդ թվում՝ ներպետական իրավակարգի առաջնահերթություններին, դասընթացի արդյունավետությունը մասնակիցների ընտրված խմբի համար ...,
- Մասնակիցների արձագանքը և նրանց տպավորությունները դասընթացի վերաբերյալ:

**Մասնակիցների արձագանքը**

Մասնակիցներն իրենց կարծիքները հայտնում են մեզ դեբրիֆինգ հանդիպման ժամանակ, երբ դա հնարավոր է, կամ HELP-ի Moodle հարթակի վրա հեռաուսուցման յուրաքանչյուր դասընթացի ավարտին ներկայացված հարցաթերթիկի լրացման միջոցով:

Հետադարձ կապի ապահովումն անգլերեն լեզվով կարևոր է HELP-ի քարտուղարության համար: Սակայն լեզվական խոչընդոտների հետ կապված՝ գուցե անհրաժեշտություն ծագի, որպեսզի վերապատրաստողը արձագանքները հավաքի իր պետական լեզվով, և իրազեկի HELP-ի քարտուղարությանը դրանց մասին՝ դասընթացի կամ վերապատրաստման ավարտին եզրափակիչ հաշվետվության միջոցով:

**Ուսումնական հաստատության արձագանքը**

Ուսումնական հաստատության արձագանքը շատ արժեքավոր է: Արդյոք մասնակիցներին դուր է եկել դասընթացը, քանի՞ մարդ է մասնակցել դասընթացին, կկազմակերպեի՞ք ևս մեկ դասընթաց:

Բացի այդ, ուսումնական հաստատությունը կարող է տեղեկացնել HELP-ին, թե արդյոք վերապատրաստման դասընթացը համապատասխանում է իրենց կարիքներին և ինչպես այն կարելի է առավել արդյունավետ դարձնել:

## է. Ուսումնական ծրագրի օգտագործումը՝ որպես ինքնուսուցման նյութ՝ հեռաուսուցումից մինչև ինքնուսուցում

Տարբեր պիլոտային երկրներում հեռավար/զուգակցված դասընթացի մեկնարկից և վերանայումից (անհրաժեշտության դեպքում) հետո վերապատրաստման նյութերը կարելի է տեղադրել HELP-ի Moodle հարթակի ինքնուսուցման համար նախատեսված բաժնում: Ի՞նչ է դա նշանակում:

Մենք տեսանք, որ ինքնուսուցման ռեսուրսները հասանելի են ցանկացած օգտատիրոջ, որը հաշիվ ունի HELP-ի Moodle հարթակում: Տվյալ թեմայով հետաքրքրված բոլոր օգտատերերն անվճար կկարողանան առցանց օգտվել այդ նյութերից:

«Հեռաուսուցման դասընթացների» և «ինքնուսուցման ռեսուրսների» միջև հիմնական տարբերությունն այն է, որ ինքնուսուցման ռեսուրսների դեպքում չկա դասընթացը վարող ազգային դասընթացավար, և վկայական չի շնորհվում վերապատրաստման ազգային ինստիտուտի հետ համատեղ, ինչը նշանակում է, որ կրեդիտներ չեն տրվում:

ՆՇՈՒՄՆԵՐ

HELP
Training
QUALITY
ECHR
NATIONAL
LAW

# ՄԱՍ 3՝ ԱՄՓՈՓՈՒՄ
# Ինչպե՞ս ակտիվ դեր ունենալ HELP ցանցում

## HELP ցանցի նշանակությունը հենց դրա մի մասը լինելն է

HELP ցանցը **Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման գործընկեր առ գործընկեր սկզբունքով գործող միակ համաեվրոպական ցանցն է**, որը կազմված է Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններում դատավորների և դատախազների վերապատրաստման ազգային ինստիտուտների (ՎԱԻ-ներ) և փաստաբանների միությունների (ՓՄ-ներ) ներկայացուցիչներից:

HELP ցանցին է վստահված խթանել ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով մեկնաբանված՝ ՄԻԵԿ-ի չափորոշիչների վերաբերյալ իրավական ոլորտի մասնագետների նախնական և շարունակական վերապատրաստումների մշակումը և իրականացումը: Ցանցը դա իրականացնում է լավագույն փորձի օգտագործման միջոցով, ինչը թույլ է տալիս HELP-ին մշակել արդիական և արդյունավետորեն տեղայնացված վերապատրաստման ծրագրեր:

Արդիական վերապատրաստման իրականացումն իր հերթին երաշխավորում է իրավական ոլորտի մասնագետների կարողությունների զարգացումը՝ ներպետական մակարդակում ՄԻԵԿ-ը «ռեֆլեքսորեն» կիրառել իրենց ամենօրյա աշխատանքում: Ի վերջո, ՄԻԵԿ-ն ինքնաբերաբար կկիրառվի բոլոր համապատասխան ոլորտներում:

ՄԻԵԿ-ի կիրառումը ներպետական վճիռներում կարևոր է դատավորների և դատախազների համար: Այն, ի թիվս այլնի, հանգեցնում է նախադեպային իրավունքի ներդաշնակեցմանը ներպետական մակարդակում: Փաստաբանները պետք է մշտապես մտածեն ՄԻԵԿ-ի չափորոշիչների մասին, բայցև իմանան, թե ինչպես համապատասխանություն ապահովել ՄԻԵԴ ներկայացվող դիմում-բողոքների ընդունելիության չափանիշներին: Դա կարևոր դեր է խաղում՝ ապահովելով դիմում-բողոքների որակի բարձրացումը և հանգեցնելով ՄԻԵԿ-ի չափորոշիչների ավելի արդյունավետ կիրառմանը:

HELP-ի ռեսուրսներն անվճար և բազմաթիվ լեզուներով հասանելի են հարթակում հաշիվ ունեցող բոլոր օգտատերերի համար: Սա նպաստում է ՄԻԵԿ-ի վերաբերյալ գիտելիքների տարածմանը 47 անդամ պետությունների իրավական ոլորտի մասնագետների շրջանում: Այն միաժամանակ բարելավում է իրավական ոլորտի մասնագետների համար նախատեսված վերապատրաստման վերպետական և ներպետական նախաձեռնությունների համակարգումը և միասնականությունը:

> «Վերապատրաստման ներպետական տեղայնացումը նախատեսում է արժեքային փոփոխություն»

**ՎԱԻ/ՓԲ-ների ուսումնական ծրագրերում՝ HELP-ի դասընթացների արդյունավետ ներառմանն ուղղված հնարավոր նախաձեռնությունների** թվում անհրաժեշտ է նախատեսել հետևյալը՝

- **HELP-ի յուրաքանչյուր դասընթացի մեկնարկային հանդիպումների ընթացքում առավելագույնս բարձրացնել իրազեկության մակարդակը**՝ ՄԻԵԴ-ի վերաբերյալ ներպետական իշխանական մարմինների պատշաճ վերապատրաստված լինելու անհրաժեշտության/հետաքրքրության (օրինակ՝ ՄԻԵԴ-ն իր *Hirsi* վճռով նշել է, որ Լիբիայի կողմից հարձակումներին դիմադրող սահմանապահների վերապատրաստման բացակայությունը հանդիսացել է Թիվ 4 արձանագրության 4-րդ հոդվածի խախտում) և համապատասխանաբար՝ HELP-ի ռեսուրսները ներառելու անհրաժեշտության շուրջ:
- HELP-ի մեկնարկային հանդիպումներից առաջ **հնարավորինս ֆորմալ եղանակով ապահովել ՎԱԻ/ՓՄ-ների հանձնառությունը՝ ներառելու** նախատեսվող դասընթացն իրենց շարունակական ուսուցման ծրագրում և այն համապատասխանաբար պլանավորելու, նախապատրաստելու և գնահատելու վերաբերյալ:
- **Կապ հաստատել** Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության **արդարադատության նախարարությունների քաղաքական/վարչական համապատասխան մարմինների հետ**, որպեսզի նրանք խրախուսեն համապատասխան ՎԱԻ/ՓՄ-ներին՝

ներառելու HELP-ի վերապատրաստման ռեսուրսներն իրենց ուսումնական ծրագրերում:

- Այն երկրներում, որտեղ HELP-ի դասընթացները ներառված են ՎԱԻ/ՓՄ-ների ուսումնական ծրագրերում, **այդ երկրների ՎԱԻ/ՓՄ-ներին խրախուսել՝ ներկայացնելու և խթանելու HELP-ի դասընթացները** տարբեր միջոցներով (ինտերնետային կայք, մասնագիտական վերապատրաստմանն ուղղված իրազեկող միջոցառումներ, գովազդային արշավներ):
- Խթաններ ստեղծել ՎԱԻ/ՓՄ-ների համար, որպեսզի վերջիններս ներառեն իրենց ծրագրերում HELP-ի դասընթացները (օրինակ՝ ստեղծելով և շնորհելով HELP/Եվրոպայի խորհուրդ պիտակ, որը կարող է տեղադրվել այդ ՎԱԻ/ՓՄ-ների ինտերնետային կայքերում և բրոշյուրներում, եթե դրանց վերապատրաստման ուսումնական ծրագրերը ներառում են HELP-ի ուսումնական նյութեր):

Ավելի լայն համատեքստում, HELP ծրագիրը նաև ընկալվում է որպես իրավական ոլորտի մասնագետների կողմից իրավական ոլորտի մասնագետներին մատուցվող մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստման ՄԻԱԿ ռեսուրսը: Գոյություն ունեն իրավական ոլորտի մասնագետների համար իրավունքի բնագավառում (մարդու իրավունքների ոլորտում) վերապատրաստում կամ վերապատրաստման համար ֆոնդեր տրամադրող բազմաթիվ այլ հաստատություններ (տե՛ս ստորև):

**HELP-ի շրջանակից դուրս՝ իրավական ոլորտի մասնագետների համար (մարդու իրավունքների ոլորտում) վերապատրաստում իրականացնողներ**

ՆՇՈՒՄՆԵՐ

Այդուհանդերձ, այս հաստատություններից շատերը տրամադրում են ընդհանուր իրավական վերապատրաստում՝ առանց մարդու իրավունքների վրա առանձնահատուկ ուշադրություն սևեռելու: Մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստում առաջարկող միջազգային կազմակերպություններում կամ ՈԿԿ-ներում սա, սովորաբար, նվազ ինստիտուցիոնալացված է, քան HELP ծրագրում:

## ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Արժանահավատություն՝ շնորհիվ ՄԻԵԴ-ի հետ ունեցած սերտ կապերի և Եվրոպայի խորհրդի գործուն մաս կազմելու:
- Անհատական մոտեցում՝ դասընթացները համապատասխանեցված են յուրաքանչյուր երկրի համար և ներառում են ՄԻԵԿ-ի առավել տարածված խախտումները և առկա մարտահրավերները, մեկնարկային հանդիպումից հետո մասնակիցների կարիքներին համապատասխանություն ապահովելու հնարավորությունը, ընդհանուր և կոնկրետ տեղեկությունները միմյանց շաղկապելու կարողությունը:
- Առցանց վերապատրաստումը՝ որպես վերապատրաստման ժամանակակից ձև, որը հասանելի է ամենուր և հարմար է այն մարդկանց համար, ովքեր չեն կարող մասնակցել առերես դասընթացների:
- Մասնագիտացում մարդու իրավունքների ոլորտում, այլ ոչ թե մարդու իրավունքների դասավանդում՝ որպես ընդհանուր ծրագրի մաս:
- Վերապատրաստման դասընթացների մատուցում դատախազներին, որոնք ունեն վերապատրաստման ավելի քիչ հնարավորություններ:
- Ոչ առևտրային բնույթը և անվճար լինելը:
- Համաեվրոպական ցանց, որն առաջարկում է բարձր հասանելիություն և տարածման մեծ ներուժ, որն ամրապնդվում է ազգային համակարգողների/տեղեկատվական պատասխանատուների համակարգի միջոցով:
- Վերապատրաստման իրականացում հավաստագրված ազգային դասընթացավարների կողմից:
- Ձերծ է մասնակից հաստատությունների համար ծանր վարչական ընթացակարգերից:
- Բազմապատկիչ ազդեցության ապահովում ՎԱԻ-ների և ՓՄ-ների հետ աշխատանքի արդյունքում, այլ ոչ թե աշխատանք՝ իրավական ոլորտի անհատ մասնագետների հետ:
- Եվրոպայի խորհրդի վերապատրաստման դասընթացներն ավելի ապահով են մասնակիցների համար, քան այն դասընթացները, որ իրականացվում են տարբեր երկրներում գործող ՈԿԿ-ների կողմից, որտեղ առկա է մարդու իրավունքների հետ կապված բարդ իրավիճակ:
- Ինստիտուցիոնալացված ծրագիր, որը հնարավորություն է ընձեռում ունենալ շարունակական և պարբերաբար թարմացվող դասընթացներ (մեկանգամյա նախագծի փոխարեն):
- Երեք թիրախային խմբերի զուգակցումը՝ դատավորներ, դատախազներ և փաստաբաններ:

## HELP-ի հարթակի կիրառման օգուտները

Որպես վերապատրաստող հաստատություն՝ ձեր առաքելությունն է խթանել մարդու իրավունքների առաջխաղացումը իրավական ոլորտի մասնագետների կրթության միջոցով՝ լինի այն հիմնական, թե շարունակական վերապատրաստման ծրագրերի ձևաչափով: HELP-ը տրամադրում է հարթակ, որը դյուրին և մատչելի է դարձնում առցանց հասանելի ռեսուրսների օգտագործումը բոլոր հաստատությունների համար, իսկ իրավական ոլորտի մասնագետների համար՝ նրանց անհրաժեշտ ռեսուրսների արագ և դյուրին որոնումը և յուրաքանչյուր հարցում օժանդակումը, ներառյալ՝ շարժական սարքերի ապահովման հետ կապված:

HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում նաև հեշտությամբ կարելի է տեղադրել վերապատրաստման նյութեր յուրաքանչյուր երկրից և յուրաքանչյուր պետական լեզվով: Հարթակը պետք է օգտագործվի 47 անդամ պետություններից ռեսուրսներ հավաքելու և դրանք հասանելի դարձնելու՝ այլ երկրների իրավական ոլորտի մասնագետների համար:

Ֆորումները կարող են օգտագործվել իրավական մասնագետների համար՝ մարդու իրավունքներին վերաբերող հարցեր քննարկելու և մտքեր փոխանակելու նպատակով:

## HELP-ի հավաստագրում

HELP-ը տարբեր վկայականներ է շնորհում՝ իրավական ոլորտի մասնագետներին մատուցվող վերապատրաստման որակը երաշխավորելու նպատակով: Մասնակիցները հնարավորություն ունեն հավատարմագրվելու այն դասընթացների համար, որոնց մասնակցել են HELP ծրագրի միջոցով, ինչը ներպետական մակարդակում ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստման դասընթացի միջազգայնացումն ապահովելու եղանակ է:

### ա. HELP-ի հավաստագրված վերապատրաստողներ

HELP-ի վերապատրաստողների հավաստագրումը երաշխավորում է HELP-ի մեթոդաբանության յուրացումը ազգային դասընթացավարների կողմից և ապահովում է HELP-ի ռեսուրսների արդյունավետ կիրառումը: HELP-ի հավաստագրված վերապատրաստողները համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

- Եռօրյա վերապատրաստման դասընթաց Ստրասբուրգում,
- ՄԻԵԿ-ի չափորոշիչների վերաբերյալ խոր գիտելիքներ (HELP-ի ներածական դասընթացը ՄԻԵԿ-ի վերաբերյալ),
- HELP-ի մեթոդաբանության, գործիքների և ռեսուրսների օգտագործման հասկացում՝ համապատասխան առաջադրանքի կատարման միջոցով:

### բ. HELP-ի դասընթացների վկայականները

HELP-ի հեռաուսուցման դասընթացներին մասնակցում է ընտրված մասնակիցների մի խումբ, և դրանք վարում է HELP ծրագրի կողմից հավաստագրված վերապատրաստողը (HELP-ի կողմից հավաստագրված վերապատրաստողների ցանկը[38] հասանելի է առցանց): Դասընթացի ավարտին իրականացված գնահատման հիման վրա դասընթացավարը

38 http://www.coe.int/en/web/help/training-of-trainers:

ՆՇՈՒՄՆԵՐ

կարող է որոշել, թե դասընթացի որ մասնակիցներն են համապատասխանում վկայական ստանալու չափանիշներին: Այդ չափանիշները հետևյալն են՝

- Կանոնավոր մասնակցություն դասընթացին,
- Մասնակցություն քննարկումներին,
- Յուրաքանչյուր մոդուլի համար տրված առաջադրանքների կատարում,
- Ավարտական առաջադրանքի կատարում:

Որոշումը, թե արդյոք մասնակիցը կստանա վկայական, թե ոչ, թողնում են վերապատրաստողի և վերապատրաստման ազգային ինստիտուտի հայեցողությանը:

Դասընթացի մասնակիցներին HELP-ի վկայականները շնորհվում են համատեղ՝ HELP-ի և համապատասխան ազգային ինստիտուտի կողմից: Վերապատրաստման ազգային ինստիտուտի պահանջով HELP-ը կարող է տրամադրել վերապատրաստման համար պահանջվող նվազագույն ժամաքանակը, ինչը կարող է նպաստել մասնակիցների պատշաճ հավատարմագրմանը: Կրեդիտների տրամադրումը թողնում են վերապատրաստման ազգային ինստիտուտի հայեցողությանը:

## գ. HELP «պիտակի» տրամադրում

HELP-ի նպատակներից մեկը մարդու իրավունքների ոլորտում վերապատրաստումը հիմնական կամ շարունակական վերապատրաստումներում ներառելն է: Վերապատրաստում իրականացնող որոշ հաստատություններ գուցե ցանկություն ունենան մշակել վերապատրաստման իրենց սեփական ծրագիրը և դրա համար ստանալ HELP «պիտակ», ինչը նշանակում է, որ այն հաստատված է Եվրոպայի խորհրդի կողմից: Վերապատրաստող հաստատությունների համար դա շատ օգտակար կլինի, և այն կարելի է իրականացնել՝ հետևելով որոշակի չափանիշների, որոնք պետք է սահմանվեն HELP ցանցի հետ համատեղ:

## ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետություն. HELP ծրագիրն արդյունավետ է այն իմաստով, որ մշակում է դասընթացավարի կողմից վարվող բարձրորակ հեռաուսուցման դասընթացներ: Վկայությունների համաձայն՝ HELP-ի վերապատրաստման դասընթացներին մասնակցած իրավական ոլորտի մասնագետները ստանում են համապատասխան գիտելիքներ իրավական ոլորտի այն թեմայի վերաբերյալ, որին նվիրված է եղել իրենց վերապատրաստումը: Ինքնուսուցման դասընթացներն հասանելի են իրավական ոլորտի մեծ թվով մասնագետների:

## HELP-ի 5 հիմնական ուժեղ կողմերը

HELP ծրագրի նախկինում նշված հիմնական ուժեղ կողմերը ծրագիրը վստահելի են դարձնում իրավական ոլորտի այն բոլոր մասնագետների համար, որոնք ցանկություն ունեն բարելավել ՄԻԵԿ-ի վերաբերյալ իրենց գիտելիքները, և վերապատրաստման ազգային ինստիտուտներին են տրամադրում իրավական ոլորտի մասնագետների համար ՄԻԵԿ-ի վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր մշակելու և ներառելու դյուրին եղանակ:

Այնպես որ մասնակցեք մեր
նախաձեռնություններին և միացեք մեր ցանցին:

# ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ[39]

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՏԱԼՈԳ

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՊԱՏՄԱՏԱԽՏԱԿԻ ՆՄՈՒՇՆԵՐ

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՎՎՀ-ի ՍՑԵՆԱՐՆԵՐ

39 Հավելվածները կարելի է գտնել կցված USB կրիչում:

HELP HUMAN RIGHTS EDUCATION FOR LEGAL PROFESSIONALS
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

# Եվրոպայի խորհուրդ

## Պիլոտային հեռաուսուցման դասընթացի մեկնարկային հանդիպում

*[Դասընթացի վերնագիր]*

# ՕՐԱԿԱՐԳ

*[վայր], [ամսաթիվ] [հասցե]*

Կազմակերպել են՝
Եվրոպայի խորհրդի
Իրավական ոլորտի մասնագետների համար Մարդու իրավունքների կրթության
(HELP) եվրոպական ծրագիրը՝
[*գործընկեր ՎԱԻ կամ ՓՄ*]
հետ համատեղ

**9.30 – 09.45** Մասնակիցների ժամանում և գրանցում

**09.45 – 10.15** Ողջույնի խոսք

[*HELP-ի վերապատրաստողի անունը*], HELP-ի վերապատրաստող

[*ազգային ինստիտուտի ղեկավարի անունը*]

**10.15 – 10.45** HELP ծրագրի ներկայացում՝ ցանց, նպատակներ, գործողություններ և մեթոդաբանություն

[*քարտուղարության անդամի անունը*], HELP-ի բաժին, Մարդու իրավունքների քաղաքականության և համագործակցության դեպարտամենտ, Մարդու իրավունքների տնօրինություն, Եվրոպայի խորհուրդ

**10.45 – 11.45** HUDOC և նախադեպային իրավունքի որոնման այլ գործիքներ

[*ներկայացնողի անունը*], փաստաբան, Նախադեպային իրավունքի վերաբերյալ տեղեկատվության և հրատարակչության բաժին, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

**11.45 – 12.00** Ընդմիջում

**12.00 – 12.30** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հակիրճ ներկայացում [*քննարկվող թեման*] վերաբերյալ

[*ներկայացնողի անունը*], փաստաբան, Մարդու իրավունքների եվրոպական դատարան

**12.30 – 13.15** [*դասընթացի թեման*] վերաբերյալ դասընթացի ամփոփ նկարագրի ներկայացում

[*ազգային համակարգողի կամ տեղեկատվական պատասխանատուի անունը*],

HELP-ի ազգային համակարգող/տեղեկատվական պատասխանատու [*երկիրը*] համար

**13.15 – 14.15** Ճաշի ընդմիջում

**14.15 – 15.15** Բաց քննարկում դասընթացի մասնակիցների ակնկալիքների և կարիքների վերաբերյալ. աջակցություն HELP-ի հարթակի միջոցով

Եզրափակիչ մեկնաբանություններ

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ

[*ամսաթիվ, վայր*]

### **Հաշվետվություն** [*դասընթացի անվանումը, դասընթացավարի անունը*]

Հեռաուսուցման դասընթացավարների հաշվետվությունը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից՝

**Մոդելային ուսումնական ծրագրի համապատասխանեցումը մասնակիցների կարիքներին**

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) իրականացման և կիրառության վերաբերյալ վերապատրաստման նյութերի մշակում:
- Նորություններ/տեղեկություններ ՄԻԵԿ-ի կիրառության վերաբերյալ ներպետական մակարդակում:

**Վերապատրաստման կարիքների արժեքավորում և գնահատում**

- Կապ հաստատել վերապատրաստվողների հետ՝ նրանց կոնկրետ կարիքները դասընթացի մշակման մեջ արտացոլելու, գնահատումներ իրականացնելու և ամփոփիչ գործողություններ նախապատրաստելու նպատակով:
- Հնարավորության դեպքում կապ հաստատել նախկին մասնակիցների հետ՝ գնահատելու ձեռք բերված նոր գիտելիքները և վերապատրաստման ազդեցությունն իրենց մասնագիտական կատարողականի վրա:
- Եվրոպայի խորհրդին պարբերաբար տեղեկացնել դասընթացի մշակման ընթացքի վերաբերյալ:
- Հեռաուսուցման դասընթացի սեմինարի ավարտին վերբեռնել հարցաթերթ Moodle հարթակում՝ մասնակիցներից արձագանքներ ստանալու նպատակով:
- Եվրոպայի խորհրդին տրամադրել դասընթացի որակական վերլուծությունը:
- Եվրոպայի խորհրդին տեղեկացնել դասընթացի վերաբերյալ մասնակիցներից ստացված ոչ ֆորմալ արձագանքների մասին:

**HELP-ի էլեկտրոնային ուսուցման հարթակ**

- Մասնակիցների ընդգրկումը դասընթացին՝ HELP-ի կայքում նախատեսված բաժնում:
- Կապ հաստատել մասնակիցների հետ՝ ստանալու անհրաժեշտ բոլոր տեղեկությունները և նրանց տեղեկացնելու դասընթացի ժամկետների մասին:
- HELP-ի կայքում անհրաժեշտ փաստաթղթերի և վերապատրաստման նյութերի վերբեռնումը էլեկտրոնային ուսուցման դասընթացի ընթացքում:
- Կարևոր նորությունների և տեղեկությունների հրապարակումը մասնակիցների համար:
- ՄԻԵԿ-ին առնչվող թեմաների, հարցերի և հաղորդագրությունների տեղադրումը HELP-ի կայքի ֆորումում, որը հատուկ նախատեսված է դասընթացի մասնակիցների համար՝ խթանելու և աշխուժացնելու նրանց միջև քննարկումները և համագործակցությունը: Յուրաքանչյուր երկու շաբաթը մեկ, խորհուրդ է տրվում առնվազն մեկ քննարկման թեմա տեղադրել: Երաշխավորել, որպեսզի առցանց ֆորումի միջոցով առաջադրված հարցերին արձագանքեն ժամանակին՝ հետևելով առավել հաճախ տրվող հարցերին:

**Դասընթացի իրականացումը և արդյունքները**

- Նպաստել քննարկումներին և անհրաժեշտության դեպքում փորձի փոխանակմանը մեկնարկային սեմինարի ընթացքում:
- Գնահատել դասընթացի հաջողվածությունը և բացահայտել խնդիրները:
- Գտնել արդյունքների բարելավման ուղիներ:

## ՀԱՎԵԼՎԱԾ 6. HELP-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

**Հեռաուսուցման դասընթացի ավարտական հարցաթերթիկ**

Դասընթաց .....

Ամսաթիվ .....

Հարցաթերթիկի նպատակները՝
Արձագանք ստանալ դասընթացի բովանդակության և դասընթացավարի դերի վերաբերյալ
Բարելավել հեռաուսուցման ապագա դասընթացների որակը

### I. ԻՆՉ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՔ

- Առաջին ատյանի դատարանի դատավոր
- Վերաքննիչ դատարանի դատավոր
- Գերագույն դատարանի/Սահմանադրական դատարանի դատավոր
- Դատախազ
- Փաստաբան
- Այլ

### II. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Համապատասխանող
- Վատ

### III. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԳՆԱՀԱՏԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ

| | ՄԻԱՆԳԱՄՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ | ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ | ՉԵՂՈՔ | ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ | ԲՈԼՈՐՈՎԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ ՉԵՄ |
|---|---|---|---|---|---|
| 1. Լուսաբանված թեմաները կարևոր էին ինձ համար և օգտակար կլինեն իմ առօրյա աշխատանքում: | | | | | |
| 2. Դասընթացը բարելավել է ներպետական մակարդակում մարդու իրավունքների օրենսդրության կիրառման իմ պրակտիկ գիտելիքները: | | | | | |
| 3. Դասընթացավարը փոխգործակցում էր ինձ հետ և խրախուսում էր մասնակցել դասընթացին: | | | | | |
| 4. Դասընթացավարը բավականին տեղեկացված էր դասընթացի թեմային: | | | | | |
| 5. Վերապատրաստմանը հատկացված ժամանակը բավարար էր: | | | | | |
| 6. Իրավական տեքստերի թարգմանության որակը բավարար էր: | | | | | |
| 7. Հեռաուսուցման դասընթացի համար կիրառվող գործիքները (ֆորում, աշխատաժողով, վիքի, տեսանյութեր) ընդունելի էին և ինտերակտիվ: | | | | | |
| 8. Իրավիճակային խնդիրները համապատասխանեցված էին ներպետական իրավակարգին: | | | | | |
| 9. Ես կխորհեմ HELP-ի մեկ այլ հեռաուսուցման դասընթացի մասնակցության մասին և/կամ գործընկերներիս խորհուրդ կտամ դրան մասնակցել: | | | | | |

## IV. ՈՒՐԱԽ ԿԼԻՆԵՆՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՁԱԳԱՆՔԻՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ: ՍՏՈՐԵՎ ԹՈՂԵՔ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՁԵՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

.....

.....

.....

.....

.....

.....

.....

Շնորհակալություն ժամանակ հատկացնելու և հարցաթերթիկին պատասխանելու համար: